ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(116)2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
4(116)2024

ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՁԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ,
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ – ***Ա. ԲԻՇԱՐՅԱՆ***.....10

- ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԾԵՐԸ – ***Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ***.....29

<u>ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ</u>

- ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ – ***Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ***.....68

- ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ – ***Ա. ՉԱԽՈՅԱՆ***.....88

- ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՆԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ –
- ***Մ. ՀԱՅՐԱՊԵՏՈՎԱ***.....104

- ДЕЙСТВИЕ ПРИНЦИПА NON BIS IN IDEM ПРИ ПРИВЛЕЧЕНИИ ЛИЦА К НАЛОГОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В ЗАВИСИМОСТИ ОТ ОСНОВАНИЙ ВОЗНИКНОВЕНИЯ НАЛОГОВЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ – ***Л. АЛЕКСАНЯН***

- (NON BIS IN IDEM ՍԿԶԲՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԻՍ՝ ԿԱԽՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻՑ – ***Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ)***.....131

- PARLIAMENTARY ADMINISTRATION AS AN OBJECT OF COMPARATIVE LEGAL-POLITICAL RESEARCH - ***T. SIMONYAN*** (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ – ***Տ. ՍԻՄՈՆՅԱՆ)***.....146

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ (1743-1749)

- 1953 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ԴԱԲԱՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1743, 10 սեպտեմբերի 2024 թվականի).....163

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....169

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ (ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1744, 10 սեպտեմբերի 2024 թվականի).....176

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....186

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՁԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1745, 10 սեպտեմբերի 2024 թվականի).....193

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....196

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԹԻՎ CAM 1024 01 C ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1746, 10 սեպտեմբերի 2024 թվականի).....203

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....212

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ԵՎ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՉ, ԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1747, 10 սեպտեմբերի 2024 թվականի).....219

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....224

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1748, 10 սեպտեմբերի 2024 թվականի).....231

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....241

- 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
  (ՍԴՈ – 1749, 26 սեպտեմբերի 2024 թվականի).....248

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....276

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Վ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ Դ. Մ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՏՈՒԿ (ՀԱՄԸՆԿՆՈՂ) ԿԱՐԾԻՔԸ.....294

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<u>ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ</u>

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՏՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ.....314

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ.....316

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ.....317

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ.....318

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ.....319

<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ</u>

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ Մ.Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....320

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....321

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....322

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԵՐԿՕՐՅԱ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ.....323

ՆՈՐ ԳՐՔԵՐ

- ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ» ՁԵՌՆԱՐԿԸ.....327

DOI: 10.59560/18291155-2024.4-10

ԱՐՓԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ
Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ամփոփագիր

Տեղական ինքնակառավարման սկզբունքները կարևոր նշանակություն ունեն տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ գործունեության համար՝ ապահովելով ինքնակառավարման իրավունքի իրականացումը:

Որպես ելակետային հիմնարար դրույթներ՝ տեղական ինքնակառավարման սկզբունքները հիմք են հանդիսանում բնակչության կողմից ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով համայնքների կառավարման իրավունքի կազմակերպման համար: Ներպետական և եվրոպական սկզբունքների հարաբերակցության արդյունքում տեղական ինքնակառավարման սկզբունքները հանդիսանում են համայնքային նշանակության հանրային հարցերի ինքնուրույն լուծման ուղենիշներ:

Հոդվածը նվիրված է տեղական ինքնակառավարման սկզբունքների և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով նախատեսված սկզբունքների հարաբերակցության հիմնահարցերին:

Հիմնաբառեր. տեղական ինքնակառավարում, սկզբունք, ֆինանսական համահարթեցում, միջհամայնքային համագործակցություն, հրապարակայնություն:

Տեղական ինքնակառավարման սկզբունքները տեղական ինքնակառավարման էությամբ պայմանավորված հիմնական ելակետային գաղափարներն են, որոնք ընկած են կազմակերպությունների և հասարակության, նրանց ձևավորած մարմինների գործունեության հիմքում[1]:

Տեղական ինքնակառավարման սկզբունքները իրավական ամրագրում ստացել են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում, որը իրավական հիմք է հանդիսանում Եվրոպայի խորհրդի անդամ երկրների օրենսդրության համար:

Եվրոպական խարտիայում սահմանված են տեղական ինքնակառավարման հետևյալ ընդհանուր սկզբունքները.

1) բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի լուծման ինքնուրույնություն,

2) տեղական ինքնակառավարման, դրա մարմինների կազմակերպման առանձնացում պետական կառավարման համակարգում և պետական իշխանության մարմինների հետ փոխգործակցություն՝ ընդհանուր խնդիրների և գործառույթների իրականացման հարցում,

3) նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանություն տեղական ինքնակառավարման լիազորություններին,

4) ՏԻՄ-երի պատասխանատվություն բնակչության առջև,

5) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանում,

6) տեղական ինքնակառավարման կազմակերպման ու գործունեության օրինականություն,

7) ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնություն,

[1] Տես **Шумянкова Н.В.** Муниципальное управление: Учебное пособие для вузов. - М.: Издательство ”Экзамен”, 2004. - С. 64:

8) ՏԻՄ-երի գործունեության կոլեգիալություն ու միանձնյա ղեկավարում,

9) տեղական ինքնակառավարման պետական երաշխիքներ:

Այս սկզբունքներն արտացոլում են տեղական ինքնակառավարման հիմնարար սկզբունքները՝ միաժամանակ իր ազդեցությունն ունենալով այլ երկրների և տարածաշրջանների տեղական ինքնակառավարման կայացման գործում:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման սկզբունքներին, ապա վերջիններս իրենց արտացոլումն են ստացել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում:

Տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը, հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ընդհանուր իրավասությունը՝ համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքն է, եթե օրենքով այլ մարմինների դրանք վերապահված չեն.

2) տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով.

3) պետական մարմինների լիազորությունների փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում.

4) համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը.

5) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ամբողջականությունն ու բացառիկությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը միջամտության դեպքերն ու կարգը սահմանվում են միայն օրենքով.

6) համայնքների սահմանների փոփոխությունների իրականացումն օրենքով սահմանված կարգով՝ հանրային շահերից ելնելով, լսելով համայնքի կարծիքը.

7) տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այլ համայնքների հետ համագործակցելը և միջհամայնքային միավորումներ ստեղծելը.

8) տեղական ինքնակառավարման մարմինների ներքին կառուցվածքների համապատասխանեցումը համայնքային խնդիրների լուծմանը.

9) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության համաչափությունը.

10) տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը.

11) համայնքների բյուջեների ինքնուրույնությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունն է.

12) համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցությունը.

13) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը.

14) տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:

Ներկայացնենք դրանց հիմնական բնութագրական հատկանիշները և կիրառման հնարավոր սահմանները.

1. ՀՀ Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումը համարում է համայնքի՝ որպես վարչական մարմնի, բնակչության իրավունքը: Այսինքն, բնակչությունը ճանաչվում է որպես առաջնային սոցիալ-տարածքային հանրույթ և առաջնային ինքնակառավարման իրավունքների կրող և սուբյեկտ: Հենց բնակչությանն է պատկանում հանրության շահերը շոշափող հարցերի ինքնուրույնաբար լուծման

իրավունքը: Բնակչությունն ինքն է անմիջական կամ ներկայացուցչական ժողովրդաիշխանության եղանակներով իրականացնում իշխանությունը՝ իր ինքնիշխան կամքին և շահերին լրիվ համապատասխան:

Տեղական ինքնակառավարման՝ համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման ընդհանուր իրավասության սկզբունքը ենթադրում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն զբաղվելու համայնքային շահերի վերաբերյալ ցանկացած խնդրով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Իրավասությունը որևէ մարմնի պաշտոնատար անձի օրենքով սահմանված լիազորությունների (իրավունքների, պարտականությունների) ամբողջություն է, որը որոշվում է Սահմանադրությամբ և օրենքներով:

2. Տեղական ինքնակառավարման ինքնուրույնության և սեփական պատասխանատվության սկզբունքը ենթադրում է, որի ՏԻՄ-երը գործում են ինքնուրույն, որևէ այլ մարմին իրավասու չէ հանձնարարություններ տալ նրանց, պահանջել բացատրություններ և պետական իշխանության մարմիններին արգելվում է միջամտել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:

Ընդհանրապես տեղական ինքնակառավարման ինքնուրույնության հիմնական հատկանիշներն արտահայտվում են հետևյալում՝

ա) տեղական ինքնակառավարման լիազորություններն իրենց ծավալով պետք է բավարար լինեն տեղական հանրային իշխանության խնդիրների լուծման համար,

բ) պետությունը պետք է օրենսդրորեն երաշխավորի, որպեսզի իրավահարաբերությունների մյուս սուբյեկտների կողմից միջամտություն չլինի տեղական ինքնակառավարման իրավունքներին,

գ) տեղական ինքնակառավարման իրավունքների սահմանափակումը թույլատրելի է միայն օրենքով:

Տեղական ինքնակառավարում համայնքն իրականացնում է սեփական պատասխանատվությամբ: Այսինքն, տեղական ինքնակառավարման էությունը բացահայտվում է նաև համայնքի

բնակչության՝ որպես համայնքային նշանակության հարցերի լուծման բեռն ստանձնած սուբյեկտի պատասխանատվության մեջ: Սակայն սուբյեկտի պատասխանատվության սկզբունքի կիրառման համար նախ օրենքով անհրաժեշտ է նախանշել այն լիազորությունների շրջանակը, որոնց սահմաններում համայնքը կգործի ինքնուրույն և միայն իր լիազորությունների սահմաններում կառաջնորդվի սեփական պատասխանատվությամբ: Հետո նոր, ինքնուրույնության սկզբունքի տրամաբանական շարունակությունն է կազմում, և դրա հետ անխզելի պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում սեփական պատասխանատվության սկզբունքը, քանի որ որևէ սուբյեկտ «անձնական» պատասխանատվության կարող է ենթարկվել միայն ինքնուրույն վարքագծի դրսևորման համար և որպես դրա հետևանք: Իսկ ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, այդպիսի սուբյեկտ է ճանաչվում «ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինը», որը լիազորված է լուծելու տեղական նշանակության մի շարք հարցեր: Ինքնուրույնության սկզբունքի առանձին ամրագրումը ևս պետք է կարևոր ու առաջնային դիտարկվի:

Ամրագրելով տեղական ինքնակառավարման ինքնուրույնության սկզբունքը՝ առանձնացնում են դրա բովանդակությունը բնութագրող հետևյալ հիմնական գծերը.

ա) բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի ինքնուրույն լուծումն իրականացվում է տեղական ընտրությունների, կամքի ուղղակի արտահայտմամբ,

բ) տեղական ինքնակառավարման մարմիններն ինքնուրույն կառավարում են համայնքի սեփականությունը, ձևավորում, հաստատում և կատարում են տեղական բյուջեն, սահմանում տեղական վճարներ և տուրքեր,

գ) համայնքային նշանակության հարցերի լուծման ինքնուրույնություն:

Ինքնուրույն գործունեությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն են կրում ոչ միայն բնակչու-

թյան առջև, այլև օրենսդրությամբ՝ իրավասության ոչ պատշաճ կատարման համար: Ինքնակառավարմանը տալով վարչական անկախություն, ճանաչելով դրանք՝ պետությունը մասամբ «ազատվում» է տեղական գործերի մասին մտահոգություններից և սահմանափակվում տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վերահսկողության միջոցներով: Ժողովրդաիշխանության պայմաններում իշխանության իրականացումը հիմնագրվում և օրինականացվում է ժողովրդի կողմից և այդ իսկ պատճառով ժողովրդաիշխանությունը հանդես է գալիս ժողովրդի ինքնորոշման և ինքնակառավարման տարբեր ձևերով: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածը նշում է. «Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունն է կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով»: Խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներում ասվում է, որ իրավունքն իրականացվում է ազատ, գաղտնի, հավասար, ուղղակի և ընդհանուր քվեարկության միջոցով ընտրված անդամներից բաղկացած խորհուրդների կամ ժողովների կողմից», ինչպես նաև անմիջական ժողովրդավարության ձևերի միջոցով: Խարտիայի դրույթների սահմանմամբ երաշխավորվեց տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

3. Երրորդ սկզբունքը պետական մարմինների լիազորությունների փոխանցումն է համայնքներին, եթե համայնքում դրանց իրականացումը առավել արդյունավետ կարող է լինել: Այս սկզբունքի հիման վրա օրենքով սահմանվում են ՏԻՄ-երի պատվիրակված լիազորությունների ցանկը, ընդ որում այդ լիազորությունները կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ լիազորության փոխանցմանը զուգահեռ հատկացվում են նաև համապատասխան ֆինանսական ռեսուրսներ պետական

բյուջեից: Այս սկզբունքը բխում է ապակենտրոնացման պահանջից և դրանով է մեծապես պայմանավորված տեղական ինքնակառավարման համակարգի գոյությունը:

Ընդհանրապես գործունեության գնահատման կարևոր չափորոշիչ-ներից մեկն էլ այն է, թե ինչպես է նա իրականացնում լիազորությունների պատվիրակումը, որը բավական բարդ խնդիր է: Եթե ինչ-որ սուբյեկտ իր վրա է վերցնում բավարար մակարդակով խնդրի իրականացման պատասխանատվությունը, կազմակերպությունը պետք է նրան տրամադրի պահանջվող ռեսուրսները: Ղեկավարությունը դա իրականացնում է խնդիրների հետ լիազորությունների պատվիրակման միջոցով[1]: Իսկ լիազորություն ասելով պետք է հասկանալ ռեսուրսների տնօրինման և կարգադրություններ անելու սահմանափակ իրավունք, իսկ վերջինս նշանակում է, որ ռեսուրսները կարող են օգտագործվել միայն կազմակերպության նպատակներն իրականացնելու համար[2]: Իրավունքի տեսության մեջ լիազորություն տերմինը սահմանվում է հետևյալ կերպ. «Լիազորությունները որևէ մարմնի, պաշտոնատար անձի՝ անմիջականորեն Սահմանադրությամբ և այլ օրենքներով սահմանվող, իրավունքների և պարտականությունների ամբողջություն է»[3]: Այս կամ այն լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելը հնարավորություն է տալիս խուսափելու համապետական մակարդակում իշխանության ավելորդ կենտրոնացումից և կենտրոնական կառավարությանը ձերբազատելու զուտ տեղական խնդիրներ լուծելու հոգսերից:

4. Չորրորդ սկզբունքը համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունն է, ըստ որի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչությանն առավել մոտ կանգնած հանրային իշխանության մարմիններն են, այդ իսկ պատճառով նրանց կողմից իրականացվող լիազորությունների

[1] Տես **Мексон М., Алберт М., Хедоури Ф.** Основы менеджмента. - М.: “Дело”, 1992. - С. 390:

[2] Տես **Дафт Ричард Л.** Менеджмент: Учебник. – СПб: “Питер”, 2001. - С. 210:

[3] Տես **Мексон М., Алберт М., Хедоури Ф.** Նշվ. աշխ., էջ 391:

շրջանակի ընդլայնումը և դրանց մատչելիության ապահովումը բնակչության սոցիալական խնդիրները լուծելու, հետևաբար նաև կենսամակարդակը բարձրացնելու կարևորագույն ուղին է: Տեղական ինքնակառավարման մարմիններին ոչ միայն վերապահված է լուծելու համայնքային նշանակության հանրային հարցեր, այև պաշտպանելու համայնքի իրավունքը ցանկացած ոտնձգությունից, եթե անգամ այն վարչարար գործունեության արդյունք է:

Այս սկզբունքը թույլ է տալիս համայնքներին միջոցներ ձեռնարկելու, պաշտպանելու իր գույքը և շահերը դատական կարգով: Այսինքն՝ տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության օրինականության պահպանումն իրականացվում է դատական մարմինների միջոցով: Հետևաբար, դատական կարգով կարող են բողոքարկվել քաղաքացիների կամքի ուղղակի արտահայտմամբ ընդունված որոշումները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց որոշումներն ու գործողությունները:

ՀՀ Սահմանադրությունը, երաշխավորելով տեղական ինքնակառավարման տնտեսական և ֆինանսական ինքնուրույնությունը, սեփականության այլ ձևերի հետ մեկտեղ ճանաչում և պաշտպանում է նաև համայնքային սեփականությունը:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ամբողջականության և բացառիկության սկզբունքի հիմնադրույթները սահմանված են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածում, որտեղ նշված է. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով սահմանված շրջանակներում գործողությունների լիակատար ազատություն ունեն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի: Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները պետք է լիակատար և բացառիկ լինեն: Դրանք չեն կարող սահմանափակվել

կենտրոնական կամ տարածքային մարմինների կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների»: Միանալով Խարտիայի իրավական պահանջին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև համակարգին առնչվող այլ օրենքների ընդունմամբ օրենսդիրը սահմանեց տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները, ինչպես նաև օրենքով սահմանված լիազորությունների իրականացման միջամտության դեպքերն ու կարգը: Այս մոտեցումը պայմանավորված է նախ Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 2-րդ և 4-րդ հոդվածների պահանջներով, ըստ որոնց տեղական ինքնակառավարումը որպես սկզբունք ճանաչվի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները պետք է սահմանվեն բացառապես երկրի Սահմանադրությամբ կամ օրենքներով:

6. Տեղական ինքնակառավարման համակարգում վարչատարածքային բարեփոխումները անհրաժեշտ կարելի է համարել, եթե դրանք միտված է համակարգի զորացմանը: Համայնքների միավորման հիմնական նպատակները, որոնցից էլ բխում են ակնկալվող արդյունքները, համարվում են համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող ծառայությունների որակի բարձրացումը, դրանց համակարգումը և այլն[1]: Եթե խնդիրը դիտարկում ենք վարչատարածքային բաժանման հիմնախնդիրների լուծման և տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման տեսանկյունից, հանրային շահերից ելնելով, համայնքի կարծիքը լսելը սահմանադրական պահանջ է (ՀՀ Սահմանադրություն, 190-րդ հոդված):

7. Միջհամայնքային միավորումները սեփական նախաձեռնությամբ կազմավորված համայնքների միավորումներ են, որոնք իրենց առջև դրել են համատեղ լուծման ենթակա խնդիրներ: Միջհամայնքային

[1] Տե՛ս **Charlie Jeffery, Roland Sturm**. Federalism, Unification and European Integration. New York, Frank Cass & Co LTD, 1993, № 3:

միավորումների արդյունավետ գործունեությունը, որը տարիների ընթացքում ապացուցում է իր կարևորությունն ու անխուսափելիությունը, արդեն իսկ հարթում է այն դժվարությունները, որոնք որպես կանոն առաջանում են համայնքների վարչական խոշորացման դեպքերում[1]: Համաձայն ՀՀ Սահմանադրության 189-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ: Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ:

Միջհամայնքային համագործակցությունը հիմնված է համայնքների համատեղ շահերի վրա, որը ենթադրում է ռիսկերի, ծախսերի, վերահսկողության և օգուտների համատեղ կրում, իսկ նպատակը տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացումն է: Իրավամբ միջհամայնքային միավորումները առաջինը «ծառայությունների խոշորացման» լավագույն օրինակներն են, սակայն տեղական ինքնակառավարման համակարգում միջհամայնքային միավորման օրինակ որպես այդպիսին չի եղել:

8. Հաջորդ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներքին կառուցվածքների համապատասխանեցումը համայնքային խնդիրների լուծմանը սկզբունքի տակ ենթադրելի է, որ ի սկզբանե տեղական ինքնակառավարման համակարգի ստեղծումը՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, պայմանավորված է ներքին կառուցվածքով, այսինքն ձևավորված լինեն ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինները, այլ նաև ենթակառուցվածքները՝ համայնքային գործունեություն մշակելու, վարելու և այն համակարգելու համար:

9. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության համաչափության սկզբունքը ենթադրում է, որ պետությունն ունի հնարավորու-

[1] Տես **Ղազարյան Է.,** Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները: Երևան, «Դար», 2006, էջ 118:

թյուն՝ 1) ազդելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վրա, 2) վերահսկելու օրենքների կատարումը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, գլուխ 8):

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրականացվող իրավական հսկողությունը միտված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության ստուգմանը, այսինքն՝ որքանով են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները համապատասխանում օրենսդրության պահանջներին, իսկ մասնագիտական հսկողությունը՝ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման արդյունավետության ու միասնականության ստուգմանը: Հատկանշական է այն, որ հսկողության որ տեսակն էլ կիրառվի, այն չպետք է իրականացվի օրենքի շրջանակներից դուրս՝ դրանով իսկ չխախտելով ոչ միայն հսկողության կոմպենսացիան, այլև չմիջամտելով տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ գործունեությանը:

10. Համայնքներին օրենքով վերապահված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանության և համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցության սկզբունքները ենթադրում են ֆինանսական խնդիրների իրականացման և համայնքային համաչափ զարգացման երաշխիքներ:

11. Հաջորդ սկզբունքը վերաբերում է համայնքների բյուջեների ինքնուրույնությանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությանը: Բյուջեների միջոցով ձևավորվում են համապատասխան պետական կամ տեղական կազմավորման դրամական ֆոնդերը, որոնք ապահովում են վերջինիս ընդհանուր նշանակության խնդիրների լուծումը, ֆինանսական հիմք են ստեղծում պետական իշխանության և տեղական

ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացման համար: Այն տվյալ մարմնի փողային միջոցների ֆոնդի գոյացման և օգտագործման հիմնական ֆինանսական պլանն է եկամուտների և ծախսերի հաշվեկշռից: Երբ խոսքը վերաբերում է համայնքային բյուջեին, ապա դրա տակ հասկանում ենք այն ֆինանսական ռեսուրսները, որոնք անմիջականորեն ձևավորվում և դրվում են տեղական մարմինների տրամադրության տակ և ուղղվում են տնտեսական և սոցիալական զարգացման միջոցառումների ֆինանսավորման նպատակներին: Համայնքային բյուջեի եկամուտները համալրվում են տվյալ համայնքի տնտեսվարող սուբյեկտների և բնակչության հարկերի հաշվին, իսկ ծախսերը, ելնելով դրանից, կատարվում են համայնքի հաշվով:

12. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում ամրագրված է, որ ֆինանսապես առավել թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի ներդրում կամ հավասարազոր միջոցառումներ՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման հնարավոր աղբյուրների անհամաչափ բաշխման հետևանքների, ինչպես նաև այս մարմիններին վերապահված ծախսերի ճշգրտմանը: Այսպիսի ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ազատությունը՝ իրենց իրավասության շրջանակներում: Այս առումով համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին՝ ֆինանսական համահարթեցման սկզբունքի, համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ: Ընդ որում, համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքներով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը:

13. Գործունեության հրապարակայնությունը պետության և հասարակության կառավարման ժողովրդավարական համակարգի հիմնական տարրերից է:

Հրապարակայնության ապահովման եղանակներն իրենց իրավական ամրապնդումն են գտել մունիցիպալ իրավունքի նորմերում և տեղական ինքնակառավարման կառավարման պրակտիկայում: Հրապարակայնության շնորհիվ ապահովվում է կառավարչական գործունեության ժողովրդականությունը, դրա վերահսկողությունը հասարակության կողմից, ինչպես նաև քաղաքացիների՝ իրենց շահերը, իրավունքներն ու ազատությունները շոշափող որոշումների մշակման գործընթացի վրա ներգործելու հնարավորությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքում հրապարակայնության սկզբունքի իրագործումն ընդգծում է նրանց գործունեության բաց բնույթը, այդ գործունեության մասին բնակչության կանոնավոր իրազեկումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականության, հրապարակայնության ու թափանցիկության սկզբունքին համապատասխան ՏԻՄ-երը հրապարակում են իրենց կողմից ընդունած փաստաթղթերը, այդ թվում՝ համայնքի զարգացման ծրագիրը և համայնքի բյուջեն: Համայնքի բնակիչները կարող են ներկա գտնվել ավագանու նիստերին, տեղեկություն ստանալ նրանց մասին, այս կամ այն հարցերի նկատմամբ արտահայտել իրենց դիրքորոշումը և կարծիքը:

Առավել կարևոր որոշումների տարբերակները կարող են հրապարակվել բնակչության կողմից դրանց քննարկման նպատակով: Ստանալով տեղական գործերի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն, զգալով իրենց կարևորությունը որոշումներ ընդունելիս՝ քաղաքացիները դիմում են տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններով, հայտարարություններով, բողոքներով:

Հատկանշական է այն, որ գործունեության հաշվետվողականության տեսանկյունից «Տեղական ինքնակառավարման մասին» 2018 թ. ՀՀ

օրենքում, պայմանավորված համայնքների միավորման ռազմավարական ծրագրի իրականացմամբ, սահմանվեց համայնքի ղեկավարի դերի երկակիության սկզբունքը, ըստ որի նա մի կողմից հանդես է գալիս իբրև գործադիր իշխանության ներկայացուցիչ տվյալ համայնքում, իսկ մյուս կողմից՝ համայնքի բնակչության ներկայացուցիչ, արդյունքում անհասկանալի է մնում գործունեության հաշվետվողականության իրականացումը:

14. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության սկզբունքը ամենակարևոր սկզբունքներից է տեղական ինքնակառավարման սկզբունքների շարքում:

Մասնակցային ժողովրդավարությունը տեղական մակարդակում այնպիսի գործընթաց է, որն ընդգծում է բնակչության լայն մասնակցությունը համայնքային քաղաքականության մշակմանը և իրականացմանը, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանը[1]:

Թեև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան առանձին դրույթով չի անդրադառնում քաղաքացիական մասնակցությանը, սակայն Խարտիայի ներածության մեջ նշվում է. «պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը դասվում է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների շարքին: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի Ուտրեխտի լրացուցիչ արձանագրությունում մասնակցության իրավունքը ձևակերպված է հետևյալ կերպ. «Տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունքը նշանակում է տեղական իշխանության լիազորությունների և պարտավորությունների իրականացման ձևերը փնտրելու, որոշելու կամ դրանց վրա ազդելու իրավունքը»:

Համայնքային գործերի կառավարմանը բնակիչների մասնակցության իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի

[1] Տես Հայաստանի ավագանիների ասոցիացիա, Համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար ձեռնարկ: Երևան, 2016, էջ 53:

1-ին մասի համաձայն՝ բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալու գործընթաց է, իսկ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի Ուտրեխտի արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունք» նշանակում է տեղական իշխանության լիազորությունների և պարտավորությունների իրականացման ձևերը փնտրելու, որոշելու կամ դրանց վրա ազդելու իրավունքը: Արդյունքում, անհրաժեշտ կլինի հստակեցնել օրենքով սահմանված այդ ձևակերպումը՝ համապատասխանեցնելով արձանագրության դրույթներին:

Ամփոփում

Այսպիսով, ամփոփելով տեղական ինքնակառավարման սկզբունքների բնութագրական հատկանիշների առանձնահատկությունները և անդրադառնալով գործնականում դրանց կիրառման հնարավորության սահմաններին, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի հիմնական սկզբունքների հետ հարաբերակցությանը՝ նկատենք, որ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի կառուցողական քաղաքականության զարգացման և արդիականացման հիմնական պայմանը համաեվրոպական արժեքներին և արդյունավետ փորձին հետամուտ լինելն է, ինչը կարևոր գրավական է ժողովրդավարության խթանման, մարդու իրավունքների և ազատությունների իրականացման և պաշտպանության գործում:

Այն տեսլականը, որ Հայաստանը կզարգացնի տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրական քաղաքականությունը՝ ապահովելով եվրոպական չափանիշների կիրարկման համարժեքություն և համընթացություն, բավարար հենք են ստեղծում համայնքային ռազմավարական ծրագրերի իրականացման համար:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն / 2015 թ. փոփոխություններով/:

2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002 թ.:

3. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, 1985 թ.:

4. **Ղազարյան Է.,** Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները: Երևան, «Դար», 2006, 128 էջ:

5. Հայաստանի ավագանիների ասոցիացիա: Համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար ձեռնարկ: Երևան, 2016, 101 էջ:

6. **Дафт Ричард Л.,** Менеджмент: Учебник, - СПб, "Питер", 2001. - 832 с.

7. **Мексон М., Алберт М., Хедоури Ф.,** Основы менеджмента, - М.: "Дело", 1992. - 702 с.

8. **Шумянкова Н.В.,** Муниципальное управление: Учебное пособие для вузов. - М.: Издательство "Экзамен", 2004. - 640 с.

9. **Charlie Jeffery, Roland Sturm,** Federalism, Unification and European Integration, New York, Frank Cass & Co LTD, 1993, № 3.

ПРЕДЕЛЫ ПРАВОМЕРНОСТИ ПРИНЦИПОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ЕВРОПЕЙСКОЙ ХАРТИИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

Аннотация

Принципы местного самоуправления важны для эффективного функционирования органов местного самоуправления, обеспечения реализации права на самоуправление.

Как основополагающие исходные положения, принципы местного самоуправления выступают основой организации права управления общинами через органы местного самоуправления, избираемые населением. Благодаря соотношению национальных и европейских принципов, принципы местного самоуправления являются ориентирами для самостоятельного решения публичных вопросов общинного значения.

Статья посвящена вопросам соотношения принципов местного самоуправления и принципов, предусмотренных Европейской хартией местного самоуправления.

Ключевые слова: местное самоуправление, принцип, финансовое выравнивание, межобщинное сотрудничество, гласность.

LIMITS OF LEGITIMACY OF THE PRINCIPLES OF LOCAL SELF-GOVERNMENT IN THE CONTEXT OF THE EUROPEAN CHARTER OF LOCAL SELF-GOVERNMENT

Annotation

The principles of local self-government are important for the effective functioning of local self-government bodies, ensuring the implementation of the right to self-government.

As fundamental starting points, the principles of local self-government are the basis for the organization of the right to govern communities through local self-government bodies elected by the population. As a result of correlation of national and European principles, the principles of local self-government are guidelines for the independent solution of public issues of community importance.

The article is devoted to the issues of correlation between the principles of local self-government and the principles provided by the European Charter of Local Self-Government.

Keywords: local self-government, principle, financial equalization, inter-community cooperation, publicity.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.10.2024թ., գրվել է գրախոսության 10.10.2024թ., ընդունվել է տպագրության 08.11.2024թ.:

DOI: 10.59560/18291155-2024.4-29

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի
մոնիտորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաձոր» համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԾԵՐԸ

Ամփոփագիր

Հոդվածում հանգամանորեն վերլուծվում է, որ չնայած ժամանակակից պառլամենտարիզմի մի քանի մոդելներին, այնուամենայնիվ «մաքուր», այսինքն՝ մյուսներից լիովին տարբերվող մոդելներ պետական պրակտիկան չի ճանաչում, քանի որ յուրաքանչյուրում, ի շարս իր սեփական տիպային հատկանիշների, միշտ առկա են ուրիշների հատկանիշներ:

Անդրադարձ է կատարել նաև այն պնդումներին, թե ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի հստակորեն է դրսևորվում պետական կառավարման համահավաք, խառը, անցումային ձևեր ստեղծելու միտումը: Նախագահական, խորհրդարանական դաշնության, ինքնավարության, պետական վարչակարգերի նախկին դասական ձևերը աստիճանաբար վերանում են, դրանց փոխարինում են կիսանախագահական, կիսախորհրդարանական հանրապետությունները, տարածաշրջանային պետությունները, որոնցում զուգորդվում են միատարրության, դաշնության, ինքնավարության հատկանիշները: Առաջանում են պետական իշխանության իրականացման նոր մեթոդներ, պետական

վարչակարգերի այլ ձևեր, որոնք միավորում են ավտորիտարիզմի և ժողովրդավարության որոշ տարրեր:

Հոդվածում հեղինակն անդրադարձել է նաև այն գաղափարին, որ մշակելով իշխանության տեսությունը՝ որոշ քաղաքագետներ և փիլիսոփաներ վերանայում են ժողովրդավարության ավանդական սկզբունքները: Այդ առումով իշխանությունների բաժանման տեսությանը փոխարինելու է գալիս «միասնական իշխանության» հայեցակարգը, խորհրդարանի առաջնայնության սկզբունքը փոխարինվում է գործադիր իշխանության մարմիններում հիմնական առաջնահերթությունները կենտրոնացնելու հիմնավորմամբ, իսկ ժողովրդական ներկայացուցչության տեսությունը հայտարարվում է հնացած և ոչ կիրառելի, քանզի արդի դարաշրջանում օրենսդիր և գործադիր իշխանությունների հարաբերակցությունը պետության մեջ փոփոխվել է: Գործադիր իշխանությունն իր ձեռքում է կենտրոնացրել է թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության առավել կարևոր լիազորությունները: Միտումը դրսևորվում է վարչապետի (կամ նախագահի, եթե նա գլխավորում է կառավարությունը) լիազորությունների աճով, որը հնարավորություն է ստանում ինքնուրույն ընդունելու կարևորագույն քաղաքական որոշումներ:

Հիմնաբառեր. պառլամենտարիզմ, անտիկ, միջնադարյան, արդի մոդել, օրենսդիր իշխանություն, գործադիր իշխանություն, խորհրդարանական պետություններ, խորհրդարանական կառավարում, ժողովրդական ներկայացուցչություն, իշխանությունների տարանջատում:

Փիլիսոփայական, քաղաքագիտական և իրավագիտական գրականության մեջ, սովորաբար, առանձնացնում են պառլամենտարիզմի երեք պատմական փուլեր՝ **անտիկ, միջնադարյան** և **արդի:** Մեր կարծիքով, նման բաժանումը թույլ չի տալիս ամբողջովին բացահայտել պառլամենտարիզմի կազմավորման փուլերի բովանդակությունն ու էությունը: Մենք առաջարկում ենք առանձնացնել պառլամենտարիզմի

կազմավորման **չորս փուլ**, ինչը, կարծում ենք, թույլ կտա ավելի հանգամանորեն դիտարկել պառլամենտարիզմի զարգացումը, պարզել նրա հիմնական, համընդհանրական բնութագրերը[1]:

Փուլերի առանձնացման գլխավոր չափանիշը հասարակության մեջ պառլամենտարիզմի հիմնարար տարրերի առկայությունն ու իրացման աստիճանն է. ինչպես օրինակ՝ պետության կառավարման ժամանակ իշխանությունների բաժանման սկզբունքը, հասարակության մեջ օրենքների նշանակությունն ու կարգավիճակը, ազատ ընտրությամբ ձևավորված օրենսդիր (ներկայացուցչական) մարմնի և քաղաքական կուսակցությունների առկայությունը:

Առաջին փուլի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են հնագույն ժամանակներից մինչև 12-րդ դարը: Այդ փուլը բնութագրվում է որպես «նախապառլամենտարիզմի» դարաշրջան, որտեղ կարելի է հայտնաբերել պառլամենտարիզմի սկզբնական, սաղմնային դրսևորումները, որոնք հասարակական զարգացման ընթացքում աստիճանաբար ձեռք են բերել միջնադարյան պառլամենտի նախատիպի գծեր:

Ըստ գերմանացի քաղաքագետ-փիլիսոփա Կ. Շմիդտի դիտարկման՝ «խորհրդարանի հնագույն արդարացումը արտաքին արագագործության նկատառումն է, ինչպես ասում են՝ որոշում պետք է ընդուներ ժողովուրդը իր իրական ամբողջության մեջ, ինչպես ի սկզբանե էր…, ներկայումս գործնական նկատառումներով անհնար է, որ բոլորը միաժամանակ հանդիպեն նույն վայրում, նույն կերպ անհնար է բոլորին հարցնել յուրաքանչյուր մասնավոր բանի մասին, հետևաբար ավելի ողջամիտ է հեշտացնել խնդիրը՝ ընտրելով վստահված անձանց կոլեգիա, և դա էլ հենց խորհրդարանն է»[2]:

Մի կողմ թողնելով հնագույն պետություններում օրենսդրական գործունեության նկարագրությունները՝ հարկ ենք համարում ընդգծել դրանց մի քանի ընդհանուր գծերը.

[1] **Фон Алеман У.** Парламентаризм // Политология. Вып. 3. - М., 1993. - С. 73-76.

[2] **Шмидт К.** Политическая теология. - М., 2000. - С. 183.

1. Օրենսդրությունն իր ներկա իմաստով մինչև Ք.ա. առաջին հազարամյակի կեսերը բացակայում էր: Դրան փոխարինում էին փարավոնների, արքաների հրովարտակները, ինչպես նաև նրանց գլխավոր կարգադրիչների կարգադրությունները: Օրենսդրությունն ուներ բացառապես անձնիշխան բնույթ:

2. Պետական կարգի, իրավական նորմաստեղծության հիմքը կազմում էին առասպելները, լեգենդները արքաների աստվածային ծագման և նրանց իշխանության վերաբերյալ: Պատահական չէ, որ իրավական նորմերը հիմնականում մշակում էին **քրմերը:**

3. Իշխանության օրենսդրական թևը գործառում էր որպես արքաների, նրանց տեղապահների, վարչական տարածքների կառավարիչների իշխանական իրավունքներից մեկը: Իրավական նորմաստեղծության մեջ թագավորում էր մեծ ու փոքր կառավարիչների կամայականությունն ու ինքնագլխությունը:

4. Իրավական նորմաստեղծության մեջ չափազանց թույլ էր ժառանգականությունը. մի տիրակալի օրոք գործող նորմերը փոխարինվում էին հաջորդի կողմից, կենտրոնացվածությունը փոխարինվում էր այպիսի ծայրահեղ ապակենտրոնացմամբ, որ առաջանում էր պետության կործանման վտանգ:

Առաջին հազարամյակի շեմին հունական քաղաքներում, Հռոմում թույլատրվում էին ժողովրդական ժողովները: Հետազոտողների մեծ մասի կարծիքով, մինչև Ք.ա. առաջին հազարամյակի կեսերը Հին Հունաստանում և Հին Հռոմում ձևավորվել էին իշխանության այլ, սկզբունքորեն նոր՝ հիմքում ժողովրդավարական համակարգեր: Իրականացվեց իշխանությունների բաժանում: Դրանց կառուցվածքում առաջին անգամ որպես ինքնուրույն թև առանձնացվեց օրենսդիր իշխանությունը («Չորս հարյուրի խորհուրդը՝ Սոլոնի օրոք», Սենատը (ծերակույտը) Հին Հռոմում)[1]:

Անտիկ աշխարհում իշխանության օրենսդիր մարմինների հայտնվելը թելադրված էր հասարակության տնտեսական զարգացմամբ:

[1] **Амеллер М.** Парламенты. - М., 1967. - С. 71-80.

Հետզհետե ամրապնդվում էր հասարակ ժողովրդի՝ դեմոսի նշանակությունը, որը զբաղվում էր հասարակական արտադրությամբ: Սակայն ազնվականության ներկայացուցիչները՝ էվպատրիդները, պահպանում էին իրենց առավելությունը, որը տրվել էր նրանց տոհմական ավանդույթներով և իշխանության մարմինների կողմից, առաջին հերթին՝ **արեոպագոսի,** որը օրենքի կատարմանը հետևող դատական մարմին էր: Այդ պայմաններում անհրաժեշտություն ծագեց գույքային վեճերի և քրեական գործերի լուծման ժամանակ առաջնորդվելու ոչ թե տոհմական ավանդույթներով, այլ գրված օրենքներով:

Անտիկ Հունաստանում օրենսդիր իշխանության կազմավորման հարցում գլխավոր դերը խաղացին **Սոլոնի** բարեփոխումները, որոնց նպատակը այն ամբողջը վերափոխելն էր, ինչը պետության մեջ պայթյունավտանգ իրավիճակ էր ստեղծում և խոչընդոտում էր տնտեսական և մշակութային զարգացմանը: Սոլոնի օրոք ներառվեց տոհմացեղային համայնքին խորթ գույքային մի սկզբունք, որը դեպի իշխանություն ճանապարհ բացեց ոչ թե ազնվատոհմիկ, այլ ունևոր քաղաքացիների համար: Հասարակության ժողովրդավարացմանը նպաստեց նաև **Չորս հարյուրի խորհրդի** ստեղծումը, որի պարտականությունների մեջ էր մտնում ժողովրդական ժողովի (ագորայի) ծրագրի նախապատրաստումը: Այն վերածվեց պետական իշխանության բարձրագույն մարմնի, որը սահմանափակեց արեոպագոսի լիազորությունները և սասանեց նրա հեղինակությունը:

Տոհմիկ ազնվականության արտոնությունները վերջնականորեն վերացան Կլիսթենեսի բարեփոխումների արդյունքում: Արեոպագոսի գործառույթները սահմանափակվեցին միայն այն հանցագործությունների քննությամբ, որոնք չէին շոշափում գույքային իրավունքը: Կլիսթենեսի բարեփոխումները ավարտին հասցրեցին Աթենքի ուժեղ, ժողովրդավարական, իշխանությունների բաժանմամբ պետության վերածելու գործը, որտեղ առաջնայնությունը պատկանում էր ժողովրդական ժողովին[1]:

[1] **Романов П.М.** Истоки парламентаризма. - М., 1988. - С. 31-38.

Ամփոփելով ասվածը՝ ընդգծենք, որ իշխանությունների բաժանման սկզբունքը գործնականում իրագործելը դեռ բավարար պայման չէ պառլամենտարիզմի ծագման և զարգացման համար, ինչը ապացուցում է անտիկ Հունաստանի և Հին Հռոմի պատմությունը, որոնցում հանրապետական կարգերը վերածվեցին բռնապետության և դիկտատուրայի տարբեր ձևերի:

Խորհրդարանական կառավարման պահանջը մեծանում էր աշխարհի տարբեր երկրներում պետությունների զարգացմանն ու ամրապնդմանը զուգընթաց: Պետությունների տարածքների ընդլայնումը, ծավալների մեծացումը, տնտեսական հենքերի և արտադրության դժվարացումը, աճող ապրանքաշրջանառությունը, միջազգային գործունեության աշխուժացումը և նրանց կյանքի բազմաթիվ այլ ասպեկտներ առաջ էին քաշում օրենսդիր մարմինների զարգացման և ամրապնդման անհրաժեշտության հարցը: «Սեփականության ձևերի բազմազանությունը, արհեստագործական արտադրամասերը, գիտնականների, իրավաբանների, բժիշկների ընկերությունները, վանական և ասպետական ուխտերը, բոլորն ունեին իրենց «մասնավոր շահերը», որոնք պահանջում էին արտահայտվելու հնարավորություն»[1]:

XII դարում սկսեցին ձևավորվել պառլամենտական հաստատությունները Անգլիայում: Ավելի ուշ ի հայտ եկան ժողովներ, հավաքույթներ Իսպանիայում և Ֆրանսիայում: Քաղաքացիների կամ ընտրյալների (ավագանիների, լիազորների, ազնվականների) այդ ժողովներում քննարկվում էին տվյալ տարածաշրջանի համար արդիական հարցեր, ընդ որում՝ դրա շրջանակները սահմանափակելը թույլ էր տալիս նման հավաքույթներ անցկացնել համեմատաբար հաճախ: Քննարկվող հարցերի շրջանակը հետզհետե հստակ ուրվագծվում էր. ավելի հաճախ էին քննարկման թեմա դառնում ընդհանուր նշանակության հարցերը՝ ներառյալ պատերազմի ու խաղաղության հարցերը: Ժողովրդապետության այդ ձևերը կարելի է դիտել որպես խորհրդարանի պատմական նախատիպ և դրա կազմավորման առաջին փուլ:

[1] **Ковлер А.И.** Очерки по истории парламентаризма // Парламенты мира. - М., 1991. - С. 616.

Պառլամենտարիզմի զարգացման **երկրորդ փուլը** (XIII դ. սկիզբ - XVII դ. կեսեր) վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ պառլամենտարիզմի առաջատար տարրը՝ խորհրդարանները Եվրոպայում սկսում են ձեռք բերել պետական համաժողովի նշանակություն և այդ ժամանակից ի վեր կարելի է խոսել «խավային ներկայացուցչական» պառլամենտարիզմի մասին:

«Պառլամենտ» բառի նշանակության մասին միջին դարերում չկար միասնական կարծիք: «Parliamentum» բառը Եվրոպայի բոլոր երկրներում, որոնցում տարածված էր լատիներենը, նախապես կարող էր նշանակել «հարցազրույց», «բանակցություններ», (լատիներեն «Parlare - խոսել»): XII դարի կեսերին այն հանդիսավոր նիստի որոշակի իմաստ է ձեռք բերում՝ առավելապես նվիրված պետական գործերին: Եթե ի սկզբանե պառլամենտ էր կոչվում արքային կից նեղ խորհրդակցությունը, ապա այդ խորհրդաժողովի կազմի մեջ քաղաքացիների խավերի ընդգրկման և նրա լիազորությունների ընդլայնման արդյունքում պառլամենտ է դառնում կանոնավորապես հրավիրվող ներկայացուցչական խորհրդակցությունը՝ նվիրված պետական գործերին:

Բնութագրական է, որ առանց բացառության բոլոր քաղաքական գործիչներն ու փիլիսոփաները խորհրդարանի անհրաժեշտությունը բխեցնում են հասարակության մեջ սրվող հակասություններից, մասնավորապես իշխանության գործադիր և օրենսդիր թևերի միջև: Անգլիական պառլամենտի հիմնադիրները այսպես են հիմնավորել պառլամենտի անհրաժեշտությունը. «Այն բանից հետո, երբ մենք հանուն Աստծու և ի շահ մեր թագավորության բարօրության և ի նպաստ վեճերն ավելի հաջող հարթելու, որ ծագում են մեր ու բարոնների միջև... ստեղծում և շնորհում ենք նրանց ներքոգրյալ երաշխիքը, որպեսզի բարոններն ընտրեն քսան բարոնի թագավորությունից, ում կցանկանան, որոնք պետք է բոլոր ուժերով պահպանեն ու հետևեն և ստիպեն պահպանել խաղաղությունն ու ազատությունները, ինչպիսին մենք իրենց շնորհում ենք...»[1]:

[1] Նույն տեղում, էջ 618:

Անգլիայի խորհրդարանի ստեղծման առաջին քայլը կարելի է համարել 1215 թ. Անգլիայի թագավոր Հովհաննես Ա Անհողի ստորագրած Ազատությունների մեծ խարտիան՝ քաղաքական անկայունությունը հարթելու նպատակով: Թագավորական իշխանությունը, որը թուլացել էր անգլո-ֆրանսիական պատերազմում կրած անհաջողություններից, չկարողացավ ճնշել պետական կամայականություն ցուցաբերող հասարակության առավել ակտիվ մասի դիմադրությունը, ստիպված էր զիջումների գնալ հոգուտ ազնվականության և ունևոր հպատակների որոշ մասի: Բարոնների ճնշման ներքո թագավորն իր ու ժառանգորդների անունից ստանձնեց որոշակի պարտավորություններ, այդ թվում՝ չսահմանել հարկեր առանց ազնվականության խավը ներկայացնող կոլեգիալ մարմնի՝ թագավորական կուրիայի համաձայնության, որը 1265 թ. սկսեց կոչվել պառլամենտ:

Ազատությունների մեծ խարտիան բավական չէր հպատակների քաղաքական անվտանգությունն ապահովելու համար: Պառլամենտի օրենսդրական անդադար աշխատանքն ապահովելու անհրաժեշտությունից ծագեց և XIII դարի վերջին այն վերածվեց մշտական հիմունքներով գործող հաստատության: Պառլամենտի կայունությունն ամրապնդվեց XV դարում, **երբ ճանաչվեց դրա անդամների անձեռնմխելիությունը:**

Իրավունքների մասին օրենսգիրքը (1689 թ.) վերջնականորեն ճանաչեց պառլամենտը որպես պետական իշխանության պարբերաբար հրավիրվող մարմին: Իրավունքների մասին օրենսգիրքը ներկայացուցչական կառավարման երաշխիքներ սահմանելու նպատակով **արգելեց թագավորին իր որոշումներով դադարեցնել օրենքների գործողությունը, օրենսդրությունից բացառություններ անել, կամայականորեն հարկեր սահմանել, ուժով սպառնալ պառլամենտին, միջամտել ընտրություններին և խախտել քննարկումների ազատությունը պառլամենտում:**

XVI-XVII դարերում մի շարք երկրներում ստեղծվեցին միապետին կից խավային-ներկայացուցչական մարմիններ խորհրդակցական

գործառույթներով: Ռուսաստանում դրանք Բոյարական դուման և Զեմսկի ժողովն էին, Իսպանիայում՝ Կորտեսը և այլն:

Արևմտյան Եվրոպայի քաղաքական կառուցվածքի փոփոխությունները տեղի էին ունենում ավատատիրության շրջանակներում: Պետական կարգի ձևերի էվոլյուցիայի մեջ հստակորեն դրսևորվեց առանձին ազգային և բազմազգ պետական կազմավորումների ինքնուրույնության հետագա աճի միտում: Այն ուղեկցվում էր ազգային ինքնագիտակցության աճով և միջնադարյան տիպի համընդհանրական կապերի խզումով, որոնք մարմնավորվել էին պապականության հոգևոր և քաղաքական իշխանության մեջ: Պետության գոյության հարցում նրա նկատմամբ արտաքին գաղափարախոսական շահագրգռությունը վերացնելը միասնական կաթոլիկական աշխարհին պատկանելության միջոցով հանգեցրեց պետության ինքնաբավության գաղափարի ձևավորմանը, պետության նոր գաղափարախոսական հիմնավորումների փնտրտուքի, պետության ու նրա ղեկավարի էության ու նշանակության մասին տարատեսակ ուսմունքների առաջացմանը:

Այսպիսով, պառլամենտարիզմի կազմավորման ու զարգացման երկրորդ փուլում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ: Դրանք բնութագրվում էին **նախ՝** խավերի դիրքերի էական ամրապնդմամբ, որոնք պահանջում էին իրենց մասնավոր, կորպորատիվ շահերի պաշտպանություն, **երկրորդ՝** նախկինի պես գործնականում իշխանության բաժանման սկզբունքի չգոյությամբ, **երրորդ՝** եվրոպական որոշ երկրների քաղաքական համակարգում պառլամենտական հաստատությունների՝ իշխանության խավային–ներկայացուցչական մարմինների ի հայտ գալով, որոնք կատարում էին միապետի իշխանությունը սահմանափակելու գործառույթ, **չորրորդ՝** հասարակության բոլոր անդամների, ներառյալ ղեկավարների համար օրենքները պարտադիր կերպով պահպանելու սկզբունքի ներդրումով:

Երրորդ փուլը (XVII դ. վերջ - XIX դ.) բնութագրվում է բուրժուական պառլամենտարիզմի կազմավորմամբ՝ կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորման ու զարգացման պայմաններում:

Բացարձակ միապետության զարգացման պայմաններում դասային ներկայացուցչության մարմիններն աստիճանաբար կորցրեցին իրենց երբեմնի նշանակությունը: Քաղաքական առումով Եվրոպայի առավել զարգացած երկրներում ձևավորվեցին պետական իշխանության նոր, կապիտալիզմին հատուկ ձևեր: Այստեղ փոփոխություններն առնչվեցին նաև խորհրդարանին, որը հարստացավ նոր բովանդակությամբ, և մասնավորապես Անգլիայում հետագայում ճանաչվեց պառլամենտի գերակայությունը: Էական փոփոխությունները խորհրդարանի կարգավիճակում կապված էին բուրժուական-ազնվականական տարրերի տնտեսական հզորության աճով, որոնք հեղափոխությունների շնորհիվ հայտնվեցին իշխանության ղեկին: Այդ նույն փուլում, շնորհիվ հողատեր ազնվականության և երիտասարդ բուրժուազիայի քաղաքական ակտիվության, ի հայտ եկան խորհրդարանական տիպի կուսակցությունների նախատիպերը: Մասնավորապես Անգլիայում առաջացան պառլամենտական երկու խմբավորումներ՝ **«վիգերը»,** որոնք կազմված էին առավելապես վաճառականներից, ֆինանսիստներից, խոշոր ձեռնարկատերերից, հողատեր-ազնվականներից, և **«տորիները»,** որոնց աջակցում էր բնույթով ավելի պահպանողական, հիմնականում միջին կալվածատերերի խավը: Համանման գործընթացներ էին ծավալվել նաև Շվեդիայում, որտեղ բացարձակ միապետության տապալումից հետո հաստատվել էր դասա-խավային համակարգը:

Այս փուլին բնորոշ է նաև պառլամենտարիզմի գաղափարների զարգացումը Թ. Հոբսի, Ջ. Լոկի, Շ. Մոնտեսքյոյի, Ժ.Ժ. Ռուսսոյի աշխատություններում, 1787 թ. ամերիկյան սահմանադրությունը ստեղծողների քաղաքական տրակտատներում: Դրանցում հիմնավորվում են ժողովրդական ներկայացուցչության և օրինաստեղծության գլխավոր գաղափարները՝ որպես բացարձակապետության, իշխանության և քաղաքականության քաղաքական հայեցակարգի, տիրողների և ժողովրդի միջև հասարակական պայմանագրի մասին դոկտրինի հակաթեզ: Իմաստավորվում էր իշխանության բաժանման գաղափարը, որում զգալի տեղ էր տրվում օրենսդիր հաստատություններին: Այս

փուլում եզրակացություն է արվում ժողովրդական ներկայացուցչության և օրենսդրական գործունեության միջև կապի մասին, ամրագրվում է խորհրդարանի առաջնայնության սկզբունքը պետական իշխանության մարմինների համակարգում:

Լուսավորիչների գաղափարները հետագայում զարգացում ապրեցին XIX դարի գիտնականների աշխատություններում (Ի. Բենտամ, Գ. Հեգել, Ի. Կանտ, Ջ.Ս. Միլ, Ա. Թոքվիլ և ուրիշներ), որոնք կենտրոնացրել էին իրենց ուշադրությունը խորհրդարանական մեխանիզմները կատարելագործելու խնդիրների վրա, բացահայտում և հետազոտում էին տարբեր երկրներում ժողովրդավարության զարգացման գործընթացում առկա բացասական միտումները: Չնայած որոշ տարակարծություն-ներին՝ նրանք միակարծիք էին բազմաթիվ հիմնարար հարցերում: **Ընդհանրացնելով՝ այդ տեսակետները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ ժողովուրդը պետությունն ստեղծողն է, և բարձրագույն իշխանությունը պատկանում է նրան, իշխանության մեջ նրա առաջնայնությունն այն է, որ կարող է պահանջել իր մասնակցությունը կարգուկանոն հաստատելու գործին՝ Սահմանադրություն ընդունելու միջոցով, որը սահմանում է իշխանության բնույթը, սահմանները և ձևերը, պետության մեջ ամենքը հավասար էին օրենքի առջև, միապետի իշխանության աստվածատուր բնույթը ժխտվում էր, նա ենթարկվում էր օրենքներին, ինչպես ցանկացած մարդ, օրենսդրության մեջ գործում էր փոքրամասնության նկատմամբ մեծամասնության առաջնայնության սկզբունքը, քաղաքական կարգի հիմքում ընկած էին տարբեր խավերում միավորված մարդկանց շահերն ու պահանջմունքները, ուստի եթե քաղաքական վարչակարգը չէր բավարարում մարդկանց, նրանք իրավունք ունեին փոխելու այն: Ամբողջ իշխանությունը պետության մեջ բաժանվում էր մի քանի թևի՝ օրենսդիր իշխանությունը ներկայացուցչական բնույթի էր, ընտրվում էր ժողովրդի ուղիղ քվեարկությամբ, ուներ երկու հիմնական գործառույթ՝ հրապարակել օրենքներ և վերահսկել դրանց կատարումը, իշխանությունը պահվում էր հարկերից գոյացած միջոցների հաշվին:**

Բուրժուական պառլամենտարիզմի կազմավորումն իրականացավ բուրժուազիայի իշխող դասի վերածնվելու շնորհիվ, որը տեղի ունեցավ քաղաքական հեղափոխությունների արդյունքում՝ վերջ դնելով ավատատիրական արտադրական հարաբերություններին և ավատատիրական պետությանը: Հեղափոխության պայմանների և արդյունքների հետ սերտ կախվածության մեջ լուծում ստացավ նաև նորաստեղծ բուրժուական կամ բուրժուակալվածատիրական պետության ձևի հարցը: Այսպիսով, նշյալ ժամանակահատվածից սկսած կարելի է խոսել պառլամենտարիզմի՝ որպես պետական իշխանության կազմակերպման համակարգի մասին, հասարակությանը կառավարելու նպատակով, որին բնորոշ են օրենսդիր և գործադիր գործառույթների հստակ բաշխումը՝ ճանաչելով խորհրդարանի առաջնային դերը:

XIX դարում խորհրդարանը վերջնականորեն ձևավորվեց որպես պետության ինստիտուտ: Ընտրական օրենքները հիմք էին դառնում խորհրդարանի անդամների կանոնավոր ընտրության համար: Խորհրդարանն ըստ էության դարձավ օրենսդրության միակ աղբյուրը, միայն նրան էր պատկանում օրենքներ ընդունելու իրավունքը: Ձևավորվեցին խորհրդարանական ինստիտուտները՝ օրենսդրական գործընթացը, պատգամավորների կարգավիճակը, հստակեցվեցին հարաբերությունները գործադիր իշխանության, կուսակցությունների և մամուլի հետ: Մի շարք երկրներում խորհրդարաններն օժտվեցին օրենսդրական նախաձեռնության, կառավարության օրինագծերում լրացումներ կատարելու և կառավարությանը վերահսկելու իրավունքով, սկսեց գործել պատգամավորների վարձատրության կարգը, հաստատվեց կառավարությանը քննադատելու համար պատգամավորին պատասխանատվության չենթարկելու սկզբունքը: Կուսակցական-քաղաքական ընդդիմությունը ճանաչվեց խորհրդարանական համակարգի անխուսափելի տարրը:

Սակայն XIX դարը չդարձավ պառլամենտարիզմի հաղթանակի փառքն ու պսակը: Ընդհակառակը, Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում նկատվեց գրեթե լիակատար խզում պատգամավորների և նրանց միջև, ում նրանք

ներկայացնում էին: Խորհրդարանի հեղինակությունը շարունակաբար ընկնում էր, իսկ իշխանության մարմինն ինքնին ասես բանավեճային ակումբ լիներ, քաղաքական որոշումներ կայացնելու անընդունակ: Հանգամանքների բերումով պառլամենտարիզմի տևական ճգնաժամը համընկավ ժողովրդական զանգվածների ակտիվության վերելքի հետ: Ժողովրդական զանգվածները փորձում էին խորհրդականներին ու կառավարություններին թելադրել իրենց կամքը, հայտարարում էին իշխանության գալու իրենց հավակնությունների մասին: Ֆրանսիացի հետազոտող Մ. Գունելի կարծիքով, երբեմն թվում էր, որ կառավարման ներկայացուցչական այդ մոդելը կարող է խորտակվել զանգվածների ճնշման ներքո[1]: Ժողովրդական զանգվածների քաղաքական ակտիվությունը ստիպեց քաղաքական գործիչներին փոխզիջման գնալ, որի արդյունքը դարձավ հանրաքվեի ինստիտուտի առաջացումը, ժողովրդական վետոն, պետական կառավարմանը մասնակցության զանգվածների ընդլայնվող իրավունքները:

Ներկայացուցչական մարմինների վերացումից հետո բուրժուական հեղափոխությունները քաղաքական ասպարեզ դուրս բերեցին սոցիալական նոր ուժերի: Հասարակական հարաբերությունների փոխակերպումների շնորհիվ պետական կարգը մեծ մասամբ փոխզիջումային տարբերակ էր հասարակության բոլոր վճռորոշ ոլորտներում ոչ պաշտոնապես, բայց փաստացի գերիշխող բուրժուազիայի և պաշտոնապես կառավարող ազնվականության միջև:

Բացի այդ, տվյալ փուլին բնորոշ էր այն, որ Արևմուտքի երկրներում սկսեցին հայտնվել քաղաքական կուսակցություններ և հաստատվեց ընտրական իրավունքը (սկզբնապես նման իրավունքով օժտված էր միայն բնակչության արական մասը), կյանքի կոչվեց իշխանությունների բաժանման հայեցակարգը, որտեղ խորհրդարանին՝ որպես օրենսդիր և ներկայացուցչական մարմնի՝ կարևոր տեղ էր հատկացվում: Ընդ որում առաջին անգամ եզրակացություն էր արվում առ այն, որ ժողովրդի ներկայացուցչությունը կապ ունի օրենսդրական գործունեության, իսկ

[1] **Руденко В.Н.** Прямая демократия: модели правления, конституционно-правовые институты. - Екатеринбург: УрО РАН, 2003. - С. 89.

օրենքը՝ ընտրողների համաժողովրդական կամաարտահայտության հետ:

Պառլամենտարիզմի կազմավորման հարցում էական դեր է խաղացել հասարակական-քաղաքական և իրավական միտքը: Սակայն պառլամենտարիզմի տեսության և պրակտիկայի միավորումը տեղի ունեցավ միայն XIX-XX դարերի սահմանագծին, ինչը հետագայում հանգեցրեց ժամանակակից պառլամենտարիզմի հասուն ձևերի առաջացմանը:

Պառլամենտարիզմի կազմավորման **չորրորդ փուլն** ընդգրկում է XX դարը, որին բնորոշ է հասարակական-քաղաքական կյանքում պառլամենտարիզմի առաջատար տարրերի զարգացումն ու ներդրումը:

Այս փուլում Արևմուտքի երկրների գերակշիռ մասում պետական իշխանությունը ձևավորվում է իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա: Ուժեղանում է խորհրդարանների նշանակությունը պետության գործերի կառավարման ոլորտում, քաղաքական կուսակցությունները համատարած դառնում են քաղաքական գործընթացի ակտիվ սուբյեկտներ, ընտրական իրավունքը հետզհետե տարածվում է հասարակության բոլոր շերտերի վրա (բացի այն անձանցից, որոնք օրենքով սահմանված կարգով ճանաչվել են անգործունակ):

Եթե XX դարի առաջին կեսին պառլամենտարիզմը հարկադրված էր ապացուցել, նվաճել իր դիրքը իշխանությունների հիերարխիայում, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո այն դառնում է համընդհանուր ճանաչման արժանացած ինստիտուտ: Խորհրդարանները սկսում են խաղալ կենտրոնի դերը հասարակական կյանքում, դրանց հասունությունը դառնում է քաղաքական հասարակության հասունության կարևորագույն ցուցանիշը: Խորհրդարանական ինստիտուտները զարգանում, հարստանում էին մեծ փորձով, նրանց փոխգործակցությունը այլ ինստիտուտների, պետական իշխանության թևերի հետ ձեռք է բերում պետականության շարժիչ գործառույթի նշանակություն: Օրենսդիր գործունեությունը առաջնային զարգացում է ապրում, ձևավորման, կատարելագործման

գործընթացներ են սկիզբ առնում շատ երկրներում: Տեղի է ունենում տարբեր երկրների խորհրդարանների սերտ ինտեգրում, հայտնվում են նոր միջխորհրդարանական կառույցներ, որոնք լուծում են անկախ պետությունների միասնական համագոյակցության խնդիրներ:

Պառլամենտարիզմի ժամանակակից ձևը տարբերվում է դասականից և ստեղծվել է փուլ առ փուլ: XX դարում պառլամենտարիզմի ինստիտուտը զարգացման ընթացքում սկսեց նահանջել իր համար սովորական կանոններից, ինչը հետևանք էր ժողովրդական ներկայացուցչության գաղափարը կուսակցության ներկայացուցչության փոխակերպելու: Գործընթացի պատմական նախադրյալ դարձավ անցումը ընտրական ցենզերի համակարգից, արտոնակարգից համընդհանուր ընտրական իրավունքին, իսկ տեսական իմաստավորում՝ պլեբիսցիտար (հանրաքվեական) կուսակցական ժողովրդավարության հայեցակարգը, որի հիմքերը դրել էր 20-րդ դարի մեծ սոցիոլոգ Մաքս Վեբերը:

Ժողովրդի շահերը ներկայացնելու նոր մոտեցման առանցքում, որը տարբերվում էր ուղղակի ժողովրդավարության ձևերի մարմնավորումից, ընկած էր համընդհանուր և ուղղակի ընտրությունների միջոցով պետական կառավարմանը ժողովրդի անմիջական մասնակցության մասին թեզը: Այս կապակցությամբ առաջացավ միջնորդի անհրաժեշտություն՝ Ժողովրդական զանգվածների ու իշխանության միջև: Դա նշանակում էր ամբոխահաճո տրամադրությունների աճ և կուսակցությունների ակտիվության աճ քաղաքական կյանքում և օրինաստեղծ գործընթացում:

Խորհրդարանը ոչ միայն մարմին է, այլև բարդ, բազմատարր օրգանիզմ, որն ունի բազմազան կապեր ու հարաբերություններ պետության ու հասարակության մյուս ինստիտուտների հետ: Հենց այդ պատճառով էլ «խորհրդարան» հասկացությունն ունի համակարգաստեղծ նշանակություն պետականության և ժողովրդավարության համատեքստում:

Ավանդաբար խորհրդարանը դիտվում է որպես ժամանակակից պետության էական հատկանիշը, նրա կարևորագույն իշխանական մարմինը: Խորհրդարանը միակ ինստիտուտն է, որը ներկայացնում է

քաղաքական հանրույթը ոչ միայն ընդհանուր առմամբ, այլև իր ամբողջ բազմազանության մեջ: Ժամանակակից զարգացման քաղաքական համակարգերում քաղաքական շահերի միավորումը դառնում է խորհրդարանների առաջնային և յուրահատուկ խնդիրը: Հանրային շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններն առավել հաջող են ընթանում կայուն ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում: Առաջին հերթին, դրանք բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի բարձր մակարդակ ունեցող երկրներն են, որոնցում, խորհրդարանների ղեկավարների կարծիքով, օրենսդիր մարմիններում ներկայացվում են բնակչության փաստացի բոլոր սոցիալական, ֆինանսաարդյունաբերական և քաղաքական խմբերի շահերը: Ցածր կենսամակարդակ ունեցող երկրներում լուրջ հիմնախնդիր է սոցիալական ստորին շերտի շահերը ներկայացնելը: Այդ երկրների խորհրդարանների ղեկավարների կեսից ավելին համարում են, որ նշյալ խավերի շահերը չեն իրացվում, թեև հենց նրանք են կազմում բնակչության մեծամասնությունը[1]:

Այսպիսով, աշխարհի զարգացած երկրներում պառլամենտարիզմը հանդես է գալիս որպես գերակայության և օրենսդիր իշխանության արտահայտություն հասարակության մեջ: Խորհրդարանի դերն ու նշանակությունը նվազեցնելու, այն գործադիր իշխանությամբ փոխարինելու փորձերը ցույց են տալիս, որ պետության մեջ բավականաչափ զարգացած չէ քաղաքական և իրավական մշակույթը: Նման երկրների քաղաքական կյանքին բնորոշ են կամայականությունը, անօրինականությունը, պաշտոնյաների խիստ կոռումպացվածությունը, քաղաքական իրավիճակի անկայունությունը, բնակչության կենսամակարդակի անկումը: Դրա վառ օրինակն են ետխորհրդային երկրները, այդ թվում՝ Հայաստանը:

Պառլամենտարիզմը հասարակության բավականին բարձր աստիճանի ժողովրդավարությամբ օժտված լինելու, նրանում մարդու բնական հիմնարար իրավունքների և պարտականությունների

[1] **Романов Р.М.** Парламентаризм: теория, история и современность. - М., 2002. - С. 57.

գերակայության, նրա պաշտպանվածության բարձր մակարդակի, քաղաքացիական հասարակության զարգացվածության նշան է: Դրանում արտահայտվում են պատմական պահի, յուրաքանչյուր կոնկրետ երկրի կամ երկրի խմբի հասարակական և պետության կեցության, ազգային ավանդույթների, ժողովրդի իրավական մշակույթի և քաղաքական կամքի առանձնահատկությունները:

Ժամանակակից աշխարհի երկրների քաղաքական համակարգում մենք առանձնացնում ենք պառլամենտարիզմի այնպիսի տարատեսակներ, ինչպիսիք են՝

1) զարգացած սահմանափակ, «իմիտացիոն» պառլամենտարիզմը՝ կախված նրանում գործող պառլամենտարիզմի տարրերի փաստացի իրացման լրիվությունից և ուժից,

2) «ռացիոնալիզացված», «մինիստերիալացված», «տարանջատ» պառլամենտարիզմը՝ կախված խորհրդարանի և պետական իշխանության բարձրագույն այլ մարմինների միջև հարաբերությունների կառուցման կարգից:

Պառլամենտարիզմի առաջին շարքի տարատեսակներում արտահայտված են քաղաքական վարչակարգի առանձնահատկությունները (ամբողջատիրական, ավտորիտար, ժողովրդավարական), իսկ երկրորդ շարքի տարատեսակներում՝ կառավարման ձևի (հանրապետություն, միապետություն) և պետական կարգի (միատարր, դաշնություն, համադաշնություն) առանձնահատկությունները:

Զարգացած պառլամենտարիզմը կարող է գոյություն ունենալ և արդյունավետ գործառել միայն ժողովրդավարական հասարակության շրջանակներում, որտեղ լիովին իրացված են պառլամենտարիզմի այնպիսի հիմնարար տարրերը, ինչպիսիք են իշխանությունների բաժանման սկզբունքն ու իրավունքի գերակայությունը, պառլամենտարիզմի հաստատուն ավանդույթները, գոյություն ունեն հասուն քաղաքական հասարակություն և քաղաքական կուսակցություններ, որոնք ոչ միայն քաղաքական գործընթացների ակտիվ մասնակիցներ են, այլև

քաղաքական պատասխանատվություն են կրում հասարակության մեջ՝ ընդհանուր գործերի համար:

«Սահմանափակ» պառլամենտարիզմի մոդելը կառուցվում է խորհրդարանի լիազորությունները սահմանափակելու և գործադիր իշխանությանը դրա անուղղակի ենթակայության վրա: Պառլամենտարիզմի այդ մոդելը հատուկ է պառլամենտարիզմի ընթացիկ զարգացման փուլում գտնվող հասարակություններին, որոնցում հիմնականում հռչակված են ժողովրդավարական ազատությունները և պառլամենտարիզմի հիմնարար սկզբունքները, սակայն դրանք կյանքի են կոչվում ոչ լիարժեքորեն և կցկտուր: Պառլամենտարիզմի այդ մոդելը բնորոշ է, օրինակ, Ռուսաստանի, Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների համար, որտեղ հիմնականում հայտարարված են ժողովրդավարական ազատությունները և պառլամենտարիզմի հիմնարար սկզբունքները, սակայն դրանց իրացման պրակտիկան ունի թերավարտ և անհետևողական բնույթ:

«Իմիտացիոն» նմանակային պառլամենտարիզմի մոդելը բնորոշ է ծայրահեղ ավտորիտար և դրանից առավել՝ ամբողջատիրական վարչակարգերին, որոնցում կարող է տեղի ունենալ միայն պառլամենտարիզմի իմիտացիա (նմանակում): Այդօրինակ վարչակարգերում տեղի է ունենում իշխանության և քաղաքականության մենաշնորհում, իշխանությունները կարող են կառավարել սեփական հայեցողությամբ ընդունված օրենքների օգնությամբ, նվազագույնի է հասցվում կամ առհասարակ զրոյացվում է ներկայացուցչական ինստիտուտների ու ընդդիմության դերը, խախտվում է կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ինքնավարությունը:

«Ռացիոնալիզացված» պառլամենտարիզմի մոդելն ուղղված է առաջին հերթին նախագահական իշխանության ամրապնդմանը: Նման անհրաժեշտությունը ծագում է որպես գործադիր իշխանության թուլությունը և ամորֆությունը հաղթահարելու միջոց, որոնք կարող են հանգեցնել քաղաքական անկայունության: «Ռացիոնալիզացված» պառլամենտարիզմն իր մեջ համադրում է կիսանախագահական

հանրապետությանը բնորոշ տարրեր: Պառլամենտարիզմի այս մոդելն առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում՝ քաղաքական ճգնաժամը հաղթահարելու նպատակով, որն առաջացել է օրենսդիր և գործադիր թևերի միջև լիազորությունների հավասարակշռությունը խախտվելու հետևանքով: Ֆրանսիայի V Հանրապետության նոր Սահմանադրությունը, ի վնաս օրենսդիր իշխանության, նախագահին օժտել է բավականին մեծ իրավասություններով: Ֆրանսիայում նախագահի կարգավիճակի յուրահատկությունը «ռացիոնալիզացված» պառլամենտարիզմի շրջանակներում այն է, որ ելնելով իր լիազորություններից, նա ասես մասնակցում է իշխանության թևերից յուրաքանչյուրի գործունեությանը, և, միևնույն ժամանակ, դրանցից ոչ մեկը չի կարելի նույնացնել նախագահի կամ բացառապես նախագահի հետ:

Նախագահը չի կրում քաղաքական, այսինքն՝ խորհրդարանական պատասխանատվություն: Բացի այդ, պետության ղեկավարը Ֆրանսիայում օժտված է պետական իշխանության կազմակերպմանն առնչվող ցանկացած օրինագիծ հանրաքվեի դնելու իրավունքով (Ֆրանսիայի Սահմանադրություն, հոդված 11):

Սակայն, հարկավոր է խոստովանել, որ հանրաքվեն անցկացնելու հնարավորությունն առաջացնում է ձգտում՝ հենց ընտրողներին փոխանցելու բոլոր բարդ հարցերի լուծումները, ինչը ձգձգում է օրենսդրական գործընթացը և անորոշություն մտցնում դրա մեջ: Գործադիր իշխանության ներկայացուցիչների կողմից հանրաքվեների հաճախակի դիմելը թույլ է տալիս որոշումներ ընդունել՝ շրջանցելով խորհրդարանը: Դա նվազեցնում է ներկայացուցչական մարմնի նշանակությունը: Խորհրդարանին շրջանցելով որոշումներ ընդունելու պրակտիկան Ֆրանսիայի V Հանրապետությունում Շառլ դը Գոլի օրոք վկայում է այն մասին, որ հանրաքվեն կարող է ապակայունացնող գործոն դառնալ իշխանությունների բաժանման համակարգում: Տվյալ դեպքում համաժողովրդական քվեարկությունն օգտագործելը առավելություն է տալիս իշխանության գործադիր թևին[1]:

[1] **Пилипенко А.Н.** Парламентский контроль во Франции // Журнал российского права. - М., 2000. - С. 124-135.

«Ռացիոնալիզացված» պառլամենտարիզմը նախատեսում է մի շարք սահմանափակումներ խորհրդարանի կազմակերպման, կարգավիճակի և իրավասության հարցերում: Պառլամենտարիզմի նշյալ մոդելի շրջանակներում կառուցվածքային առումով նախապատվությունը տրվում է երկպալատ խորհրդարանին, քանի որ երկպալատությունը կարող է ապահովել զսպումների համակարգի գործողությունը խորհրդարանի ներսում: Էական սահմանափակումներ կան նաև խորհրդարանի օրենսդրական իրավասության հարցում: Նախ և առաջ՝ հանրապետության նախագահը կառավարության առաջարկով (կամ պալատների համատեղ առաջարկությամբ) կարող է հանրաքվեի դնել ցանկացած օրինագիծ, երկրորդ՝ սահմանադրությամբ սահմանվում են օրենսդիր գործունեության ոլորտները, որոնք բացառապես պետության ղեկավարի իրավասության ներքո են:

«Մինիստերիալ» կամ որ նույնն է «մինիստրական» պառլամենտարիզմի մոդելը բնութագրվում է երկու հիմնարար սկզբունքներով՝ խորհրդարանի՝ որպես գերագույն օրենսդիր մարմնի կարգավիճակով՝ առանց նրա օրենսդրական և վերահսկիչ լիազորությունների սահմանափակման, և խորհրդարանական կառավարմամբ, կառավարության խորհրդարանական պատասխանատվությամբ, որը, որպես կանոն, ստեղծված է խորհրդարանական մեծամասնության հիման վրա: Ընդ որում՝ կառավարությունն օժտված է օրենսդրական նախաձեռնությամբ, ինչպես նաև խորհրդարանն արձակելու վերաբերյալ պետության ղեկավարին միջնորդություն ներկայացնելու իրավունքով: «Մինիստերիալ» պառլամենտարիզմը մեծ մասամբ հիմնվում է համատեղությամբ կառավարությանն անդամակցելու վրա՝ պահպանելով պատգամավորական մանդատը: Դա թույլ է տալիս ներգրավել կառավարությունում ոչ միայն կառավարող կուսակցությունների առաջնորդներին, այլև խորհրդարանական մեծամասնության հեղինակավոր այլ պատգամավորների և դրանով իսկ վերահսկել խորհրդարանը՝ ստանալով միաժամանակ զանգվածային կուսակցական աջակցություն:

«Տարանջատ» պառլամենտարիզմը հիմնականում բնորոշ է այն հասարակություններին, որտեղ խորհրդարանի և պետության ղեկավարի միջև հարաբերությունները հիմնվում են իշխանությունների խստագույն բաժանման, դրանց զգալի ինքնուրույնության, զսպումների, հակակշիռների և փոխկախվածության համակարգի վրա: Նման պառլամենտարիզմի պայմաններում պետական իշխանության օրենսդիր (ներկայացուցչական) մարմինը կարող է սահմանափակել պետության ղեկավարի գործողությունները օրենքների օգնությամբ, իսկ նախագահին օժտված է խորհրդարանի որոշումների նկատմամբ հետաձգող վետոյի իրավունքով:

Չնայած ժամանակակից պառլամենտարիզմի մի քանի մոդելներին, այնուամենայնիվ ստիպված ենք փաստել, որ **«մաքուր»,** այսինքն՝ մյուսներից լիովին տարբերվող մոդելներ պետական պրակտիկայում չեն եղել, քանի որ յուրաքանչյուրում, ի շարս իր սեփական տիպային հատկանիշների, միշտ առկա են ուրիշների հատկանիշներ:

Մեր այս պնդումը համընկնում է Վ.Ե. Չիրկինի տեսակետի հետ, որը նշում է, որ ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի հստակորեն է դրսևորվում պետական կառավարման համահավաք, խառը, անցումային ձևեր ստեղծելու միտումը: Նախագահական, խորհրդարանական հանրապետության, դաշնության, ինքնավարության, պետական վարչակարգերի նախկին դասական ձևերը աստիճանաբար վերանում են, դրանց փոխարինում են կիսանախագահական, կիսախորհրդարանական հանրապետությունները, տարածաշրջանային պետությունները, որոնցում զուգորդվում են միատարրության, դաշնության, ինքնավարության հատկանիշները: Առաջանում են պետական իշխանության իրականացման նոր մեթոդներ, պետական վարչակարգերի այլ ձևեր, որոնք միավորում են ավտորիտարիզմի և ժողովրդավարության որոշ տարրեր[1]:

Մշակելով իշխանության տեսությունը՝ որոշ քաղաքագետներ և փիլիսոփաներ վերանայում են ժողովրդավարության ավանդական

[1] **Чиркин В.Е.** Государственное и муниципальное управление. - М., 2004. - С. 65.

սկզբունքները: Այդ առումով իշխանությունների բաժանման տեսությանը փոխարինելու է գալիս «միասնական իշխանության» հայեցակարգը, խորհրդարանի առաջնայնության սկզբունքը փոխարինվում է գործադիր իշխանության մարմիններում հիմնական առաջնահերթությունները կենտրոնացնելու անհրաժեշտության հիմնավորմամբ, ժողովրդական ներկայացուցչության տեսությունը հայտարարվում է հնացած և արդի պայմաններում ոչ կիրառելի:

Իսկապես, արդի դարաշրջանում օրենսդիր և գործադիր իշխանությունների հարաբերակցությունը պետության մեջ փոփոխվել է: Գործադիր իշխանությունն իր ձեռքում է կենտրոնացրել թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության իրականացման բոլոր առավել կարևոր լիազորությունները: Միտումը դրսևորվում է վարչապետի (կամ նախագահի, եթե նա գլխավորում է կառավարությունը) լիազորությունների աճով, որը հնարավորություն է ստանում ինքնուրույն ընդունելու կարևորագույն քաղաքական որոշումներ:

Իշխանությունների բաժանմանը նվիրված աշխատությունների մեծ մասում հիշատակված է խորհրդարանի՝ որպես սոցիալական շերտերի կամ ազգի ներկայացուցչական մարմնի՝ պետական իշխանության այլ թևերի հետ փոխգործակցության խնդրի մասին, իսկ իշխանությունների բաժանումը, ինչպես գիտենք, կոչված է արդարացնելու «խորհրդարանի առաջնայնության» կամ «իշխանությունների հավասարակշռության» տեսությունից հրաժարվելը, ապացուցելու պետական կառավարման հիմնական լծակները գործադիր իշխանության ձեռքը հանձնելու նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը:

Պառլամենտարիզմը հնարավոր է իշխանությունների բաժանման սկզբունքը հարգելու դեպքում, երբ իրականացվում է հստակ սահմանազատում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործառույթների միջև: Այս առումով, սահմանելով պառլամենտարիզմի մասնակցության աստիճանը, դերն ու տեղը հասարակության կառավարման համակարգի կազմակերպման մեջ, որպես պառլամեն-

տարիզմի գաղափարների իրացման արդյունք գործնականում կարելի է առանձնացնել հետևյալ պայմանների ստեղծումը.

1**) ներկայացուցչական կառավարում**,

2)**խորհրդարանական կառավարում,** որը ներառում է խորհրդարանում ուժերի հարաբերակցության հիման վրա կառավարության ձևավորումը և նրա առջև կառավարության պատասխանատվությունը,

3) **կաբինետի կառավարում**, այսինքն՝ գործադիր իշխանությունը պետության ղեկավարից կառավարությանն է փոխանցում այդ թվում և վետոյի իրավունքն ու խորհրդարանը վաղաժամկետ արձակելու իրավունքը:

Վերոնշյալի հիման վրա կարելի է դասակարգել պառլամենտարիզմի հետևյալ մոդելները.

1) **թերի պառլամենտարիզմ**, որի պայմաններում ներդրվում է կառավարության ձևավորման խորհրդարանական սկզբունքը, սակայն բացակայում է կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև,

2) **խորհրդարանական կառավարում,** որը ենթադրում է խորհրդարանի գերակայության և պառլամենտարիզմի հիմնական սկզբունքների առկայություն խորհրդարանում ուժերի հարաբերակցության հիման վրա, կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև, գործադիր իշխանությունը պետության ղեկավարից կառավարությանը փոխանցում,

3) **մոնիստական պառլամենտարիզմ,** որը հիմնված է պառլամենտարիզմի միևնույն սկզբունքների վրա, բայց որին բնորոշ է իշխանության միակ աղբյուրը՝ խորհրդարանը: Դրա օրոք պետության ղեկավարը նույնիսկ ձևականորեն հանդես չի գալիս որպես իշխանության աղբյուր և չի տիրապետում ոչ մի քաղաքական իշխանության,

4) **դուալիստական պառլամենտարիզմ,** որը հենվում է օրենսդիր և գործադիր իշխանությունների հավասարակշռության վրա:

Այսպիսով, հարաբերականորեն «մաքուր» պառլամենտարիզմ կարելի է համարել խորհրդարանական կառավարումն ու մոնիստական

պառլամենտարիզմը, որոնք հիմնվում են խորհրդարանի գերակայության վրա: Պետք է նշել, որ ժամանակակից պետական համակարգերի զարգացման հիմնական միտումը խորհրդարանի քաղաքական դերի նվազումն է և գործադիր իշխանության ուժեղացումը:

Քննարկելով այն հարցը, թե պառլամենտարիզմը գոյություն ունի՞ կամ բացակայու՞մ է այս կամ այն երկրի քաղաքական համակարգում, առաջնահերթը ճշտելն է՝ ունի՞ արդյոք խորհրդարանը բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմնի կարգավիճակ և լիազորություններ: Խորհրդարանական համակարգի դեպքում, որի դասական օրինակը ցայսօր **մնում է Մեծ Բրիտանիան**, պառլամենտարիզմը որպես երևույթ ներկայացված է առավելագույնս լիարժեք: Սակայն, եթե նկատի ունենանք, որ պառլամենտարիզմի կարևորագույն բնութագիրը կառավարության պատասխանատվության սկզբունքն է խորհրդարանի առջև, ապա կիսանախագահական հանրապետության պայմաններում ևս, օրինակ, ժամանակակից **Ֆրանսիայում**, պառլամենտարիզմը պահպանվում է բավականաչափ մեծ ծավալներով:

Ավելի բարդ խնդիր է այն, թե ինչպես է խորհրդարանը հարաբերակցվում կառավարման համակարգի հետ նախագահական տիպի հանրապետությունում: Այստեղ առանցքային դեր է խաղում այն, թե ինչպիսին է նախագահական հանրապետությունը՝ ժողովրդավարական կամ ոչ ժողովրդավարական՝ քաղաքական վարչակարգի նմանությամբ: Եթե նախագահական հանրապետությունը ենթադրում է իշխանությունների հետևողական և սահմանադրորեն ամրագրված բաժանում, որտեղ խորհրդարանը բարձրագույն օրենսդիր և ներկայացուցչական մարմինն է, ապա հիմքեր կան պնդելու, որ նախագահական հանրապետության պայմաններում ևս պահպանվում են պառլամենտարիզմի առաջատար տարրերը:

Մեծ Բրիտանիայում, որն իրավամբ համարվում է պառլամենտարիզ-մի հայրենիքը, խորհրդարանը կազմված է երկու պալատներից՝ Համայնքների պալատ և Լորդերի պալատ: Համայնքների պալատը

պետական իշխանության միակ ընտրովի կենտրոնական մարմինն է: Լորդերի պալատը ձևավորվում է ոչ ընտրական հենքով: Դրա անդամ լինելը պայմանավորված է ազնվականության տիտղոս ունենալով, ինչը հիմք է պալատի անդամ դառնալու համար: **Մեծ Բրիտանիայում չկա Սահմանադրություն՝ որպես հիմնական օրենք,** սակայն գոյություն ունեն մի շարք հիմնարար օրենքներ, որոնք սահմանում են իշխանության թևերի իրավասություններն ու կարգավորում փոխհարաբերությունները: Անգլիական խորհրդարանի իրավասությունն անսահմանափակ է:

Անգլիական խորհրդարանի գերակայությունը իշխանությունների համակարգում ենթադրում է. **1)** օրենքի գերակայություն՝ ոչ ոք, բացի խորհրդարանից, չի կարող օժտված լինել օրենքներ ստեղծելու իրավունքով, իսկ օրենքներն իրենց իրավաբանական ուժով ավելի բարձր են, քան իշխանության մարմինների ցանկացած նորմատիվ իրավական ակտ, **2)** պետական բյուջեն հաստատելու և հարկեր սահմանելու իրավունք, **3)** խորհրդարանի առջև կառավարության կոլեկտիվ պատասխանատվություն, **4)** դատավորներին հաստատելու իրավունք**, 5)** համանման մրցակից իշխանությունների բացակայություն[1]: Միանգամայն ակներև է, որ Մեծ Բրիտանիայում խորհրդարանը գերիշխող դիրքեր է զբաղեցնում գործադիր իշխանության նկատմամբ: Այստեղ հստակ և հետևողականորեն է իրագործվում գործադիր իշխանության որոշակի կախվածությունը օրենսդիր իշխանությունից: Այնուամենայնիվ, հարկ է ընդունել և այն, որ նույնիսկ այդ պայմաններում պահպանվում է կառավարական մարմինների նշանակալի դերը պետական գործառույթների իրականացման գործում:

Ինչ վերաբերում է կառավարության ձևավորմանը, ապա համայնքների պալատը անմիջականորեն մասնակցում է դրան: Կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի անդամների կազմից, պատասխանատվություն է կրում խորհրդարանի՝ Համայնքների պալատի առջև և անվստահության քվե ստանալու դեպքում պարտավոր է հրաժարական տալ, և վարչապետն էլ իր հերթին միապետի

[1] Конституционное (государственное) право зарубежных стран. - М., 1999. - С. 407.

համաձայնությամբ ունի խորհրդարանը վաղաժամկետ արձակելու և նոր ընտրություններ հայտարարելու իրավունք: Այսպիսով, անվստահության քվեն և խորհրդարանը վաղաժամկետ արձակելու իրավունքը երկու գլխավոր հատկանիշներն են, որոնք հավասարակշռում են գործադիր և օրենսդիր իշխանությունների դերն ու նշանակությունը:

Նախագահական հանրապետությունում իշխանությունների բաժանման սկզբունքն արտահայտվում է իշխանության երեք թևերից յուրաքանչյուրի իրավաբանական հավասարությամբ և միմյանցից անկախությամբ: Սակայն իշխանության երեք թևերից յուրաքանչյուրի ինքնուրույնությունն ու անկախությունը չի նշանակում նրանց լիակատար առանձնացում: Գործնականում դա կարող է հանգեցնել անհամաձայնության և հակամարտության: Արդյունավետ իշխանություն հնարավոր է միայն նրա տարբեր թևերի համագործակցության դեպքում: Ուստի, նախագահական հանրապետությունում պարտադիր ստեղծվում է փոխհամագործակցության, զսպումների ու հակակշիռների մեխանիզմ, ինչը կոչված է ապահովելու իշխանության բոլոր թևերի ինքնուրույնությունն ու համագործակցությունը:

Ներկայումս ԱՄՆ-ում խոսք չի կարող լինել իշխանությունների բացարձակ բաժանման կամ դրանց իրավասությունները հստակորեն բաժանելու մասին: Կոնգրեսը կորցրել է օրինաստեղծման բացառիկ իրավունքը: Նախագահն ու բազմաթիվ գերատեսչություններ օժտված են նորմատիվ ակտեր ընդունելու իրավունքով: Այն բխում է կամ նախագահին տրված լիազորություններից, կամ պատվիրակվում է հենց Կոնգրեսի կողմից[1]:

ԱՄՆ-ում բացակայում է խորհրդարանական պետությունների գլխավոր հատկանիշներից մեկը՝ կառավարության խորհրդարանական պատասխանատվության ինստիտուտը: Այստեղ պալատներից ոչ մեկը չի կարող պարտադրել նախագահին կամ կաբինետին հրաժարական տալ նրանց քաղաքական կուրսին հավանություն չտալու ճանապարհով: Սակայն կառավարության պատասխանատու չլինելը

[1] **Лафитский В.И.** Конгресс США // Парламенты мира. - М., 1991. - С. 299.

բնավ հավասարազոր չէ անպատասխանատվությանը: Ամերիկյան խորհրդարանի պալատները իրավասու են քննարկելու և լուծելու նախագահի և այլ պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը՝ նրանց կողմից այնպիսի արարքներ թույլ տալու դեպքում, որոնք որակվում են որպես ծանր իրավախախտումներ կամ ոտնձգություն սահմանադրության նկատմամբ:

Նախագահական հանրապետության յուրահատկությունն այն է, որ օրենսդիր իշխանությունն ինքն է առաջարկում և ընդունում օրենքները: Խորհրդարանական հանրապետություններում օրենսդրական նախաձեռնության իրավունքը սովորաբար կառավարության մենաշնորհն է: Նախագահական հանրապետությունում գործադիր իշխանությունը օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չէ (բացառությամբ բյուջեի): Այն նախապատրաստում է առավել կարևոր և էական օրինագծերը: Սակայն իրավաբանորեն գործադիր իշխանությունը զրկված է օրենսդրական նախաձեռնության իրավունքից և պետք է որոնի տարբեր ուղիներ՝ օրինագծերը պալատների քննությանը ներկայացնելու համար: Կառավարության օրինագիծը կարող է փոփոխվել և լրացումների ենթարկվել խորհրդարանականների կողմից առանց կառավարության նախաձեռնության[1]:

Չի կարելի չնշել և այն հանգամանքը, որ ինչպես նշում է ամերիկյան հայտնի քաղաքագետ Խուան Լինցը՝ նախագահական համակարգերը հղի են քաղաքական մշակույթի ներսում հարուցված լուրջ պառակտումներով, նախագահի և կոնգրեսի միջև սուր կոնֆլիկտներով, դրանց հաղթահարման բավականին արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությամբ[2]: Այս առումով ԱՄՆ նախագահ Թրամփի օրինակը շատ ուսանելի է:

Արտաքուստ թվում է, թե խորհրդարանական համակարգերն ավելի կայուն են հարմարեցված ճգնաժամային իրավիճակներին, սակայն այս պնդումը հազիվ թե կարելի է համարել բացարձակ ճշմարտություն:

[1] Նույն տեղում, էջ 296-297:

[2] **Линц Х.** Опасность президентства // Полис, 2001, № 5. - С. 54-55.

Մեր կարծիքով, խորհրդարանական հանրապետություններին ևս ոչ պակաս ներհատուկ են անկայունությունը և իշխանության տարբեր ճյուղերի միջև կոնֆլիկտները, հաճախադեպ կառավարական ճգնաժամերը:

Ի տարբերություն Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի, որոնցում համապատասխանաբար տիրապետում են խորհրդարանական միապետությունն ու նախագահական կառավարման ձևը, քաղաքական իշխանության ֆրանսիական համակարգը կարելի է դասել այսպես կոչված խառը կառավարման ձևին:

Կառավարման նման մոդելի ամբողջ մեխանիզմը նպատակաուղղված է առաջին հերթին այն բանին, որ առավել արդյունավետ դարձնի պետական ապարատի աշխատանքը, ինչին նպաստում է օրենսդիր և գործադիր իշխանության համագործակցությունը:

Խառը կառավարման մոդելի կողմնակիցների կարծիքով՝ իշխանությունների բաժանման սկզբունքը մաքուր տեսքով գործնականում հանդիպում է շատ հազվադեպ: Ավելի հաճախ առկա է իշխանությունների խառը համակարգը: Այդ դեպքում առաջանում է անհրաժեշտ հավասարակշռությունը խախտելու վտանգը, ինչը հանգեցնում է կամ խորհրդարանի գերակայությանը, որը ծնում է անկայունություն և ճգնաժամային երևույթներ, կամ գործադիր իշխանության գերիշխանությանը, որը հղի է միահեծան կառավարմամբ կամ դիկտատուրայով: Այդպիսի վտանգը թոթափելու և օրենսդիր ու գործադիր իշխանությունների հավասարակշռությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախագահ-դատավորի ինստիտուտ:

Խառը տիպի կառավարման ձև ունեցող երկրներում հակակշիռների համակարգը ևս յուրօրինակ է: Գործադիր իշխանությունը դրանցում երկակի բնույթի է: Այն կիսված է հանրապետության նախագահի և կառավարության միջև: Այն դեպքում, երբ նախագահն ու վարչապետը ներկայացնում են քաղաքական տարբեր ճամբարներ, այդ հակակշիռը ձեռք է բերում իրական և նշանակալի բնույթ: Նույնը կարելի է ասել նաև խորհրդարանի երկպալատ կառուցվածքի մասին: Օրենսդրական ակտն

ընդունվում է, երբ արժանանում է հավասարապես երկու պալատների հավանությանը: Իսկ եթե նրանք համաձայնության չեն հասնում, օրենքի նախագիծը մերժվում է:

Ֆրանսիական խառը կառավարման ձևի դեպքում նախագահն ստանում է զգալիորեն ավելի կարևոր դեր, քան խորհրդարանական մոդելի դեպքում: Նման համակարգերում պետության նախագահն ընտրվում է ուղղակի ընտրություններով: Նա էապես ազդում է կառավարման ձևավորման և առանցքային պաշտոններում նշանակումների վրա: Սակայն կառավարությունը ոչ միայն կախված է նախագահից, այլև պատասխանատու է խորհրդարանի առջև և կարող է փոխվել վերջինիս կողմից:

Սահմանադրական կարգավորումից զատ՝ կարևոր դեր են խաղում կուսակցական համակարգի կառուցվածքը և խորհրդարանական մեծամասնության փաստացի վերաբերմունքը: Ֆրանսիայի նախագահը միայն այն դեպքում կարող է ամուր պահել իր դիրքերը, երբ ունի խորհրդարանական մեծամասնություն: Հակառակ դեպքում, երբ նախագահը ներկայացվում է Ազգային ժողովի մեծամասնություն չունեցող ուժի կողմից, իշխանություն կրողը փաստացի դառնում է վարչապետը[1]:

Ֆրանսիայի Ազգային ժողովի նախկին նախագահ Է. Ֆորի կարծիքով՝ «ժամանակակից ֆրանսիական խորհրդարանը չունի այն դերը, որ խաղում էր նախկինում, այն նահանջում է երկրորդ պլան, այն դեպքում, երբ գործադիր իշխանությունը հետզհետե ավելի է ուժեղանում: Այստեղ առկա է նահանջ ժողովրդավարությունից: Խորհրդարանը փոխում է ոչ ավելի, քան կառավարության առաջարկածի մեկ տոկոսը, ուստի ֆրանսիացիները հումորով այն անվանում են գրանցող պալատ»[2]:

Սակայն հարցերը, որոնք վերաբերում են Ֆրանսիայի կյանքի հիմնարար հիմքերին, նախկինի պես գտնվում են խորհրդարանի իրավասության ներքո: Եվ չնայած սահմանափակ իրավասությանը՝

[1] **Хубнер Е.** Парламентаризм и правительственная система // Полис, 1992. - С. 43.

[2] Интервью Эдгара Фора газете “Известия”, 17.06.1988.

ֆրանսիական խորհրդարանն օժտված է անկախությամբ՝ մյուս իշխանությունների հետ փոխհարաբերություններում:

Պառլամենտարիզմի համաշխարհային պրակտիկայում գոյություն ունի խորհրդարանի կառուցվածքի երկու տարատեսակ՝ **միապալատ և երկպալատ:** Ընդ որում, բազմամյա փորձը ցույց է տալիս, որ երկպալատ համակարգի վրա հիմնված խորհրդարան կառուցելուն հակված են դաշնային տարածքային հիմնակառուցվածք ունեցող պետությունները: Միապալատ խորհրդարաններ, ինչպես նաև երկպալատ խորհրդարանների ստորին պալատներ ձևավորելու գործընթացը տեղի է ունենում ընտրությունների միջոցով, ինչը ապահովում է ժողովրդի անուղղակի ներկայացուցչություն:

Սկսած 1970 թվականներից երկպալատ խորհրդարաններ ձևավորելը դառնում է համաշխարհային միտում: Եթե 1970-ականներին երկպալատ խորհրդարանները գործում էին աշխարհի 45 երկրներում, ապա ներկայումս նման երկրների թիվը հասել է 67-ի, և 12 երկիր ևս ձեռնամուխ է եղել երկրորդ պալատ ստեղծելուն: Այդ միտումը պայմանավորված է առաջին հերթին այն բանով, որ երկպալատությունը հնարավորություն է տալիս հաշվի առնելու ժամանակակից հասարակության տարածաշրջանային և ազգային բազմազանությունը, լրացուցիչ երաշխիքներ է տալիս կայունությունն ապահովելու համար, նաև հաշվի առնելու «ինստիտուցիոնալ փաստարկները՝ կապված օրինագծերը լրացուցիչ կերպով գնահատող մարմին ստեղծելու հետ»[1]:

Պետական կառուցվածքի և քաղաքական կառավարման օպտիմալ ձևերի փնտրտուքը շարունակվել է հազարամյակներ: Ընդ որում՝ չի կարելի չհամաձայնել ֆրանսիացի սոցիոլոգ Ռ. Արոնի կարծիքին, որ. «Ողջամիտ չէ այն պնդումը, թե մի վարչակարգը լավն է, մյուսը՝ վատը, մեկը մարմնավորում է բարին, մյուսը՝ չարը: Երկուսն էլ կատարյալ չեն, թեև յուրաքանչյուրը յուրովի»[2]: Այս պնդումը վերաբերում է և՛ միապետական, և՛ նախագահական, և՛ խորհրդարանական, և՛ սոցիալիստական կառավարման մոդելներին:

[1] **Кокули Дж**. Двухпалатность и разделение властей в современных государствах // Полис, 1997. - С. 150.

[2] **Арон Р.** Демократия и тоталитаризм. - М., 1996. - С. 67.

Յուրաքանչյուր մոդել անկատար է յուրովի, թեև ներուժի առումով յուրաքանչյուրն օժտված է կառուցողական ուժով: Ամեն ինչ կախված է կոնկրետ պատմական պայմաններից, ինքնիշխան ժողովրդի և իշխանության ընդհանրական քաղաքական կամքից, իշխող ընտրանու արհեստավարժությունից, բարոյական և քաղաքական նախապատվություններից: Նախագահական հանրապետության ընդերքում պարփակված առավել էական թերությունը ժողովրդավարական ազատությունները սահմանափակելու միտումն է և ավտորիտարիզմի վերածննդի իրական վտանգը[1]:

Ժողովրդավարական պետություններում գործադիր իշխանության գործունեության ընդհանուր սկզբունքն այն է, որ ցանկացած կառավարություն պետք է վայելի խորհրդարանի վստահությունը և վերահսկվի նրա կողմից:

Խորհրդարանական վերահսկողության առանձնահատկությունն առաջ է բերում պատասխանատվության հիմնախնդիրը, որը ձևական առումով պառլամենտարիզմի հիմքն է: Խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության խնդիրն ունի բազմաթիվ եզրեր, և ինչպես ցույց է տալիս խորհրդարանի գործունեությունը, այն սերտորեն կապված է խորհրդարանն արձակելու ընթացակարգի հետ:

Ըստ այդմ՝ մեզ առաջին հերթին հետաքրքրում է երեք հիմնական հարց. 1) խորհրդարանական պատասխանատվության նշանակությունը, 2) խորհրդարանական պատասխանատվության ձևերը, 3) պատասխանատու կառավարությունը և խորհրդարանի արձակումը:

Խորհրդարանական պատասխանատվություն ասելով նկատի է առնվում, նախ և առաջ, քաղաքական պատասխանատվությունը: Խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության սկզբունքը բխում է ժողովրդական ինքնիշխանությունն արտահայտելու ներկայացուցչական իրավունքը ճանաչելուց: Որքանով օրենսդիր իշխանությունը պետության բարձրագույն իշխանությունն է, այդքանով կառավարությունը կարող է կատարել իր պարտականություններն

[1] Նույն տեղում:

այնքան ժամանակ, քանի դեռ վայելում է ժողովրդի քվեով ընտրված մարմնի վստահությունը: Սրանից բխում է խորհրդարանի իրավունքը՝ վերահսկելու կառավարության գործունեությունը:

Գործնականում, արդի դարաշրջանում խորհրդարանն իսկապես վերահսկողություն չի իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Այսպես, օրինակ Անգլիայում «Համայնքների պալատը չի վերահսկում ոչ կաբինետը, ոչ պետական ապարատը, ոչ էլ զինված ուժերը: Այն գլխավորապես հանդես է գալիս որպես լայն ներկայացուցչական ժողով (ֆորում) կառավարությանը քննադատելու, չարաշահումները դատապարտելու, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու համար»[1]:

Կառավարության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության միջոցների շարքին են դասվում հետևյալ մեթոդները. կառավարությանը վստահության հայտնելու հարց առաջադրելը կամ նրան քննադատելը, հարցապնդում անելը, պատգամավորների հարցումները, կառավարության անդամներին դիմելը: Բացի այդ, կառավարության գործունեությունը վերահսկելու նպատակով կարելի է օգտագործել օրինագծերը քննարկելու համար հատկացված ժամանակը և այլն:

Խորհրդարանական պետություններում կառավարությունը պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև և պարտավոր է հրաժարական տալ վերջինիս կողմից անվստահության քվե ստանալիս կամ եթե օգտագործել է խորհրդարանն արձակելու իրավունքը՝ նոր ընտրություններում պարտվելու դեպքում: Այդ սկզբունքը գործում է Ֆրանսիայում: Գերմանիայում խորհրդարանը կարող է հասնել գործող կառավարության հրաժարականին միայն նոր կանցլերի ընտրությամբ, ինչը էականորեն սահմանափակում է կառավարության պատասխանատվությունը օրենսդիր մարմնի առջև:

Գործադիր իշխանությունից բացի, խորհրդարանական վերահսկողության օբյեկտ են պետության ղեկավարը, դատական իշխանությունը, տեղական ինքնակառավարումը, ինչպես նաև պետական և մասնավոր ձեռնարկությունների գործունեությունը:

[1] **Харвей Дж., Худ. К.** Британское государство. - М., 1961. - С. 71.

Վերահսկողական գործողությունների իրականացման ծավալը նույնը չէ, երբեմն այն կախված է կառավարման ձևից և պետական կառուցվածքից: Կառավարման ձևերով և պետական վարչակարգով պայմանավորված՝ հաճախ խորհրդարանն ինքը ևս գործնականում գտնվում է կառավարության վերահսկողության ներքո կամ, համենայն դեպս, ենթարկվում է նրա բավականին ուժեղ ազդեցությանը:

Մի շարք երկրներում հաստատվում է **գաղտնի վերահսկողություն** խորհրդարանի օրենսդրական գործունեության նկատմամբ: Դրան զուգընթաց՝ ժամանակակից առաջատար բոլոր երկրներում, բացի Մեծ Բրիտանիայից, խորհրդարանի օրենսդրական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ընդունում է օրինականացված ձևեր, այսպես կոչված, սահմանադրական հսկողության տեսքով: Օրինակ՝ ԱՄՆ-ում դա Գերագույն դատարանի կողմից սահմանադրության մեկնաբանումն է, Գերմանիայում՝ Դաշնային Սահմանադրական դատարանի վերսահմանադրական որոշումները:

Այսպիսով, ժամանակակից պետությունների համար կառավարության խորհրդարանական պատասխանատվության սկզբունքի թուլացումը և գործադիր իշխանության ամրապնդումն ընդհանուր միտում է: Այն պայմանավորված է հասարակական կյանքի բարդացմամբ, պառլամենտարիզմի չափից շատ ներխուժումը գործադիր իշխանության գործունեության ոլորտ կանխելու անհրաժեշտությամբ[1]:

Մեր կարծիքով՝ ժամանակակից պառլամենտարիզմի հեղինակությունը թուլացնող և իշխանության գործադիր թևի ազդեցությունն ուժեղացնող գործոնները հանգում են հետևյալին.

1. Շնորհիվ իր գործունեության առանձնահատկության՝ գործադիր իշխանության ուղղահայացը տիրապետում է կադրերի, ինչպես նաև ֆիզիկական և նյութական միջոցների, ինչը թույլ է տալիս օպերատիվորեն ազդել իրավիճակի վրա: Ուստի, հասարակության մեջ թվացյալ մտայնություն է տարածվում, որ ոչ թե օրենքներ ընդունող

[1] **Тимошенко И.Г.** Парламентский контроль в Великобритании // Журнал рооссийского права. - М., 2000. - С. 130-137.

խորհրդարանականներից, որոնց գործողությունների իրական արդյունքները երևում են ոչ այնքան արագ, այլ հենց կառավարությունից է կախված գործերի իրական վիճակը: Հետևաբար, հաճախ հաջողությունները վերագրվում են գործադիր իշխանությանը, այլ ոչ թե օրենսդիր մարմնին:

2. Կառավարությանը միշտ էլ բաժին է հասնում ավելի մեծ չափի պատասխանատվություն կատարած աշխատանքի համար, քան խորհրդարանականներին, որոնք ոչ ամբողջովին են պատասխան տալիս նույնիսկ ակնհայտորեն թույլ օրենքներ ընդունելու համար: Պատահական չէ, որ օրենսդիրներն ավելի հաճախ հանդես են գալիս մեղադրողների, այլ ոչ թե մեղադրյալների դերում, քանի որ քննադատելը միշտ էլ ավելի հեշտ է, քան սոցիալ-տնտեսական քաղաքականությունը գործնականում իրականացնելը: Ուստի, բնակչությունը կասկածամտորեն է վերաբերվում ժողովրդի ընտրյալներին, որոնք, նրանց կարծիքով, ավելի շատ դժվարություններ են ստեղծում կառավարության աշխատանքում:

3. Որոշ ԶԼՄ-ներ անմիջականորեն կախված են գործադիր իշխանությունից, հետևաբար, նրանք հաճախ ներկայացնում են կառավարության աշխատանքը ավելի բարենպաստ լույսի ներքո, քան խորհրդարանականների աշխատանքը:

4. Զանգվածային գիտակցության մեջ միշտ ուժեղ են էտատիզմի ավանդույթները, որի էությունն այն է, որ ժողովուրդն ավելի հաճախ ապավինում է ուժեղ անհատին (նախագահին, վարչապետին), որն ի զորու է խիստ կարգուկանոն հաստատել, քան ներկայացուցչական մարմնին, որի պատերի ներսում ծավալվում են անթիվ-անհամար քննարկումներ: Առավել ևս, որ ընտրողները պատրանքներ ունեն խորհրդարանականների «շքեղ» կյանքի վերաբերյալ, որոնք ապրում են հարկատուների միջոցների հաշվին:

5. Կայուն քաղաքական համակարգով տնտեսապես զարգացած պետություններում քաղաքական հասարակությունը պատշաճ հետաքրքրություն չի ցուցաբերում քաղաքականության նկատմամբ: Առաջին պլան է մղվում անձնական հաջողության ձգտումը, իսկ քաղաքականության նկատմամբ հետաքրքրությունը մղվում է

հետին պլան և դրսևորվում է համեմատաբար բարձր աբսենտիզմով (ընտրություններից խուսանավելու միտումով): Առանձին մարդու կյանքի անհատականացման համապատկերում քաղաքացիները կորցնում են հետաքրքրությունը խորհրդարանականների գործունեության նկատմամբ, իսկ նախագահի հաղթանակն ընտրություններում, որը մարմնավորում է ամբողջ ազգին, բարձր նպատակին հասնելու հրաշալի օրինակ է: Ուստի պատահական չէ, որ հասարակական կարծիքը, հատկապես պատմական շրջադարձային փուլերում, ավելի հաճախ հակվում է դեպի նախագահը, այլ ոչ թե դեպի օրենսդիր մարմինը[1]:

Բայցևայնպես, պետությունների քաղաքական պրակտիկան վերջին տասնամյակներում հանգեցնում է այն եզրակացությանը, որ խորհրդարանը բնավ չի սպառել իր հնարավորությունները: Քաղաքական համակարգի զարգացման ետպատերազմյան փորձը զարգացած երկրներում վկայում է, որ խորհրդարանը կարող է լինել պետական կարգի կայունացնող գործոն, մասնավորապես, այն՝

1. իշխանությունների մյուս մարմինների հետ մեկտեղ իրականացնում է պետության բոլոր հիմնական գործառույթները՝ հաղորդելով այդ գործընթացին ամբողջ բնակչության կամահայտնության բնույթ,

2. լեգալացնում է իշխանությունը՝ ժողովրդի ներկայացուցչական կառավարման ձև հաղորդելով նրան,

3. նպաստում է փոխզիջումներ ձեռք բերելուն տարբեր քաղաքական կուսակցությունների միջև, մասնավորապես՝ համաձայնության հասնելուն պահպանողական և սոցիալ-բարեփոխական կուսակցությունների միջև,

4. ընդունում է օրենքներ, ձևավորում իրավական կառուցակարգի կարևորագույն մասը:

Այսպիսով, չնայած ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման հակասական բնույթին՝ աշխարհի երկրների գերակշիռ մասում խորհրդարանները դարձել են պետական իշխանության անքակտելի մասը: Նրանք իրականացնում են գլխավոր իշխանական գործառույթը՝ հասարակության, պետության օրենսդրական հիմքը ստեղծելով:

[1] **Шабо Ж.Л.** Государственная власть: конституционные пределы и порядок осуществления // Полис, 1993. - С. 33.

Օրենքները դառնում են իրավունքի հիմնական աղբյուրը աշխարհի երկրների մեծ մասում: Դա թույլ է տալիս բնութագրել խորհրդարանները որպես միջազգային օրինաչափ երևույթ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Фон Алеман У.** Парламентаризм // Политология. Вып. 3. - М., 1993.
2. **Шмидт К.** Политическая теология. - М., 2000.
3. **Амеллер М.** Парламенты. - М., 1967.
4. **Романов П.М.** Истоки парламентаризма. - М., 1988.
5. **Ковлер А.И.** Очерки по истории парламентаризма // Парламенты мира. - М., 1991.
6. **Руденко В.Н.** Прямая демократия: модели правления, конституционно-правовые институты. - Екатеринбург: УрО РАН, 2003.
7. **Романов Р.М.** Парламентаризм: теория, история и современность. - М., 2002.
8. **Пилипенко А.Н.** Парламентский контроль во Франции // Журнал российского права. - М., 2000.
9. **Чиркин В.Е.** Государственное и муниципальное управление. - М., 2004.
10. Конституционное (государственное) право зарубежных стран. - М., 1999.
11. **Lафитский В.И.** Конгресс США // Парламенты мира. - М., 1991.
12. **Линц Х.** Опасность президентства. Полис, 2001, № 5.
13. **Хубнер Е.** Парламентаризм и правительственная система // Полис, 1992.
14. Интервью Эдгара Фора газете “Известия”, 17.06.1988.
15. **Кокули Дж.** Двухпалатность и разделение властей в современных государствах // Полис, 1997.
16. **Арон Р.** Демократия и тоталитаризм. - М., 1996.
17. **Харвей Дж., Худ. К.** Британское государство. - М., 1961.
18. **Тимошенко И.Г.** Парламентский контроль в Великобритании // Журнал рооссийского права. - М., 2000.

19. **Шабо Ж.Л.** Государственная власть: конституционные пределы и порядок осуществления // Полис, 1993.

СУТЬ И ХАРАКТЕРИСТИКИ МОДЕЛЕЙ ПАРЛАМЕНТАРИЗМА

Аннотация

В статье подробно анализируется то, что, несмотря на несколько моделей современного парламентаризма, государственная практика не признает “чистые” модели, то есть модели, совершенно отличные от других, поскольку в каждой из них, наряду со своими типичными чертами, всегда присутствуют другие особенности.

Автор также ссылается на утверждения о том, что в современном мире все отчетливее проявляется тенденция к созданию коллективных, смешанных, переходных форм государственного правления. Прежние классические формы президентской, парламентской федерации, самодержавия и государственных режимов постепенно исчезают, на смену им приходят полупрезидентские, полупарламентские республики, региональные государства, в которых сочетаются черты однородности, федерации и самодержавия. Появляются новые методы осуществления государственной власти, другие формы государственных режимов, сочетающие в себе некоторые элементы авторитаризма и демократии.

В статье автор также высказал мысль о том, что, развивая теорию власти, некоторые политологи и философы пересматривают традиционные принципы демократии. В этом смысле теория разделения властей заменяется концепцией «единой власти», принцип верховенства парламента заменяется обоснованием концентрации основных приоритетов в органах исполнительной власти, а теория народного представительства объявляется устаревшей и неприменимой, поскольку в современную эпоху

соотношение законодательной и исполнительной власти в государстве изменилось. Исполнительная власть сосредоточила в своих руках важнейшие полномочия как внешней, так и внутренней политики. Тенденция проявляется в расширении полномочий премьер-министра (или президента, если он возглавляет правительство), который получает возможность самостоятельно принимать важнейшие политические решения.

Ключевые слова: парламентаризм, древний, средневековый, современный, модель, законодательная власть, исполнительная власть, парламентские государства, парламентское правление, народное представительство, разделение властей.

THE ESSENCE AND CHARACTERISTICS OF PARLIAMENTARIANISM MODELS

Annotation

The article analyzes in detail the fact that, despite several models of modern parliamentarism, state practice does not recognize “pure” models, that is, models that are completely different from others, since each of them, along with its typical features, always has other features.

The author also referred to the assertions that in the modern world, the tendency to create collective, mixed, and transitional forms of government is becoming increasingly evident. The previous classical forms of presidential, parliamentary federation, autocracy and state regimes are gradually disappearing, being replaced by semi-presidential, semi-parliamentary republics, and regional states that combine the features of homogeneity, federation and autocracy. New methods of exercising state power, and other forms of state regimes combining some elements of authoritarianism and democracy are emerging.

In the article, the author also expressed the idea that, developing the theory of

power, some political scientists and philosophers are revising the traditional principles of democracy. In this sense, the theory of separation of powers is replaced by the concept of "single power", the principle of parliamentary supremacy is replaced by the justification for concentrating key priorities in the executive branch, and the theory of popular representation is declared obsolete and inapplicable, since in the modern era the relationship between legislative and executive power in the state has changed. The executive power has concentrated in its hands the most important powers of both foreign and domestic policy. The trend is manifested in the expansion of the powers of the prime minister (or the president, if he heads the government), who is given the opportunity to independently make the most important political decisions.

Keywords: parliamentarism, ancient, medieval, modern, model, legislative power, executive power, parliamentary states, parliamentary government, popular representation, separation of powers.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 14.11.2024թ., տրվել է գրախոսության 16.11.2024թ., ընդունվել է տպագրության 28.11.2024թ.:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

DOI: 10.59560/18291155-2024.4-.68

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Վարչական իրավունքի սկզբունքներն առանձնահատուկ նշանակություն ունեն վարչական իրավունքի զարգացման գործում, մասնավորապես, դրանք համակարգաստեղծ դեր են կատարում՝ նպաստելով նոր ինստիտուտների ձևավորմանը: Վարչական իրավունքի սկզբունքների գոյությունը վարչական մարմնին հնարավորություն է տալիս իրականացնելու արդար վարչարարություն, նույնիսկ եթե որևէ հստակ իրավական նորմ առկա չէ, որը կարգավորում է վիճահարույց իրավիճակը:

Հոդվածում քննարկվում է հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի և վարչական իրավունքի այլ սկզբունքների միջև առկա հարաբերակցությունը՝ վերլուծելով դրանցից յուրաքանչյուրի խախտման հնարավոր հավանականությունը հայեցողական լիազորությունների ոչ իրավաչափ կիրառման պարագայում: Միաժամանակ անդրադարձ է կատարվել վարչական մարմնի կողմից

վարչարարության սկզբունքի պահպանմանը, որը, ժամանակակից իրավական զարգացումներին համահունչ, ենթադրում է նաև մարդու հիմնարար իրավունքների և օրինական շահերի ապահովում, ինչպես նաև օրինականության և հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքների փոխգործակցությանը նպաստող երաշխիքներ:

Հոդվածում առանձնացվել են վարչարար գործունեության որակական հատկանիշները՝ կապելով դրանք վարչարար գործունեության ընթացքում վարչական հայեցողության կիրառմամբ ծագած արտաքին և ներքին արգելքների հաղթահարման հետ: Քննարկվել են նաև վարչարար գործունեության որակական հատկանիշները՝ որպես վարչական հայեցողության կիրառման կարևոր պայման, որոնք տեսական և գործնական նշանակություն ունեն վարչարարության սկզբունքների փոխգործակցության ապահովման հարցում:

Հիմնաբառեր. վարչական իրավունք, սկզբունքներ, վարչական հայեցողություն, լիազորություն:

Ներածություն

Իրավունքի սկզբունքները հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափություններն իրավաբանորեն արտացոլող այն հիմնական գաղափարներն ու ելակետային, ղեկավար դրույթներն են, որոնք որոշում են իրավունքի ձևավորման, զարգացման ու գործողության գործընթացը, դրա բովանդակության հիմնական հարցերը, սոցիալական էությունը[1]:

Վարչական իրավունքի սկզբունքները որոշում են վարչական իրավունքի ճյուղի զարգացման ուղղությունները և հիմնարար տարրերի կիրառումը: Վարչական իրավունքի սկզբունքների բովանդակությունն արտացոլում է հասարակության հիմնարար արժեքները, տեղն ու դերն անձի, նրա իրավունքների, ազատությունների, օրինական

[1] Տես **Վաղարշյան Ա.,** Պետության և իրավունքի տեսություն – 2: ԵՊՀ, Երևան, 2011 թ., էջ 45:

շահերի տարբեր պետական կառավարման մարմինների հետ հարաբերություններում[1]:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է հայեցողական լիազորությունները սահմանափակելու սկզբունքը, որով հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը, իսկ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

«Հայեցողական լիազորություններ» եզրույթը և «սահմանափակել» բառի բացատրությունը, ըստ մեր դիրքորոշման, հակասություն են ստեղծում և տարընկալման տեղիք տալիս: Մասնավորապես, «սահմանափակել» բառն ունի իմպերատիվ բնույթ, իսկ հայեցողությունը՝ դիսպոզիտիվ: Միաժամանակ, հայեցողական նորմերի կիրառումը վարչական մարմնի կամքի ինքնավարության դրսևորումն է, այսինքն՝ վարչական մարմինն օժտվում է ազատ հայեցողությամբ:

Իրավաբանական գրականությունում քննարկման առարկա է «արգելք» և «սահմանափակում» հասկացությունների նմանության և տարբերության հարցը: Արգելքի միջոցով պետությունը մի դեպքում պաշտպանում է հասարակության և քաղաքացիների համար ամենակարևոր արժեքները, իսկ մյուս դեպքում պետությունն այն կիրառում է որպես սահմանափակող միջոց նույն հասարակության և քաղաքացիների նկատմամբ: Արգելքը գծում է արգելվածի սահմանները և ազատ է թողնում արգելքից դուրս ցանկացած վարքագիծ: Արգելքը

[1] Տես **Пухтецкая А.А.** ORCID: 0000-0002-2953-6365 Развитие научных подходов к основаниям классификации принципов административного права: сравнительно-правовой анализ, doi: 10.36695/2219-5521.3.2019.18 УДК 342.92(477), - С. 111:

պետության համար վարքագծի օրինական միջոց է, որն իր մեջ ներառում է նաև սահմանափակումը: Կարծում ենք, որ սահմանափակումն իր մեջ արգելքի տարրեր է պարունակում՝ ապահովելով վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացումը, ուստի օրենսդիրը որպես սկզբունք սահմանել է հայեցողական լիազորությունների սահմանափակում և ոչ թե արգելք: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ, այնուամենայնիվ, «սահմանափակել» և «հայեցողական լիազորություն» երկու եզրույթների միջև հակասություն է առաջանում, քանի որ «սահմանափակել» եզրույթի կիրառումը ենթադրում է վարչական մարմնին ազատ հայեցողությունից զրկում, սահմանների նախատեսում, ինչով պայմանավորված՝ առաջարկում ենք «սահմանափակել» բառը փոխարինել «կիրառման իրավաչափություն» բառերով: Այսինքն, վարչական մարմնին վստահված հայեցողական լիազորությունները կիրառելի լինի նրա պաշտոնատար անձանց կողմից իրավաչափության սահմաններում՝ հարգելով և պաշտպանելով անձանց իրավունքներն ու ազատությունները, իրավահավասարությունը, վարչարարության մյուս սկզբունքները, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ՝ ելնելով նաև բարեխղճության սկզբունքից:

Հիմնական հետազոտություն

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխում ամրագրված են վարչական իրավունքի սկզբունքները, ուստի ներկայացնենք հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի հարաբերակցությունը վարչարարության մյուս սկզբունքների հետ:

1. Յուրաքանչյուր իրավունքի ճյուղի սկզբունքների հիմքում դրված է օրինականությունը, որն իրավական գիտության և պրակտիկայի հիմնական կատեգորիան է, ինչպես նաև պետության տարածքում գործող նորմատիվ իրավական ակտերի ճշգրիտ, խստիվ պահպանումն ու կիրառումն է բոլոր սուբյեկտների կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ օրենքը պետք է լինի բավականաչափ մատչելի, նորմը կարող է որակվել որպես «օրենք», եթե այն բավականաչափ հստակ է, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները[1]: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը ևս ամրագրել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի. իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը[2]:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է վարչարարության օրինականության սկզբունքը: Այս սկզբունքն անխզելիորեն կապված է վարչարարության սկզբունքների հետ, այդ թվում՝ հայեցողական լիազորությունների սահմանափակման: Մասնավորապես, վարչական մարմիններն օրենքով իրենց վերապահված հայեցողական լիազորությունները պարտավոր են իրականացնել բացառապես օրինականության սահմանադրական սկզբունքի պահպանմամբ:

Օրինականության և հայեցողական լիազորությունների կապը դրսևորվում է նպատակահարմարության նկատառումներով օրենքների դրույթներից շեղումների անթույլատրելիությամբ:

Վարչական հայեցողությունը ճկունություն է տալիս իրավական նորմերին, թույլ չի տալիս դրանք «սառեցնել», սակայն միևնույն ժամանակ

[1] Տես Sunday times v. The United Kingdom, 26/04/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

[2] Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 13.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-753 որոշում:

վարչական մարմինների կողմից իրավական հնարավորությունների տատանումներն (օրինակ՝ որոշումների կայացման հստակ չափանիշների բացակայության դեպքում) օրինականության սկզբունքի խախտման վտանգ են ներկայացնում:

Մեր դիտարկմամբ՝ օրինականության և հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքների փոխգործակցությանը նպաստող երաշխիքներն են՝

1) վարչական մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելը, քանի որ այդ դեպքում հնարավոր կլինի բացահայտել օրինականության և հայեցողական լիազորությունների փոխադարձ կապը՝ հաշվի առնելով կոնկրետ գործում առկա բոլոր հանգամանքները: Միաժամանակ՝ կարևոր է վարչական վարույթի ամբողջ ընթացքի ապահովումը, քանի որ միայն վարչական վարույթի հարուցումը բավարար պայման չէ այս երկու սկզբունքների փոխկապվածության համար: Վարչական վարույթի ապահովմամբ է իրականացվում օրինականության և հայեցողական լիազորության սահմանափակման սկզբունքներին բնորոշ տարրերի բացահայտումը՝ տալով դրանց պատշաճ գնահատական վարչական ակտի տեսքով:

Ավելին՝ լսումներ իրականացնելը վարչական վարույթի անբաժանելի մասն է կազմում և նպաստում հայեցողական լիազորությունների կիրառմամբ օրինական վարչական ակտի կայացմանը.

2) վարչական վարույթի ամբողջ ընթացքում վարչական մարմինը հայեցողական լիազորություններն իրականացնելիս պետք է առաջնահերթ համարի մարդու իրավունքների ու օրինական շահերի պահպանումը, ինչն էլ հիմք է նաև օրինականության սկզբունքի պահպանման:

Թվարկված և վարչական վարույթի ընթացքին վերաբերող մյուս ընթացակարգերը թույլ են տալիս խուսափել օրինականության սկզբունքի խախտումներից՝ ապահովելով հայեցողական լիազորությունների կիրառման արդյունավետությունը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքը, որը հաճախ ուղղակի կամ անուղղակի փոխկապակցվում է վարչական մարմնին տրված հայեցողական լիազորությունների ճշգրիտ կիրառման հետ:

Վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունները թույլ են տալիս ապահովել նրա գործունեության ճկունությունը՝ տրամադրելով սուբյեկտներին օրենքով թույլատրելի որոշումների և գործողությունների լայն շրջանակ: Սակայն լինում են դեպքեր, երբ վարչական մարմինն իր հայեցողական լիազորությունների կիրառմամբ խախտում է վարչական իրավունքի ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքը, օրինակ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 1.1 մասերին համապատասխան կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը աշխատանքային գրքույկն է: Միայն աշխատանքային գրքույկում արտացոլված տվյալների իսկության վերաբերյալ բավարար կասկածների դեպքում վարչական մարմինը կարող է այլ տեղեկություններ ևս կարևորել և դրանց բացակայությամբ պայմանավորված չհաստատել ստաժի առկայությունը: Եթե աշխատանքային գրքույկը պարունակում է բավարար տվյալներ անձի կողմից աշխատանք կատարած լինելու վերաբերյալ, որոնք այլ տվյալներով չեն հերքվում, վարչական մարմինը չի կարող չհաստատել ստաժի առկայությունը միայն այն պատճառով, որ գործատուների կողմից աշխատանքային փաստաթղթերն արխիվ չեն հանձնվել, կամ սոցիալական վճարի վերաբերյալ տեղեկություններ չեն հայտնաբերվել, կամ տեխնիկական պատճառներով աշխատավարձի հաշվառման մատյանները չեն պահպանվել: Գործատուի կողմից աշխատանքում թույլ տված թերությունների պատճառով առաջացած խնդիրները չեն կարող զրկել փաստացի աշխատանք կատարած անձին իր ստաժին համապատասխան կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Նշված օրինակից ակնհայտ է դառնում, որ վարչական մարմինները՝ օգտվելով իրենց վերապահված հայեցողական լիազորություններից, այն է՝ ազգային արխիվ հարցում կատարելը կամ, բացի աշխատանքային գրքույկը, նաև այլ լրացուցիչ փաստաթղթեր պահանջելը, այդպիսով անձանց վրա լրացուցիչ պարտավորություններ են դնում կամ զրկում են նրանց օրենքով վերապահված որևէ իրավունքից, որն էլ հանգեցնում է նաև վարչական իրավունքի ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքի խախտմանը:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում է կամայականության արգելքի սկզբունքը: Կամայականության և հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքներն անմիջականորեն փոխկապակցված են միմյանց, քանի որ հայեցողության իմաստներից մեկով այն գործողություն է, սեփական կամքով որոշում կամ հակում գործելու ոչ թե օրենքով, այլ կամայականորեն:

«Հայեցողություն» և «կամայականություն» հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ արտահայտվել է հետևյալ դիրքորոշումը.

1) հայեցողությունը, ի տարբերություն կամայականության, հիմնված է օրենքի վրա և սահմանափակվում է օրենքով. դա հայեցողության սոցիալ-հոգեբանական երևույթի իրավական ձևն է.

2) հայեցողության բոլոր դրսևորումները պարունակում են կամայականություն, մինչդեռ դրա յուրաքանչյուր դրսևորում չէ, որ հայեցողություն է (օրինակ, հայեցողությունը կարող է դրսևորվել որպես կամայականություն), մինչդեռ կամայականությունը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել իրավական նորմերին և սկզբունքներին[1]:

Վերոգրյալից ելնելով՝ «հայեցողություն» և «կամայականություն» հասկացությունները հոմանիշներ չեն և գործնականում ունեն էական տարբերություններ: «Պաշտոնատար անձանց կամայականություն»

[1] Տես http://cyberleninka.ru/article/n/sootnoshenie-printsipa № 3 / 2013. - С. 46, /10.08.2024/:

հասկացությունն արտացոլում է սոցիալական այս ինստիտուտի հասարակական նշանակությունը, մինչդեռ «հայեցողություն» տերմինն արտացոլում է հատուկ սուբյեկտի, պաշտոնատար անձի իրավական առանձնահատկությունները՝ հիմնված իրավունքի վրա և սահմանափակված հայեցողության իրավունքով:

Այս առանձնահատկությունների բացահայտումը հնարավորություն կընձեռնի գործնականում, օրենսդրության ընդունման և կիրարկման գործընթացում, ավելի ճշգրիտ ձևակերպել կոնկրետ մարմինների և նրանց պաշտոնատար անձանց լիազորությունները, սահմանել պարտադիր պահանջներ և նման լիազորությունների նկարագրության մանրամասնության աստիճանը, հիմքեր ստեղծել պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների գերազանցման փաստը և դրա հետևանքները գիտակցելու, շարունակել հայեցողական լիազորությունների և հայեցողության ուսումնասիրությունը կոնկրետ գործնական իրավահարաբերությունների օրինակով[1]:

Նշվածի համատեքստում պարզ է դառնում, որ հայեցողական լիազորությունները սահմանափակելու և կամայականության սկզբունքների միջև առկա է անխզելի կապ այն իմաստով, որ վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորություններից շեղվելը որևէ ձևով միաժամանակ հանգեցնում է հայեցողական լիազորությունների սահմանափակման և կամայականության սկզբունքների խախտումների:

Ինչ վերաբերում է այս երկու հասկացությունների բովանդակություններին, ապա, ըստ մեր դիտարկման, հայեցողությունը վարչական մարմնին օրենսդրի կողմից տրված լիազորությունն է, մինչդեռ կամայականությունը՝ վարչական մարմնի պաշտոնատար անձի կամքն է կամ ներքին մղումը՝ գործելու այս կամ այն կերպ:

4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում է վարչարարության համաչափության

[1] Տես **Мирошник О.А.** Отраслевые аспекты правовой политики. О некоторых аспектах конституционно-правового понятия дискреции // Правовая политика и правовая жизнь, 2012. - С. 33:

սկզբունքը, որի սահմանադրական հիմքը Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքն է, որն առավել լայն իմաստ ունի և ընդգրկում է հանրային իշխանության բոլոր ճյուղերի գործունեությունը, բացի դրանից՝ վերաբերում է բացառապես հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման ասպեկտներին: Ընդ որում՝ սահմանափակման հիմքում դրված է Սահմանադրությամբ ամրագրված նպատակին հասնելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով նաև իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ–1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է «.... Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ սահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Համաչափության և հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքների միջև փոխադարձ կապը պայմանավորված է նրանով, որ երկու սկզբունքների կիրառման դեպքում էլ վարչական մարմինը պետք է առաջնորդվի այնպիսի վերապահումներով, որոնք թելադրված են պիտանիության, անհրաժեշտության և չափավորության պահանջներով: Այսինքն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինը հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը չխախտելու համար պարտավոր է հետևել անձանց իրավունքների և օրինական շահերի պահպանմանը ու հայեցողական լիազորություններն իրականացնել հիմնավորված և պատճառաբանված վարչական ակտերի կայացմամբ: Միաժամանակ հայեցողական լիազորությունների կիրառման դեպքում ևս վարչական մարմինը օրենքով նախատեսված նպատակներին հասնելու համար նախապատվությունը տալիս է այնպիսի միջոցների, որոնք համահունչ են տվյալ իրավիճակին, չեն հանգեցնի անհարկի բացասական հետևանքների, այդ թվում՝

անձանց իրավունքների անհիմն ոտնահարմանը և վարչական ռեսուրսների անտեղի վատնմանը: Մեր դիրքորոշմամբ վարչական մարմինն իր հայեցողական լիազորություններն իրականացնելիս պահպանում է նաև համաչափության սկզբունքը՝ դրանով իսկ վկայելով բարձր մասնագիտական պատրաստվածության և վարչական մարմինների համակարգում անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայության մասին:

5. Առավելագույնի սկզբունքը կոչված է անձին երաշխավորել, որ վարչական մարմինն իրենից չի պահանջի կատարել որոշակի գործողություններ, եթե դրանք իրենց ծավալով ընդգրկված են արդեն իսկ կատարված գործողությունների մեջ: Միաժամանակ այս սկզբունքը վարչական մարմնին արգելում է որոշակի գործողությունը մասնատել փոքր հատվածների և անձից պահանջել դրանց կատարումը մաս առ մաս, ինչը նրանից շատ ժամանակ ու ջանքեր կխլեր, և դա այն դեպքում, երբ հարցը կարելի է լուծել մեկ ընդգրկուն գործողություն կատարելու միջոցով[1]:

Այս սկզբունքի կարգավորումը նախատեսված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով:

Մեր դիտարկմամբ՝ վարչական մարմինը ոչ միայն խախտում է առավելագույնի սկզբունքը, այլև հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը, մասնավորապես՝ վարչական մարմինը, իրեն տրված հայեցողական լիազորությամբ առաջնորդվելով, պահանջում է անձից լրացուցիչ փաստաթուղթ, որի պահանջը նույնաբովանդակ է: Ավելին, միևնույն վարչական մարմնի տարբեր աշխատակիցներ իրենց վերապահված հայեցողական լիազորության կիրառման ժամանակ կարող են տարբերակված մոտեցում ցուցաբերել նույն հարցի վերաբերյալ: Օրինակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթն աշխատանքային

[1] Տես **Թովմասյան Հ., Մուրադյան Գ., Թորոսյան Հ., Գրիգորյան Վ. և Պողոսյան Վ.**, Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ: Երևան, «Հարդ ընդ Սոֆթ» հրատարակչություն, 2007, էջ 32-33:

գրքույկն է, սակայն միևնույն վարչական մարմնի աշխատակիցներից մեկի համար դրանում առկա կնիքը ժամանակավրեպ է և դրա հավաստման համար որևէ այլ փաստաթուղթ չի պահանջվում, իսկ մյուս դեպքում՝ պահանջվում է: Այսինքն՝ վարչական մարմնի աշխատակիցը, վերազանցելով իրեն վերապահված հայեցողական լիազորությունը, խախտում է առավելագույնի սկզբունքը:

6. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է հավաստիության կանխավարկածը:

Հավաստիության կանխավարկածի և հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքների միջև փոխադարձ կապն ունի գործնական մեծ նշանակություն, քանի որ հավաստիության կանխավարկածի սկզբունքը կիրառելի է, երբ անձինք ներկայացնում են փաստաթղթեր, որոնց արժանահավատության բացահայտման համար վարչական մարմինները հաճախ գործի են դնում իրենց հայեցողական լիազորությունները: Օրինակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կենսաթոշակի նշանակման համար վարչական մարմինը, հաճախ օգտագործելով իր հայեցողական լիազորությունը, հարցում է կատարում ազգային արխիվ՝ ճշգրտելու անձի կողմից ներկայացված փաստաթղթում առկա տեղեկատվության իսկությունը:

Մեր դիտարկմամբ՝ վարչական մարմինը մի կողմից խախտում է հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը, քանի որ նման դեպքում այն կիրառելի չէ, միևնույն ժամանակ խախտում է հավաստիության կանխավարկածը, որովհետև չի վստահում և առանց հիմնավորման կասկածի տակ է դնում անձի կողմից ներկայացված փաստաթուղթը՝ տրված պետական կամ մասնավոր կազմակերպության կողմից: Մինչդեռ որևէ վարչական մարմին իրավասու չէ կասկածի տակ դնել մեկ այլ մարմնի կողմից տրված տեղեկատվությունը, քանի որ վարչական մարմինը փաստաթղթերի կամ տվյալների կեղծ լինելը հավաստողը չէ:

7. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է տնտեսավարության սկզբունքը, որի փոխկապվածությունը հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի հետ կարող է արտահայտվել վարչական մարմնի աշխատանքի կրկնակիությամբ: Մասնավորապես, մեր դիրքորոշմամբ, վարչական մարմինը թույլ է տալիս իրեն տրված հայեցողական լիազորության վերազանցում, որի հետևանքով անձը վերադասության կամ դատական կարգով վերականգնում է իր խախտված իրավունքները: Այսինքն, վարչական մարմինը պետության կողմից իրեն վերապահված հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի խախտմամբ պետական միջոցները կիրառում է ոչ արդյունավետ, քանի որ իր կողմից թույլ տրված խախտումը վերացնելուց հետո օգտագործում է ավելի մեծ միջոցներ: Տնտեսավարության սկզբունքը չի կարող խոչընդոտել պատշաճ վարչարարության իրականացմանը՝ բացառելով միջոցների անհարկի վատնումը և չվտանգելով վարչարարության շահերը:

Այսպիսով՝ հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի և վարչական իրավունքի այլ սկզբունքների փոխգործակցության հավասարակշռությունը խթանում է վարչական հայեցողության կիրառման իրավաչափությանը՝ բացառելով վարչական մարմնի հնարավոր թողտվությունը:

Ուսումնասիրելով և վերլուծելով հայեցողական լիազորությունների սահմանափակման և վարչարարության այլ սկզբունքների հարաբերակցության հիմնահարցերը՝ պայմանավորված իրավաչափ վարչարարության իրականացման սահմաններով, վարչարար գործունեության արդյունավետ զարգացման հնարավորությունները կապում ենք՝

1. վարչարար գործունեության ընթացքում վարչական հայեցողության կիրառմամբ ծագած արտաքին և ներքին արգելքների հաղթահարման հետ,

2. վարչարար գործունեության որակական հատկանիշներով՝ որպես վարչական հայեցողության կիրառման կարևոր պայման,

որոնք էական նշանակություն ունեն վարչարարության սկզբունքների փոխգործակցության ապահովման հետ:

Հայեցողական լիազորությունների կիրառումը հաճախ հանգեցնում է վարչարարության սկզբունքների հավասարակշռության խաթարմանը՝ ստեղծելով անբավարար պայմաններ վարչական մարմնի ցանկալի վերջնարդյունքին հասնելու համար:

Վարչական հայեցողության կիրառմամբ ծագած արտաքին արգելքներից են՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետը, լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու անհրաժեշտությունը, օրենքում ամրագրված դրույթի անհստակությունը և այլն: Նշված արգելքների խախտումն ուղղակիորեն հանգեցնում է վարչարարության սկզբունքների փոխգործակցության աղճատմանը, օրինակ՝ վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման պարագայում օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտումն առաջացնում է հայեցողական լիազորությունների սահմանափակման, օրինականության և կոնկրետ դեպքում նաև այլ սկզբունքների խախտման՝ խաթարելով և մասնատելով վարչարարության սկզբունքների փոխգործակցության հավասարակշռության ողջ գործընթացը: Նույն դիրքորոշումը կարելի է արտահայտել նաև ներքին արգելքների վերաբերյալ, քանզի դրանք ևս նույնքան բացասական ազդեցություն են ունենում այս հարցում: Դրանցից առանձնացնենք վարչական մարմնի դիրքորոշումը տվյալ դեպքում կիրառվող հայեցողական լիազորությունների վերաբերյալ, կամային պատրաստվածությունն օրենսդրի կողմից դրված նպատակին հասնելու համար և այլն:

Արտաքին և ներքին արգելքների զուգակցման պարագայում դժվար է խոսել վարչարարության սկզբունքների փոխգործակցության հավասարակշռման արդյունավետության մասին, քանի որ դրանցից յուրաքանչյուրի խախտումը վարչական մարմնի կողմից հանգեցնում է ոչ միայն հայեցողական լիազորությունների սահմանափակման, այլև մյուս սկզբունքների շղթայակապ խաթարմանը: Հետևաբար՝ վարչական մարմնի համար առանցքային նշանակություն ունի այս արգելքների

հաղթահարումը, ինչն էլ իր հերթին նպաստում է սկզբունքների փոխգործակցության հավասարակշռմանը:

Արտաքին և ներքին արգելքները ստեղծում են լարվածություն, ուժերի հավաքագրման պատասխանատվություն, որոնք անհրաժեշտ և բավարար են վարչական մարմնի կողմից դրանց հաղթահարման ուղիները գտնելու համար: Տվյալ արգելքների հաղթահարման կարևոր ուղիներից մեկն աշխատանքի արդյունավետ կազմակերպումն է, որով կնվազեցվի օրենքով սահմանված ժամկետի խախտումը, նման իրավիճակներում ձեռքբերված փորձի ուսումնասիրությունը, որը հնարավորություն կստեղծի կողմնորոշվել հայեցողական լիազորությունների կիրառման դիրքորոշման հարցում, գործի ամբողջական և օբյեկտիվ ուսումնասիրությունը՝ ապահովելով օրենսդրի նպատակի կատարումը:

Վարչական մարմնի կողմից այս արգելքների հաղթահարման վճռականությունը հանգեցնում է վարչարարության սկզբունքների փոխգործակցության ապահովմանը, քանզի վարչական հայեցողության իրավաչափ կիրառումը (հաղթահարելով արտաքին և ներքին արգելքները) վկայում է նաև վարչարարության այլ սկզբունքների արտահայտման մասին:

Վարչարարության իրականացման իրավաչափության հարցում էական դերակատարում ունեն վարչարար գործունեության որակական հատկանիշները, որոնք հստակություն են սահմանում՝ օգնելով ձևավորել նպատակ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրան հասնելու համար՝ ապահովելով նաև պետական ռեսուրսների արդյունավետ կառավարումը:

Առանձնացնենք վարչարար գործունեության որակական հետևյալ հատկանիշները՝

1) վարչարար գործունեության ջանասիրությունը և պատասխանատվությունը,

2) վարչարար գործունեության իրականացումը՝ հիմքում դնելով մարդասիրությունը:

Թվարկված որակական հատկանիշները փոխկապակցված են և կազմում են մեկ ամբողջություն, որոնցից յուրաքանչյուրն առանձին և իր համակցության մեջ հնարավորություն է ստեղծում ճիշտ գնահատելու ու ընդհանրացնելու վարչական հայեցողության կիրառումը սկզբունքների փոխգործակցության համատեքստում: Վարչարար գործունեության որակական հատկանիշների պահպանման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դրսևորումը վարչական մարմնի համար ստեղծում է բավարար պայմաններ վարչարարության սկզբունքներով առաջնորդվելով հայեցողական լիազորությունների կիրառման համար՝ ցուցաբերելով ջանասիրություն և կրելով պատասխանատվություն:

Վարչական մարմինը վարչական հայեցողության կիրառման վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու հարցում բավարար ջանք պետք է ներդնի համապատասխան փաստաթղթերն ուսումնասիրելիս, ժամկետները պահպանելիս, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ նյութեր ձեռքբերելիս և, ի վերջո, վերջնարդյունքին հասնելիս: Միևնույն ժամանակ ջանասիրության հետ մեկտեղ կարևոր է պատասխանատվությունը, քանզի վարչական մարմինը, հանդես գալով պետության անունից, նրա «բարոյական դեմքն» է հասարակությունում: Վարչական մարմինը հայեցողական լիազորությունների կիրառմամբ իր վրա պատասխանատվություն է վերցնում նաև դրա հետագա ընթացքն ապահովելիս:

Այսինքն, վարչական մարմինն իր ջանասիրությամբ և պատասխանատվությամբ հիմք է ստեղծում ոչ միայն հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության, այլև սկզբունքների փոխգործակցության հավասարակշռության ապահովման համար:

Վարչական մարմնի հաջորդ կարևոր որակական հատկանիշն այն վճռականությունն է, որի միջոցով ապահովվում է օրենսդրի կամքի իրականացումը: Այդ կամքը դրսևորվում է հայեցողական լիազորությունների կիրառմամբ, որը չպետք է որևէ ձևով խախտի մարդու իրավունքներն ու ազատությունները՝ միևնույն ժամանակ ապահովելով վարչարարության սկզբունքների փոխգործակցության

հավասարակշռությունը: Վարչարարության սկզբունքների փոխգործակցությունը պայմաններ է ստեղծում մարդու իրավունքների և ազատությունների սահմանման համար, քանի որ դրանց փոխգործակցությունը բացահայտում է այն պատճառները, որոնք արդարացնում և հիմնավորում են վարչական մարմնի կողմից կիրառված վարչական հայեցողությունը: Արգելքների առաջացման սոցիալ-հասարակական ինտենսիվ զարգացման պարագայում սկզբունքներն են հնարավորություն տալիս հարմարեցնել գործող հայեցողական լիազորությունները ստեղծված իրավիճակին՝ պահպանելով սկզբունքի իմաստը, ինչպես նաև մարդու իրավունքները:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքի և վարչարարության այլ սկզբունքների միջև հարաբերակցության առանձնահատկությունները՝ նշենք, որ վարչարարության սկզբունքները համակարգում են գործնականում ծագած բոլոր տեսակետները՝ արտահայտելով իրենց փոխգործակցության հավասարակշռության ուղղությունները: Այդ փոխհարաբերակցությունը հիմնարար և անփոխարինելի նշանակություն ունի, որով կարծիք է ձևավորվում պետությունում իրականացվող վարչարարության մասին: Դրանց միջոցով ամրապնդվում են հայեցողական լիազորության կիրառման և մարդասիրության միջև կապը: Վարչական հայեցողության կիրառումը փոփոխական է, մինչդեռ սկզբունքների փոխգործակցությունը՝ մշտական, և դրանք վկայում են նաև վարչական մարմնի պատշաճ վարչարարության մասին:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք /31.02.2004/:

2. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք /01.01.2011/:

3. ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշում:

4. ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ–1244 որոշում:

5. **Վաղարշյան Ա.,** Դասախոսություն, Պետության և իրավունքի տեսություն – 2: ԵՊՀ, Երևան, 2011, 448 էջ:

6. **Թովմասյան Հ., Մուրադյան Գ., Թորոսյան Հ., Գրիգորյան Վ. և Պողոսյան Վ.,** Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ: «Հարդ ընդ Սոֆթ» հրատարակչություն, Երևան, 2007, 140 էջ:

7. Sunday times v. The United Kingdom, 26/04/1979թ. վճիռ, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

8. **Мирошник О.А.** Отраслевые аспекты правовой политики. О некоторых аспектах конституционно-правового понятия дискреции // Правовая политика и правовая жизнь, 4 (49). - М., 2012.

9. **Пухтецкая А.А.** Развитие научных подходов к основаниям классификации принципов административного права: сравнительно-правовой анализ, doi: 10.36695/2219-5521.3.2019.18 УДК 342.92(477).

10. http://cyberleninka.ru/article/n/sootnoshenie-printsipa № 3 / 2013, с. 46, /10.08.2024/.

ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ ПРИНЦИПОВ ОГРАНИЧЕНИЯ ДИСКРЕЦИОННЫХ ПОЛНОМОЧИЙ И АДМИНИСТРИРОВАНИЯ

Аннотация

Принципы административного права имеют особое значение в развитии административного права, в частности играют системообразующую роль, способствуя формированию новых институтов. Наличие принципов административного права позволяет административному органу осуществлять справедливое администрирование даже при отсутствии четкой правовой нормы, регулирующей спорную ситуацию.

В статье рассматривается взаимосвязь принципа ограничения дискреционных полномочий с другими принципами административного права, анализируется вероятность нарушения каждого из них в случае неправомерного использования дискреционных полномочий. При этом говорится о соблюдении административным органом принципа администрирования, что в соответствии с современными правовыми тенденциями предполагает также обеспечение основных прав и законных интересов человека, а также гарантий, способствующих взаимодействию принципов законности и ограничения дискреционных полномочий.

В статье выделены качественные характеристики деятельности по администрированию, связывая их с преодолением внешних и внутренних препятствий, возникших вследствие применения административного усмотрения в ходе деятельности по администрированию. Обсуждаются также являющиеся важным условием применения административного усмотрения качественные характеристики деятельности по администрированию, имеющие теоретическое и практическое значение в обеспечении взаимодействия принципов администрирования.

Ключевые слова: административное право, принципы, административное усмотрение, полномочия.

PROBLEMS OF THE RELATIONSHIP BETWEEN THE PRINCIPLES OF RESTRICTION OF DISCRETIONARY POWERS AND ADMINISTRATION

Annotation

The principles of administrative law are of particular importance in the development of administrative law, in particular, they play a system-forming role, contributing to the formation of new institutions. The presence of the principles of administrative law allows the administrative body to exercise fair administration even in the absence of a clear legal norm regulating a controversial situation.

The article examines the relationship between the principle of limiting discretionary powers and other principles of administrative law, and analyzes the possible likelihood of violating each of them in the event of disproportionate application of discretionary powers. At the same time, a reference was made to the adherence to the principle of administration by an administrative, which, in accordance with modern legal trends, also implies ensuring fundamental human rights and legitimate interests, as well as guarantees that facilitate the interaction of the principles of legality and the limitation of discretionary powers.

The article highlights the qualitative characteristics of administrative activities, linking them with overcoming external and internal obstacles that arise as a result of applying administrative discretion in the course of administrative activities. The qualitative characteristics of administrative activities were also discussed as an important condition for the application of administrative discretion, necessary to ensure the interaction of the principles of administration.

Keywords: administrative law, principles, administrative discretion, powers.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.11.2024թ., տրվել է գրախոսության 06.11.2024թ., ընդունվել է տպագրության 28.11.2024թ.:

DOI: 10.59560/18291155-2024.4-.88

ԱՆԱՀԻՏ ՉԱԽՈՅԱՆ

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ծառայության կազմակերպման վարչության ավագ հրահանգիչ, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Ամփոփագիր

«Փրկարարական ծառայության կազմակերպման իրավական հիմնահարցերը այլ ծառայությունների հետ համեմատությամբ» վերտառությամբ հոդվածի արդիականությունը պայմանավորված է պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման արդյունքում առաջացած հակասությունների և ներկայումս գործող մի շարք իրավական ակտերում առկա հիմնախնդիրների կարգավորման անհրաժեշտությամբ:

Փրկարարական ծառայության գործառույթների իրականացման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես՝ սկսած կադրերի ընտրությունից, ծառայության անցման և աշխատանքային հարաբերությունների ճիշտ կազմակերպումից, միջոցառումների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության բոլոր շերտերի և բոլոր մարմինների մասնակցությունից մինչև բուն փրկարարական աշխատանքների իրականացումը և հետևանքների վերացումը:

Հոդվածում քննարկվում են փրկարարական ծառայության վրա քաղաքացիական ծառայության իրավակարգավորումների տարածման անհնարինության, այլ ուժային կառույցների հետ գործառույթների համընկնման, գործնականում օրենսդրությամբ ծառայություններին վերապահված գործառույթներից բխող առանձնահատկությունների և հիմնախնդիրների հետ կապված հարցերը:

Հիմնաբառեր. փրկարարական ծառայություն, քաղաքացիական ծառայություն, զինծառայող, պաշտպանություն, անվտանգություն:

1. Քաղաքացիական ծառայության իրավակարգավորումների տարածումը փրկարարական ծառայության վրա

«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-19-Ն օրենքով «Փրկարար ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում փրկարարական ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր ներկայումս կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: Նշված իրավակարգավորումները խնդրահարույց և անհամատեղելի են փրկարարական ծառայության առանձնահատկությունների հետ, որոնց գործնական կիրառումը հանգեցնում է մի շարք խնդիրների:

Մասնավորապես.

1. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Փրկարար ծառայության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, ՀՀ այլ օրենքներով ու իրավական ակտերով[1]:

[1] Տես «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 08.07.2005 թ. URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը[1]: Այսինքն, ***քաղաքացիական ծառայությունը*** և ***փրկարար ծառայությունը*** պետական ծառայության առանձին և ինքնուրույն տեսակներ են, և փրկարարական ծառայությունը, ելնելով օրենքով իր առջև դրված խնդիրների և գործառույթների առանձնահատկություններից, առավել մոտ է զինվորական ծառայությանը: Հետևաբար, փրկարարական ծառայության, որպես պետական ծառայության առանձին տեսակի, կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև փրկարարական ծառայողների աշխատանքային հարաբերությունները պետք է կարգավորվեն ոչ թե «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, այլ՝ բացառապես «Փրկարար ծառայության մասին» օրենքով:

«Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փրկարար ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկով: Անվանացանկը հաստատում և (կամ) փոփոխում է համապատասխան նախարարը, և վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով[2]:

[1] Տես «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 23.03.2018 թ. URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194977

[2] Տես «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 08.07.2005 թ. URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

Այս առումով հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության պաշտոնը հաստիքային միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով: «Հանրային ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային ծառայության առանձին տեսակների կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով:

Միաժամանակ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Պետական ծառայության պաշտոնը համարվում է առանձնահատկություն ունեցող, եթե այն չի ընդգրկվում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում[1]: «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով կարգավորվում են քաղաքացիական ծառայության պաշտոնի անվանացանկը հաստատելու (փոփոխելու) հետ կապված հարաբերությունները: Նշված իրավակարգավորումները կիրառելի չեն փրկարարական ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատման (փոփոխման) հետ կապված հարաբերությունների նկատմամբ, քանի որ փրկարարական ծառայության պաշտոնը, ելնելով փրկարարական ծառայության գործունեության բնույթից և ուղղություններից, որպես պետական ծառայության պաշտոն,

[1] Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 23.03.2018 թ. / URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193796

ունի առանձնահատկություն և չի ընդգրկվում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում (քաղաքացիական ծառայության պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր է):

«Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ փրկարարական ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով[1]:

Մինչդեռ պայմանագրային զինծառայողի՝ ՀՀ պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, պետական պահպանության ծառայության և փրկարար ծառայության համակարգերում տեղափոխվելու և հետագա ծառայությունը շարունակելու իրավակարգավորումները սահմանվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում փրկարարական ծառայության վրա քաղաքացիական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումների տարածման քաղաքականության արդյունքում «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանվեց փրկարարական ծառայության անցնելու մրցույթային կարգ: «Փրկարար ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փրկարարական ծառայողները ծառայության անցնում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի ժամանակ ստուգվում է մասնակցի մասնագիտական և ֆիզիկական պատրաստվածությունը: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը: Նույն հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ փրկարարական ծառայողների առաջխաղացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված մրցույթի արդյունքների հիման վրա:

Այս առումով հարկ է նշել, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքով ծառայության անցնելու մրցույթային կարգ սահմանված չէ:

[1] Տես «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 08.07.2005 թ. URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանվում է զինծառայողի բարձր պաշտոնի նշանակում մրցույթի արդյունքներով, սակայն նշված կարգավորման շրջանակներում մրցույթային կարգը իմպերատիվ (պարտադիր) բնույթ չի կրում:

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է ոստիկանության ծառայողների պաշտոնի նշանակման ինչպես արտամրցութային, այնպես էլ մրցույթային կարգ, այն էլ միայն ոստիկանության ավագ և գլխավոր խմբերի թափուր պաշտոններում: Մինչև ոստիկանության թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը՝ երկշաբաթյա ժամկետում, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում սույն օրենքով սահմանված կարգով նշանակելու տվյալ պաշտոնի համար ներկայացվող պահանջները բավարարող ոստիկանության ծառայողին: Ընդ որում, ոստիկանության ավագ և գլխավոր խմբերի թափուր պաշտոնները մրցույթի արդյունքներով զբաղեցվում են միայն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակում չկատարվելու դեպքում:

Մինչդեռ, «Փրկարար ծառայության մասին» օրենքը սահմանում է պարտադիր մրցույթային կարգ փրկարարական ծառայության բոլոր պաշտոնների խմբերում թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

Քննարկվող իրավակարգավորումները գործնականում առաջացնում են խոչընդոտներ փրկարարական ծառայության թափուր պաշտոնների մրցույթային կարգով համալրման հետ կապված, արդյունքում ունենում ենք Փրկարար ծառայությունում զգալի քանակությամբ թափուր պաշտոնների թերհամալրում, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում ստորաբաժանումների առջև դրված խնդիրների (մարդկանց կյանքի փրկության, առողջության և գույքի պահպանության, պետության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների և փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների կատարման և այլն) արդյունավետ իրականացման, ընդհանուր առմամբ, վերջիններիս մարտունակության վրա:

Փրկարար ծառայության թափուր հաստիքների գերակշիռ մասը կազմում են կրտսեր խմբի հաստիքները, մասնավորապես՝ վարորդ, հրշեջ-փրկարար, ավագ հրշեջ-փրկարար, օղակի հրամանատար, հերթափոխի պետ, հրաձիգ, ինչպես նաև կան սպայական խմբի թափուր հաստիքներ: Նշված հաստիքների համալրման խնդիրը կայանում է նրանում, որ համաձայն «Փրկարար ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի՝ փրկարարական ծառայությունում ընդունելությունն և պաշտոնի առաջխաղացումն իրականացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 23-ի թիվ 1244-Ն որոշմամբ սահմանված՝ մրցութային կարգով: Մրցույթի մասնակիցները հիմնականում չեն կարողանում հաղթահարել մրցույթի անցողիկ շեմը (թեստավորման փուլ և հարցազրույցի փուլ), քանի որ նշված պաշտոններին հավակնող քաղաքացիները կամ ծառայողները տեսական գիտելիքները ձեռք են բերում պրակտիկ կիրառման ընթացքում:

2. Այլ ուժային կառույցների հետ օրենսդրությամբ վերապահված գործառույթների համընկնման առանձնահատկությունները

«Փրկարար ծառայության մասին» օրենքի համաձայն՝ Փրկարար ծառայությունը արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ իրականացնում է մարդկանց կյանքի փրկումն ու առողջության պահպանումը, մասնակցում է ՀՀ պաշտպանությանը, իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է ՀՀ սահմանամերձ տարածքներում հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարին, մարտական գործողությունների և զենքի կիրառման հետևանքներից բնակչության պաշտպանությանը, կապտաժների, կամուրջների և այլ կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանությանը, կազմակերպում և իրականացնում է փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքներ, իրականացնում է հումանիտար արձագանքման կազմակերպումը, մասնակցում է ՀՀ վրա զինված հարձակման դիմակայմանը, Զինված ուժերի գլխավոր շտաբի հետ

համաձայնեցնում է ծառայության՝ պատերազմի ժամանակ գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրները:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝

- 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ **պետության ռազմական անվտանգության համակարգը** պաշտպանության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության, պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, զինված ուժերի, այլ զորքերի, զինված ուժերի միացյալ կազմավորումների, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի, աշխարհազորի, ինչպես նաև ռազմաարդյունաբերական համալիրի և ռազմական անվտանգության խնդիրների լուծման գործառույթներ իրականացնող, ներառյալ՝ զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների **ամբողջությունն է**.

- 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումներն են.

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության կազմակերպումը խաղաղ ժամանակ ներառում է անհրաժեշտ կառուցվածքով, թվակազմով, ժամանակակից սպառազինությամբ, ռազմական և այլ տեխնիկայով ու գույքով համալրված, բարձր մարտունակություն և պատրաստականություն ունեցող զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, աշխարհազորի համակարգի ստեղծումը, ինչպես նաև դրանց ծավալման և կիրառման պլանավորումը.

- 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ Զորահավաքային նախապատրաստությունը ներառում է զորահավաքային պլանների կատարման, զինված ուժերի և այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական

մարմնի ուժերի զորահավաքային ծավալման, աշխարհազորի պատրաստության, պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, տնտեսության, բնակչության կենսաապահովման, կապի ու տեղեկատվության համակարգերի գործունեությունը պատերազմական ժամանակաշրջանի աշխատանքային ռեժիմի փոխադրման ապահովման նպատակով ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների անցկացումը.

- 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության կազմակերպումը ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում ներառում է զինված ուժերի, այլ զորքերի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի, աշխարհազորի կիրառումը: Ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերն անցնում են զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո.

- 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինված ուժերի նպատակն է ՀՀ պաշտպանության ռազմական բաղադրիչի ապահովումը , իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Զինված ուժերի խնդիրներն են մասնակցությունն արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին ու քաղաքացիական պաշտպանության, տարահանման, որոնողափրկարարական, փրկարարական, վթարավերականգնողական, ինչպես նաև օրենքով սահմանված այլ միջոցառումների: Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ զինված ուժերի գլխավոր շտաբից, զինվորական կառավարման այլ մարմիններից, զորամիավորումներից,

միավորումներից, զորատեսակներից և զորամասերից, զինվորական հաստատություններից և զինվորական այլ կազմավորումներից: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը[1]:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը սահմանում է, որ ռազմական դրություն հայտարարվելու ամբողջ ժամկետի ընթացքում կարող են իրականացվել փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրում, լիակատար մարտական պատրաստականության փոխադրում և «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքով սահմանված միջոցառումների իրականացում[2]: Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում են նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ուժերն ու միջոցները:

«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումները մշտական պատրաստության ստորաբաժանումներ են՝ համալրված փրկարարական ծառայողներով, հատուկ տեխնիկայով, հանդերձանքով, անհատական պաշտպանության միջոցներով, նախատեսված են մարտական գործողությունների ընթացքում կամ այդ գործողությունների հետևանքների վերացման ժամանակ բնակչությանը, կազմակերպություններին պաշտպանելու և ՀՀ պաշտպանությանը մասնակցելու համար[3]:

---

[1] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 15.11.2017 թ.
URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191089

[2] Տես «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 05.12.2006 թ.
URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147114

[3] Տես «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 31.03.2004 թ.
URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190385

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2018 թվականի օգոստոսի 3-ի N 890-Ա և ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի հուլիսի 16-ի N 9-Ա «Միևնույն կայազորի տարածքում տեղակայված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության և ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների միջև փոխհամագործակցության կարգը սահմանելու մասին» համատեղ հրամանի համաձայն ՓԾ և ԶՈՒ ստորաբաժանումների փոխհամագործակցությունը կազմակերպվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ազդարարում և տեղեկատվության փոխանակում.
- ուժերի և միջոցների տրամադրում.
- բնակչության տարահանման միջոցառումների իրականացում.
- ճառագայթային, քիմիական, մանրէաբանական, օդային և ինժեներական հետախուզության իրականացում.
- հրդեհաշիջման, փրկարարական աշխատանքների իրականացում.
- մարդկանց ու տեխնիկայի սանիտարական և հատուկ մշակման աշխատանքների իրականացում.
- հատուկ օբյեկտների պահպանություն (ջրամբարներ, ջրաղբյուրներ, կապտաժներ, կամուրջներ).
- մասնակցություն հակառակորդի կողմից ներթափանցված դիվերսիոն-հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասազերծման գործողություններին.
- պաշտպանիչ մատույցների և դիրքերի կառուցման աշխատանքների կատարում.
- ըստ անհրաժեշտության ականապատ տարածքների հայտնաբերման, հետախուզման, արգելանշանների տեղադրման, ականազերծման միջոցառումների և տարածքների հսկողության աշխատանքների իրականացում.
- վթարների, տարերային այլ աղետների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերում.

- պայթյունավտանգ զինամթերքի, պայթուցիկ նյութերի (պայթյունավտանգ առարկաներ, ինքնաշեն պայթուցիկ սարքեր) վնասազերծման, տեղափոխման և ոչնչացման աշխատանքների իրականացում.

- ՓԾ ստորաբաժանումների անձնակազմի հետ կրակային (հրաձգային) պատրաստության գործնական պարապմունքների կազմակերպում և անցկացում տվյալ կայազորի տարածքում տեղակայված ԶՈՒ ստորաբաժանման զորային հրաձգարանում կամ զորավարժադաշտում (ուսումնական կենտրոնում), այդ թվում՝ գործնական հրաձգության համար անհրաժեշտ զենքի և զինամթերքի տրամադրում.

- բարձր լեռնային պայմաններում ծառայության անցնող զինծառայողների հետ անվտանգության և վարքագծի կանոններն ուսուցանելու համար հրահանգիչների պատրաստում.

- ռազմական գործողությունների գոտուց (տեղամասից, շրջանից) զոհվածների (մահացածների) մարմինների դուրսբերում:

Վերլուծելով վերը նշված իրավական ակտերով սահմանված իրավանորմերը՝ կարելի է փաստել, որ փրկարարական ծառայությունն իր գործառույթների իրականացման ժամանակ թե՛ խաղաղ պայմաններում, թե՛ հատուկ իրավական ռեժիմների պայմաններում մշտապես առնչվում և համագործակցում է այլ ուժային կառույցների հետ, և նշված կառույցներից որևէ մեկի գործառույթները չեն կարող իրականացվել առանց մնացած կառույցների հետ համագործակցության, և, իրապես, համոզվում ենք, որ **պետության անվտանգության համակարգը օրենսդրությամբ ընդհանուր գործառույթներ վերապահված մարմինների և ուժերի փոխկապակցված ամբողջությունն է:**

3. Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ «Փրկարար ծառայության մասին» օրենքով, Փրկարարական ծառայության կանոնագրքով, «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության

իրավական ռեժիմի մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» օրենքներով փրկարարական ծառայողների առջև դրված խնդիրների կատարման արդյունավետության համար անհամատեղելի է փրկարարական ծառայության վրա քաղաքացիական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումների տարածումը:

Թվարկված և օրենսդրական այլ խնդիրների արդյունավետ կատարումը, բնակչության կենսագործունեության ապահովումը կարող է հնարավոր դառնալ փրկարարական ծառայողների մշտական մարտական և մասնագիտական պատրաստության բարձրացման և կատարելագործման արդյունքում, ինչն իր հերթին ենթադրում է փրկարարական ծառայության եթե ոչ ամբողջական ծավալով, ապա առնվազն որոշակի մասնագիտական ստորաբաժանումների առավել ռազմականացում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190366

2. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194977

3. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193796

4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195590

5. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք (10.10.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191089

6. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195409

7. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190384

8. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք (10.10.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147114

9. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (10.10.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176679

10. «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենք (10.10.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190385

11. ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 23-ի «Փրկարար ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ 1244-Ն որոշում (30.09.2024 թ.)
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180064

12. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2018 թվականի օգոստոսի 3-ի N 890-Ա և ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի հուլիսի 16-ի N 9-Ա «Միևնույն կայազորի տարածքում տեղակայված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումների միջև փոխհամագործակցության կարգը սահմանելու մասին» համատեղ հրաման:

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ СПАСАТЕЛЬНОЙ СЛУЖБЫ В СРАВНЕНИИ С ДРУГИМИ СЛУЖБАМИ

Аннотация

Актуальность данной статьи обусловлена необходимостью разрешения противоречий, возникших в результате изменений в ходе реализации реформ системы государственного управления, и проблем, существующих в ряде действующих в настоящее время правовых актов.

Эффективность реализации функций спасательной службы зависит от ряда факторов, в частности, начиная с подбора кадров, правильной организации поступления на службу и трудовых отношений, участие всех слоев гражданского общества и всех органов в осуществлении мероприятий, вплоть до проведения спасательных работ и ликвидации последствий.

В статье рассматриваются вопросы, связанные с невозможностью распространения правового регулирования гражданской службы на спасательную службу, совпадением функций спасательной службы с функциями других властных структур, особенностями и проблемами, вытекающими из возложенных законодательством на службу функций, на практике.

Ключевые слова: спасательная служба, госслужба, военнослужащий, оборона, безопасность.

LEGAL ISSUES OF ORGANIZING A RESCUE SERVICE IN COMPARISON WITH OTHER SERVICES

Annotation

The relevance of this article is due to the need to settle the contradictions that arose as a result of the changes during the implementation of the reforms of the

state administration system and the problems existing in a number of legal acts currently in force.
The effectiveness of the implementation of the functions of the rescue service depends on a number of factors, in particular, starting with the selection of personnel, the correct organization of service transition and labor relations, the participation of all levels of civil society and all bodies during the implementation of the measures, until the actual rescue operations and the elimination of the consequences.
The article discusses the issues related to the impossibility of extending the legal regulations of the civil service to the rescue service, the overlapping of functions with other power structures, the specificities and problems arising from the functions assigned to the services in practice by legislation.
Keywords: rescue service, civil service, military, defense, security.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.12.2024թ., տրվել է գրախոսության 26.12.2024թ., ընդունվել է տպագրության 11.01.2025թ.:

DOI: 10.59560/18291155-2024.4-.104

ՄԻԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՈՎԱ

ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի առաջատար մասնագետ, Հայ-ռուսական համալսարանի 3-րդ կուրսի ասպիրանտ

ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՆԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանն ուղղված կարգավորումների վերլուծությանը, դրանցում առկա բացթողումների վերհանմանը, հանրության կողմից պատշաճ արձագանքի բացակայությանը, բռնության տեսակներին ու դրանց համար նախատեսված պատասխանատվության չափերին, ինչպես նաև թվարկյալ հիմնախնդիրների ազդեցության գնահատմանը՝ կնոջ ֆիզիկական և հոգեկան առողջության համատեքստում: Հստակ մատնանշվել է ընտանիքում բռնության դեպքերով հանրային քրեական հետապնդման ենթակա լինելու անհրաժեշտությունը, քանզի դա մասնավոր ներընտանեկան խնդիր չպետք է դիտարկվի, այլ պետությունը պետք է կատարի իր պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու յուրաքանչյուր անձի, այստեղ հատկապես կնոջ՝ ֆիզիկապես և հոգեպես առողջ ապրելու անվտանգությունն ու պաշտպանությունը:

Սույն հոդվածում ներկայացվել է ինչպես ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀԱԱԳՎ անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության կողմից տրամադրված՝ մինչև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային

բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ 2016-2017 թթ. և նշյալ օրենքի ընդունումից հետո՝ 2021-2023 թթ. ընտանիքում՝ ամուսնու կամ զուգընկերոջ կողմից կնոջ նկատմամբ կիրառված բռնության դեպքերի, սպանությունների, սույն դեպքերով քրեական վարույթների հարուցման և կարճման վիճակագրական տվյալների հետ կապված տեղեկատվությունը, այնպես էլ վերջնանշյալ օրենքի կիրառմամբ կայացված միջամտության որոշումների դատական բողոքարկման դատական պրակտիկան, որոնք փաստում են սույն ուսումնասիրության արդիականությունն ու կարևորությունը, ներկայիս կարգավորումների անկատարելիությունն ու անարդյունավետությունը:

Հիմնաբառեր. կանանց հանդեպ բռնություն, բռնության կանխարգելում, բռնության իրավական հետևանքներ, անպատժելիություն:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր ինչպես ՀՀ-ում, այնպես էլ մի շարք զարգացած, համաշխարհային նշանակության մեծ տեխնոլոգիական առաջընթաց գրանցած, իրենց իրավական ու ժողովրդավարական հոչակած երկրներում՝ ի հակադարձ քաղաքակիրթ աշխարհի բարոյական նորմերի՝ կանանց հանդեպ բռնությունը գնալով առավել լայն տարածում է գտնում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) ներկայացրած վերջին տվյալներն[1] ապշեցնող են՝ դրանց համաձայն ամբողջ աշխարհում կանանց 1/3-ը, գոնե մեկ անգամ իր կյանքում, ենթարկվում է բռնության[2]:

[1] Violence against women Prevalence Estimates, 2018. Global, regional and national prevalence estimates for intimate partner violence against women and global and regional prevalence estimates for non-partner sexual violence against women. WHO: Geneva, 2021, ISBN:9789240022256, https://iris.who.int/bitstream/handle/10665/341337/9789240022256-eng.pdf?sequence=1

[2] «Գենդերային հավասարության ինստիտուտի (Citation2022) տվյալների համաձայն՝ յուրաքանչյուր 3 կանանցից առնվազն 1-ը ենթարկվել է ֆիզիկական և/կամ սեռական բռնության, 20-ից 1-ը բռնաբարվել է, 2-ից 1-ը ենթարկվել սեռական ոտնձգության, 5-ից 1-ը՝ հետապնդումների. Եվրոպական միությունում սեքսուալ շահագործման համար թրաֆիքինգի զոհերի 95-%-ը կանայք են»: Global rise in gender-based violence against women and girls during COVID-19 lockdown: An insight from Africa, https://doi.org/10.1080/23311983.2023.2188772

Կնոջ նկատմամբ բռնության գործադրման մասին խոսելիս առաջին հերթին հասկանում են սեռական բռնությունն ու դրա տեսակները, սակայն անհրաժեշտ է հստակ մատնանշել կնոջ նկատմամբ կատարվող նաև այն գործողությունները, որոնք ներառված են «բռնություն» եզրույթի բովանդակության շրջանակներում: Բռնությունը միայն ֆիզիկական, մարմնական վնասվածքներ հասցնելը չէ, որպես բռնություն է որակվում նաև հոգեբանական լուրջ ներգործությունը ճնշումների միջոցով, հետապնդումները, համատեղ կյանք վարելիս տարբեր ոլորտներում կնոջ կամաարտահայտման իրավունքի սահմանափակմանն ուղղված բոլոր գործողությունները: Այսպես, «*Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» հռչակագիրը* սահմանում է, որ «կանանց նկատմամբ բռնությունը» «սեռով պայմանավորված ցանկացած բռնության ակտն է, որը պատճառում է կամ կարող է պատճառել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք կանանց, ինչպես նաև նման գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ կամայական ազատությունից զրկումը՝ հասարակական կամ անձնական կյանքում»[1]:

Միջազգային հանրությունը կանանց նկատմամբ բռնությունը[2] ճանաչել է մարդու իրավունքների ոլորտում որպես լրջագույն խնդիր և հստակեցրել, որ այն չպետք է դիտարկվի որպես մասնավոր հարց, որին պետությունը չունի միջամտելու անհրաժեշտություն:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմված է աշխարհի տարբեր երկրների՝ կանանց իրավունքների 23 անկախ փորձագետներից, որոնք

[1] Declaration on the Elimination of Violence against Women. Adopted 20 December 1993. BY General Assembly resolution 48/104, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-violence-against-women

[2] «Կանանց նկատմամբ բռնությունը դիտարկվում է որպես մարդու իրավունքների խախտման և հանրային առողջության կարևոր խնդիր: Սա կանանց խոցելիության հիմնական ռիսկային գործոններից մեկն է առողջապահության ոլորտում, գլխավորապես՝ վերարտադրողական և հոգեբանական»: Насилие в отношении женщин: мировые тенденции. **Т.К. Ростовская, Н.А. Безвербная** DOI:10.21064/WinRS.2020.2.8 // Женщина в российском обществе. 2020. № 2. - С. 89-98.

իրականացնում են «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարման մոնիթորինգ[1]: «*Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան*[2] հանդիսանում է մարդու իրավունքների ոլորտում ամենակարևոր պայմանագրերից մեկը, որն ուղղված է կանանց պաշտպանությանը: Հանձնաժողովը 1992 թ. իր Թիվ 19 Գլխավոր հանձնարարականում հայտարարել է, որ կնոջ նկատմամբ բռնությունը խտրականության ձև է՝ ուղղված կնոջ դեմ այն պատճառով, որ նա կին է, որը և խոչընդոտում է կանանց՝ տղամարդկանց հավասար՝ իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորությունը[3]: Հանձնաժողովը 2017 թ. թիվ 35 Գլխավոր հանձնարարականում ճանաչել է, որ կանանց նկատմամբ գենդերային բռնության անթույլատրելիության հայեցակարգը աստիճանաբար ձեռք է բերում միջազգային սովորութային իրավունքի սկզբունքի կարգավիճակ, որը պարտավորություններ է դնում բոլոր պետությունների վրա[4]:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կնոջ իրավունքների պաշտպանության, բռնության կանխարգելման համար մեծ առաջընթաց էր 13.12.2017 թ. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի[5] (այսուհետ՝ Օրենք) ընդունումը,

[1] Committee on the Elimination of Discrimination against Women, https://www.ohchr.org/en/treaty-bodies/cedaw

[2] The Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW). Adopted in 1979 by the UN General Assembly, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-elimination-all-forms-discrimination-against-women

[3] The Committee on the Elimination of Discrimination against Women. General Recommendation No. 19, 1992, https://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm

[4] General recommendation No. 35 (2017) on gender-based violence against women, updating general recommendation No. 19 (1992),

[5] Ի գիտություն՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» 13.12.2017 թ. ՀՕ-320-Ն օրենքի վերնագիրը խմբ. 12.04.24 ՀՕ-169-Ն օրենքով, ուժի մեջ է մտել 01.07.2024 թ.:

քանզի ըստ ԱՀԿ[1] Գործադիր ամփոփագրի[2]՝ ամբողջ աշխարհում կանանց 35%-ը ենթարկվել է իր զուգընկերոջ կողմից ֆիզիկական և/կամ սեռական բռնության, ինչպես նաև կանանց սպանությունների 38%-ը կատարվում է հենց զուգընկերների կողմից:

Օրենքով հստակ սահմանված են ընտանեկան բռնության 5 տեսակներ՝ *ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը, հոգեբանական բռնությունը, տնտեսական բռնությունը* և *ընտանիքի անդամների միջև անտեսումը*:

Ֆիզիկական բռնությունը ՀՀ քրեական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) նախատեսված՝ ծեծը և այլ բռնի գործողություններն են, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը:

Սեռական բռնությունն Օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն են: Այսինքն՝ մինչ 2017 թ. սույն Օրենքի ընդունումը՝ ընտանիքում՝ ամուսնու կողմից (քաղաքացիական կամ օրինական) իր կնոջը սեքսուալ բնույթի բռնի գործողությունների պարտադրելը չէր որակվում որպես սեռական բռնություն, քանզի Օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանելով նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարողների կամ վայրի սպառիչ ցանկը, չի ներառում ամուսնուն, ուստի, կարող ենք արձանագրել, որ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու արարքը որպես հանցագործություն որակող կարգավորումն ամուսնուն այդ հանցակազմի սուբյեկտ չի դիտարկում, չնայած նրա կողմից այդ նույն արարքի կատարմանը: Իսկ Օրենքի իմաստով ամուսնու կողմից նշված

[1] Կարող եք ծանոթանալ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ԱՀԿ վերջին զեկույցին՝ «Violence Against Women Prevalence Estimates, 2018», որը հիմնված է 2000-2018 թթ. անցկացված հարցումների և ուսումնասիրությունների, առկա տվյալների վերլուծության վրա, որոնք ստացվել են կանանց նկատմամբ բռնության տարածվածության վերաբերյալ առկա բոլոր տվյալների համակարգված և համապարփակ վերանայման միջոցով, https://www.who.int/publications/i/item/9789240022256

[2] Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence, Executive summary, WHO/RHR/HRP/13.06 © World Health Organization 2013, www.who.int

գործողությունների կատարումը ևս հանդիսանում է հանցագործություն, ***ուստի, Օրենսգրքով նույնպես պետք է ստանա համապատասխան ամրագրում՝ ապահովելով քրեական պատասխանատվության գործադրման անհրաժեշտ երաշխիքներ:***

Հոգեբանական բռնությունը դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն է, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Օրենսգրքի համաձայն՝ *բռնությունն* այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելն է[1], այսինքն՝ Օրենսգրքում օգտագործվող հասկացությունների բացատրության մասում՝ «բռնություն» եզրույթի պարզաբանման մեջ հոգեբանական ներգործության գործադրման բացակայությունը վկայում է, որ այն չի ներառվում սույն Օրենսգրքում՝ «բռնություն» հասկացության օգտագործման ժամանակ:

Տնտեսական բռնությունն անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) զրկելն է, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը: Բռնության դիտարկվող տեսակը

[1] ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Սույն օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ:

շատ տարածված է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՊՀ երկրներում, քանզի կյանքում կնոջ դերի հետ կապված դարեր շարունակ արմատացած ազգային ավանդույթներն ու սովորույթները, ազգային արժեքաբանությունը, կարծրատիպերը[1] թույլ չեն տալիս գիտակցելու և հասնելու քաղաքակրթության այն մակարդակին, որտեղ կինը՝ որպես մարդ, Սահմանադրությամբ ամրագրված բարձրագույն արժեք, կարող է լիարժեքորեն իրացնել իր սահմանադրորեն ամրագրված իրավունքներն ու ազատությունները՝ հատկապես ազատ տեղաշարժվելու, կրթություն ստանալու և աշխատանքի ազատության իրավունքների առնչությամբ:

Անտեսումը ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից իր խնամակալության ներքո գտնվողի կենսական անհրաժեշտ նվազագույն պայմանների (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարումն է:

Օրենքի նպատակն է ապահովել ընտանիքի հատուկ պաշտպանությունը: Այն սահմանում է ընտանիքում և կենցաղում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները[2]՝ ***նախազգուշացումը[3], անհետաձգելի միջամտության որոշումը[4], պաշտպանական որոշումը[5]***:

Այստեղ, մեր դիտարկմամբ, մտահոգիչ է այն, որ Օրենսդրի որդեգրած քաղաքականությունն ու նպատակը սույն իրավահարաբերությունների կարգավորման հարցում հանգում են առաջնահերթորեն ընտանիքում համերաշխության վերականգնմանը: Բնական է, որ Օրենսդիրը,

[1] Պ.Վ. Ռումյանցևան գրում է. «Բռնությունը դիտարկվում է որպես տղամարդու դոմինանտության և ագրեսիվության դրսևորում, որը ողջունվում է մշակույթում: Հայրապետական գենդերային կարգերն են ծնում բռնության իրավիճակի աղավաղված ընկալում, ձևավորում, մասնավորապես, զոհի կարգավիճակի մասին պատկերացումներ, այն մասին, որ կինն «ինքն է մեղավոր» կատարվածի համար»: **Редюк А.Н.** Домашнее насилие как угроза безопасности личности и общества. - С. 277. Актуальные проблемы формирования психологопедагогической культуры будущих специалистов 2023, УДК:31 6.6:316.362.1:364.632:364.628:159.923

[2] Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս:

[3] Օրենքի 6-րդ հոդված:

[4] Օրենքի 7-րդ հոդված:

[5] Օրենքի 8-րդ հոդված:

նպատակ ունենալով հնարավորինս պահպանել ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական սոցիալական բջջի գոյությունը, կարևորություն է տվել կողմերի միջև համերաշխություն հաստատելուն ուղղված գործողություններին, որը, գտնում ենք, բավականին մեղմ է բռնություն գործադրած անձի հանդեպ և հղի հետագայում կրկին ու կրկին նույն իրավիճակների ստեղծման համար: Մեր գնահատմամբ, եթե իրավակարգավորումները սահմանեն, որ անկախ կողմերի միջև համերաշխության հաստատումից պետք է բռնություն գործադրած անձը ենթարկվի պատասխանատվության, քանզի **եթե կա բռնություն, ապա պետք է լինի այդ գործողություններին համարժեք արձագանք,** ապա վստահորեն կարող ենք նշել, որ ընտանիքում բռնությունների թիվը կտրուկ կնվազի, քանզի դրան ընդունակ անձինք ջանք կգործադրեին իրենց տիրապետելու համար՝ իմանալով համապատասխան գործողությունների բացասական իրավական հետևանքների մասին:

Այս առնչությամբ հետաքրքրաշարժ է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀԱԱԳՎ անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության կողմից տրամադրված՝ մինչև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ 2016-2017 թթ. և նշյալ օրենքի ընդունումից հետո՝ 2021-2023 թթ. ընտանիքում՝ ամուսնու կամ զուգընկերոջ կողմից կնոջ նկատմամբ կիրառված բռնության դեպքերի, սպանությունների, սույն դեպքերով քրեական վարույթների հարուցման և կարճման վիճակագրական տվյալները:

Մասնավորապես՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվության[1] համաձայն՝

մինչև Օրենքի ընդունումը՝

2016 թ. ընթացքում քննվել է ընտանեկան բռնության 756 դեպք, որից

[1] ՀՀ ՆԳՆ ՀԱԱԳՎ (Ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն) անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչություն No 18/762, 05.06.2024 թ.:

194-ով հարուցվել է քրեական գործ, 562-ով նյութերով գործ հարուցելը մերժվել է:

Հիշյալ 756 դեպքերը կատարվել են՝

- կենակցի կողմից – 3 դեպք,
- ամուսնու կողմից կնոջ նկատմամբ – 471 դեպք:

2016 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում կանանց սպանության 7 դեպք:

2017 թ. ընթացքում քննվել է ընտանեկան բռնության 793 դեպք, որից 196-ով հարուցվել է քրեական գործ, 597-ով նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է:

Հիշյալ 793 դեպքերը կատարվել են՝

- կենակցի կողմից – 1 դեպք,
- ամուսնու կողմից կնոջ նկատմամբ - 480 դեպք:

2017 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում կանանց սպանության 4 դեպք:

Օրենքի ընդունումից հետո՝

2021 թ. ընթացքում քննվել է ընտանեկան բռնության 472 դեպք, որից 101-ով հարուցվել է քրեական գործ, 371-ով նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է:

Հիշյալ 472 դեպքերը կատարվել են՝

- ամուսնու կողմից կնոջ նկատմամբ - 310 դեպք:

2021 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում կանանց սպանության 6 դեպք:

2021 թ. մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել ընտանեկան բռնությունների վերաբերյալ 129 քրեական գործ՝ 135 անձի վերաբերյալ:

2022 թ. ընթացքում քննվել է ընտանեկան բռնության 333 դեպք, որից 138-ով հարուցվել է քրեական գործ, 195-ով նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է:

Հիշյալ 333 դեպքերը կատարվել են՝

- կենակցի կողմից – 1 դեպք,
- ամուսնու կողմից կնոջ նկատմամբ - 220 դեպք:

2022 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում կանանց սպանության 8 դեպք:

2023 թ. ընթացքում քննվել է ընտանեկան բռնության 508 դեպք: Նշված 508 դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ, որից 55-ը կարճվել է:

Հիշյալ 508 դեպքերը կատարվել են՝

- կենակցի կողմից – 2 դեպք,
- ամուսնու կողմից կնոջ նկատմամբ - 267 դեպք,
- նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ – 45 դեպք:

2023 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում կանանց սպանության 2 դեպք:

Վերոնշյալ վիճակագրությունը[1] փաստում է սույն ուսումնասիրության արդիականությունն ու ներկայումս գործող սույն իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք, ոչ կատարյալ և ոչ արդյունավետ լինելը, քանզի պատկերը այդքան էլ հուսադրող չէ, իսկ տարբերությունը ոչ ցանկալի աստիճանի տեսանելի: Այստեղ, կարող ենք փաստել, որ նման դեպքերի առնչությամբ հանրության ոչ պատշաճ արձագանքը ևս նշանակալի դեր ունի, քանզի խրախուսվում է ընտանիքում բռնության մասին լռելը, այն հնարավորինս թաքցնելը: Բռնության ենթարկված անձը, հասարակության կողմից բարոյահոգեբանական ճնշումներից և թիրախավորվելուց խուսափելով, տարիներ շարունակ զրկանքներ ու տառապանքներ կրելով, լռում է իր նկատմամբ բռնի գործողությունների կատարման մասին, քանզի հայ հասարակության լայն շերտեր (ինչպես նաև ԱՊՀ այլ երկրներում) մեղադրում են բռնության ենթարկված անձին, այլ ոչ թե բռնություն գործադրածին[2], որն ինչպես արդեն նշվել էր՝ կնոջ

[1] Ի գիտություն՝ ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվությունը (վիճակագրությունը) տարբերվում է ՀՀ դատախազության տարեկան հաղորդումներում ամփոփված տվյալներից, քանզի մեր կողմից ՀՀ ոստիկանություն ներկայացված հարցմամբ խնդրել ենք տրամադրել վիճակագրություն միայն կանանց նկատմամբ ընտանիքում բռնության դեպքերով տվյալներ:

[2] «Ստյուարտն ու Սթրեյթերնը մշակել են Ռիչեսի բռնության եռանկյունին (վկա, զոհ

նկատմամբ մարդկանց մեջ արմատացած կարծրատիպերի արդյունք է: Ուստի, պետության[1] կողմից պարտադիր են հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, սեռային պատկանելիությունից ելնելով խտրականության բացառմանը, սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ապահովելուն ուղղված գործողությունների կատարումը:

Վերոնշյալ ամբողջի, այդ թվում՝ վերոնշյալ վիճակագրության ներկայացման և վերլուծության արդյունքում գտնում ենք, որ ֆիզիկական կամ սեռական բռնություն կատարելու դեպքում՝ կողմերի միջև համերաշխության հաստատման, բռնության ենթարկված անձի կողմից ներման, բողոքի չներկայացման պարագայում միևնույն է, պետք է գործողությունը կատարած անձը կրի պատասխանատվություն՝ և ոչ թե վարչական, այլ քրեական պատասխանատվություն: Այսինքն,

և բռնություն կատարող), որտեղ հանցագործն իր գործողությունների արդարացումը, օրինականությունը փնտրում է վկաների շրջանում»: (Stewart, J. and Strathern, A. (2002) Violence: Theory and Ethnography. New York and London: Continuum Publishing for Athlone Press), Violence and Society By Larry Ray, 08/06/2012, file:///C:/Users/PC-3/Downloads/Violence_and_Society.pdf

[1] «Բռնության և պետության վերաբերյալ ֆեմինիստական ուսումնասիրությունները վաղ ավանդույթ ունեն (Elman, 1996; Hearn, 1998; MacKinnon, 1989; Walby, 1986)՝ մարտահրավեր նետելով պետության համընդհանուր բարեկեցության և դրա նկատմամբ կանանց վերաբերմունքի վերաբերյալ մեր պատկերացումներին: Առավել ակնառու մոտեցումներից մեկը Մակքինոնի մոտեցումն է (1989), որը պնդում է, որ պետությունն ինքնին հայրապետական է՝ շնորհիվ տղամարդկանց գերակայության և բռնության: Այնուամենայնիվ, բռնությունը դեռևս ամբողջությամբ չի դիտարկվում հիմնական սոցիալական տեսության կողմից, իսկ բռնության դերը, որպես սոցիալական շերտավորման աղբյուր համընդհանուր բարեկեցության պետությունների ներսում և նրանց միջև, լավ ուսումնասիրված չէ: Գենդերային բռնության դեպքում սոցիալական ապահովության միջոցառումները դիտարկելիս հետևանքներն առաջին հերթին այն են, որ կարելի է չնկատել նույն սոցիալական ապահովության ռեժիմների և գենդերային ռեժիմների միջև առկա առավել էական տարբերությունները, քան որոնք սովորաբար ենթադրվում են: (Lister, 2009); Pringle, 2005), և երկրորդ, այն է, որ սոցիալական ապահովության այն ռեժիմները, որոնք համարվում էին կանանց համար բարենպաստ, կարող են բոլորովին էլ բարենպաստ չլինել կանանց համար:»: States of violence: Exploring welfare state regimes as violence regimes by developing a violence regimes index, 15.04.2021, Sofia Strid, Anne Laure Humbert, Jeff Hearn, Dag Balkmar, https://doi.org/10.1177/09589287211002370

ֆիզիկական կամ սեռական բռնության պարագայում կողմերի միջև համերաշխության հաստատումը չպետք է հիմք հանդիսանա պատասխանատվությունից խուսափելու համար և *սահմանվի պարտադիր քրեական պատասխանատվության ենթարկում*:

Ինչ վերաբերում է հենց քրեական պատասխանատվությանը, ապա հարկ է արձանագրել, որ 01.07.1998 թ. ընդունված և 01.07.2022 թ. ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը՝ սահմանելով տուժողի բողոքի հիման վրա հարուցվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը (մասնավոր հետապնդման), նույն հոդվածի 4-րդ մասում[1] նշում էր, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ ***դատախազն իրավասու է*** *հարուցելու քրեական գործ* ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը և այդ դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում[2]: Հետագայում, 30.06.2021 թ. ընդունված[3]՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ներկայումս գործող խմբագրությամբ՝ «Քրեական հետապնդումն իրականացնելու ձևերը» վերտառությամբ 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ ***դատախազի նախաձեռնությամբ*** *քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով՝ 1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով,* 2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներով,

[1] «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ ՀՕ-325-Ն օրենքով՝ ընդունված 13.12.2017 թ., 183-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով, / սույն խմբագրությամբ օրենսգիրքն ուժը կորցրել է:

[2] 01.07.1998 թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մաս /ուժը կորցրել է/:

[3] Սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., ՀՕ-306-Ն:

եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը»[1]: Օրենսդիրն այս ձևակերպմամբ քրեական գործի հարուցումը նշյալ երկու հանգամանքների առկայության պարագայում՝ հանրային կարգով դատախազի նախաձեռնությամբ պարտադիր քրեական հետապնդման գործերի շարքին է դասել, որը նախորդ խմբագրությամբ թողնված էր դատախազի հայեցողությանը և չէր կրում պարտադիր բնույթ:

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունը ուսումնասիրության առարկա իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված արդյունավետ երաշխիք է կանանց՝ սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության՝ հանրային հետապնդման գործերի դասման առնչությամբ, որն առավել սթափեցնող գործոն է հանդիսանում բռնություն կիրառելուն ունակ անձանց, ինչպես նաև իրավապահ մարմինների՝ օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթների իրականացման համար:

Կրկին անդրադառնալով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ընտանիքում և կենցաղում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներին՝ հարկ ենք համարում արձանագրել, որ թեև պաշտպանության թվարկյալ միջոցների տեսակները միտված են ընտանիքում բռնության կանխարգելման, բռնության ենթարկվածների անվտանգության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովմանը, ինչպես նաև ընտանիքում համերաշխության վերականգնմանը նպաստելուն, սակայն այսօր դատական պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից թերի վարչարարության իրականացման պատճառով դատական բողոքարկման փուլում դատական կարգով վերացվում են բռնության կանխարգելմանն ուղղված որոշումները, այն պայմաններում, երբ

[1] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 11-րդ հոդվածի 4-րդ մաս:

ողջամիտ կասկած է մնում առ այն, որ տվյալ դեպքով իրապես տեղի է ունեցել բռնություն կնոջ նկատմամբ:

Արդյունքում, ողջամիտ կասկածի առկայությամբ ունենում ենք բռնության ենթարկված կին և պատասխանատվության չենթարկվող բռնարար: Այս ոլորտում խնդիրները բազմաթիվ են՝ սկսած վարչարարական և դատավարական իրավակարգավորումների ոչ լիարժեք, թերի լինելուց, վերջացրած՝ վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձանց ոչ պրոֆեսիոնալ և դատավարություն իրականացնող դատարանի՝ տվյալ ոլորտի նեղ մասնագիտական չվերապատրաստված լինելու արդյունք:

Մասնավորապես՝ որոշ դատական գործերի այնպիսի օրինակներ, որոնցում բռնության կանխարգելմանն ուղղված որոշումները վերացվել են ոչ այն հիմքով, որ բռնություն իրապես տեղի չի ունեցել: Այդ բոլոր դեպքերը վերաբերում են թե՛ այդպիսի որոշումներ կայացնողների ոչ պրոֆեսիոնալ գործելուն, թե՛ օրենսդրական բացերին և թերություններին.

ՎԴ/6546/05/24[1] վարչական գործով դատարանն արձանագրել է վարչական մարմնի թերի վարչարարության իրականացման փաստը, որի արդյունքում ենթադրյալ բռնության դեպքի առնչությամբ ընդունված անհետաձգելի միջամտության որոշումը ճանաչվել է ոչ իրավաչափ: Ստացվում է, որ բացառապես վարչական մարմնի թերի վարչարարության հետևանքով բռնության դեպքը մնում է չկանխարգելված, և դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է բազմաթիվ նմանատիպ գործերի մասին:

ՎԴ/7102/05/24[2] վարչական գործով դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինը վարչական վարույթը պատշաճ չի կատարել՝ չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ չի բացահայտել գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

[1] ՎԴ/6546/05/24 վարչական գործով 09.06.2024 թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809999842

[2] ՎԴ/7102/05/24 վարչական գործով 21.06.2024 թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071810000563

ՎԴ/9154/05/24[1] վարչական գործի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ դատարանը վերացնում է ոստիկանության կողմից ընդունված անհետաձգելի միջամտության վարչական ակտը, պատճառաբանելով, որ «…վարչական մարմինը չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, հաշվի է առել միայն վարույթի մեկ մասնակցի օգտին առկա հանգամանքները՝ չբացահայտելով գործի բոլոր հանգամանքները: Վարչական վարույթի ընթացքում ձեռք բերելով հակասական տեղեկություններ՝ պատասխանող վարչական մարմինը դրանց մի մասը արժանահավատ է համարել՝ քննարկման առարկա չդարձնելով վարույթի մյուս մասնակցի օգտին առկա տեղեկությունները»: Դատարանը, սակայն, որևէ անդրադարձ չի կատարել այն հանգամանքին, որ ենթադրյալ բռնության ենթարկված կինը ոստիկանության կողմից արձանագրություն կազմելու հարցման ժամանակ ներկայացրել է կատարվածը և պատմել նաև նախկինում տեղի ունեցած բռնի գործողությունների մասին, հավելել, որ ամոթի և երեխաների պատճառով չի դիմել ոստիկանություն, սակայն դատարանում հերքել է բռնության դեպքերը, մինչդեռ գտնում ենք, որ դատարանը տվյալ ոլորտի առանձնահատկության հաշվառմամբ պետք է առաջնահերթ քննության առարկա դարձներ և բացահայտեր բոլոր այն շարժառիթները, որոնք դրդել են երրորդ անձին վարույթում և դատարանում իրարամերժ բացատրություններ տալու համար: Մասնավորապես՝ եթե դատարանը հիմք է ընդունել ենթադրյալ բռնության ենթարկվածի դատարանում տված բացատրությունը, ապա առնվազն պետք է բացահայտեր վարույթում տվյալ անձի հակառակի վերաբերյալ տված բացատրության շարժառիթներն ու նպատակը: Այստեղ կարող են լինել բազում խնդիրներ՝ ընդհուպ մինչև ֆիզիկական կամ հոգեբանական բռնության՝ դատարանում բացատրություն տալուն հարկադրելուն դեպքի առկայություն:

Հաջորդ խնդիրը տվյալ ոլորտում, որին ցանկանում ենք ուշադրություն դարձնել, այն է, որ կանանց սեռային պատկանելիության հետ

[1] ՎԴ/9154/05/24 վարչական գործով 04.08.2024 թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071810003164

կապված հարցերի կարգավորումը, որպիսիք են կնոջ նկատմամբ բռնության բոլոր տեսակների կիրառումը՝ հատկապես ֆիզիկական և սեռական բռնության, հղիության՝ այդ թվում հղիության ընդհատման արգելքի կամ թույլատրելիության, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառելիության, փոխնակ մայրության հետ կապված հարցերը սահմանվում են Օրենսդրի կողմից, որի կազմում *կանանց պատգամավորական ներկայացուցչության* հստակ տոկոսային շեմ ամրագրված չէ՝ փաստացի որոշվում է տղամարդկանց զգալի մեծամասնության՝ սույն հարցերի շուրջ ունեցած ընդհանրական պատկերացումների, ներքին համոզմունքների և կարծիքի արդյունքում[1]: Ուստի՝ առաջարկվում է ***մարմնի/հանձնաժողովի ստեղծում*** բաղկացած ինչպես հանրային կյանքի տարբեր ոլորտներում նշանակալից դերակատարում և հեղինակություն ունեցող կանանցից, այնպես էլ հասարակության տարբեր շերտերի (կրթված) զանգվածներից ընտրված կին քաղաքացիներից, որը կանանց սեռային պատկանելիությամբ պայմանավորված հարցերի իրավական կարգավորումների ընդունման հարցում կունենա ուղղորդման իրավասություն: Այսինքն, մինչ Օրենսդրին օրենսդրական փաթեթի ներկայացումը, սույն հարցերի վերաբերյալ բացասական կամ դրական *Եզրակացություն* պետք է տրվի վերոնշյալ մարմնի/հանձնաժողովի կողմից «*Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին*», քանզի **բնությամբ տղամարդիկ ի զորու չեն հասկանալու և ընկալելու նշված և բազմաթիվ նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ իրատեսական պատկերը (ֆիզիկական և զգացմունքային առանձնահատկությունները հաշվի առնելով) և չեն կարող սահմանել այնպիսի իրավական չափանիշներ, որոնք գործնականում երաշխիք կհանդիսանան կանանց կյանքի տարբեր ոլորտներում՝**

[1] Տես ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածը, որի համաձայն «խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 25 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության ընտրական ցուցակի առաջին մասի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա», որը կանանց համար վերոնշյալ կարևորագույն հարցերը կարգավորող դրույթների ընդունման համար նվազագույն մասնակցություն է ապահովում, ինչը, մեր կարծիքով, անթույլատրելի է:

անվտանգության և պաշտպանության, որպես հասարակության լիիրավ անդամի ապահովման համար:

Ընտանեկան բռնության մասին իրավական կարգավորումներ առկա են հետևյալ ԱՊՀ անդամ պետություններում՝ Ղրղզստան[1], Ուզբեկստան[2], Տաջիկստան[3], Բելառուս[4], Ղազախստան[5]: Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը (այսուհետ՝ ՌԴ), ապա գտնում ենք, որ անհրաժեշտ է այն ներկայացնել առավել մանրամասնորեն:

Ընտանեկան բռնության գործերը ՌԴ-ում քննվում են ՌԴ Քրեական օրենսգրքի և ՌԴ ՎԻՎ համապատասխան ընդհանուր դրույթներով, քանզի մինչ օրս ՌԴ-ում ընտանեկան բռնության մասին օրենք չի ընդունվել: Ներկայիս կարգավորումների համաձայն՝ ծեծը հարազատ

---

[1] Закон Кыргызской Республики от 27.04.2017 г. № 63 “Об охране и защите от семейного насилия”.

[2] Закон Республики Узбекистан от 02.09.2019 г. № ЗРУ-561 “О защите женщин от притеснения и насилия”.

[3] Закон Республики Таджикистан от 19.03.2013 г. № 954 “О предупреждении насилия в семье”.

[4] *Բելառուսում* չի գործում ընտանիքում բռնության մասին առանձին օրենք, միայն կա անդրադարձ ընտանեկան բռնության կանխարգելման միջոցառումների վերաբերյալ իրավախախտումների կանխարգելման մասին օրենքի մեկ հոդվածում, որը չի ներառում որևէ անհապաղ միջամտության ակտ իրավապահ մարմինների կողմից, այլ նախատեսում է օգնության տարբեր հնարավորություններ տուժած անձանց, և բռնություն իրականացրած անձանց պատասխանատվության մասով միայն իրավապահ մարմինների աշխատակիցները բացատրում են տուժած անձանց իրենց իրավունքները՝ քրեական գործի հարուցման կամ վարչական իրավախախտման դիմումների ներկայացման վերաբերյալ: Закон Республики Беларусь 04.01. 2014 г. № 122-З “Об основах деятельности по профилактике правонарушений”, статья 17.

[5] *Ղազախստանում* ընտանեկան բռնությունը ապաքրեականացվել էր 2017 թ. և նախատեսում էր վարչական պատասխանատվություն, սակայն 2024 թ. ընտանեկան բռնության իրականացման համար պատիժը խստացվեց օրենսդրական փոփոխությունների արդյունքում, այսուհետ բռնություն կատարած անձն ենթարկվելու է քրեական պատասխանատվության: Законом Республики Казахстан от 15.04.2024 г. № 72-VIII ЗРК “О внесении изменений и дополнений в некоторые законодательные акты Республики Казахстан по вопросам обеспечения прав женщин и безопасности детей” были внесены изменения в следующие акты: Кодекс Республики Казахстан от 26.12. 2011 г. “О браке (супружестве) и семье”, Уголовный кодекс Республики Казахстан от 03.07.2014 г., Закон Республики Казахстан от 04.12.2009 г. “О профилактике бытового насилия”.

մարդկանց նկատմամբ համարվում է վարչական իրավախախտում, եթե գործողությունները կատարվել են առաջին անգամ (ապաքրեականացվել է 03.07.2016 թ.[1]), իսկ առողջությանը թեթև վնաս պատճառելու քրեական գործերը մասնավոր հետապնդման գործերի շարքին են պատկանում[2], այսինքն բռնության ենթարկված կինն ինքը պետք է ապացուցման ողջ բեռը կրի և ներկայացնի մեղադրանքը հաշտարար դատարան: Այսպիսով ստացվում է մի իրավիճակ, երբ բռնություն գործադրած անձը, ընդամենը 5-30 հազար ռուբլի վարչական տուգանք վճարելով[3], համարվում է իր կատարած գործողությունների համար պատասխանատվության ենթարկված, որն անթույլատրելի է՝ կնոջը պատճառած տառապանքի դիմաց:

Ընտանեկան բռնության ապաքրեականացման կողմնակիցները նշում են, որ այս փոփոխությունից հետո վիճակագրության համաձայն՝ ծեծի դիմաց վարչական պատասխանատվության ենթարկման դեպքերը մի քանի անգամ աճել են, որը պայմանավորված է իրավապահ մարմինների, դատական համակարգի և ընտանիքում բռնության կանխարգելիչ միջոցներ ձեռնարկող կազմակերպությունների գործունեության փոփոխությունից, քանզի մինչ այդ, երբ նման բռնությունը քրեական պատասխանատվություն էր նախատեսում, իրավապահ մարմինների աշխատակիցները՝ ոստիկանները, դատախազը հիմնականում նպաստում էին կողմերի հաշտեցմանը և գործն այդպես էլ չէր հասնում դատարան, կամ կողմերը մինչև դատարան գործի հասնելը հաշտվում էին, և ոստիկանի համար սույն գործով կատարած աշխատանքը չէր ներառվում հաշվետվության մեջ՝ որպես ավարտին հասցված բացահայտված գործ, այդ իսկ պատճառով իրավապահ մարմինները

[1] Федеральный закон “О внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации в связи с принятием Федерального закона «О внесении изменений в Уголовный кодекс Российской Федерации и Уголовно-процессуальный кодекс Российской Федерации по вопросам совершенствования оснований и порядка освобождения от уголовной ответственности» от 03.07.2016 г. N 326-ФЗ.

[2] Уголовно-процессуальный кодекс РФ от 18.12.2001 г. N 174-ФЗ, статья 20-ая.

[3] «(...)կամ 10-15 օր վարչական ձերբակալություն, կամ 60-120 ժամ պարտադիր աշխատանքի կատարում»: / ՌԴ ՎԻՎ օրենսգրքի 6.1.1 հոդված:

շահագրգռված չէին մասնավոր հետապնդման գործերին ընթացք տալուն: Իսկ այժմ վարչական պատասխանատվության ենթարկելու դիմումները միանշանակ ընդունվում են, քանզի իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրությունները կատարված աշխատանքի բարձր ցուցանիշ են ապահովում: Այստեղ, կարծում ենք, միակ մխիթարող հանգամանքը ՌԴ ՎԻՎ-ի համաձայն[1]՝ տուժածի կողմից դիմումը ետ վերցնելու անհնարինությունն է: Այս կարգավորման կողմնակիցները նաև շեշտում են, որ բռնություն կիրառած անձին քրեական պատասխանատվության ենթարկելով՝ խաթարվում են ընտանեկան շուտափույթ համերաշխության հասնելուն ուղղված գործողությունները, մեծ հոգեբանական ճնշում է ընտանիքում երեխաների համար ծնողի հետ չտեսնվելը, որն արդյունքում անհամաչափ բացասական հետևանք է առաջացնում հենց ընտանիքի համար: Դատարանները, իրավապահ մարմինները, սոցիալական աջակցություն տրամադրող աշխատակիցներն այս կարգավորման առկայությամբ առավել շահագրգռված են հետապնդելու բռնություն կիրառած անձին, քանզի այժմ նրանք չեն կրում պատասխանատվություն ընտանեկան պատմության մեջ դատվածության գրանցումներ կատարելու համար և ունեն ավելի մեծ հնարավորություններ բռնություն կիրառողին պատժելու:

Վերոնշյալ ասպեկտներից և որևէ մեկի հետ մենք համամիտ չենք, քանզի կարծում ենք, որ ապաքրեականացումը ծնում է վախի կորուստ բռնություն կիրառած անձի մոտ՝ իր գործողությունների համար համաչափ պատիժ չկրելու պարագայում, հատկապես երբ բռնություն կիրառած անձը ֆինանսապես ապահովված է, և նրա համար գումարի վճարումը որևէ խնդիր չի առաջացնում, իսկ հակառակ դեպքում դա վատթարացնում է կրկին տուժողի վիճակը, քանզի գումարը վճարվում է ընտանեկան բյուջեից:

[1] Ուսումնասիրելով ՌԴ ՎԻՎ օրենսգիրքը՝ կարող ենք արձանագրել, որ այն չի նախատեսում վարչական իրավախախտման վերաբերյալ ներկայացված դիմումը ետ վերցնելու հնարավորություն, ավելին՝ այն նաև չի նախատեսում իրավադրույթներ, համաձայն որոնց հնարավոր է դադարեցնել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը կողմերի հաշտության գալու դեպքում: Միայն հնարավոր է մեղմել վարչական պատասխանատվությունը, եթե կողմերի ներկայացված հանգամանքները համարվեն մեղմացուցիչ՝ ՌԴ ՎԻՎ օրենսգրքի 4.2-րդ հոդվածի համաձայն:

ՆԳՆ Բառնաուլի իրավաբանական ինստիտուտի աշխատակից Անդրեյ Գայդուկովը, հղում կատարելով ՌԴ ՆԳՆ Գլխավոր տեղեկատվական-վերլուծական կենտրոնի տրամադրած տեղեկություններին, «ՌԴ ՆԳՆ գիտական հարթակ» ամսագրում[1] տպագրված իր հոդվածում ներկայացրել է ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրություն, համաձայն որի՝ «2021 թ. զուգընկերների կամ մոտ հարազատների կողմից սպանվել է 448 կին, 2022 թ.՝ 447: Նույն թվականներին 2363 կնոջ պատճառվել են ծանր մարմնական վնասվածքներ, 5073 դեպքերում առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս, 8759 դեպքերում՝ թեթև վնաս: 2021 թ. արձանագրվել է խոշտանգման 1474 դեպք, 2022 թ.՝ 1189 դեպք:

ՌԴ ՆԳՆ Գլխավոր տեղեկատվական-վերլուծական կենտրոնի տվյալների համաձայն՝ 2021 թ. ոստիկաններն արձանագրել են ընտանիքում բռնության կիրառման վարչական իրավախախտումների 167525 դեպք, որոնցից ամենատարածվածը ծեծն է: 2022 թ. ընտանեկան բռնության հետ կապված արձանագրվել է 158049 վարչական իրավախախտման դեպք: Կանանց նկատմամբ սպանության սպառնալիքների վերաբերյալ 2021 թ. արձանագրվել է 21141 դեպք, 2022 թ.՝ 18224: Ընտանիքում բռնություն կիրառած անձանց 80%-ը տղամարդիկ են, 76-%-ը բռնի գործողությունների կատարման պահին եղել են ալկոհոլի ազդեցության տակ: 2021-2022 թթ. ընտանեկան բռնության արդյունքում ՌԴ-ում սպանվել է 895 կին: Նույն թվականներին ոստիկանությունն արձանագրել է ընտանեկան բռնության հետ կապված ավելի քան 300000 վարչական իրավախախտում: 2023 թ. վերաբերյալ վիճակագրություն վերոհիշյալ գիտական ամսագրի հոդվածում ներկայացված չէ, սակայն հոդվածի հեղինակը նշում է, որ իրավիճակը շարունակում է «կայուն լարված մնալ»[2]:

[1] Научный портал МВД России № 1(65) 2024, © ФГКУ «ВНИИ МВД России», 2024, https://media.mvd.ru/files/embed/5580423

[2] Главный информационно-аналитический центр МВД РФ, https://xn--b1aew.xn--p1ai/mvd/structure1/Centri/Glavnij_informacionno_analiticheskij_cen

Վերոնշյալի համակարգային վերլուծության արդյունքում գալիս ենք այն համոզման, որ այսօր ՌԴ-ում ընտանիքում բռնության մասին օրենքի ընդունումը պարտադիր բնույթ է կրում և քաղաքակիրթ հասարակությունը պետք է նախաձեռնի նման օրենսդրական նախագիծը շրջանառության մեջ դրվելուն ուղղված համապատասխան գործողություններ: Ընտանեկան բռնությունը քրեականացնելու հետ մեկտեղ անհրաժեշտ ենք գտնում այն որակել **հանրային հետապնդման ենթակա հանցագործությունների շարքում, քանզի դա մասնավոր ներընտանեկան խնդիր չպետք է դիտարկվի, պետությունը պետք է կատարի իր պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու յուրաքանչյուր անձի, այստեղ հատկապես կնոջ՝ ֆիզիկապես և հոգեպես առողջ ապրելու անվտանգությունն ու պաշտպանությունը:**

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն խնդիրն արմատախիլ կարող է արվել կնոջ նկատմամբ հանրության բարոյահոգեբանական վերաբերմունքի հիմնովին փոփոխությունից զատ, բնականաբար, իրավական համապատասխան կարգավորումների առկայության պարագայում, այսինքն կանանց նկատմամբ «բռնություն» եզրույթով բացատրվող գործողությունների կատարման դեպքում պատշաճ պատասխանատվության ենթարկմամբ: Վստահաբար կարող ենք ասել, որ հանցագործությունների զգալի մասի շարունակական բնույթ կրելը մեր կյանքում այդ արարքների՝ ոչ պատշաճ կամ ոչ արդյունավետ օրենսդրական կարգավորումների կամ դրանց կիրառման արդյունք են, քանզի **հասանելի պատասխանատվությունից վախի բացակայությունն ու ամենաթողությունն են ծնում բռնություն**, իսկ հանցանքին ոչ համաչափ պատասխանատվության սահմանումը չի կարող բերել սույնի վիճակագրության ռեալ փոփոխությունների: Վերոնշյալի առնչությամբ ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել սերբ նկարչուհի Մարինա Աբրամովիչի կողմից անցկացրած փորձին, որին կարող եք ծանոթանալ ստորև ներկայացված հղումով[1], որը ևս մեկ

[1] https://fit4brain.com/11322

անգամ փաստում է մարդկանց՝ բռնություն կիրառելուն հակվածության մասին՝ համապատասխան իրավական պատասխանատվության բացակայության դեպքում:

Լիահույս ենք, որ այս հոդվածն ընթերցողների մոտ մտահոգություն առաջացրեց մատնանշված հիմնախնդիրների, դրանց շուտափույթ վերացման, ինչպես նաև գործող իրավակարգավորումների վերանայման և համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտության վերաբերյալ:

Հ.Գ. Սույն ուսումնասիրման շարժառիթ հանդիսացավ Սալտանատ Նուկենովնայի ողբերգալի պատմությունը, ով իր քաղաքացիական ամուսնու՝ Կուանդըկ Բիշիմբաևի (Ղազախստանի ազգային էկոնոմիկայի նախկին նախարար) կողմից 09.11.2023 թ. առանձնակի դաժանությամբ ծեծի ենթարկվելով, սպանվել է: Այս դատական գործը հանրային մեծ հնչեղություն ստացավ, սակայն ամենակարևոր արձանագրումն այն է, որ տվյալ գործի շրջանակներում ընտանիքում բռնության մասին օրենքի բացակայության նկատմամբ հանրային մեծ դժգոհության ու բռնության քննադատման, հանրային լայն զանգվածների պահանջի արդյունքում՝ Ղազախստանի Հանրապետության Նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևն ստորագրեց ընտանիքում բռնության քրեականացման օրենսդրական փոփոխությունների մասին օրենքը:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 06.12.2015 թ. հանրաքվեով / ՀՀՊՏ 2015.12.21:

2. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 13.12.2017 թ. / ՀՕ-320-Ն / (ՀՀՊՏ 2017.12.30/83(1358).1 Հոդ. 1347.1):

3. ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 05.05.2021 թ. / ՀՕ-199-Ն / (2021.05.17-2021.05.30):

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 30.06.2021 թ. / ՀՕ-306-Ն / (2021.07.26-2021.08.08):

5. Declaration on the Elimination of Violence against Women 20.12.1993 adopted by the General Assembly resolution 48/104, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-elimination-violence-against-women

6. The Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW), adopted in 1979 by the UN General Assembly, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-elimination-all-forms-discrimination-against-women

7. The Committee on the Elimination of Discrimination against Women. General Recommendation No. 19, 1992,

https://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm

8. General recommendation No. 35 (2017) on gender-based violence against women, updating general recommendation No. 19 (1992).

9. Committee on the Elimination of Discrimination against Women, https://www.ohchr.org/en/treaty-bodies/cedaw

10. Global and regional estimates of violence against women: prevalence and health effects of intimate partner violence and non-partner sexual violence, Executive summary, WHO/RHR/HRP/13.06 © World Health Organization 2013, www.who.int

11. Violence against women Prevalence Estimates, 2018. Global, regional and national prevalence estimates for intimate partner violence against women and global and regional prevalence estimates for non-partner sexual violence against women. WHO: Geneva, 2021, ISBN:9789240022256

https://iris.who.int/bitstream/handle/10665/341337/9789240022256-eng.pdf?sequence=1

12. Закон Кыргызской Республики от 27.04.2017 г. № 63 “Об охране и защите от семейного насилия”.

13. Закон Республики Узбекистан от 02.09.2019 г. № ЗРУ-561 “О защите женщин от притеснения и насилия”.

14. Закон Республики Таджикистан от 19.03.2013 г. № 954 “О предупреждении насилия в семье”.

15. Закон Республики Беларусь 04.01. 2014 г. № 122-З “Об основах деятельности по профилактике правонарушений”.

16. Закон Республики Казахстан от 15.04.2024 г. № 72-VIII ЗРК “О внесении изменений и дополнений в некоторые законодательные акты Республики Казахстан по вопросам обеспечения прав женщин и безопасности детей”.

17. Федеральный закон “О внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации в связи с принятием Федерального закона “О внесении изменений в Уголовный кодекс Российской Федерации и Уголовно-процессуальный кодекс Российской Федерации по вопросам совершенствования оснований и порядка освобождения от уголовной ответственности” от 03.07.2016 г. N 326-ФЗ.

18. Кодекс Российской Федерации об административных правонарушениях от 30.12.2001 г. N 195-ФЗ.

19. Уголовно-процессуальный кодекс Российской Федерации от 18.12.2001 г. N 174-ФЗ.

Գիտական գրականություն

1. **Редюк А.Н.** Домашнее насилие как угроза безопасности личности и общества. Актуальные проблемы формирования психолого-педагогической культуры будущих специалистов 2023, УДК:316.6:316.362.1:364.632:364.628:159.923

2. Насилие в отношении женщин: мировые тенденции. **Т.К. Ростовская**, **Н.А. Безвербная** DOI:10.21064/WinRS.2020.2.8 // Женщина в российском обществе. 2020. № 2.

3. Global rise in gender-based violence against women and girls during COVID-19 lockdown: An insight from Africa. 07 May 2023, Linus Oluchukwu Akudolu, Charles N. Okolie, Edward Ajanwachukwu Okoro, Bright E. Nwamuo,

Ifeanyi OkekeORCID Icon, Stephen Aigbonoga, Vitalis C. Ugwu, Ernest OsuchukwuORCID Icon,Vincent Anyika & Esther Ogbu, https://doi.org/10.1080/23311983.2023.2188772

4. Violence and Society By Larry Ray, 08/06/2012, file:///C:/Users/PC-3/Downloads/Violence_and_Society.pdf

5. States of violence: Exploring welfare state regimes as violence regimes by developing a violence regimes index, 15.04.2021, Sofia Strid, Anne Laure Humbert, Jeff Hearn, Dag Balkmar, https://doi.org/10.1177/09589287211002370

Դատական գործեր

1. ՍԴՈ-1340 որոշում, 2017 թ. հունվարի 3:

2. ՎԴ /6546/05/24 վարչական գործով 09.06.2024 թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809999842

3. ՎԴ /7102/05/24 վարչական գործով 21.06.2024 թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071810000563

4. ՎԴ /9154/05/24 վարչական գործով 04.08.2024 թ. կայացված վճիռ, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071810003164

5. CASE OF BEYELER v. ITALY, Application no. 33202/96, 05.01.2000, §98, §107:

6. CASE OF SPORRONG AND LONNROTH v. SWEDEN, Application no. 7151/75; 7152/75, 23.09.1982, §61, §69:

Վիճակագրական տեղեկատվություն

1. ՀՀ գլխավոր դատախազության Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության դատախազի տրամադրած տեղեկատվություն No 20.5/20.5/11613-2024, 24.06.2024 թ.:

2. ՀՀ ՆԳՆ ՀԱԱԳՎ (Ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն) անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչություն No 18/762, 05.06.2024 թ.:

3. ՀՀ դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ Ազգային ժողովին, https://www.prosecutor.am/dynamicWebPages/report

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВЫХ МЕХАНИЗМОВ ЗАЩИТЫ ЖЕНЩИН ОТ НАСИЛИЯ

Аннотация

Данная статья посвящена анализу регулирований, направленных на предотвращение насилия в отношении женщин, выявлению в них существующих пробелов, отсутствия должной реакции со стороны общественности, видов насилия и предусмотренных за них мер ответственности, а также оценки влияния перечисленных основных проблем в контексте физического и психического здоровья женщин. Чётко указана необходимость привлечения к публичному уголовному преследованию по делам о домашнем насилии, поскольку оно не должно рассматриваться как частная внутрисемейная проблема, а государство должно выполнять свою позитивную обязанность по обеспечению безопасности и защиты каждого человека, особенно женщин – жить физически и психически здоровой.

В данной статье представлены сведения, относящиеся к статистическим данным, связанным со случаями насилия в семье в отношении женщин со стороны мужа или партнера, убийств, возбуждения и прекращения уголовных дел по таким делам, Управлением по предупреждению подростковой преступности и семейного насилия МВД РА, до принятия Закона РА «О предотвращении семейного и бытового насилия и защите лиц, подвергшихся семейному и бытовому насилию», за период 2016-2017 гг. и после принятия указанного закона, период 2021-2023 гг., а также судебная практика судебного обжалования решений о вмешательстве, принятых с применением вышеупомянутого закона, которые доказывают актуальность и важность данного исследования, несовершенство и неэффективность действующих правовых регулирований.

Кючевые слова: насилие в отношении женщин, предотвращение насилия, правовые последствия насилия, безнаказанность.

SOME ISSUES OF LEGAL MECHANISMS FOR THE PROTECTION OF WOMEN AGAINST VIOLENCE

Annotaion

This article is devoted to the analysis of the regulations aimed at preventing violence against women, identifying existing gaps in law, lack of proper reaction from the public, types of violence and the degree of responsibility provided for them, as well as the assessment of the impact of the listed issues in the context of women's physical and mental health. The need for public prosecution in cases of domestic violence is clearly stated, since it should not be considered as a private domestic issue, and the state must fulfill its positive duty to ensure the safety and protection of every person, here especially women - to live physically and mentally healthy.

This article presents information related to statistical data about cases of domestic violence against women by their husband or partner, including murders, initiation and termination of criminal cases in such cases, led by the Department of Juvenile Crime and Domestic Violence Prevention of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, before the adoption RA Law "On the Prevention of Family and Domestic Violence and the Protection of Persons Subjected to Family and Domestic Violence", in 2016-2017 and after the adoption of this law, in 2021-2023, and judicial practice of judicial review of decisions on intervention made in accordance with the above-mentioned law, which shows the relevance and importance of this study, the imperfection and inefficiency of existing regulations.

Keywords: violence against women, violence prevention, legal consequences of violence, impunity.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.10.2024թ., տրվել է գրախոսության 28.11.2024թ., ընդունվել է տպագրության 09.12.2024թ.:

DOI: 10.59560/18291155-2024.4-131

ЛУСИНЕ АЛЕКСАНЯН

Ведущий специалист
Экспертно-аналитического отдела
Правового консультативного управления
Аппарата Конституционного суда
Республики Армения,
аспирант первого года обучения
Российско-Армянского университета

ДЕЙСТВИЕ ПРИНЦИПА NON BIS IN IDEM ПРИ ПРИВЛЕЧЕНИИ ЛИЦА К НАЛОГОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В ЗАВИСИМОСТИ ОТ ОСНОВАНИЙ ВОЗНИКНОВЕНИЯ НАЛОГОВЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ

Аннотация

В налоговом законодательстве Республики Армения отсутствует законодательное закрепление принципа *non bis in idem,* что привело к неоднозначности применимости данного принципа к налоговым правоотношениям. Однако анализ судебной практики Республики Армения свидетельствует в пользу признания принципа *non bis in idem* в качестве основополагающего принципа налогового права, который направлен на защиту прав и законных интересов налогоплательщиков от неправомерных действий налоговых органов, а также предотвращение и пресечение возможных злоупотреблений налоговыми органами. Другими словами, **административные суды Республики Армения преодолели существующий в налоговом законодательстве пробел посредством расширительного и автономного толкования конституционного принципа** *non bis in idem.* Целью данного исследования является выявление и освещение проблем правоприменительной практики, связанных с применением принципа *non bis in idem* при привлечении

лица (как физического, так и юридического) к налоговой ответственности, в частности, определение сферы действия принципа *non bis in idem* при привлечении лица к налоговой ответственности в зависимости от оснований возникновения налогового обязательства.

Ключевые слова: *non bis in idem,* налоговая ответственность, налоговое обязательство, основания возникновения налогового обязательства, автономное толкование.

1.1. Общие положения. Среди общепризнанных принципов права свое особое место занимает принцип ***non bis in idem,*** который берет свое начало из латинского выражения ***«nemo debet bis puniri pro uno delicto»*** (никто не должен дважды нести наказание за одно преступление), означающий «не дважды за одно и то же», не должно быть двух взысканий за одну провинность; довольно и одного раза[1].

Ввиду отсутствия нормативного закрепления принципа *non bis in idem* в налоговом законодательстве Республики Армения актуальной представляется проблема применимости принципа *non bis in idem* к налоговым правоотношениям. Связано это с тем, что исторически данный принцип развивался как уголовно-правовой и ряд международно признанных документов ограничивают круг действия данной нормы сферой уголовного права. Иными словами, международные документы в содержательном смысле представляют его в качестве отраслевого принципа.

Однако современная интерпретация принципа *non bis in idem* в значительной степени отличается от исторически присвоенной ему формы. Содержание данного принципа намного глубже формулировки, данной в международных документах и конституциях, оно пронзает не только отрасль уголовного права, но и иные отрасли права. Иными словами, принцип *non bis in idem* является **общим принципом права,** который должен рассматриваться как универсальный, международно признанный

[1] **Бабичев Н.Т., Боровский Я.М.** Словарь латинских крылатых слов: 2500 единиц / Под ред. Я.М. Боровского. 3-е изд. стер. - М.: Русский язык, 1988. - С. 511.

стандарт в области обеспечения прав человека, конституционно-правовая гарантия прав и свобод, и, соответственно, пределы его применения должны выходить за рамки уголовно-правовой сферы, охватывать всю сферу публично-правовой ответственности.

Конституционно-правовой принцип *non bis in idem* должен быть истолкован с точки зрения автономии конституционного права, и интерпретаторы данного принципа не должны быть ограничены той трактовкой и смыслом используемых в данном принципе терминов, которые придаются им в других отраслях права[1].

Свое первоначальное и высшее *внутринациональное закрепление* данный принцип получает, в первую очередь, в основном законе страны – в Конституции. Так, Конституция Республики Армения в части 1 статьи 68 («Запрет на повторное осуждение») закрепляет, что «никто не может быть повторно осужден за одно и то же деяние». Однако прямого закрепления в налоговом праве Республики Армения данный принцип не имеет. Системный анализ как налогового, так и административного законодательства РА позволяет нам утверждать, что принцип *non bis in idem* не получил нормативного закрепления в указанных отраслях права, что, однако, вовсе не исключает возможность и необходимость его применения.

Отсутствие нормативного закрепления принципа *non bis in idem* в налоговом законодательстве РА не должно толковаться в пользу отрицания возможности его применения к налоговым правоотношениям. А разрешение проблем, возникающих в связи с отсутствием нормативного закрепления последнего, посредством расширительного и автономного толкования конституционного положения или применения аналогии права должно стать ключевым элементом развития права и, в частности, неотъемлемой частью правоприменительной практики.

[1] В рамках сказанного следует отметить, что и сама прецедентная практика ЕСПЧ исходит из того, что во всех случаях, когда налоговые (административные) санкции носят уголовный характер и преследуют цели, свойственные уголовной ответственности, сфера действия принципа *non bis in idem* должна выходить за рамки уголовно-правовой сферы и распространяться и на налоговые (административные) правоотношения.

1.2. Основания возникновения налоговых обязательств. Обязанность каждого платить законно установленные налоги свое первичное закрепление получило в части 8 статьи 60 («Право собственности») Конституции РА, в соответствии с которой, каждый обязан уплачивать *установленные в соответствии с законом* налоги, пошлины, производить другие обязательные платежи, зачисляемые в государственный или общинный бюджет. Иными словами, под налоговой обязанностью принято понимать конституционную обязанность каждого в полном объеме уплачивать законно установленные налоги и сборы в пользу государства.

Обязанность по уплате налога возникает, изменяется и прекращается при наличии оснований, установленных Налоговым кодексом (далее - Кодекс) или иными законами Республики Армения о платежах. Обязанность по уплате *конкретного налога* возникает с момента наступления установленных законодательством о налогах и сборах обстоятельств, предусматривающих уплату данного налога или сбора. Общими основаниями являются наличие у налогоплательщика объекта налогообложения и истечение налогового периода, по окончании которого налог должен быть исчислен и уплачен. В то же время по каждому налогу могут устанавливаться свои особенные основания – самостоятельные юридические факты, формирующие сложный фактический состав[1].

Исполнение обязанности по уплате налога может быть как *добровольным* (уплата налога), так и *принудительным* (взыскание налога). Добровольность в данном случае понимается не как *свобода выбора* – платить или не платить налог по своему усмотрению, а как самостоятельное исчисление и уплата налога налогоплательщиком без применения мер государственного принуждения[2].

Среди основополагающих принципов, лежащих в основе единой налоговой системы Республики Армения, перечисленных в статье 3 («Принципы налоговой системы Республики Армения») Кодекса, пункт 7

[1] **Демин А.В.** Налоговое право России: Учеб. пособие / А.В. Демин; Федер. агентство по образованию; Краснояр. гос. ун-т; Юрид. ин-т. Красноярск: РУМЦ ЮО, 2006. - С. 178.

[2] Там же.

закрепляет принцип **самодекларирования и налоговой дисциплины,** в соответствии с которым налогоплательщики должны самостоятельно исчислять и уплачивать налоги, сборы в порядке, установленном Кодексом и законами Республики Армения о платежах.

Комплексный анализ Кодекса позволяет утверждать, что налоговые правоотношения полностью построены на данном принципе, т.е. данный принцип носит не просто декларативный характер, а имеет нормативно-руководящее значение для налогового законодательства.

Так, в соответствии с частью 2 статьи 14 («Порядок исчисления налога»), налогоплательщики производят исчисление налога самостоятельно, за исключением случаев, установленных частями 3-6 настоящей статьи. А в соответствии с пунктом 1 части 1 статьи 33 («Обязанности и права налогоплательщиков (налоговых агентов) и их должностных лиц»), налогоплательщик (налоговый агент) и его должностное лицо обязаны *самостоятельно* исчислять и исполнять свои налоговые обязательства в порядке и сроках, установленных Кодексом и законами Республики Армения о платежах, если иное не установлено Кодексом, уплачивая также авансовые платежи по налогу и (или) сбору в случаях и порядке, установленных Кодексом и законами Республики Армения о платежах.

Характером вышеупомянутых законодательных регулирований связано наличие такого основания возникновения налогового обязательства как ***возникновение налогового обязательства в силу закона.*** Налоговое обязательство считается возникшим в силу закона в случаях, когда налогоплательщик сам «порождает» свое налоговое обязательство в силу представления в налоговый орган налогового расчета и отчета, т.е. письменной информации о налоге или сборе, исчисленном в отчетный период, либо для любой сделки или операции, являющейся объектом налогообложения, установленным Кодексом (часть 1 статьи 52).

Кассационный суд РА решением от 10.05.2022 г. по делу **ՎԴ/8932/05/18** подчеркнул, что, хотя основанием для возникновения налоговых обязательств является закон и именно в связи с налоговыми

обязательствами, возникшими в силу закона, хозяйствующие субъекты представляют в уполномоченный орган соответствующие расчеты и отчеты, тем не менее не всегда налоговые обязательства, возникшие в силу закона и отраженные в расчетах и отчетах, выполняются добровольно. Для таких случаев законодатель предусмотрел специальное регулирование, согласно которому в случае добровольного неисполнения налоговых обязательств, возникших в силу закона, с целью обеспечения принудительного исполнения этих обязательств принимается **административный акт о предъявлении к взысканию**[1]. Сама процедура принятия налоговым органом решения о взыскании с налогоплательщика неуплаченной своевременно суммы (актом взыскания) применима **только в тех случаях, когда данные налоговые обязательства налогоплательщика еще не подтверждены каким-либо административным актом, например актом проверки, и возникли непосредственно в силу закона, т.е. на основании расчетов (деклараций, отчетов), представленных в налоговый орган**. Так, в соответствии с частью 5 статьи 398 («Протоколирование налоговых правонарушений») Кодекса, в случае возникновения неуплаченных в установленном Кодексом или законами Республики Армения о платежах порядке налоговых обязательств в карточках лицевого счета налогоплательщика, который ведется налоговым органом, за исключением случаев предъявления налоговых обязательств актом проверки или иным административным актом, по инициативе налогового органа в порядке, установленном Законом Республики Армения «Об основах администрирования и административном производстве», возбуждается административное производство по взысканию неуплаченных налоговых обязательств, если сумма неуплаченного налогового обязательства превышает 200.000 драмов или с даты возникновения налогового обязательства прошло более двух месяцев. Иными словами, налоговым органом возбуждается административное производство не с целью проведения налогового

[1] https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809925654

контроля (выявления факта или установления отсутствия факта налогового правонарушения), а *исключительно с целью взимания подлежащего выплате налогового обязательства.*

Согласно части 1 статьи 44 («Возникновение налогового обязательства») Кодекса налоговое обязательство возникает в случаях, установленных Кодексом или законами Республики Армения о платежах. Системный анализ положений Кодекса позволяет утверждать, что помимо вышеупомянутого, Кодекс выделяет *еще три основания* возникновения налогового обязательства посредством налогового контроля, а именно: (1) проведение налоговых проверок (часть 1 статьи 335); (2) проведение налоговых исследований (часть 1 статьи 343); (3) осуществление оперативно-розыскной деятельности (часть 1 статьи 331).

Поскольку наиболее распространенной формой проведения налогового контроля является проведение налоговой проверки, в данной статье исследование будет проведено относительно актов проверки.

В соответствии с частью 1 статьи 342 («Обобщение результатов налогового контроля») после завершения налоговой проверки - в течение 10, а в случае проверки трансфертного ценообразования - в течение 20 рабочих дней, на основании обобщения результатов проверки, в случае выявления несоответствия правовым актам, регулирующим налоговые отношения, и принципу вытянутой руки, установленному в случае проверки трансфертного ценообразования, а также нарушений выполнения других требований правовых актов, наделяющих налоговый орган полномочиями по контролю, должностное лицо, осуществляющее проверку, составляет проект акта проверки по форме, установленной налоговым органом, в случае отсутствия нарушений в результате проверки должностное лицо, проводящее проверку, в течение срока, установленного настоящей частью, составляет акт проверки (без составления проекта акта), который подписывает должностное лицо, проводящее проверку, и представляет налогоплательщику в порядке, установленном частью 8 указанной статьи, в течение трех рабочих дней, следующих за днем его составления. В

случае отсутствия нарушений в результате проверки должностное лицо, проводящее проверку, в срок, установленный указанной частью, составляет акт проверки (без составления проекта акта), который подписывает должностное лицо, проводящее проверку, и в течение трех рабочих дней, следующих за днем его составления, представляет налогоплательщику в порядке, установленном частью 8 указанной статьи. А согласно части 2 той же статьи налогоплательщик может представить возражения по проекту акта или сообщить об отсутствии возражений в течение 10 рабочих дней, следующих за днем, когда проект акта считается полученным, с помощью системы электронного управления представления отчетности налогового органа. В случае неполучения возражений по проекту акта до истечения срока, указанного в рассматриваемой части, в течение двух рабочих дней, следующих за днем истечения срока, а в случае получения возражений или письменного уведомления об отсутствии возражений - в течение трех рабочих дней, следующих за днем их получения, должностное лицо, проводящее проверку, составляет **акт проверки** по форме, установленной налоговым органом, который подписывается должностным лицом, проводящим проверку, и представляет налогоплательщику в порядке, установленном частью 8 указанной статьи. Если налогоплательщиком также является организация, имеющая государственную долю, копия акта направляется в соответствующий орган государственного управления.

Таким образом, акт налоговой проверки является административным актом, которым завершается весь процесс проведения налоговой проверки и в случае выявления факта совершения налогового правонарушения выдвигается **как само налоговое обязательство, так и налоговая ответственность за нарушение норм налогового законодательства**. Иными словами, в случае принятия акта проверки налоговое обязательство выдвигается непосредственно на основании данного акта проверки. Именно поэтому в случае проведения налоговой проверки результатом которого является принятие административного акта (акта проверки), налоговый орган не проводит административное производство взимания налогового

обязательства (как в случае возникновения налогового обязательства в силу закона), так как налоговое обязательство выдвигается самим актом проверки.

1.3. Сфера действия принципа *non bis in idem* и основания возникновения налогового обязательства. В контексте всего вышеизложенного констатируем, что в силу различия оснований возникновения налогового обязательства различными должны являться также последствия признания данных актов недействительными, что означает, что в контексте действующих законодательных регулирований **различной должна являться и сфера действия принципа *non bis in idem* при привлечении лица к налоговой ответственности.** В частности, сфера действия принципа *non bis in idem* при привлечении лица к налоговой ответственности за нарушение законодательных требований относительно своевременности и полноты выплаты налоговых обязательств, возникших **в силу закона,** в случаях, когда имеется вступивший в законную силу акт Административного суда о признании акта налогового органа недействительным (на основании нарушения норм процессуального права)[1] должна распространяться исключительно на дополнительное налоговое обязательство (т.е. пени и штрафы), **ибо акт налогового органа признается недействительным не в силу отсутствия налогового обязательства (которое, так или иначе, уже было выдвинуто самим налогоплательщиком), а на основании нарушения норм процессуального права при осуществлении налогового администрирования по взысканию налоговой задолженности.** Иными словами, **сфера действия защиты принципа *non bis in idem* не может распространяться на само налоговое обязательство (основную сумму задолженности), возникшее в силу закона,** тем самым освобождая налогоплательщика от его конституционно-правовой обязанности. Но, с другой стороны, на

[1] Важно учитывать, что в заключительной части решения Административного суда не отмечается, на основании нарушения каких норм (материальных или процессуальных) акт налогового органа признается недействительным.

законодательном уровне отсутствуют какие-либо механизмы по взысканию указанной задолженности иначе, чем через проведение повторного администрирования.

В то же время, в случае отмены (признания недействительным) акта проверки или иного административного акта вмешательства, налагающего обязательство, отменяется (устраняется) и возложенное налоговое обязательство, поскольку его основанием является тот самый административный акт, отсутствие которого исключает и существование обязательства, а отмена административного акта, принятого с целью взыскания объективно существующего обязательства, вследствие нарушений процессуальных норм само по себе не приводит к устранению обязательства, поскольку оно возникает не на основании административного акта вмешательства, а в силу закона, из чего следует, что акт о взыскании является всего лишь установленным законом средством его взыскания.

В любом случае, какими бы ни были дальнейшие законодательные развития, недопустимость повторного начисления пени и штрафов, *вне зависимости от оснований возникновения налогового обязательства,* в случаях, когда имело место быть нарушение налоговым органом порядка налогового администрирования, т.е. процессуальных норм, направленных на принятие административного акта (как акта о взыскании, так и акта проверки), должно являться общей закономерностью деятельности налоговых органов при проведении обсуждаемого в рамках данного исследования повторного налогового администрирования. Например, согласно части 10 статьи 89 («Выездная налоговая проверка») Налогового кодекса РФ, если при проведении повторной выездной налоговой проверки выявлен факт совершения налогоплательщиком налогового правонарушения, которое не было выявлено при проведении первоначальной выездной налоговой проверки, к налогоплательщику не применяются налоговые санкции, за исключением случаев, когда невыявление факта налогового правонарушения при проведении первоначальной налоговой проверки явилось результатом сговора между налогоплательщиком и должностным

лицом налогового органа. Очевидно, что невыявление факта совершения налогоплательщиком налогового правонарушения при первоначальной проверке являлось виной самого налогового органа, следовательно, в основе предусмотрения данного регулирования лежит разумная логика, дабы исключить возможность привлечения лица к повторной налоговой ответственности в случае неосмотрительности (халатности) самого налогового органа, т.е. хоть и законодатель прямо не зафиксировал действие принципа *non bis in idem* в качестве отдельного принципа налогового права (налоговой ответственности), но тем не менее данный принцип лежит в основе, например, вышеуказанного регулирования. Так, определением СКЭС ВС РФ от 23.05.2022г. по делу № А55-12839/2020 ООО «СВТК»[1] отмечено, что начисление налогоплательщику пени и штрафа, *обусловленных ранее допущенными незаконными действиями самого налогового органа,* несовместимо с принципами (требованиями) добросовестности налогового администрирования, поддержания доверия к закону и действиям государства[2].

1.4. Выводы. На основе сказанного констатируем, что отсутствие нормативного закрепления принципа *non bis in idem* в налоговом законодательстве РА не должно толковаться в пользу отрицания возможности его применения к налоговым правоотношениям, и во всех случаях, когда налоговый орган с нарушением указанного принципа производит повторное администрирование, принятый в результате

[1] URL: https://kad.arbitr.ru/Document/Pdf/8e6c38e3-57b5-42c5-96a4-b210069bc3a4/fb3c4382-4916-4470-b5fa-1d3efa2d3d61/A55-12839-2020_20220523_Opredelenie.pdf?isAddStamp=True

[2] Верховный суд РФ, рассматривая кассационную жалобу общества с ограниченной ответственностью «СВТК» на решение Арбитражного суда Самарской области от 01.12.2020 г. по делу № А55-12839/2020, постановление Одиннадцатого арбитражного апелляционного суда от 19.04.2021 г. и постановление Арбитражного суда Поволжского округа от 21.09.2021 г. по тому же делу, отметил следующее: «Принимая во внимание универсальность воли законодателя, в рассматриваемой ситуации применительно к положениям пункта 8 статьи 75, подпункта 3 пункта 1 статьи 101 Налогового кодекса общество подлежит освобождению от начисления пени и налоговой ответственности в виде штрафа, а обжалуемое по настоящему делу решение инспекции от 26.11.2019 г. №1027 – является незаконным в части соответствующих начислений».

административный акт должен быть признан недействительным, однако нужно учитывать, что сфера действия защиты принципа *non bis in idem* не может распространяться на само налоговое обязательство (основную сумму задолженности), возникшее в силу закона, тем самым освобождая налогоплательщика от его конституционно-правовой обязанности. Таким образом, существует необходимость комплексных исследований в данной области и разработки соответствующих законодательных механизмов по предоставлению Комитету государственных доходов РА правовой возможности взыскания *возникшей в силу закона налоговой задолженности* в пользу государственного бюджета в тех случаях, когда принятый в результате налогового администрирования акт налогового органа был признан Административным судом недействительным исключительно на основании нарушения процессуальных норм, которые направлены на регулирование порядка взыскания уже существующего налогового обязательства, и которые никоим образом не могли и в объективной действительности не могут влечь за собой «отмену» налогового обязательства.

Список использованных нормативно-правовых актов и литературы

1. Конституция Республики Армения 2005 г. (с изменениями 2015 г.)

2. Закон Республики Армения «Об основах администрирования и административном процессе» ЗР-41-Н от 18.02.2004 г. (первоисточник: ՀՀՊՏ 2004.04.14/21(320) Հոդ.413).

3. Налоговый кодекс Республики Армения ЗР-165-Н от 04.10.2016 г. (первоисточник: ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հոդ.1038).

4. Գոհար Հակոբյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/8932/05/18 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 10.05.2022 թ. որոշում:

URL: https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=38562071809925654

5. Определение СКЭС ВС РФ от 23.05.2022 г. по делу № А55-12839/2020 ООО «СВТК».

URL: https://kad.arbitr.ru/Document/Pdf/8e6c38e3-57b5-42c5-96a4-b210069bc3a4/fb3c4382-4916-4470-b5fa-1d3efa2d3d61/A55-12839-2020_20220523_Opredelenie.pdf?isAddStamp=True

6. **Бабичев Н.Т., Боровский Я.М.** Словарь латинских крылатых слов: 2500 единиц / Под ред. Я. М. Боровского. 3-е изд. стер. - М.: Русский язык, 1988. - 960 с.

7. **Демин А.В.** Налоговое право России: Учеб. пособие / А.В. Демин; Федер. агентство по образованию; Краснояр. гос. ун-т; Юрид. ин-т. – Красноярск: РУМЦ ЮО, 2006. - 329 с.

NON BIS IN IDEM ՍԿԶԲՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԻՍ՝ ԿԱԽՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻՑ

Ամփոփագիր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության մեջ բացակայում է *non bis in idem* սկզբունքի օրենսդրական ամրագրումը, ինչը հանգեցրել է հարկային իրավահարաբերությունների նկատմամբ տվյալ սկզբունքի կիրառելիության ոչ միանշանակ լինելուն: Սակայն Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է *non bis in idem* սկզբունքը որպես հարկային իրավունքի հիմնարար սկզբունք ճանաչելու օգտին, որն ուղղված է հարկ վճարողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը հարկային մարմինների ոչ իրավաչափ գործողություններից, ինչպես

նաև հարկային մարմինների կողմից հնարավոր չարաշահումների կանխարգելմանն ու կանխմանը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանները հարկային օրենսդրության մեջ առկա բացը հաղթահարել են սահմանադրական *non bis in idem* սկզբունքի տարածական և ինքնավար մեկնաբանման միջոցով: Սույն ուսումնասիրության նպատակն է բացահայտել և լուսաբանել իրավակիրառական պրակտիկայի խնդիրները՝ կապված *non bis in idem* սկզբունքի կիրառելիության հետ անձին (ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական) հարկային պատասխանատվության ենթարկելիս, մասնավորապես, հարկային պատասխանատվության ենթարկվելիս *non bis in idem* սկզբունքի գործողության շրջանակի բացահայտումը՝ կախված հարկային պարտավորության առաջացման հիմքերից:

Հիմնաբառեր. *non bis in idem*, հարկային պատասխանատվություն, հարկային պարտավորություն, հարկային պարտավորության ծագման հիմքեր, ինքնավար մեկնաբանություն:

THE EFFECT OF THE NON BIS IN IDEM PRINCIPLE WHEN BRINGING A PERSON TO TAX LIABILITY DEPENDING ON THE GROUNDS FOR THE OCCURRENCE OF TAX OBLIGATIONS

Annotation

There is no legislative consolidation of the principle of *non bis in idem* in the tax legislation of the Republic of Armenia, which has led to ambiguity in the applicability of this principle to tax legal relations. However, an analysis of the judicial practice of the Republic of Armenia testifies in favor of recognizing the principle of *non bis in idem* as a fundamental principle of tax law, which is aimed at protecting the rights and legitimate interests of taxpayers from illegal actions of tax authorities, as well as preventing and suppressing possible abuses by tax authorities. In other words, the administrative courts of the Republic of

Armenia have overcome the gap existing in tax legislation through an expansive and autonomous interpretation of the constitutional principle of *non bis in idem*. The purpose of this study is to identify and highlight the problems of law enforcement practice in connection with the application of the *non bis in idem* principle when bringing a person (also a legal entity to tax liability, in particular, to disclose the scope of the *non bis in idem* principle when bringing to tax liability, depending on the grounds for tax liability.

Keywords: *non bis in idem*, tax liability, tax obligation, grounds for the occurrence of a tax obligation, autonomous interpretation.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 18.10.2024թ., տրվել է գրախոսության 20.10.2024թ., ընդունվել է տպագրության 09.11.2024թ.:

DOI: 10.59560/18291155-2024.4-146

TIGRAN SIMONYAN
Chief specialist at the Public Affairs and Protocol Division of the Constitutional Court of the Republic of Armenia, Ph.D. Student at the Russian-Armenian University

PARLIAMENTARY ADMINISTRATION AS AN OBJECT OF COMPARATIVE LEGAL-POLITICAL RESEARCH

Annotation

This article explores the concept of parliamentary administration in political science, emphasizing its role in facilitating governance, policy implementation, and the accountability of elected officials within parliamentary systems. It discusses the interaction between the legislative, executive, and judicial branches, highlighting how parliamentary committees oversee executive actions and ensure transparency. The necessity of coalition governments, illustrated through examples like Israel's Knesset, is examined alongside the theoretical frameworks underpinning parliamentary systems, such as majoritarian and consensus models. The article also traces the historical evolution of parliamentary governance from medieval England to modern adaptations, underscoring the ongoing balance of power between legislative and executive branches. Ultimately, it argues that understanding these dynamics is crucial for analyzing the effectiveness and resilience of parliamentary democracies, especially in fragmented environments.

Keywords: parliamentary administration, legislative body, executive branch, judiciary, accountability, coalition governments, bureaucratic efficiency, majoritarian model, consensus model, historical institutionalism.

Introduction

In political science, the phenomenon of parliamentary administration refers to the process and institutional framework whereby a parliamentary system operates. It encompasses the interaction and cooperation between the three branches of the government (legislative body, the executive branch, judiciary) and various administrative agencies. The aforementioned concept highlights how a parliamentary system manages governance, policy implementation, as well as the relationship between the elected officials and civil service. The primary role of parliamentary administration is to facilitate the legislative process, which includes the process of enacting laws and overseeing the government activities. The necessity and crucialness of parliamentary administration in shaping the public policy and holding the executive accountable were well described in Lijphart's "Patterns of Democracy".

Regarding the spectrum of responsibilities, legislators' obligation is to question executive officials, including the head of the government and the cabinet of ministers regarding their policies and decisions. Such practice is done in order to foster direct accountability and allows public scrutiny. In addition to its general obligations prescribed by the constitution of the country, the legislative body has parliamentary committees which oversee the actions of the executive. Those committees conduct inquiries, gather evidence, and report on government activities, ensuring that executive actions are transparent and justifiable. Elected officials have rights to question expenditures during the sessions and prioritize funding based on public needs. The committees are formed from the elected deputies, who in addition can hold votes to express confidence; meanwhile the loss of confidence may lead to the resignation of the government reinforcing the idea that the executive must maintain the legislature's support.

At the same time, in many parliamentary systems, the need for coalition governments necessitates a complex administrative approach to governance. The most prominent example is the parliamentary elections in Israel. For PM Benjamin Netanyahu and his party "Likud" was essential to form a coalition

in order to secure a majority in Knesset. The necessity and vital importance of forming coalitions was discussed by Tsebelis in "Veto Players: How Political Institutions Work". In his book, the author explains that coalitions are formed due to negotiations and compromise between the parties. However, the most important part regarding the functioning of parliamentary system, was discussed by Pollitt and Bouckaert in "Public Management Reform" who touched upon the bureaucratic efficiency and effectiveness. Those two components as a functioning mechanism serve as a vital instrument for successful operation of parliamentary system. Meanwhile, the interaction between parliament and other governmental institutions (e.g., judiciary, executive) plays a critical role in the overall functioning of parliamentary administration.

Peculiarities of the parliamentary governance model

Parliamentary system is an important subject of examination, especially in political science as it represents distinct approach to governance, which slightly impacts the stability, representation and accountability. The purpose of this article is to examine the key features of parliamentary systems, what impact they have on dynamics, and their advantages and challenges. In contemporary reality, nearly every state has a parliament either bicameral or unicameral, which makes the examination of legislative branch a prominent task. According to Inter-Parliamentary Union, today 190 states (member-states of the United Nations) have national parliaments, 78 of which are bicameral and 112 are unicameral.[1] Parliamentary systems are characterized by the fusion of executive and legislative powers. In this system the executive deals with an issue of dependency from legislative branch in order to get necessary support and remain in office.[2] Such a model of governance contrasts with the presidential system, where the executive acts independently from the legislator.[3]

[1] **Inter-Parliamentary Union,** (2024). National Parliaments. https://www.ipu.org/national-parliaments#:~:text=Parliamentary%20systems%20fall%20into%20two,some%2044%2C000%20members%20of%20parliament.

[2] **Lijphart, A.** (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf

[3] **Shugart, M. S., & Carey, J. M.** (1992). Presidents and Assemblies and Parliamentarism: Con-

In this structure, the system itself fosters collaboration and negotiation among the parties, otherwise the decision-making process risks to halt, or in another scenario, the party may form a coalition and secure majority in the parliament in order to pass bills, decisions and laws which will make their work easier. Based on his extensive analysis of diverse models, Lijphart categorized parliamentary democratic systems into majoritarian and consensus models.[1] Majoritarian model emphasizes the principle of majority rule which basically means that the party or a coalition that secures the most votes in the legislature forms the government, the similar scenario occurred in Israel during the legislative elections of 2022, or in India in 2024.[2] While, Lijphart argues that parliamentary systems generally promote consensus-building, the separate examples in the face of Armenia, India, the UK, New Zeeland and Australia show that majoritarian model at first is a widespread phenomenon in parliamentary systems, the state owns a strong executive branch, and thirdly, the system is transparent. In case of majoritarian rule, the electorate clearly knows what force is responsible for failure.

While, the consensus model prescribes broad agreement and collaboration among different parties and aims to make the decision-making process more inclusive.[3] However, Lijphrat bypasses the fact that consensus model typically results in coalition governments where diverse parties negotiate to form a stable government, which prescribes power sharing among different political powers as well as requires compromises and strong cooperation. Moreover, the reliance on inclusivity may result in slowing down the legislative process, as consensus must be sought. At the same time, strong emphasis on representing the broad scope of interests may result in a fragmented political landscape, where many

stitutional Design and Electoral Dynamics. https://edisciplinas.usp.br/pluginfile.php/8554006/mod_resource/content/1/Matthew%20Soberg%20Shugart%2C%20John%20M.%20Carey%20-%20Presidents%20and%20Assemblies_%20Constitutional%20Design%20and%20Electoral%20Dynamics-Cambridge%20University%20Press%20%281992%29.pdf

[1] **Lijphart, A.** (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf

[2] **Ibid.**

[3] **Dahl, R.** (1998). On Democracy. Yale University Press. https://newuniversityinexileconsortium.org/wp-content/uploads/2022/08/Robert-A.-Dahl-On-Democracy-1998-1.pdf

small parties may influence policy. A good example is Belgium with its strong regional parties. Flemish Liberals and Democrats (Open VLD) and Francophone Liberal Reformist Party (MR) often dominate in Flanders and Wallonia.[1] Due to fragmentation, no single party can achieve a majority in the federal parliament, which subsequently leads to the necessity of forming a coalition government. Due to complex process of negotiations, forming a government can last for several months; in addition, small parties may wield slight influence in coalition negotiations, which leads to policies that reflect wide range of interests.

However, the primary advantage of parliamentary system lies in its potential for stability. These systems allow to facilitate the formation of the government, by giving multiple parties a platform for negotiations, which in theory may lead to more stable and representative governance, compared to often-polarized outcomes that are seen in presidential systems.[2] The possibility to negotiate and form a coalition may prevent the marginalization of smaller parties and promote more inclusive political discourse.[3] This flexibility may enhance the responsiveness of the system and ensure that governance aligns with the preferences of the electorate. For instance, during the elections of 2021 in Bundestag the Social Democratic Party, the Greens, and the Free Democratic Party managed to successfully negotiate and form a coalition government.[4]

Another important feature of parliamentary governance is the accountability. In order to remain in power prime minister and the cabinet must maintain the confidence of legislative body. This direct accountability sometimes results in greater responsiveness to constituents' need and demands.[5] Taking into consideration that the government may be dismissed by a vote of no confidence,

1 **Sente, Ch.** (2019). Belgium: a fragmented parliament. https://feps-europe.eu/belgium-a-fragmented-parliament/

2 **George, T.** (2002). Veto Players: How Political Institutions Work. http://nzaher710.free.fr/coursLSES/poltique.pdf

3 **Pollit, C. & Bouckaret, G.** (n.d.). Public Management Reform. http://ndl.ethernet.edu.et/bitstream/123456789/40090/1/102.Christopher%20Pollitt.pdf

4 **Global Data On National Parliaments,** (2022). German Bundestag Election Results. https://data.ipu.org/parliament/DE/DE-LC01/election/DE-LC01-E20210926/

5 **Shugart, M.S.** (2008). Comparative Executive–Legislative Relations. https://calgara.github.io/Pol1_Fall2017/Shugart%202016.pdf

the potential of frequent evaluation of the government's performance may foster a culture of accountability and responsiveness.[1] Importance and strength of accountability, and the consequences of its loss were vividly shown to the world for instance in 2012, when PM Julia Gillard faced no-confidence motion initiated by the opposition parties due to their concerns over her government's mismanagement of the economy and the introduction of the carbon tax.[2] While the motion was defeated, it highlighted the issues of accountability and trust of her government.[3]

Nevertheless, despite its benefits parliamentary system is not without challenges. Critics like Katz and Meir argue that reliance on coalitions may lead to unstable government, especially in fragmented systems, which in its turn will result in frequent elections and shifts in policy directions.[4] Such instabilities can frustrate voters and lead to disillusionment within the political process.[5] Furthermore, it is important to mention that coalition governments may prioritize compromise over decisive actions, which may hinder effective governance in times of crisis. For example, in 2011 the government of Berlusconi faced serious challenges during the European debt crisis, as his coalition tried to enact necessary reforms, while constantly struggling to reach a deal with the coalition partners.[6] Especially this ineffectiveness resulted in instability and his resignation.[7]

Theoretical framework

Theoretical framework for understanding the key peculiarities and features of the parliamentary system draws upon several theories that are widespread

[1] **Ibid.**

[2] **The Guardian**. (2013). Julia Gillard ousted as Australia prime minister. https://www.theguardian.com/world/2013/jun/26/julia-gillard-australia-prime-minister-kevin-rudd

[3] **Ibid.**

[4] **Katz, R. & Meir, P.** (1995). Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party. https://dl1.cuni.cz/pluginfile.php/1783574/mod_resource/content/1/Katz_Mair_Changing%20Models%20of%20Party%20Organization%20and%20Party%20Democracy.pdf

[5] **Ibid.**

[6] **Sachi, S.** (2018). The Italian Welfare State in the Crisis: Learning to Adjust? https://www.tandfonline.com/doi/epdf/10.1080/13608746.2018.1433478?needAccess=true

[7] **Ibid.**

in political science, which also elucidate the structure, function and dynamics of the parliamentary system. Those theories integrate theories of democratic governance, accountability coalition governance, and interplay of historical and social factors that shape parliamentary practices.

While talking about parliamentary governance, the first that should be referenced is the democratic theory. It serves as a foundation for analyzing parliamentary systems. Prominent thinkers like John Locke and Montesquieu argued for a government model that derived its legitimacy from the consent of the governed, establishing a social contract that underlines the importance of representative institutions. Democratic theory is pivotal to understand how parliamentary systems function as mechanisms to facilitate the democratic governance and enable elected representatives to enact laws and hold the executive accountable.[1] Meanwhile the emphasis on popular sovereignty also ensures that parliamentary administration remains aligned with public interests, thereby fostering legitimacy and trust of governmental institutions.

Simultaneously, classification of democratic systems into majoritarian and consensus models allows to examine the dynamics of parliamentary governance through a critical lens. Majoritarian model is characterized by a strong control of the party over the affairs and the formation of governments by the party or coalition with the most votes, which in turn may lead to the marginalization of smaller groups and limit pluralism.[2] At the same time, the consensus model puts an emphasis on broad coalitions and inclusivity, and fosters collaboration among different actors.[3] This model enhances representation of different groups but as it was mentioned above, it leads to the fragmented governance and a slow decision-making process.

Coalition governance theory is particularly relevant in the context of parliamentary administration, that requires multiple parties to form a government. Dahl highlights that negotiation process and power dynamics

[1] **Stanford Encyclopedia of Philosophy.** (2020). Locke's Political Philosophy. https://plato.stanford.edu/entries/locke-political/

[2] **Lijphart, A.** (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf

[3] **Ibid.**

inherent in coalition formation.[1] In systems with proportional representation parties should compromise in order to achieve stability, that leads both to enhanced inclusivity and challenges in policy coherence.[2] This theory elucidates the complexities of multiparty system governance, where the need and desire of consensus sometimes inhibit effective decision-making, as seen in cases like Italy during the reign of Berlusconi.

From another perspective, accountability is one of the central components to understand the relations between the legislative and executive in parliamentary systems. Elected representatives are assigned with a task to oversee government actions, which is operationalized via mechanisms such as parliamentary committees and votes of no confidence.[3] This framework postulates that accountability enhances government responsiveness to public needs and also mitigates the risk of the overarch of the executive. In its turn, historical institutionalism provides insights into how the major historical events shaped the development of parliamentary system and their administrative frameworks. In order to have a clear perception of the development of parliamentary system, a glance needed to be thrown to key historical events and major reform movements like it was in medieval England, France, as well as post-World War II reforms that slightly impacted the structure and legitimacy of parliamentary systems.

Early examples and their development

Origins of parliamentary systems can be traced back to medieval England, where the development of parliamentarism contributed to the shift of governance system from feudal rule to more organized governance.[4] The first document that de jure limited the power of the monarch in state was Magna Carta of 1215,

[1] **Dahl, R.** (1998). On Democracy. Yale University Press. https://newuniversityinexileconsortium.org/wp-content/uploads/2022/08/Robert-A.-Dahl-On-Democracy-1998-1.pdf

[2] **Ibid.**

[3] **George, T.** (2002). Veto Players: How Political Institutions Work. http://nzaher710.free.fr/coursLSES/poltique.pdf

[4] **Prtichett, V.** (1918). "Origin and Growth of Parliamentary Government," Kentucky Law Journal: Vol. 6: Iss. 5, Article 4. https://uknowledge.uky.edu/cgi/viewcontent.cgi?article=5217&context=klj

which established a principle that the king was subject to the law.[1] The reforms continued up until 1295, when King Edward I transformed the parliament into a more inclusive institution. By his order not only the nobles, but also the clergy and representatives of towns were allowed to become the members of the parliament.[2] Within time English parliament evolved and transformed from a mere advisory council into a strong legislative body; the apogee of this transition took place after the English Civil War (1642–1651) and the Glorious Revolution of 1688.[3] Such tremendous changes secured the triumph of establishing the supremacy of parliament over the monarchy, which led to the development of constitutional monarchy, where the executive had to share its power.[4]

The shift to constitutional monarchy in this case could be analyzed through several prominent political theories. At first a glance needed to be thrown at John Locke's theory of social contract that posits that government is a mutual agreement between the rulers and the ruled with an emphasize on the protection of liberty, property and life.[5] Locke's ideas significantly impacted the English political landscape, as they underscored the necessity of parliamentary sovereignty and the right to rebel against tyranny. The application of his theory on practical field was most vividly seen during the Glorious Revolution, where "Immortal Seven" led by William of Orange established a constitutional monarchy. Successful transition of England into constitutional monarchy was marked by several elements one of which was the establishment of the Bill of Rights in 1689. It was a landmark achievement that provided a legal framework for limiting the power of the monarch and safeguarding individual rights. It laid the foundation of parliamentary democracy by ensuring regular elections within parliament and the right to question the decisions of the monarch.[6]

[1] **Ibid.**

[2] **Pollard, A.** (1926). The Evolution of the Parliament. https://core.ac.uk/download/pdf/7048897.pdf

[3] **Ibid.**

[4] **Ibid.**

[5] **Nation, M.** (2019). Locke's Social Contract: Is It Legitimate? https://uca.edu/cahss/files/2020/07/Nation-CLA-2019.pdf

[6] **Bill of Right.** (1689). https://avalon.law.yale.edu/17th_century/england.asp

Ideas of separation of power between the different state institutions significantly impacted England's southern neighbor France at the end of the 18th century. The famous French Revolution of 1789 made a seismic shift in the political landscape of France and in Europe as well. It is not surprising that famous diplomat of that times Metternich once said **"When France sneezes the rest of Europe catches a cold".** Revolution marked a transition from absolute monarchy at first into constitutional monarchy which did not survive due to fact that the king tried to flee France. The representative system laid the groundwork for modern parliamentary system. Initially, the National Assembly attempted to have a similar model that was established in England. Since 1791 they attempted to limit the power of the king by creating a constitutional monarchy where Louis XVI would have shared the power with the legislator, who would present the interests of the nation.[1]

However, this system did not manage to work due to fact that king attempted to escape France, which made the provisional government to abolish the monarchy. After such radical changes the legislator was also subjected to slight changes. The National Convention replaced National Assembly and the institution itself was filled with radical elements like the Jacobins led by Robespierre.[2] Interestingly that until the establishment of the Directory in 1795, France could be considered as a parliamentary state ruled by a single party. During the Reign of Terror of 1793-1794 National Convention led by Robespierre unilaterally ruled the country. Of course, it could be stated that Robespierre turned the legislator into its personal weapon, as the Convention was ruled by the majoritarian Jacobin party, and those who dared to oppose ruling party (like Girondists) were oppressed and "left out" of politics.

Even in such a conjuncture, parliamentarism in France managed to develop. In 1795, Thermidorian coup threw the Jacobins out of political arena and brought significant legislative changes. A newly established government led by Paul

[1] **French Constitution of 1791.** (1791). National Assembly. https://wp.stu.ca/wp-content/uploads/sites/4/2015/07/French-Constitution-of-1791.pdf

[2] **Ray, M.** (2023). What Led to France's Reign of Terror? Encyclopedia Britannica. https://www.britannica.com/story/what-led-to-frances-reign-of-terror

Barras introduced a new, bicameral legislative system composed of the Council of Five Hundred and the Council of Ancients.[1] This period (otherwise called the period of pluralism) allowed multiple parties to regain the right of voice; however, such decision led to stratification of political arena due to constant struggle between radicals and royalists.[2] Nevertheless, it should be mentioned that Directory laid the groundwork for the establishment of more structured parliamentary system which was abruptly ended by Bonaparte's coup in 1799. Needless to say, that fragmentation of parliament and its incapability to solve economic and political issues in the state contributed to its collapse. Under Bonaparte's reign the legislative branch (The Senate and Legislative Corps) existed but de facto did not have any power over the emperor. Up until 1848, legislative branch in France was moved into the background. With the proclamation of the Second Republic a universal male suffrage and a new constitution were introduced which included the importance of popular sovereignty and representative government.[3] Due to the new constitution, the Legislative Assembly gained considerable power; however, internal divisions and external pressures weakened the Republic.

Parliamentary administration through legal perspective

Parliamentary administration reflects the complex relationship between constitutional frameworks, legal norms and the functioning of governmental institutions. The legal grounds of the parliaments are grounded in the constitutions or in case of Israel, the UK, and Australia in fundamental laws, which dictate the organization and functioning of the general state power. The key legal principle, that is aimed to ensure legal principle in parliamentary administration is the doctrine of responsible government.[4] According to this

[1] **Britannica, T. Editors of Encyclopaedia** (2024). Thermidorian Reaction. Encyclopedia Britannica. https://www.britannica.com/event/Thermidorian-Reaction.

[2] **Ibid.**

[3] **Constitution de 1848, II République** (1848). https://www.conseil-constitutionnel.fr/node/3811/pdf

[4] **Comparative research paper on parliamentary administration** (2016). file:///C:/Users/PC-6/Downloads/Comparative%20Research%20Paper-EN-LowRes.pdf

doctrine, the executive (the prime minister and the cabinet) shall be accountable to the legislature (the parliament). In other words, the executive cannot govern without the support of the elected legislature.

Legal mechanisms such as votes of no confidence or parliamentary inquiries serve as channels through which the legislature may hold the executive responsible. Additionally, in parliamentary systems, committees play a crucial role in overseeing the actions of the executive branch. From a legal perspective committees are vested by a statute of parliamentary rules to implement inquiries, subpoena witnesses and review the actions of the government.[1] Such legislative oversight is important in order to ensure that actions of the executive are consistent with the law and public policy objectives.

From another perspective, parliamentary administration also touches upon the administrative law, which controls and governs the functioning of public bureaucracies. In parliamentary systems, the relationship between the elected officials and the civil service is an important component of governance. Public sector governance such as regulations on public procurement, administrative discretion and citizen complaints provide legal tools for holding the executive accountable through administrative processes. This aspect of parliamentary administration ensures that executive actions align with the rule of law and respect of citizens' rights.

Conclusion

Examination of parliamentary administration allows to have critical insights into the intricate dynamics of governance within parliamentary systems. This article attempted to explore the unique interplay between executive and legislative processes, as well as broader political landscape, influencing accountability, representation and stability. Distinction between majoritarian and consensus models underscores the diverse approaches to the governance, with each having

[1] **Law and Justice: The Case for Parliamentary Scrutiny: The responsibility of parliaments and their members to prevent torture and ensure human conditions of detention: legislative and oversight measures** (2006). http://archive.ipu.org/PDF/publications/law-and-justice-e.pdf

its own advantages and disadvantages and a set of challenges. The impact of historical evolution on parliamentary administration from its origin in medieval England to contemporary adaptation highlights the ongoing tension between legislative and executive branches, with each trying to gain as much power within state as possible. Understanding these complexities is important for analyzing the effectiveness and resilience of parliamentary democracies, especially in an era where political fragmentation and coalition governance are increasingly prevalent.

Bibliography

Inter-Parliamentary Union, (2024). National Parliaments. https://www.ipu.org/national-parliaments#:~:text=Parliamentary%20systems%20fall%20into%20two,some%2044%2C000%20members%20of%20parliament.

Lijphart, A. (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf

Shugart, M. S., & Carey, J. M. (1992). Presidents and Assemblies and Parliamentarism: Constitutional Design and Electoral Dynamics. https://edisciplinas.usp.br/pluginfile.php/8554006/mod_resource/content/1/Matthew%20Soberg%20Shugart%2C%20John%20M.%20Carey%20-%20Presidents%20and%20Assemblies_%20Constitutional%20Design%20and%20Electoral%20Dynamics-Cambridge%20University%20Press%20%281992%29.pdf

Lijphart, A. (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf

Dahl, R. (1998). On Democracy. Yale University Press. https://newuniversityinexileconsortium.org/wp-content/uploads/2022/08/Robert-A.-Dahl-On-Democracy-1998-1.pdf

Sente, Ch. (2019). Belgium: a fragmented parliament. https://feps-europe.eu/belgium-a-fragmented-parliament/

George, T. (2002). Veto Players: How Political Institutions Work. http://nzaher710.free.fr/coursLSES/poltique.pdf

Pollit, C. & Bouckaret, G. (n.d.). Public Management Reform. http://ndl.ethernet.edu.et/bitstream/123456789/40090/1/102.Christopher%20Pollitt.pdf

Global Data On National Parliaments, (2022). German Bundestag Election Results. https://data.ipu.org/parliament/DE/DE-LC01/election/DE-LC01-E20210926/

Shugart, M.S. (2008). Comparative Executive–Legislative Relations. https://calgara.github.io/Pol1_Fall2017/Shugart%202016.pdf

The Guardian. (2013). Julia Gillard ousted as Australia prime minister. https://www.theguardian.com/world/2013/jun/26/julia-gillard-australia-prime-minister-kevin-rudd

Katz, R. & Meir, P. (1995). Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of the Cartel Party. https://dl1.cuni.cz/pluginfile.php/1783574/mod_resource/content/1/Katz_Mair_Changing%20Models%20of%20Party%20Organization%20and%20Party%20Democracy.pdf

Sachi, S. (2018). The Italian Welfare State in the Crisis: Learning to Adjust? https://www.tandfonline.com/doi/epdf/10.1080/13608746.2018.1433478?needAccess=true

Stanford Encyclopedia of Philosophy. (2020). Locke's Political Philosophy. https://plato.stanford.edu/entries/locke-political/

Lijphart, A. (1999). Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries. http://digamo.free.fr/lijphart99.pdf

Law and Justice: The Case for Parliamentary Scrutiny: The responsibility of parliaments and their members to prevent torture and ensure human conditions of detention: legislative and oversight measures (2006). http://archive.ipu.org/PDF/publications/law-and-justice-e.pdf

Dahl, R. (1998). On Democracy. Yale University Press. https://newuniversityinexileconsortium.org/wp-content/uploads/2022/08/Robert-A.-Dahl-On-Democracy-1998-1.pdf

George, T. (2002). Veto Players: How Political Institutions Work. http://nzaher710.free.fr/coursLSES/poltique.pdf

Prtichett, V. (1918). “Origin and Growth of Parliamentary Government,” Kentucky Law Journal: Vol. 6: Iss. 5, Article 4. https://uknowledge.uky.edu/cgi/viewcontent.cgi?article=5217&context=klj

Pollard, A. (1926). The Evolution of the Parliament. https://core.ac.uk/download/pdf/7048897.pdf

Nation, M. (2019). Locke’s Social Contract: Is It Legitimate? https://uca.edu/cahss/files/2020/07/Nation-CLA-2019.pdf

Bill of Right. (1689) https://avalon.law.yale.edu/17th_century/england.asp

French Constitution of 1791. (1791). National Assembly. https://wp.stu.ca/wp-content/uploads/sites/4/2015/07/French-Constitution-of-1791.pdf

Ray, M. (2023). What Led to France’s Reign of Terror? Encyclopedia Britannica. https://www.britannica.com/story/what-led-to-frances-reign-of-terror

Britannica, T. Editors of Encyclopaedia (2024). Thermidorian Reaction. Encyclopedia Britannica https://www.britannica.com/event/Thermidorian-Reaction

Constitution de 1848, II République (1848). https://www.conseil-constitutionnel.fr/node/3811/pdf

Comparative research paper on parliamentary administration (2016). file:///C:/Users/PC-6/Downloads/Comparative%20Research%20Paper-EN-LowRes.pdf

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Ամփոփագիր

Սույն հոդվածն ուսումնասիրում է խորհրդարանական կառավարման հայեցակարգը քաղաքագիտության մեջ՝ ընդգծելով դրա դերը

կառավարման հեշտացման, քաղաքականության իրականացման և խորհրդարանական համակարգերում ընտրված պաշտոնյաների հաշվետվողականության գործում: Հոդվածում քննարկվում է օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև փոխգործակցությունը՝ ընդգծելով, թե ինչպես են խորհրդարանական հանձնաժողովները վերահսկում կառավարության գործունեությունը և ապահովում թափանցիկություն: Կոալիցիոն կառավարությունների անհրաժեշտությունը, որը ցույց է տրված Իսրայելի Քնեսեթի օրինակներով, ուսումնասիրվում է խորհրդարանական համակարգերի հիմքում ընկած տեսական շրջանակների կողքին, ինչպիսիք են մեծամասնական և կոնսենսուսային մոդելները: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև խորհրդարանական կառավարման պատմական զարգացմանը միջնադարյան Անգլիայից մինչև ժամանակակից ադապտացիաներ՝ ընդգծելով օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև ուժերի շարունակական հավասարակշռությունը: Արդյունքում կատարված է եզրահանգում, որ այս դինամիկան հասկանալը կարևոր է խորհրդարանական ժողովրդավարությունների արդյունավետությունն ու ճկունությունը վերլուծելու համար, հատկապես քաղաքականապես մասնատված միջավայրերում:

Հիմնաբառեր. խորհրդարանական կառավարում, քաղաքագիտություն, օրենսդիր մարմին, գործադիր իշխանություն, դատական իշխանություն, հաշվետվողականություն, կոալիցիոն կառավարություններ, բյուրոկրատական արդյունավետություն, մեծամասնական մոդել, կոնսենսուս մոդել, պատմական ինստիտուցիոնալիզմ:

ПАРЛАМЕНТСКОЕ УПРАВЛЕНИЕ КАК ОБЪЕКТ СРАВНИТЕЛЬНОЙ ПОЛИТОЛОГИИ

Аннотация

В этой статье рассматривается концепция парламентского управления в политологии, отмечая ее роль в содействии управлению, реализации политики и подотчетности выборных должностных лиц в парламентских системах. В ней обсуждается взаимодействие между законодательной, исполнительной и судебной ветвями власти, подчеркивая, как парламентские комитеты контролируют действия исполнительной власти и обеспечивают прозрачность. Необходимость коалиционных правительств, которая продемонстрирована на таких примерах, как израильский Кнессет, рассматривается вместе с лежащими в основе парламентских систем теоретическими рамками, такими как модели большинства и консенсуса. В статье также прослеживается историческая эволюция парламентского управления от средневековой Англии до современных адаптаций, подчеркивая сохраняющийся баланс сил между законодательной и исполнительной ветвями власти. В конечном счете, в ней утверждается, что понимание этой динамики имеет решающее значение для анализа эффективности и устойчивости парламентских демократий, особенно в политически раздробленных средах.

Ключевые слова: парламентское управление, политология, законодательный орган, исполнительная власть, судебная система, подотчетность, коалиционные правительства, бюрократическая эффективность, мажоритарная модель, модель консенсуса, исторический институционализм.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 30.10.2024թ., տրվել է գրախոսության 01.11.2024թ., ընդունվել է տպագրության 09.11.2024թ.:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1953 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ԴԱԲԱՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տ. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1953 թվականի դեկտեմբերի 11-ին հաստատված՝ Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունիսի 14-ի N 856-Ա որոշմամբ հավանություն է տվել 1953 թվականի դեկտեմբերի 11-ին հաստատված «Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հունիսի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կանոնադրությունը և հետազոտելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և սույն գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) ընդունվել է 1954 թվականին:

2. Պայմանավորվող կառավարությունները, հաշվի առնելով դաբաղ հիվանդության կրկնվող բռնկումներով պայմանավորված՝ եվրոպական գյուղատնտեսությանը հասցվող ծանր կորուստների կրկնվող դրսևորումները կանխարգելելու ծայրահեղ անհրաժեշտությունը, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (այսուհետ՝ ՊԳԿ կամ Կազմակերպություն) շրջանակներում հիմնադրել են դաբաղ հիվանդության վերահսկման հարցերով եվրոպական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի նպատակն է Եվրոպայում դաբաղ հիվանդության դեմ կանխարգելիչ և վերահսկիչ միջոցների մասով խթանել ազգային և միջազգային գործողությունները:

3. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. վերահսկել դաբաղ հիվանդությունը՝ նպատակ ունենալով վերջնականապես վերացնել այն համապատասխան կարանտինային և սանիտարական միջոցների նախաձեռնման և հետևյալ մեկ կամ ավելի մեթոդների կիրառման միջոցով.

1) սպանդի քաղաքականություն,

2) սպանդ՝ պատվաստման հետ միասին,

3) հիվանդությունների դեմ լիովին անընկալունակ ընտանի խոշոր եղջերավոր անասունների պահպանում պատվաստման միջոցով. այլ դյուրընկալ անասուններ կարող են պատվաստվել,

4) պատվաստումներ բռնկումներին հարող տարածքներում (հոդված II, մաս 1),

3.2. ունենալ դաբաղ հիվանդության ներթափանցումների անհապաղ կառավարման համար նախատեսված արտակարգ իրավիճակների պլան և ապահովել ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների բավականաչափ հասանելիություն (հոդված II, մաս 2),

3.3. տնօրինման տակ ունենալ պատվաստանյութերի կամ պատվաստանյութ մշակելու հակամարմինների պաշար, որը բավարար կլինի հիվանդության դեմ պատշաճ պաշտպանություն ապահովելու համար, եթե հիվանդության տարածումը չի կարող վերահսկվել բացառապես սանիտարական միջոցներով, համագործակցել և բոլոր համաձայնեցված միջոցներով աջակցել մյուս անդամներին դաբաղ հիվանդության վերահսկման, մասնավորապես՝ ըստ անհրաժեշտության պատվաստանյութերի կամ պատվաստանյութ մշակելու հակամարմինների պաշարների հարցում (հոդված II, մաս 3),

3.4. սահմանել կարգավորումներ՝ դաբաղ հիվանդության բռնկումներից առաջացող վարակի տեսակավորման համար, Հանձնաժողովի կողմից պահանջվող կարգով, և անմիջապես ծանուցել Հանձնաժողովին և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությանը (այսուհետ՝ ԿԱՀԿ) նմանատիպ տեսակավորման արդյունքների վերաբերյալ (հոդված II, մաս 4),

3.5. սահմանել կարգավորումներ՝ ՊԳԿ-ի կողմից սահմանված Համաշխարհային տեղեկատու լաբորատորիային նոր իզոլյատներ անհապաղ ուղարկելու համար՝ հետագա բնութագրման նպատակով (հոդված II, մաս 5),

3.6. տրամադրել Հանձնաժողովին ցանկացած տեղեկատվություն, որն անհրաժեշտ կլինի վերջինիս գործառույթներն իրականացնելու համար: Մասնավորապես անդամները պետք է անհապաղ զեկուցեն Հանձնաժողովին և ԿԱՀԿ-ին դաբաղ հիվանդության ցանկացած բռնկումների և ծավալի վերաբերյալ և պետք է կազմեն այդպիսի հետագա մանրակրկիտ զեկույցներ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով (հոդված II, մաս 6),

3.7. Կազմակերպության գլխավոր տնօրենի միջոցով պայմանավորվածություններ ձեռք բերել ԿԱՀԿ-ի հետ՝ Կազմակերպության

և ԿԱՀԿ-ի միջև ցանկացած համաձայնագրերի շրջանակում՝ ապահովելու համար, որ բոլոր անդամներին տրամադրվի տեխնիկական խորհրդատվություն՝ դաբաղ հիվանդության վերահսկմանը վերաբերող ցանկացած խնդրի վերաբերյալ, հիվանդության բռնկումների և վարակի բացահայտման վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը հավաքագրվի և տարածվի հնարավորինս արագ, իրականացվի դաբաղ հիվանդության համար պահանջվող հատուկ հետազոտական աշխատանք (հոդված IV, մաս 1),

3.8. հավաքագրել տեղեկատվություն դաբաղ հիվանդության վերահսկման և հետազոտական ազգային ծրագրերի վերաբերյալ (հոդված IV, մաս 2),

3.9. համապատասխան անդամների հետ խորհրդակցությամբ սահմանել նման անդամներին անհրաժեշտ օգնության բնույթը և ծավալները՝ իրենց ազգային ծրագրերն իրականացնելու նպատակով (հոդված IV, մաս 3),

3.10. խրախուսել և ծրագրել համատեղ գործողություններ այն դեպքում, երբ դրանք անհրաժեշտ են կանխարգելման և վերահսկման ծրագրերի իրականացման համար, և այս նպատակով ձեռնարկել միջոցներ՝ պատշաճ ռեսուրսներ հասանելի դարձնելու համար, օրինակ՝ պատվաստանյութի մշակման և պահման համար՝ անդամների միջև համաձայնագրերի միջոցով, և նպաստել դաբաղ հիվանդության համաշխարհային վերահսկմանը (հոդված IV, մաս 4),

3.11. կազմակերպել պատշաճ հարմարություններ՝ վարակի տեսակավորման և բնութագրման նպատակով (հոդված IV, մաս 5),

3.12. ապահովել միջազգային լաբորատորիայի (Համաշխարհային տեղեկատու լաբորատորիա) հասանելիությունը՝ պատշաճ մեթոդներով վարակի արագ բնութագրման հնարավորություններով (հոդված IV, մաս 6),

3.13. պահպանել տեղեկություններ անդամ երկրներում և այլ երկրներում հակամարմինների և վարակի հասանելի պաշարների վերաբերյալ և իրավիճակը պահել շարունակական վերահսկողության ներքո (հոդված IV, մաս 7),

3.14. տրամադրել խորհրդատվություն մյուս կազմակերպություններին հասանելի ցանկացած ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ՝ Եվրոպայում դաբաղ հիվանդության կանխարգելման և վերահսկման հարցում աջակցելու նպատակով (հոդված IV, մաս 8),

3.15. ձեռք բերել պայմանավորվածություն՝ Կազմակերպության գլխավոր տնօրենի միջոցով, այլ կազմակերպությունների, տարա-

ծաշրջանային խմբերի կամ Հանձնաժողովի անդամ չհամարվող երկրների հետ՝ Հանձնաժողովի կամ վերջինիս կոմիտեների աշխատանքում մասնակցելու կամ դաբաղ հիվանդության վերահսկման խնդիրների հարցում փոխօգնություն տրամադրելու համար: Այս պայմանավորվածությունները կարող են ընդգրկել համատեղ կոմիտեների ստեղծում կամ դրանցում մասնակցություն (հոդված IV, մաս 9),

3.16. հանձնառել վարչական բյուջե վճարել իր տարեկան մասնաբաժինը՝ ըստ մասնաբաժինների սանդղակի: Այս մասնաբաժինների սանդղակը սահմանվում է Հանձնաժողովի կողմից իր անդամների երկու երրորդի մեծամասնությամբ՝ Հանձնաժողովի Ֆինանսական կանոնակարգերի համաձայն (հոդված XIII, մաս 1):

4. Կանոնադրության համաձայն՝ Հանձնաժողովի հատուկ գործառույթներն են՝

4.1. աջակցել արտակարգ իրավիճակներում բռնկումների կանխարգելմանը և վերահսկմանը՝ Հանձնաժողովի և համապատասխան անդամի կամ անդամների կողմից պատշաճ համարվող ցանկացած եղանակով (հոդված V, մաս 1),

4.2. ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ հակամարմինների և (կամ) պատվաստանյութի պահեստավորման, «անվտանգության գոտիների» ստեղծման, արտակարգ իրավիճակներին տրվող արձագանքը կառավարելու համար պահանջվող անձնակազմի վերապատրաստման, կենսամեկուսացման համապատասխան չափանիշների պահպանման և խթանման ոլորտներում, ինչպես նաև Հանձնաժողովի նպատակներն իրագործելու նպատակով անդամ պետությունների կամ Գործադիր կոմիտեի կողմից առաջարկված և Հանձնաժողովի կողմից հաստատված հատուկ ծրագրերն իրականացնելու ուղղությամբ (հոդված V, մաս 2):

5. Կանոնադրության համաձայն՝ ցանկացած անդամ պետություն կարող է իր ընդունման փաստաթուղթն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մեկ տարին լրանալուց կամ Կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած ժամանակ դուրս գալ Հանձնաժողովից՝ կախված այն հանգամանքից, թե որ ամսաթիվն է ավելի ուշ, դուրս գալու մասին գրավոր ծանուցելով Կազմակերպության գլխավոր տնօրենին, որն այդ մասին անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովի բոլոր անդամներին: Դուրս գալն ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին

ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի հետո: Երկու տարի անընդմեջ մասնաբաժին չվճարելը ենթադրում է վճարումը չկատարած անդամի դուրս եկած լինելը Հանձնաժողովի կազմից (հոդված XVI, մաս 1 և մաս 2):

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1953 թվականի դեկտեմբերի 11-ին հաստատված՝ Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1743

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «1953 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ԴԱԲԱՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1743 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «1953 թվականի դեկտեմբերի 11-ին հաստատված՝ Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1743 որոշմամբ որոշել է, որ 1953 թվականի դեկտեմբերի 11-ին հաստատված՝ Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1743 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական

դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1743 որոշմամբ 1953 թվականի դեկտեմբերի 11-ին հաստատված՝ Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի

եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված

դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում

նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ (ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագրում

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունիսի 27-ի N 982-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագիրը (ստորև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի մայիսի 15-ին՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մասը կազմող՝ Սիսիան-Քաջարան ճանապարհի հարավային հատվածի կառուցման հարցում Հայաստանին օժանդակելու նպատակով:

2. Համաձայնագիրը վավերացնելու մասին օրենքի նախագծի մասին Կառավարության որոշման նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ «ՀՀ-ի համար առաջնահերթություն համարվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի 4-րդ տրանշի Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ նոր ճանապարհահատվածի (ներառյալ Բարգուշատի թունելը) ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել ըստ երեք ենթահատվածների՝

1. 27.12 կմ երկարությամբ Հյուսիսային ենթահատված, կմ0+000 ÷ կմ27+125,

2. 8.65 կմ երկարությամբ Բարգուշատի թունելի ենթահատված, կմ27+125 ÷ կմ35+775,

3. 24.25 կմ երկարությամբ Հարավային ենթահատված, կմ35+775 ÷ կմ60+022 (այսուհետ՝ Ծրագիր):

Հարավային ենթահատվածի կառուցման ծրագրի գնահատված արժեքը կազմում է 452 մլն եվրո: Նախատեսվում է Ծրագրի ֆինանսավորումն իրականացնել ՎԶԵԲ և ԵՆԲ կողմից տրամադրվող վարկային միջոցներով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Հարավային ենթահատվածի ֆինանսավորման համար անհրաժեշտ վարկային միջոցները կազմում են 373 մլն եվրո, որից 236 մլն եվրոն նախատեսվում է ներգրավել ՎԶԵԲ-ից, իսկ 137 մլն եվրոն՝ ԵՆԲ-ից: ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասը կազմում է 79 մլն եվրո:

(...)

Համաձայնագրի շրջանակներում կառուցվելու է 24.25 կմ երկարությամբ ասֆալտբետոնե պատվածքով ճանապարհ, որը հնարավորություն կտա կրճատելու Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի երկարությունը, ինչի արդյունքում կնվազի երթևեկության տևողությունը, կավելանա տրանսպորտային միջոցների առկա 50 կմ/ժ միջին արագությունը մինչև 100 կմ/ժ, կբարձրացվեն երթևեկության հարմարավետությունն ու անվտանգությունը: Ճանապարհահատվածի կառուցումը կնպաստի նաև ապրանքաշրջանառության մեծացմանը, տրանսպորտային ծախսերի կրճատմանը, տարանցիկ տրանսպորտի ներգրավմանը և տուրիզմի զարգացմանը:

Ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները ներառում են.

- ասֆալտբետոնե պատվածքով 11.1մ լայնությամբ (այդ թվում՝ նաև ամրացված կողնակներ), 3 երթևեկելի գոտիներով (3.30մ) ճանապարհի կառուցում,
- 5 թունելների, 11 կամուրջների, 68 հեղեղատների, 43 հենապատերի կառուցում,
- անվտանգ երթևեկությունն ապահովող այլ աշխատանքների իրականացում:

(...)

Վարկային համաձայնագրով Ծրագրի իրականացման համար պատասխանատու պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է, իսկ Ծրագիրն իրականացնող գործակալությունը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը»:

3. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի VI հոդվածով սահմանված կարգով: **Ստանդարտ սահմանումների և պայմանների**

9.02 բաժնի «գ» ենթակետի նպատակների համար Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար որպես լրացուցիչ նախապայման սահմանված է Համաձայնագրին համապատասխան և Բանկի կողմից ընդունելի համարվող Ծրագրի իրականացման գրասենյակի ստեղծումը:

4. Համաձայն Համաձայնագրի՝ Բանկի՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ի Ստանդարտ սահմանումների և պայմանների բոլոր դրույթները ներառվում ու կիրառելի են դառնում Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին Համաձայնագրում:

5. Համաձայնագիրն ունի 3 հավելվածներ՝ Հավելված 1. «**Ծրագրի նկարագիրը**», Հավելված 2. «**Կատեգորիաներ և մասհանումներ**», Հավելված 3. «**Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր**»:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից, որոնք ենթակա են փոփոխման ժամանակ առ ժամանակ՝ համաձայնեցված լինելով Բանկի և Հայաստանի Հանրապետության կողմից.

Մաս Ա. Սիսիան-Քաջարան Ճանապարհի հարավային հատվածի կառուցում (Նախագծման փուլ),

Մաս Բ. Սիսիան-Քաջարան Ճանապարհի հարավային հատվածի կառուցում (Շինարարության փուլ),

Մաս Գ. Ինժեներական վերահսկողություն,

Մաս Դ. Ծրագրի կառավարման խորհրդատու:

6. Համաձայնագրի II հոդվածի 2.01 բաժնի համաձայն՝ Բանկը համաձայնվում է Համաձայնագրում սահմանված պայմաններով և կարգով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել մինչև 236.000.000 եվրո գումար (Վարկ):

Համաձայնագրի II հոդվածի 2.02 բաժնի համաձայն՝ որպես Մասհանման նվազագույն գումարի չափ սահմանվել է 1.000.000 եվրոն՝ նախագծման փուլում շինարարության պայմանագրով վճարումներ կատարելու նպատակով, 5.000.000 եվրոն՝ շինարարական պայմանագրով նախատեսված վճարումների իրականացման նպատակով շինարարական և թերությունների հայտնաբերման փուլերի ընթացքում, և 200.000 եվրոն՝ վերահսկող ինժեներին և ծրագրի ղեկավարման խորհրդատուին վճարումներ իրականացնելու նպա-

տակով՝ համաձայն վերահսկող ինժենների և ծրագրի ղեկավարման խորհրդատուի պայմանագրի:

Որպես կանխավճարի նվազագույն գումարի չափ և չեղարկման նվազագույն գումարի չափ սահմանվել է 1.000.000 եվրոն:

Վարկի վերջին հասանելիության ժամկետը Համաձայնագրի ստորագրման 8-րդ տարելիցն է կամ այլ ավելի ուշ ժամկետ, որը Բանկն իր հայեցողությամբ կարող է սահմանել և ծանուցել Հայաստանի Հանրապետությանը:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

ա) սկսած 2029 թվականի հուլիսի 15-ից մինչև 2044 թվականի հունվարի 15-ը՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին, 30 (երեսուն) հավասարաչափ (կամ որքան հնարավոր է հավասարաչափ) կիսամյակային վճարումներով՝ լողացող տոկոսադրույքով վճարել Վարկը (հոդված II, բաժին 2.02, կետեր «ե(1)» և «ը»),

բ) վճարել Պարտավճար՝ տարեկան 0.5% չափով (հոդված II, բաժին 2.02, կետ «է»),

գ) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել, որ Իրականացնող մարմինը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու ողջամիտ միջոցներ և այլ ռեսուրսներ, այդ թվում նաև մարդկային ռեսուրսներ, Ծրագիրն ավարտին հասնելու համար, ինչպես նաև իրականացնի Փոխկապակցված միջոցառումները (հոդված III, բաժին 3.01, կետ «ա»),

դ) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, պատասխանատվություն կրել բոլոր անուղղակի և պահվող հարկերի և տուրքերի համար (ներառյալ, առանց սահմանափակման, ցանկացած մաքսատուրք, եթե կիրառելի է) բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առնչությամբ (ներառյալ՝ խորհրդատվական ծառայությունները), որոնք ձեռք են բերվել Ծրագրի համար կամ նախատեսում են դրանց փոխհատուցումը և հետագա պայմանով, որ ոչ մի դեպքում Վարկի միջոցները և տեխնիկական համագործակցության միջոցները չեն օգտագործվի Ծրագրի համար գնվելիք բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (ներառյալ՝ խորհրդատվական ծառայությունները) այլ

հարկերի ֆինանսավորման կամ վճարման համար (հոդված III, բաժին 3.01, կետ «բ»),

ե) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, իրականացնել Ծրագիրը, ինչպես նաև Փոխկապակցված միջոցառումները, պատշաճ կերպով և արդյունավետորեն, համաձայն հաջողված ինժեներային, ֆինանսական և բիզնես փորձի, բոլոր կիրառելի օրենքներին համահունչ և ընդունելի միջազգային ստանդարտներին և փորձին համապատասխան, բնապահպանական, աշխատանքային, առողջապահական և անվտանգային նորմերին համապատասխան (հոդված III, բաժին 3.01, կետ «գ»),

զ) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել, որ Փոխկապակցված միջոցառումների համար բոլոր պայմանագրերը ներառեն համապատասխանության պահանջ Շրջանակային բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին, ինչպես նաև համապատասխանություն Պատվիրակված կատարողականի նկատմամբ պահանջներին և GIP-ին, ինչպես նաև երաշխավորել, որ այս հանձնառությունը կներառի պարտավորություն՝ մշակելու Փոխկապակցված միջոցառումների համար Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ, որոնք հատուկ կլինեն տվյալ տեղանքներին. ընդ որում, դրանք համապատասխանաբար հաստատված կլինեն Սիսիան-Քաջարան ճանապարհի յուրաքանչյուր հատվածի համապատասխան Վերահսկող ինժեների կողմից և հավասարապես նաև Ծրագրի կառավարման խորհրդատուի աջակցությամբ Ծրագրի իրականացնողի կողմից՝ ապահովելու Պատվիրակված կատարողական նկատմամբ պահանջները և GIP-ի պահանջները (հոդված III, բաժին 3.01, կետ «դ»),

է) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանի հաստատումը և Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանի իրականացման ավարտը՝ հավաստված ESP PR5 չափանիշներով Հողի ձեռքբերման և վերաբնակեցման պլանի ավարտական աուդիտի միջոցով՝ պատրաստված Արտաքին վերաբնակեցման մշտադիտարկողի կողմից և Բանկի համար ընդունելի ձևով, որը կնախորդի ծրագրի համապատասխան հատվածների աշխատանքների մեկնարկին (հոդված III, բաժին 3.01, կետ «ե»),

ը) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել, որ Ծրագրի հաշիվները աուդիտի ենթարկվեն Բանկի կողմից ընդունելի անկախ աուդիտորի կողմից (հոդված III, բաժին 3.01, կետ «զ»),

թ) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել, որ Բարգուշատի թունելի կապալառուի կողմից աշխատանքների մեկնարկի պահից սկսած, մշտապես այդ կապալառուն ապահովի այլընտրանքային հասանելի ճանապարհ և ուղիներ՝ անկախ Ծրագրի աշխատանքների և շինարարության տեղանքներից՝ Երթևեկության կառավարման պլանին համահունչ՝ չխաթարելով Ծրագրի ընթացքը (հոդված III, բաժին 3.01, կետ «է»),

ժ) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել Ոլորտային քաղաքականության փաստաթղթի նախապատրաստումն ու հաստատումը, Ծառայությունների մակարդակի պայմանագրի նախապատրաստումը և Խելացի տրանսպորտային համակարգի ռազմավարության պատրաստումն ու հաստատումը ոչ ուշ, քան 2027 թ. հունիսի 30-ը՝ Բանկի կողմից նշանակված ճանապարհային ոլորտի աջակցության խորհրդատուի օգնությամբ և ներգրավմամբ (հոդված III, բաժին 3.01, կետեր «ը», «թ» և «ժ»),

ժա) բացի Ստանդարտ սահմանումների և պայմանների Հոդված IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապահովել Ոլորտային քաղաքականության փաստաթղթում ներկայացված 3 (երեք) առանցքային առաջարկությունների իրականացումը (որոնք ներկայումս կներառեն առաջարկություններ ճանապարհների պահպանման, ճանապարհների անվտանգության և ակտիվների կառավարման ոլորտներում) ոչ ուշ, քան 2029 թ. հունիսի 30-ը (հոդված III, բաժին 3.01, կետ «ի»),

ժբ) եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, ստեղծել և Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում գործողության մեջ պահել ծրագրի իրականացման գրասենյակը համապատասխան ռեսուրսներով և Բանկի համար **ընդունելի** տեխնիկական առաջադրանքի շրջանակներին համապատասխան որակավորված անձնակազմով, որի նպատակը Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտների համակարգումը, կառավարումը, մշտադիտարկումն ու գնահատումն է, ներառյալ Ծրագրի

համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների գնումների իրականացումը (հոդված III, բաժին 3.02),

ժգ) Վարկից ֆինանսավորվող և Ծրագրի իրականացման համար պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներն իրականացնել Համաձայնագրի III հոդվածի 3.03 բաժնի դրույթներով սահմանված կարգով (հոդված III, բաժին 3.03),

ժդ) ապահովել Համաձայնագրի III հոդվածի 3.04 բաժնում սահմանված բնապահպանական և սոցիալական համապատասխանության վավերապայմանների կատարումը (հոդված III, բաժին 3.04),

ժե) եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ, Ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով պահանջվող ձևով վարձել և աշխատել խորհրդատուների հետ, որոնց որակավորումները, աշխատանքային փորձը և տեխնիկական առաջադրանքները ընդունելի են Բանկի կողմից, ներառյալ՝ Ծրագրի կառավարման խորհրդատու՝ ներգրավված 3.03(բ) բաժնի համաձայն, Վերահսկող ինժեներ և ԾԻԳ-ին աջակցելու և աջակցություն ցուցաբերելու ցանկացած այլ խորհրդատու (հոդված III, բաժին 3.05, կետ «ա»),

ժզ) խորհրդատուներին (ներառյալ՝ Բանկի կողմից ուղղակիորեն նշանակված ՏՀ ֆինանսավորման խորհրդատուները), որոնք ներգրավված են Ծրագրին առնչվող հարցերում և Հայաստանի Հանրապետության գործողություններում, անվճար ապահովել սարքավորումներով և աջակցել իրենց գործառույթների իրականացման գործում (ներառյալ՝ գրասենյակային տարածքի և ֆոտոպատճենահանող սարքավորումների տրամադրումը, քարտուղարական ծառայություններ և տրանսպորտ, այնքանով, որքանով նման գործողությունների հետ կապված ծախսերը դեռևս չեն պահանջվում ծածկել և իրականում ծածկված են խորհրդատուների համապատասխան ֆինանսական առաջարկներով), ինչպես նաև անվճար ապահովել բոլոր փաստաթղթերի, նյութերի և այլ տեղեկատվության տրամադրումը, որը կարող է առնչվել իրենց աշխատանքին (հոդված III, բաժին 3.05, կետ «բ»),

ժէ) ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև վարկի ամբողջական մարումը կամ չեղարկումը, ապահովել, որ Իրականացնող մարմինը և (կամ) Կատարող գործակալությունը Բանկին ներկայացնի Նախագծման փուլում կիսամյակային հաշվետվություններ, Շինարարության ընթացքում եռամսակային հաշվետվություններ և Շահագործման փուլում Բնապահպանական և սոցիալական հարցերին առնչվող տարեկան

հաշվետվություններ Հայաստանի Հանրապետության և Ծրագրի հարաբերությունների մասով, ներառելով նաև Փոխկապակցված միջոցառումները, ինչպես նշված է Ստանդարտ պայմանների և Սահմանումների 5.02 կետի գ) ենթակետի գ) մասում, երբ յուրաքանչյուր դեպքում հաշվետվությունները պետք է ներկայացվեն եռամսյակի ավարտից հետո 30 օրվա ընթացքում, կիսամյակ-տարեկան ժամանակահատվածից հետո 45 օրվա ընթացքում և հաշվետու տարվանից հետո 60 օրվա ընթացքում, ինչպես նաև ապահովել, որ նշված հաշվետվությունները պարունակեն Համաձայնագրի III հոդվածի 3.06 բաժնի «ա» կետում շարադրված առանձնահատուկ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն (հոդված III, բաժին 3.06, կետ «ա»),

ժը) ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, ապահովել, որ Ստանդարտ սահմանումների և պայմանների 4.04 կետի ա) ենթակետի ն) մասի համաձայն Ծրագրի պարբերական հաշվետվությունները ներկայացվեն Համաձայնագրի III հոդվածի 3.06 բաժնի «բ» կետում նշված ձևով (հոդված III, բաժին 3.06, կետ «բ»),

ժթ) Ծրագրի իրականացման (կամ Ծրագրի ցանկացած մասի) պատասխանատու հանդիսացող Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների կամ ստորաբաժանումների միջոցով շարունակաբար իրականացնել գործընթացներ, վարել հաշվառումներ և հաշիվներ, որոնք, միջազգայնորեն ընդունված հաշվապահական ստանդարտներին համապատասխան, ստույգ կարտացոլեն Ծրագրին առնչվող գործողությունները, ռեսուրսները և ծախսերը և հնարավորություն կունենան մշտադիտարկելու և արձանագրելու Ծրագրի առաջընթացը (ներառյալ՝ ծախսերն ու ստացվելիք օգուտները) (հոդված IV, բաժին 4.01, կետ «ա»),

ի) ապահովել, որ Համաձայնագրի IV հոդվածի Բաժին 4.01-ում (Ծրագրի հաշիվներին վերաբերող) նշված գրառումները և հաշիվները յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար և մինչև Ծրագրի ավարտը (ինչպես Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը ծանուցվել է) աուդիտի ենթարկվեն անկախ աուդիտորների կողմից, որոնք ընդունելի են Բանկի համար՝ միջազգային ընդունված աուդիտի սկզբունքներին և ստանդարտներին համապատասխան (հոդված IV, բաժին 4.01, կետ «բ», ենթակետ «1»),

իա) հնարավորինս շուտ, բայց ամեն դեպքում, ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից վեց ամիս հետո, Բանկին տրամադրել աուդիտորների կողմից նման ծավալի և մանրամասն

հաշվետվություն, որը Բանկը կարող է ողջամտորեն պահանջել և Բանկին տրամադրել այնպիսի այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են նման գրառումներին և հաշիվներին, ինչպես նաև դրանց աուդիտին, որոնք Բանկը ժամանակ առ ժամանակ կարող է ողջամտորեն պահանջել (հոդված IV, բաժին 4.01, կետ «բ», ենթակետեր «2» և «3»),

իբ) չնայած Հավելված 2-ին կցված աղյուսակը սահմանում է կատեգորիաները, յուրաքանչյուր կատեգորիային հատկացվող վարկի գումարը և յուրաքանչյուր կատեգորիայից ֆինանսավորվող ծախսերի տոկոսային բաժինը, այնուամենայնիվ, մասհանում չկատարել Համաձայնագրի Հավելված 2-ի 2-րդ կետով նախատեսված դեպքերում (Հավելված 2, կետեր 1 և 2),

իգ) իրականացնել Ծրագիրը Համաձայնագրի Հավելված 3-ով սահմանված՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրին համապատասխան (Հավելված 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ - 1744

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔ (ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1744 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1744 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1744 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1744 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Սիսիան-Քաջարան հարավային հատված)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը

համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային

եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորություններից՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.
- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի մայիսի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության

կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հուլիսի 4-ի N 1041-Ա որոշմամբ հավանություն է տվել 2024 թվականի մայիսի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Հովանոցային համաձայնագիր) ստորագրվել է 2000 թվականի հուլիսի 24-ին Վաշինգտոնում:

2. Հովանոցային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող՝ համաձայն Սահմանադրական դատարանի՝ 2001 թվականի հունվարի 10-ի ՍԴՈ-277 որոշման:

3. Հովանոցային համաձայնագիրն Ազգային ժողովի կողմից վավերացվել է Ազգային ժողովի՝ 2001 թվականի փետրվարի 20-ի թիվ Ն-146-2 որոշմամբ:

4. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» **համաձայնությունը** (այսուհետ նաև՝ Համաձայնություն) ստորագրվել է 2024 թվականի մայիսի 2-ին՝ Հովանոցային համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով:

5. Համաձայնությունը կազմված է նախաբանից և երեք կետից:

6. Համաձայնությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունը.

6.1. Հովանոցային համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգել յոթ տարի ժամկետով՝ մինչև 2030 թվականի նոյեմբերի 24-ը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի մայիսի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1745

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1745 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի մայիսի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1745 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի մայիսի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1745 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1745 որոշմամբ 2024 թվականի մայիսի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» համաձայնությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների

ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու

համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԹԻՎ CAM 1024 01 C ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի օգոստոսի 8-ի N 1217-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և

Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի օգոստոսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հունիսի 26-ին՝ բյուջետային աջակցությամբ ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)[1] ֆինանսավորման նպատակով:

Համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ Զարգացման ֆրանսիական գործակալությունը (ԶՖԳ կամ Վարկատու) համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել յոթանասունհինգ միլիոն եվրո (75.000.000 եվրո) առավելագույն ընդհանուր գումարի չափով Վարկային միջոցներ:

2. Համաձայնագիրն ունի հավելվածներ և հավելվածների ներածական դրույթներ, որոնք կազմում են Համաձայնագրի մաս և ունեն նույն իրավաբանական ուժը, մասնավորապես՝ Հավելված 1Ա. «**Սահմանումները**», Հավելված 1Բ. «**Մեկնաբանման սկզբունքները**», Հավելված 2. «**Ծրագրի նկարագրությունը**», Հավելված 3Ա. «**Ֆինանսավորման պլանը**», Հավելված 3Բ. «**Քաղաքականության մատրիցան**», Հավելված 4. «**Նախապայմանները**», Հավելված 5Ա. «**Մասհանման հայտի ձևը**», Հավելված 5Բ. «**Մասհանման և դրույքաչափի հաստատման ձևը**», Հավելված 5Գ. «**Դրույքաչափի փոխարկման հայտի ձևը**», Հավելված 5Դ. «**Դրույքաչափի փոխարկման հաստատման ձևը**» և Հավելված 6. «**Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության կայքում և վարկատուի կայքում**»:

Վարկային միջոցների նպատակն է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության՝ Ծրագրի իրականացման համար նախատեսված

[1] Ծրագիրը նկարագրված է Համաձայնագրի 2-րդ հավելվածում (Ծրագրի նկարագրությունը):

բյուջեն, ինչպես նկարագրված է 2-րդ հավելվածում (*Ծրագրի նկարագրությունը*)՝ 3Ա հավելվածում (*Ֆինանսավորման պլանը*) նկարագրված Ֆինանսավորման պլանին և 3Բ հավելվածում (*Քաղաքականության մատրիցան)* նկարագրված պետական քաղաքականության մատրիցային համապատասխան:

Վարկային միջոցները Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում են Վարկի տրամադրման ժամանակահատվածում՝ մեկ (1) Մասհանմամբ:

3. Համաձայնագրի 5.1 կետով սահմանվում է, որ եթե Շուկայի ապակայունացման դեպքն ազդում է եվրագոտու միջբանկային շուկայի վրա, և հնարավոր չէ Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում Մասհանման նկատմամբ կիրառելի Ֆիքսված տոկոսադրույքը որոշելը, կամ Լողացող տոկոսադրույքի դեպքում Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում կիրառելի ԵՎՐԻԲՈՐ-ը որոշելը, ապա Վարկատուն այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետությանը և նկարագրված իրավիճակի դեպքում համապատասխան Մասհանման կամ Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածի համար, ըստ իրավիճակի, կիրառելի Տոկոսադրույքը կլինի՝ Թույլատրելի սահմանաչափի և տարեկան տոկոսադրույքի գումարը, որը հավասար է վարկատուի կողմից համապատասխան Մասհանումը (Մասհանումները) ֆինանսավորելու հետ կապված ծախսերին՝ անկախ այն աղբյուրից, որն այն կարող է ողջամտորեն ընտրել: Այդ դրույքաչափի մասին Հայաստանի Հանրապետությունը ծանուցվում է հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում՝ նախքան Ֆիքսված տոկոսադրույքի մասով այդ Մասհանման հետ կապված վճարման ենթակա տոկոսների առաջին Վճարման ամսաթիվը կամ Լողացող տոկոսադրույքի մասով Տոկոսների հաշվարկման տվյալ ժամանակահատվածում վճարման ենթակա տոկոսների Վճարման ամսաթիվը:

4. Համաձայնագրով սահմանվում է, որ Համաձայնագրի 5.2 կետի (*Հրապարակված դրույքաչափի փոխարինում*) դրույթները գերակայում են 5.1 կետի (*Շուկայի ապակայունացումը*) դրույթների նկատմամբ, իսկ Համաձայնագրի 13.1 կետով սահմանված յուրաքանչյուր դեպք կամ հանգամանք համարվում է Պարտավորությունների չկատարման դեպք:

Պարտավորությունների չկատարման դեպք տեղի ունենալուց հետո և ցանկացած ժամանակ Վարկատուն կարող է, առանց որևէ պաշտոնական պահանջ ներկայացնելու կամ որևէ դատական կամ

արտադատական վարույթ սկսելու, Հայաստանի Հանրապետությանը գրավոր ծանուցելու միջոցով՝ չեղարկել Վարկային սահմանաչափի մնացորդը, և (կամ) հայտարարել, որ վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը ցանկացած հաշվեգրված կամ վճարման ենթակա տոկոսի հետ միասին, ինչպես նաև Համաձայնագրով վճարման ենթակա բոլոր մյուս գումարները ենթակա են անհապաղ վճարման:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

5.1. ստորագրման ամսաթվից ոչ ուշ Վարկատուին տրամադրել Համաձայնագրի 4-րդ հավելվածի (Նախապայմանները) I մասով սահմանված բոլոր փաստաթղթերը (կետ 2.4 «ա»),

5.2. Մասհանման յուրաքանչյուր հայտ ներկայացնել 16.1 կետում (Գրավոր ծանուցումները և հասցեները) նշված հասցեում գտնվող ԶՖԳ-ի գրասենյակի տնօրենին (կետ 3.2),

5.3. վարկային միջոցների ամբողջական մասհանումը կատարել ամենաուշը ֆինանսական միջոցների Մասհանման վերջնաժամկետի օրը, որը չի կարող երկարաձգվել առանց Վարկատուի նախնական համաձայնության (կետ 3.5, պարբերություններ 1 և 3),

5.4. մասհանման համար ընտրել Ֆիքսված տոկոսադրույք կամ Լողացող տոկոսադրույք՝ նշելով այն 5Ա հավելվածում (Մասհանման հայտի ձևը) սահմանված ձևին համապատասխան Մասհանման հայտում՝ Համաձայնագրի 4.1.1 կետում նշված պայմաններով. վերոհիշյալ դրույթին համապատասխան սահմանված Տոկոսադրույքը չպետք է լինի տարեկան զրո ամբողջ քսանհինգ տոկոսից (0.25%) պակաս՝ չնայած Տոկոսադրույքի նվազեցումներին (կետ 4.1.1, պարբերություն 1 և կետ 4.1.2),

5.5. յուրաքանչյուր Վճարման ամսաթվին վճարել Մասհանման համար հաշվեգրված տոկոսագումարը, որի չափը հավասար է ՀՀ կողմից յուրաքանչյուր Մասհանման համար Մայր գումարի չմարված մնացորդի մասով վճարման ենթակա տոկոսագումարին (կետ 4.2),

5.6. վճարել Համաձայնագրի 4.3 կետով (*Ժամկետանց վճարման և պարտավորությունների չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսը*) սահմանված ցանկացած չմարված տոկոս Վարկատուի կողմից ներկայացված պահանջից անմիջապես հետո կամ չմարված գումարի վճարման ժամկետին հաջորդող յուրաքանչյուր Վճարման ամսաթվին (կետ 4.3 «բ», պարբերություն 2),

5.7. ընդունել, որ Վարկային միջոցների նկատմամբ կիրառելի փաստացի համաշխարհային դրույքաչափը (*aux effectif global*) կարող է սահմանվել երեք ամբողջ երեսունմեկ տոկոս տարեկան դրույքաչափով (3.31%)՝ տարեկան երեք հարյուր վաթսունհինգօրյա (365) հաշվարկի և Տոկոսների հաշվարկման վեցամսյա (6) ժամանակահատվածի հիման վրա՝ մեկ ամբողջ վաթսունչորս տոկոս (1,64%) ժամանակաշրջանի փոխարժեքով, հաշվի առնելով, որ վերոնշյալ դրույքաչափերը ներկայացված են միայն տեղեկատվական նպատակներով, ինչպես նաև վերոնշյալ դրույքաչափերը հաշվարկվում են հետևյալ հիմքով՝ Վարկային միջոցների մասհանումն ամբողջությամբ կատարվում է ֆիքսված դրույքաչափով՝ Ստորագրման ամսաթվին, ֆիքսված դրույքաչափը վարկային միջոցների տրամադրման ժամանակահատվածի համար հավասար է տարեկան երեք ամբողջ քսաներեք տոկոսին (3.23%), ինչպես նաև հաշվի առնելով, որ վերոնշյալ դրույքաչափերի դեպքում հաշվի են առնվում Համաձայնագրի համաձայն ՀՀ կողմից վճարվող միջնորդավճարները և ծախսերը՝ ենթադրելով, որ այդ միջնորդավճարները և ծախսերը կմնան ֆիքսված և կկիրառվեն մինչև Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտը (կետ 4.5),

5.8. ի շահ մյուս Կողմի՝ ընդունել և համաձայնել, որ եթե տեղի ունենա Հրապարակված դրույքաչափի փոխարինման դեպք, Համաձայնագրի տնտեսական հավասարակշռությունը պահպանելու նպատակով Վարկատուն կարող է Հրապարակված դրույքաչափը փոխարինել մեկ այլ դրույքաչափով (**Փոխարինված բազային դրույքաչափ**), որը կարող է ներառել ճշգրտման թույլատրելի սահմանաչափը՝ Կողմերի միջև տնտեսական արժեքի փոխանցումից խուսափելու համար (առկայության դեպքում) (**Ճշգրտման թույլատրելի սահմանաչափ**), և Վարկատուն կորոշի այն ամսաթիվը, որից սկսած՝ Փոխարինված բազային դրույքաչափով և առկայության դեպքում՝ Ճշգրտման թույլատրելի սահմանով պետք է փոխարինվի Հրապարակված դրույքաչափը, ինչպես նաև որոշում կկայացնի Հրապարակված դրույքաչափը Փոխարինված բազային դրույքաչափով փոխարինելու արդյունքում Համաձայնագրի որևէ այլ փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ (կետ 5.2.2),

5.9. ստորագրման ամսաթվից սկսած՝ վեց (6) ամիսը լրանալուց հետո՝ մասհանման ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող Վճարման ամսաթվին և Վարկային սահմանաչափի մնացորդն ամբողջությամբ չեղարկելու դեպքում՝ այդ չեղարկման փաստացի ամսաթվին հաջորդող Վճարման ամսաթվին, Վարկատուին վճարել տարեկան զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) կոմիսիոն վճար՝ յուրաքանչյուր Վճարման ամսա-

թվին այնքան ժամանակ, քանի դեռ Վարկային միջոցների մնացորդը զրոյից բարձր է (կետ 6.1, պարբերություններ 1 և 4),

5.10. ստորագրման ամսաթվից ոչ ուշ, քան չորս (4) ամիս հետո և մինչև առաջին Մասհանումը, Վարկատուին վճարել զրո ամբողջ հինգ տոկոս (0.5%) գնահատման վճար, որը հաշվարկվում է Վարկային միջոցների առավելագույն գումարի նկատմամբ (կետ 6.2),

5.11. արտոնյալ ժամկետը լրանալուց հետո, յուրաքանչյուր Վճարման ամսաթվին, երեսուն (30) կիսամյակային վճարումներով՝ սկսած 2029 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2044 թվականի մարտի 15-ը, Վարկատուին վճարել Վարկային միջոցների մայր գումարը (կետ 7, պարբերություններ 1 և 3),

5.12. մինչև Արտոնյալ ժամկետի ավարտը կանխավճարի ձևով չկատարել Վարկային միջոցների ամբողջական կամ դրա որևէ մասի վճարում (կետ 8.1, պարբերություն 1),

5.13. վճարման ամսաթվին, երբ կատարվում է կանխավճարը, վճարել Կանխավճարի փոխհատուցման ամբողջ գումարը, որը ենթակա է վճարման՝ Համաձայնագրի 9.3 կետի (*Կանխավճարի մասով փոխհատուցումը*) համաձայն (կետ 8.1, պարբերություն 2),

5.14. անմիջապես կանխավճարի ձևով վճարել Վարկային միջոցներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը Վարկատուից ծանուցում ստանալուց հետո, որով Հայաստանի Հանրապետությանը տեղեկացվում է Համաձայնագրի 8.2 կետի 1-ին պարբերությամբ սահմանված իրադարձություններից որևէ մեկի մասին (կետ 8.2, պարբերություն 1),

5.15. եթե Համաձայնագրում փոփոխություն անելու անհրաժեշտություն է առաջանում ՀՀ պահանջի հիման վրա, ապա Վարկատուին հատուցել բոլոր այն ծախսերը (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները), որոնք ողջամտորեն առաջացել են այդպիսի անհրաժեշտությանն արձագանքելու, այն գնահատելու, դրա շուրջ բանակցելու կամ համապատասխանելու համար. այս վճարներն ու ծախսերը կսահմանափակվեն մինչև տասնհինգ հազար եվրո (15.000 եվրո) գումարով՝ առանց Հայաստանի ԱԱՀ-ի (կետ 9.1.1),

5.16. ուղղակիորեն վճարել կամ անհրաժեշտության դեպքում Վարկատուին հատուցել վերջինիս կողմից կատարված կանխավճարի հետ կապված բոլոր ծախսերի և ծախքերի (ներառյալ՝ իրավաբանական ծառայությունների համար վճարները) գումարը՝ կապված Փարիզից Հայաստանի Հանրապետությանը կամ Հայաստանի Հանրապետության հաշվին Վարկատուի հետ համաձայնեցված որևէ վայր դրամական միջոցների փոխանցման հետ, ինչպես նաև Վարկային միջոցների հաշվին վճարման ենթակա բոլոր գումարների մարման հետ կապված

փոխանցման համար գանձվող միջնորդավճարների և ծախքի հետ (կետ 9.1.3),

5.17. Վարկատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո հինգ (5) Բանկային օրվա ընթացքում Վարկատուին վճարել Վարկատուի կողմից կատարված բոլոր այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են որևէ նոր օրենք կամ կանոնակարգ ուժի մեջ մտնելու, որևէ փոփոխության կամ որևէ գործող օրենքի կամ կանոնակարգի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որևէ փոփոխության կամ Ստորագրման ամսաթվից հետո ընդունված որևէ օրենքին կամ կանոնակարգին համապատասխանություն ապահովելու անհրաժեշտության արդյունքում (կետ 9.5, պարբերություն 1),

5.18. Համաձայնագրի 9.6 կետի 1-ին մասի «ա» և «բ» կետերում նախատեսված դեպքում՝ Վարկատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո երեք (3) Բանկային օրվա ընթացքում և ինչպես թույլատրվում է օրենքով, փոխհատուցել Վարկատուին՝ վճարելով փոխարկման արդյունքում կամ դրա հետևանքով առաջացած ծախսի, կորստի կամ պարտավորության գումարը, այդ թվում՝ հետևյալի միջև որևէ ան-համապատասխանության արդյունքում առաջացած գումարը՝ Ա) այն փոխարժեքի, որն օգտագործվել է համապատասխան գումարն առաջին արժույթից երկրորդ արժույթի փոխարկելու համար, և Բ) այն փոխարժեքի կամ փոխարժեքների միջև, որոնք Վարկատուին հասանելի են եղել այդ գումարը ստանալու պահին. վերոհիշյալ պարտավորությունը պայմանավորված չէ Համաձայնագրով նախատեսված՝ ՀՀ որևէ այլ պարտավորությամբ (կետ 9.6, պարբերություն 1),

5.19. Համաձայնագրի 10-րդ կետով (*Հայտարարությունները և երաշխիքները*) սահմանված բոլոր հայտարարություններն ու երաշխիքները կատարել և տալ հօգուտ Վարկատուի՝ Ստորագրման ամսաթվին (կետ 10),

5.20. ապահովել բոլոր հարցերում բոլոր օրենքների ու կանոնակարգերի կատարում, որոնք տարածվում են Հայաստանի Հանրապետության և (կամ) Ծրագրի վրա, մասնավորապես՝ գնումների, շրջակա միջավայրի պահպանության, անվտանգության մասին օրենքներն ու աշխատանքային կիրառելի օրենքները, Արգելված գործելակերպերի կանխարգելումը և պայքարը, ինչպես նաև ապահովել Համաձայնագրով նախատեսված ՀՀ բոլոր պարտավորությունների կատարումը (կետ 11.1),

5.21. Վարկատուին տրամադրել այնպիսի տեղեկություն, որը Վարկատուն կարող է ողջամտության սահմաններում պահանջել՝ կապված ՀՀ արտաքին և ներպետական պարտքերի, ինչպես նաև երաշխավորված վարկի կարգավիճակի հետ (կետ 12.1),

5.22. որևէ ձևով չզիջել կամ չփոխանցել Համաձայնագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կամ դրանցից որևէ մեկը՝ առանց Վարկատուի նախնական գրավոր համաձայնության (կետ 15.5, պարբերություն 1),

5.23. ապահովել, որ ՀՀ կառավարությունը ԶՖԳ-ին տրամադրի մշտադիտարկման գրություն, որտեղ բացատրվում են քաղաքականության գործողությունները, որոնք իրականացվել են քաղաքականության մատրիցայի 2-րդ ենթածրագրով՝ հղում կատարելով ԶՖԳ-ին և Ասիական զարգացման բանկին (ԱԶԲ) տրամադրվող համապատասխան փաստաթղթային ապացույցներին (Հավելված 2, ենթածրագիր 3),

5.24. տրամադրվող բոլոր փաստաթղթերի նկատմամբ կիրառել Հավելված 4-ում ամրագրված նախապայմանները (Հավելված 4):

6. Համաձայնագրի 10.7 կետի համաձայն՝ Ֆրանսիայի իրավունքը՝ որպես Համաձայնագիրը կարգավորող օրենքի ընտրություն, ճանաչվում է և կիրարկվում է ՀՀ իրավասության ներքո գտնվող դատարանների և արբիտրաժային տրիբունալների կողմից, ինչպես նաև ՀՀ իրավասության ներքո ճանաչվում և կիրարկվում է Համաձայնագրի առնչությամբ ֆրանսիական դատարանում կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված ցանկացած վճիռ:

Համաձայնագրի 15.9 «բ» և «գ» կետով սահմանված է, որ Վարկատուն Ծրագրին առնչվող ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ կարող է բացահայտել՝ i) որևէ անձի կամ մարմնի, որին Վարկատուն կարող է զիջել կամ փոխանցել Համաձայնագրով նախատեսված իր բոլոր իրավունքները կամ պարտավորությունները կամ դրանց մի մասը, ii) Ֆրանսիայի պետությանը և մասնավորապես՝ այն նախարարություններին, որոնց Վարկատուն հաշվետու է Վարկատուի գործունեության նպատակներով, iii) որևէ անձի կամ մարմնի՝ պաշտպանության որևէ միջոց ձեռնարկելու կամ Համաձայնագրով Վարկատուի իրավունքները պահպանելու նպատակով, և iv) Համաֆինանսավորողին:

Համաձայնագրի 15.9 «գ» կետով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունը հստակորեն լիազորում է Վարկատուին փոխանակել Ֆրանսիայի Հանրապետության հետ՝ ֆրանսիական կառավարության կայքում հրապարակման համար՝ Միջազգային օժանդակության թափանցիկության նախաձեռնության ցանկացած պահանջով, և հրապարակել Վարկատուի կայքում՝ Ծրագրի և դրա ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես թվարկված է 6-րդ հավելվածում

(Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության կայքում և Վարկատուի կայքում):

Համաձայնագրի 17.1 կետի համաձայն՝ Համաձայնագիրը կարգավորվում է Ֆրանսիայի իրավունքով, իսկ Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ քննարկվում և վերջնականապես լուծվում է արբիտրաժի միջոցով՝ արբիտրաժային վարույթի մեկնարկի օրվա դրությամբ կիրառելի՝ Առևտրի միջազգային պալատի հաշտեցման և արբիտրաժային կանոնների համաձայն, այդ Կանոններին համապատասխան նշանակված մեկ կամ մի քանի արբիտրների կողմից: Արբիտրաժային դրույթը լիարժեք ուժի և գործողության մեջ կմնա, եթե սույն Համաձայնագիրն ուժը կորցրած ճանաչվի կամ դադարեցվի կամ չեղարկվի, ինչպես նաև Համաձայնագրի գործողության ավարտից հետո: Կողմերի՝ Համաձայնագրով նախատեսված պայմանագրային պարտավորությունները չեն կասեցվում, եթե Կողմերից մեկը դատական վարույթ է հարուցում մյուս Կողմի դեմ:

Համաձայնագրի 17.2 կետով սահմանված է, որ ստորագրելով Համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունն անդառնալիորեն հրաժարվում է անձեռնմխելիության բոլոր իրավունքներից՝ կապված իրավազորության կամ կատարման հետ, որոնց վրա նա այլ կերպ կարող էր հիմնվել:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1746

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԹԻՎ CAM 1024 01 C ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1746 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1746 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1746 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում

Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1746 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1024 01 C վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում

ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարա-

նի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով

է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորություններից՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի

քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին»

սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ԵՎ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱ-ՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՉ, ԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի մայիսի 22-ին և մայիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղա-

քականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի օգոստոսի 8-ի N 1221-Ա որոշմամբ հավանություն է տվել 2024 թվականի մայիսի 22-ին և մայիսի 23-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի օգոստոսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2023 թվականի ապրիլի 4-ին ստորագրված՝ «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության վարկ» վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է իննսուներկու միլիոն երեք հարյուր հազար եվրո (€92.300.000) գումար[1]:

2. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի մայիսի 22-ին և 23-ին:

[1] Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունն ստուգվել է Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 30-ի ՍԴՈ-1689 որոշմամբ: Համաձայնագիրը վավերացվել է 2023 թվականի հունիսի 28-ին՝ ՀՕ-194-Ն ՀՀ օրենքով:

3. Համաձայնագրի նպատակներն են Հայաստանում կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման խթանումը, բնապահպանական կառավարման ոլորտը կարգավորող իրավական շրջանակի բարելավումը, մարդկային կապիտալի զարգացումը, հակակոռուպցիոն և արդարադատության ոլորտների արդյունավետության բարձրացումը:

4. Համաձայնագիրը կազմված է նախաբանից, վեց հոդվածից, երկու հավելվածից և մեկ առդիրից:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

5.1. վճարել միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով (հոդված II, բաժին 2.02),

5.2. վճարել պարտավորավճար՝ տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով (հոդված II, բաժին 2.03),

5.3. վճարել տոկոսադրույք, որը Ելակետային տոկոսադրույքն է՝ գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 «ե» բաժնի (հոդված II, բաժին 2.04),

5.4. որոշել Վարկի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի սահմանման ավտոմատ փոխարկումը. համապատասխանաբար չսահմանափակելով Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթները և Հայաստանի Հանրապետության կողմից Փոխարկման ուղեցույցի դրույթներին համապատասխան Բանկին այլ բան չծանուցելու դեպքում Վարկային հաշվից հաջորդական առհանումների նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի բազայի փոփոխումը, որոնց հանրագումարը հավասար է 9.230.000 եվրոյի կամ գերազանցում է այն, այդ գումարի մարման ամբողջ ժամկետի ընթացքում Ընդհանուր պայմանների IV հոդվածի և Փոխարկման ուղեցույցի դրույթներին համապատասխան, Ելակետային տոկոսադրույքի և Լողացող սպրեդի հիման վրա՝ սկզբնական Լողացող տոկոսադրույքից փոխարկել Լողացող տոկոսադրույքի՝ հիմնվելով Ֆիքսված ելակետային տոկոսադրույքի և Լողացող սպրեդի վրա (հոդված II, բաժին 2.05),

5.5. սկսած 2032 թվականի հունիսի 1-ից մինչև 2045 թվականի հունիսի 1-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին և դեկտեմբերի 1-ին վերադարձնել Վարկի մայր գումարը

3.57 % մասնաբաժնով, իսկ 2045 թվականի դեկտեմբերի 1-ին՝ 3.61% մասնաբաժնով (հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և հավելված 2),

5.6. չսահմանափակելով Ընդհանուր պայմանների 5.05 բաժնի դրույթները՝ անհապաղ Բանկին տրամադրել Համաձայնագրի II հոդվածի դրույթներին վերաբերող այն տեղեկությունները, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել (հոդված II, բաժին 2.08),

5.7. հայտարարել Ծրագրի և դրա իրականացման մասով Հայաստանի Հանրապետության պարտավորությունը և այս նպատակով, ինչպես նաև Ընդհանուր պայմանների 5.05 բաժնի նպատակներով՝ Բանկի հետ, ժամանակ առ ժամանակ, կարծիքներ փոխանակել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի և Ծրագրի, ինչպես նաև Համաձայնագրի 1-ին հավելվածի I բաժնում նշված գործողությունների իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ և մինչև կարծիքների փոխանակման այդպիսի յուրաքանչյուր դեպք՝ Բանկի վերանայմանը և մեկնաբանությանը ներկայացնել Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն այնքան մանրամասն, որքան ողջամտորեն պահանջում է Բանկը և չսահմանափակելով Հոդված III 3.01 բաժնի «ա» և «բ» պարբերությունները՝ անհապաղ տեղեկացնել Բանկին ցանկացած իրավիճակի մասին, որի հետևանքով էապես հակառակ ձևով կփոփոխվեն Ծրագրի կամ Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ Համաձայնագրի 1-ին հավելվածի I բաժնում նշված ցանկացած գործողության նպատակները (հոդված III, բաժին 3.01),

5.8. մեկ առհանման տրանշից որևէ առհանում չկատարել, եթե յուրաքանչյուր առհանում չի կատարվում pari passu հիմունքով և հատկացված Վարկի գումարի և հատկացված Ֆինանսավորման արտոնյալ մասի գումարի միջև ութսունվեց տոկոսից (86%) տասնչորս տոկոս (14%) հարաբերակցությամբ, ինչպես նաև, եթե Բանկին չի բավարարում՝ ՀՀ կողմից իրականացվող Ծրագիրը և ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համապատասխանությունը (հավելված 1, բաժին II, կետ «Գ»),

5.9. Ֆինանսավորումը Ֆինանսավորման հաշվից առհանելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում Բանկին հայտնել Ընդհանուր՝ պայմանների 2.03 «ա» բաժնում նշված հաշվին ստացված հստակ գումարը, այն հաշվի տվյալները, որին մուտքագրվելու է Ֆինանսավորման միջոցների

դրամային համարժեքը, գրանցում այն մասին, որ համարժեք գումար է հաշվառվել Հայաստանի Հանրապետության բյուջեի կառավարման համակարգերում, և Ընդհանուր պայմանների 2.03 «ա» բաժնում նշված հաշվի մուտքերի և ծախսերի մասին հաշվետվությունը (հավելված 1, բաժին II, կետ «Դ»),

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի մայիսի 22-ին և մայիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1747

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ԵՎ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՉ, ԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1747 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի մայիսի 22-ին և մայիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1747 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի մայիսի 22-ին և մայիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1747 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը

մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1747 որոշմամբ 2024 թվականի մայիսի

22-ին և մայիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կանաչ, կայուն և ներառական զարգացման քաղաքականության երկրորդ գործառնություն» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական

դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում

կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի տեղակալ Է. Հակոբյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի մայիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամա-

դրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հուլիսի 25-ի N 1138-Ա որոշմամբ հավանություն է տվել 2024 թվականի մայիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հուլիսի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր կամ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի մայիսի 20-ին՝ տնտեսական աճի ներուժի ավելացմանը, աշխատանքի շուկայի արդյունավետության բարձրացմանը և կայուն զարգացմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հնգամյա ծրագրին աջակցելու նպատակով:

2. Ֆինանսների նախարարության՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանք-հիմնավորման համաձայն՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Միջնաժամկետ հեռանկարում բյուջեի աջակցության համար նախատեսված վարկային միջոցների անհրաժեշտությունը, որը նախատեսվում է ստանալ միջազգային ֆինանսական կառույցներից, այդ թվում և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամից, գնահատվում է տարեկան մոտ 400-450 մլն ԱՄՆ դոլար:

3. «Եվրասիական զարգացման բանկ» միջազգային կազմակերպությունը, որն ստեղծվել և գործում է Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության միջև «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» 2006 թվականի հունվարի 12-ին կնքված համաձայնագրի հիման վրա, Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչն է և հանդես է գալիս դրա մասնակիցների անունից և հանձնարարությամբ:

4. Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով՝ Կառավարիչը հիմնադրամի մասնակիցների անունից և նրանց հանձնարարությամբ՝ հիմնադրամի միջոցներից համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 100.000.000 (հարյուր միլիոն) ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական վարկ:

Ֆինանսական վարկի ցանկացած գումարի հատկացումն իրականացվում է ԱՄՆ դոլարով և (կամ) եվրոյով:

Ֆինանսական վարկը տրամադրվում է միջոցների տրամադրման մասին Հայտի հիման վրա՝ մեկ տրանշով՝ 2023 կամ 2024 թվականին՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն ուղղված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության կողմից փաստացիորեն ավարտելուց կախված՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված պայմաններով և կարգով:

5. Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան՝ Համաձայնագրի նպատակներով ՀՀ լիազորված ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարն է և նրա կողմից Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան լիազորված անձը (անձինք):

6. Համաձայնագիրը բաղկացած է դրա անբաժանելի մասը կազմող հավելվածներից՝ Թիվ 1 հավելված. «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմաններ»,

Թիվ 2 հավելված. «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրանշի տրամադրման Հայտի օրինակելի ձև», Թիվ 3 հավելված. «Ֆինանսական վարկի պայմաններ»:

7. Համաձայնագրի Թիվ 1 հավելվածի 6-րդ հոդվածի 6.01 բաժնի «բ» կետի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության Արտաքին պարտքի մասով որևէ պարտատիրոջ մոտ ծագում է Հայաստանի Հանրապետության Պետական ակտիվների առնչությամբ Պահման իրավունք, որով նախատեսվում է Պետական ակտիվների հաշվին այդ պարտատիրոջ պահանջները Կառավարչի պահանջների համեմատ առաջնահերթ կարգով բավարարելը, ապա Կառավարչի կողմից Ստանդարտ պայմանների 10.01 բաժնով նախատեսված կարգով այլ բանի չհամաձայնվելու դեպքում այդ Պահման իրավունքը, հենց դրա առաջացման փաստով պայմանավորված և առանց Կառավարչի ու Հիմնադրամի կողմից լրացուցիչ ծախքերի, հավասարապես և համաչափորեն ճանաչվում է Վարկի գծով բոլոր վճարումների ապահովում:

8. «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում փոփոխությունները և լրացումները, որոնց կատարումը թույլատրվում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» Համաձայնագրին և Ստանդարտ պայմաններին համապատասխան՝ ծանուցում ուղարկելու միջոցով, իրականացվում են միակողմանիորեն և չեն պահանջում մյուս կողմի լիազորված ներկայացուցչի ստորագրությունը և ձևակերպումը՝ Համաձայնագրի Թիվ 1 հավելվածի 10-րդ հոդվածի 10.04 բաժնի «բ» կետի պահանջներին համապատասխան: Այդ փոփոխությունները և լրացումները Համաձայնագրի անբաժանելի մասն են:

9. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

9.1. Ֆինանսական վարկի միջոցներն օգտագործել Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար (հոդված 2, կետ 2.5),

9.2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Կառավարչի համար ընդունելի պայմաններով բացել և վարել վարկի արժույթով առանձին հաշիվ (այսուհետ՝ «Հաշիվ»)՝ ապահովելով որևէ հայցից, բռնագրավումից, մորատորիումից և ոչ նպատակային

օգտագործումից Հաշվի վրա առկա միջոցների պատշաճ պաշտպանությունը (հոդված 2, կետ 2.2),

9.3. Կառավարչին գումարները վճարել Ֆինանսական վարկի սպասարկման և մարման հաշվին («Վարկի գծով վճարումներ»)՝ Ֆինանսական վարկի Պայմաններին համապատասխան (Համաձայնագրի թիվ 3 հավելված)՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «ա», «գ» և «դ» կետերի, ինչպես նաև 3.04-3.06 բաժինների պահանջները՝ չկիրառելով Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «բ» կետը (հոդված 3, կետ 3.1),

9.4. կատարել Ծրագիրը՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի պահանջները (հոդված 4, կետ 4.1, պարբերություն 1),

9.5. ապահովել Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «ա» - «գ» կետերը՝ կիրառելով Ծրագրում նշված ցուցանիշները (հոդված 4, կետ 4.2),

9.6. Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «գ» կետով նախատեսված հաշվետվությունները Կառավարչին ներկայացնել Ծրագրի իրագործման ամբողջ ժամանակահատվածում, այդ թվում Կառավարչին ներկայացնել Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.3 կետով նախատեսված հաշվետվությունները (հոդված 4, կետ 4.3),

9.7. ապահովել, որ Հաշվի վրա դրամական միջոցների շարժի մասին վերջնական հաշվետվությունը ենթարկվի աուդիտորական ստուգման՝ Կառավարչի կողմից հավանության արժանացած անկախ աուդիտորի կողմից և Հայաստանի Հանրապետության հաշվին՝ միանվագ, Ֆինանսական վարկի առաջին միջոցները Հաշվին մուտքագրելու ամսաթվից մինչև այն ամսաթիվն ընկած ժամանակահատվածի համար, որի ընթացքում ավարտվել է Հայաստանի Հանրապետության կողմից Հաշվից միջոցների օգտագործումը (հոդված 4, կետ 4.4),

9.8. Ծրագրի իրագործման մասին վերջնական հաշվետվությունը ներկայացնել Ստանդարտ պայմանների 4.02 բաժնի «դ» կետի դրույթներին համապատասխան (հոդված 4, կետ 4.5),

9.9. Կառավարչի հետ փոխգործակցությունն իրականացնել Ստանդարտ պայմանների 4.03 և 4.04 բաժինների համաձայն (հոդված 4, կետ 4.6),

9.10. գրավոր հարցման հիման վրա՝ Կառավարչին տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (հոդված 4, կետ 4.7),

9.11. կատարել Ստանդարտ պայմանների 6.01 բաժնի դրույթները՝ Ֆինանսական վարկի ապահովման մասով (հոդված 4, կետ 4.9),

9.12. հիմնական պարտքի վերադարձման, Տոկոսների վճարման և (կամ) Համաձայնագրով այլ վճարումների գծով պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում Կառավարչին վճարել մարումն ուշացնելու համար տուժանք՝ յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց պարտավորության ամբողջ գումարի 0,01%-ի (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական տոկոս) չափով, որը հաշվեգրվում է Ստանդարտ պայմանների 7.06 բաժնին համապատասխան (հոդված 5, կետ 5.2),

9.13. Կառավարչի կողմից ֆինանսական վարկի միջոցները հատկացնելու համար Կառավարչին ներկայացնել հարցում, որը պարունակում է Համաձայնագրի Թիվ 1 հավելվածի II հոդվածի 2.01 բաժնում նախատեսված փաստաթղթերը (այսուհետ՝ Միջոցների հատկացման հայտ), որոնց ձևը և բովանդակությունը ներկայացնել այնպես, որ բավարար լինեն, որպեսզի Կառավարիչը կարողանա համոզվել, որ Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի ստանալու այն գումարը, որը նա նշել է Միջոցների հատկացման հայտում, և Միջոցների հատկացման հայտում նշված գումարը Հայաստանի Հանրապետության կողմից օգտագործվելու է բացառապես «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով նախատեսված նպատակներով, ինչպես նաև Միջոցների հատկացման հայտը կազմել և ստորագրել Հայաստանի Հանրապետության անունից՝ Հայաստանի Հանրապետության լիազորված անձի կողմից (Հավելված 1, հոդված II, բաժին 2.01),

9.14. Ֆինանսական վարկի սպասարկման և մարման հաշվին վճարել գումարներ (այսուհետ՝ Վարկի գծով վճարումներ) Կառավարչին՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի դրույթներին համապատասխան, այդ թվում՝ Համաձայնագրի Թիվ 1 հավելվածի III հոդվածի 3.01 բաժնում նշված Տոկոսները, Պահուստավորման համար միջնորդավճարը, Հիմնական պարտքը, «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով և Ստանդարտ պայմաններով նախատեսված այլ վճարումներ՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համապատասխան համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով (Հավելված 1, հոդված III, բաժին 3.01),

9.15. Համաձայնագրի Թիվ 1 հավելվածի III հոդվածի 3.02 բաժնի «ա» կետում թվարկված գումարները վաղաժամկետ վերադարձնելու

համար՝ վաղաժամկետ մարում իրականացնելու Հայաստանի Հանրապետության մտադրության մասին Կառավարչին գրավոր ծանուցում ուղարկել վաղաժամկետ մարման ենթադրվող ամսաթվից առնվազն քառասունհինգ օր առաջ և վաղաժամկետ մարման ամսաթվի դրությամբ վճարած լինել Վարկի գծով՝ այդ ամսաթվի դրությամբ վճարման ենթակա բոլոր վճարումները (Հավելված 1, հոդված III, բաժին 3.02, կետ «բ»),

9.16. Վարկի գծով վճարումները կատարել «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով սահմանված ժամկետներում (Հավելված 1, հոդված III, բաժին 3.04, պարբերություն 1),

9.17. Վարկի գծով բոլոր վճարումները կատարել առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված որևէ սահմանափակման և առանց Հայաստանի Հանրապետության կողմից կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գանձվող որևէ հարկի պակասեցման և հաշվեգրման (Հավելված 1, հոդված III, բաժին 3.06, կետ «բ»),

9.18. Վարկի գծով բոլոր վճարումները կատարել առանց Հայաստանի Հանրապետության կողմից հակընդդեմ պահանջների հաշվանցման, ցանկացած տեսակի պակասեցումների կամ պահումների իրավունքի, իսկ այդ վճարումը հարկերի, թղթակցային բանկերի միջնորդավճարների դիմաց պակասեցումներով կամ պահումներով, կամ այլ հիմունքներով կատարելու դեպքում՝ վճարվող գումարն ավելացնել այնքան, որ անհրաժեշտ պակասեցումից կամ պահումից հետո Կառավարիչն ստանա այն գումարին հավասար գումար, որը նա կստանար, եթե այդ պակասեցումները կամ պահումները չարվեին կամ չպահանջվեին (Հավելված 1, հոդված III, բաժին 3.06, կետեր «դ» և «ե»),

9.19. ապահովել, որ Ծրագիրն իրագործվի անհրաժեշտ բարեխղճությամբ և արդյունավետությամբ, պատշաճ վարչական, տեխնիկական, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական նորմերին ու գործելակերպին համապատասխան, «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի և Ստանդարտ պայմանների դրույթներին համապատասխան (Հավելված 1, հոդված IV, բաժին 4.01, կետ «ա»),

9.20. ապահովել Ծրագրի ֆինանսավորման համար դրամական միջոցների, ինչպես նաև Ծրագրի արդյունավետ իրագործման համար պահանջվող տեխնիկական միջոցների, սարքավորումների, ծառայությունների և այլ ռեսուրսների ժամանակին տրամադրումը՝

Ծրագրի արդյունավետ իրագործումն ապահովող ժամկետներում (Հավելված 1, հոդված IV, բաժին 4.01, կետ «բ»),

9.21. ապահովել Ծրագրի իրագործման ընթացքի և դրա նպատակների ապահովման մշտական մոնիթորինգ և գնահատում՝ Կառավարչի համար ընդունելի ցուցիչների կիրառմամբ (Հավելված 1, հոդված IV, բաժին 4.02, կետ «ա»),

9.22. Կառավարչի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռել այցելելու Հայաստանի Հանրապետության տարածքի ցանկացած մաս՝ Ծրագրի իրագործման հետ կապված կամ Ֆինանսական վարկին առնչվող նպատակներով և ստանալու ու ստուգելու Հայաստանի Հանրապետության կողմից «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրով ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման հետ կապված հաշվառման փաստաթղթերը (Հավելված 1, հոդված IV, բաժին 4.04),

9.23. «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Կառավարչի հարցմամբ վերջինիս ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների մասին Կառավարչի կողմից հիմնավորված կերպով պահանջվող ամբողջ տեղեկատվությունը՝ ներառելով Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի և պետական պարտքի մասին տեղեկատվությունը, սակայն չսահմանափակվելով դրանով, ինչպես նաև նմանատիպ տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության սուբյեկտների, քաղաքական և վարչական մարմինների, հաստատությունների և ցանկացած կազմակերպության մասին, որոնք համապատասխանում են Համաձայնագրի Թիվ 1 հավելվածի V հոդվածի 5.01 բաժնի «բ» կետի պահանջներին (Հավելված 1, հոդված V, բաժին 5.01),

9.24. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը Հայաստանի Հանրապետության ակտիվների հատկացման, իրացման կամ բաշխման մասով առաջնահերթություն չունենա Հիմնադրամի միջոցների հաշվին ստացած Ֆինանսական վարկերի գծով առկա պարտքի նկատմամբ (Հավելված 1, հոդված VI, բաժին 6.01, կետ «ա»),

9.25. ամբողջությամբ՝ ինքնուրույն փոխհատուցել ցանկացած չնախատեսված ծախս և միջնորդավճար, որոնք կարող են առաջանալ Ֆինանսական վարկի միջոցները Հայաստանի Հանրապետությանը

փոխանցելու, Հիմնական պարտքը վերադարձնելու և Կառավարչին վարձատրություն տրամադրելու հետ կապված (Հավելված 1, հոդված VI, բաժին 6.01, կետ «գ»),

9.26. Կառավարչի միջոցները և գույքը, այդ թվում և Ֆինանսական վարկի գումարը, ազատել Հայաստանի Հանրապետության տարածքում ամեն տեսակի սահմանափակումներից, կարգադրագրերից և մորատորիումներից (Հավելված 1, հոդված VI, բաժին 6.01, կետ «դ»),

9.27. «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին համապատասխան՝ Բանկին հասանելիք՝ Վարկի գծով վճարումների մարման պարտավորությունների կատարումն ուշացնելու դեպքում Կառավարչին վճարել մարման ուշացման համար տուժանք՝ «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում նշված չափով, որը հաշվարկվում է ուշացման յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց պարտավորության ամբողջ գումարի չափով՝ այն ամսաթվին հաջորդող օրվանից, երբ այդ վճարումը պետք է կատարվի, մինչև Հայաստանի Հանրապետության ժամկետանց պարտավորության գումարը Կառավարչի հաշվին մուտքագրելու ամսաթիվը (Հավելված 1, հոդված VII, բաժին 7.06),

9.28. Կառավարչին տրամադրել այն անձի կամ անձանց լիազորությունների բավարար ապացույցները, որոնք Հայաստանի Հանրապետության անունից կատարելու են ցանկացած այնպիսի գործողություն կամ ձևակերպելու են ցանկացած այնպիսի փաստաթուղթ, որոնց կատարումը կամ ձևակերպումը Կառավարիչը պահանջում կամ թույլատրում է «Ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրին համապատասխան, որի կողմ է նա, ինչպես նաև տրամադրել Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի կողմից լիազորված անձանց այն ստորագրությունների նմուշները, որոնք հաստատված են Հայաստանի Հանրապետության լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ (Հավելված 1, հոդված X, բաժին 10.03):

10. Ծրագիրը գործում է մինչև դրանում ներառված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները կատարելու պահը կամ Հիմնադրամի խորհրդի կողմից նոր Ծրագրին հավանություն տալու պահը:

11. Համաձայնագրով վեճերը կարգավորվում են Ստանդարտ պայմանների 8.03 բաժնին համապատասխան՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 8.01 և 8.02 բաժիններով նախատեսված պարտավորությունների կատարմանը Հայաստանի Հանրապետությանը հարկադրելու մասով Կառավարչի հնարավորությունների և իրավունքների մասին դրույթները՝ բացառությամբ Ստանդարտ պայմանների 8.01 կետի «գ» ենթակետի:

Ֆինանսական վարկի միջոցներն օգտագործելու Ստացողի իրավունքը կասեցնելը, չեղարկելը, Ֆինանսական վարկի գծով Հիմնական պարտքը վաղաժամկետ մարելու մասին պահանջ ներկայացնելը Կառավարչի կողմից իրականացվում են Ստանդարտ պայմանների VII հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով՝ դրանում նշված հետևանքներով:

Համաձայնագրի և Կողմերի՝ Համաձայնագրով նախատեսված բոլոր պարտավորությունների գործողությունը դադարում է Ստանդարտ պայմանների 9.04 բաժնի դրույթներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի մայիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1748

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1748 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2024 թվականի մայիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1748 որոշմամբ որոշել է, որ 2024 թվականի մայիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1748 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը

մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴՈ-1748 որոշմամբ 2024 թվականի մայիսի

20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական

դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել

է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ

Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2024թ.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 26 սեպտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 1399-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի սեպտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ կանոնակարգը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) ստորագրվել է 2024 թվականի օգոստոսի 30-ին՝ *Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատումն իրականացնելու նպատակով:*

Հայաստանի Հանրապետության կողմից Կանոնակարգն ստորագրել է փոխվարչապետ Մ. Գրիգորյանը՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի նախագահը: Կանոնակարգի ստորագրման առաջարկությանը Կառավարությունը հավանություն է տվել 2024 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1225-Ա որոշմամբ: Վարչապետի՝ Կանոնակարգն ստորագրելու լիազորագիրը (Լ-28) փոխվարչապետ Մ. Գրիգորյանին տրվել է 2024 թվականի օգոստոսի 19-ին:

1.2. Արտաքին գործերի նախարարության՝ Կանոնակարգի վավերացման նպատակահարմարության մասին տեղեկանքի և Սահմանադրական դատարանում սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝

1.2.1. Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջպետական սահմանի սահմանազատման հարցով հանձնաժողով ստեղծելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել 2021 թվականի նոյեմբերի 26-ին Սոչիում՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների եռակողմ հանդիպման ընթացքում, որով Կողմերը պայմանավորվել են քայլեր ձեռնարկել Հայաստան-Ադրբեջան սահմանային կայունության և անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ և ստեղծել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման հարցերով երկկողմ հանձնաժողով:

1.2.2. 2022 թվականի ապրիլի 6-ին Բրյուսելում Հայաստանի Հանրապետության վարչապետի, Եվրոպական խորհրդի նախագահի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի եռակողմ հանդիպման շրջանակներում Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնել են մինչև 2022 թվականի ապրիլի վերջ ստեղծել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների սահմանազատման հարցերով երկկողմ հանձնաժողով, որին վերապահված կլինի նաև սահմանի երկայնքով անվտանգություն և կայունություն ապահովելու լիազորություն:

1.2.3. 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում կայացած «Եվրոպական քաղաքական համայնքի» առաջին հանդիպման շրջանակներում Ֆրանսիայի Հանրապետության նախագահի և Եվրոպական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ադրբեջանի Հանրապետության նախագահի միջև տեղի ունեցած հանդիպմանը Հայաստանն ու Ադրբեջանը հաստատել են իրենց հանձնառությունը Միավորված

ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրությանը և 1991 թվականի Ալմա Աթայի հռչակագրին, որոնց միջոցով Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Կողմերը հաստատել են, որ դա հիմք կհանդիսանա սահմանազատման հարցերով հանձնաժողովների աշխատանքների համար:

1.3. Վարչապետի՝ 2022 թվականի մայիսի 23-ի թիվ 570-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովը և հաստատվել է դրա անհատական կազմը:

Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2154-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի (այսուհետ միասին՝ Հանձնաժողովներ) միջև նիստերի և համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման և անցկացման աշխատակարգը:

2024 թվականի ապրիլի 19-ի՝ Հանձնաժողովների 8-րդ հանդիպման արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովները պայմանավորվածություն են ձեռք բերել, որ սահմանազատման գործընթացում կառաջնորդվեն 1991 թվականի Ալմա Աթայի հռչակագրով, և դրանով սահմանված հիմնարար սկզբունքին համապատասխան սահմանազատման գործընթացի սկզբնական փուլում նախնական համաձայնեցրել են սահմանագծի համապատասխան հատվածների անցումը՝ Խորհրդային Միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող իրավաբանորեն հիմնավորված միջհանրապետական սահմանին համապատասխանեցնելու նպատակով: Հանձնաժողովները պայմանավորվել են նաև Ալմա Աթայի հռչակագրով սահմանված հիմնարար սկզբունքն ամրագրել Կանոնակարգում:

2024 թվականի մայիսի 15-ին Հանձնաժողովների 9-րդ հանդիպման արդյունքում Հանձնաժողովների միջև ստորագրված արձանագրության համաձայն՝ ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի 1976 թվականի տեղագրական քարտեզի, որը հերթապահության ընթացակարգ է անցել 1979 թվականին, Կողմերը համաձայնեցրել են անմիջականորեն Բաղանիս (ՀՀ) – Բաղանիս Այրում (ԱՀ), Ոսկեպար (ՀՀ) – Աշաղը Ասկիպարա (ԱՀ), Կիրանց (ՀՀ) – Խեյրիմլի (ԱՀ) և Բերքաբեր (ՀՀ) –

Կըզըլ Հաջիլի (ԱՀ) բնակավայրերի միջև սահմանագծի հատվածների համատեղ կազմված Արձանագրություն-նկարագրությունը:

1.4. Սահմանադրական դատարանում սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրության մեջ, մասնավորապես, նշված է, որ պետական սահմանի սահմանազատումն ու սահմանագծումը Հայաստանի Հանրապետության համար ունեն անվտանգային նշանակություն, և այդ գործընթացում Հայաստանն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության անվտանգության և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների ապահովման, սահմանային հարցերի խաղաղ լուծման սկզբունքներով:

Կանոնակարգով, մասնավորապես, նախատեսվում է սահմանազատման աշխատանքների իրականացման կազմակերպում և դրանց շրջանակներում համապատասխան ուղեցույցների, փաստաթղթերի ընդունում, պետական սահմանագծի անցման Արձանագրություն-նկարագրության, համապատասխան մասշտաբի սահմանազատման քարտեզի կազմում, սահմանազատման փորձագիտական խմբերի գործունեության իրականացում, սահմանազատման փաստաթղթերի ձևակերպում և հրատարակում:

Համաձայն Կանոնակարգի՝ սահմանազատման գործընթացում Հանձնաժողովներն օգտագործում են բոլոր վերաբերելի քարտեզագրական փաստաթղթերը, ինչպես նաև բոլոր նորմատիվ իրավական և իրավաբանորեն հիմնավորված այլ փաստաթղթերը: Ընդ որում՝ Ալմա Աթայի հռչակագրով առաջնորդվելու հիմնարար սկզբունքը կանխորոշում է վերաբերելի փաստաթղթերի շրջանակը, քանի որ Ալմա Աթայի հռչակագրին համահունչ այդ փաստաթղթերը պետք է լինեն Խորհրդային Միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող և իրավաբանորեն հիմնավորված փաստաթղթերը և քարտեզները, որոնք արտահայտել են Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև առկա վարչական սահմանը:

Կանոնակարգով նախատեսված կառուցակարգերի կիրառմամբ հնարավորություն կստեղծվի երկկողմ մակարդակով ամրագրելու Հայաստանի պետական սահմանի միջազգային-իրավական կարգավիճակը:

Կանոնակարգը և դրա հիման վրա ընդունվող փաստաթղթերը լրացնում են Հանձնաժողովների գործունեության իրավական հիմքերը, որոնք ուղղված են սահմանազատման աշխատանքների բնականոն ընթացքին:

Միաժամանակ, Կանոնակարգով սահմանվում են սահմանամերձ բնակավայրերի անվտանգության ապահովման, սահմանամերձ տարածքների բնակիչների համար տնտեսական գործունեության պայմանների ստեղծման և այլ նպատակներով լրացուցիչ մեխանիզմների կիրառման հնարավորություններ (մասնավորապես՝ սահմանագծի անցման օպտիմալացման վերաբերյալ կարգավորումներով):

Կարգավորվում են նաև հետագայում Հանձնաժողովների աշխատանքների արդյունքում երկու պետությունների միջև կնքվելիք՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի մասին պայմանագրին առնչվող ընթացակարգային հարցերը, որում Հայաստանի Հանրապետության պետական սահմանի միջազգային իրավական հիմքերի ամրագրումը Հայաստանի Հանրապետության անվտանգության ամրապնդման, ինչպես նաև սահմանների անքակտելիության և տարածքային ամբողջականության ապահովման իրավական կարևոր երաշխիք է:

Կանոնակարգը կայուն մեխանիզմներ, համապատասխան գործիքակազմ, ինչպես նաև ինստիտուցիոնալ հիմք է ստեղծում երկու պետությունների միջև սահմանային հարցերը կարգավորելու համար:

2024 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ ադրբեջանական կողմը չի ավարտել Կանոնակարգի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

1.5. Սույն գործով զեկուցող դատավորների՝ Սահմանադրական դատարանում սույն գործով Կառավարության ներկայացուցչին ուղղված՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴԴ-35 և ՍԴԴ-36 գրություններին ի պատասխան՝ 2024 թվականի սեպտեմբերի 16-ին, 17-ին, 18-ին, 23-ին և 24-ին Սահմանադրական դատարան են մուտքագրվել պատասխան (ի լրումն) գրությունները, որոնց կից Սահմանադրական դատարանին են տրամադրվել պահանջված փաստաթղթերը, նյութերը և տեղեկությունները, մասնավորապես՝ վարչապետի կողմից փոխվարչապետ Մ. Գրիգորյանին 2024 թվականի օգոստոսի 19-ին տրված՝ Կանոնակարգն ստորագրելու լիազորագիրը (Լ-28), Կանոնակարգի ռուսերեն բնօրինակի պատճենը, արդարադատության նախարարության կողմից տրամադրված «ՀՀ ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում առկա պահանջված արխիվային նյութերի էլեկտրոնային պատճենները:

1.6. Կանոնակարգի 1-ին հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ ելնելով անհրաժեշտությունից՝ Հանձնաժողովներն իրենց աշխատանքներում ներգրավում են փորձագետների և մասնագետների:

1.7. *Կանոնակարգով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.*

1.7.1. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովը (այսուհետ՝ ՀՀ հանձնաժողով) մյուս կողմի Հանձնաժողովի հետ համաձայնեցված կազմակերպի ու վերահսկի տիեզերալուսանկարահանման և օդալուսանկարահանման, գեոդեզիական, կադաստրային և քարտեզագրական աշխատանքների իրականացումը, տեղանքում սահմանագծի անցման հատվածների տեղազննման և հետազոտման աշխատանքների, ինչպես նաև սահմանազատման իրականացման հետ կապված այլ աշխատանքների (սահմանազատման աշխատանքներ) կատարումը (Հոդված 2, կետ 2).

1.7.2. ապահովել, որ ՀՀ հանձնաժողովը սահմանազատման աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակի համապատասխան տիեզերալուսանկարահանման և օդալուսանկարահանման, քարտեզագրական և գեոդեզիական նյութերը՝ Կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանված պետական սահմանի սահմանազատման քարտեզի (սահմանազատման քարտեզ) ստեղծման նպատակով (Հոդված 2, կետ 3).

1.7.3. ապահովել, որ ՀՀ հանձնաժողովը մշակի, համաձայնեցնի և ընդունի հետևյալ փաստաթղթերը.

1) սահմանազատման փորձագիտական խմբերի աշխատանքի կարգի մասին ուղեցույցը.

2) սահմանազատման քարտեզի ստեղծման մասին ուղեցույցը.

3) սահմանազատման քարտեզի վրա հայկական աշխարհագրական անվանումներն ադրբեջաներենով և ադրբեջանական աշխարհագրական անվանումները հայերենով արտացոլելու կարգի մասին ուղեցույցը.

4) պետական սահմանագծի անցման արձանագրություն-նկարագրություն կազմելու կարգի մասին ուղեցույցը.

5) սահմանազատման փաստաթղթերի ձևակերպման և հրատարակման կարգի մասին ուղեցույցը (Հոդված 2, կետ 4).

1.7.4. ապահովել սահմանազատման ընթացքում ՀՀ հանձնաժողովի կողմից սահմանազատման փորձագիտական խմբ(եր)ի ձևավորումը, որոնք տեղանքում կիրականացնեն սահմանազատման համալիր միջոցառումներ, և աշխատանքների արդյունքներով կկազմվեն փաստաթղթեր՝ ՀՀ հանձնաժողովին ներկայացնելու համար (Հոդված 3, կետ 1, ենթակետ 1).

1.7.5. ապահովել սահմանազատման ընթացքում ՀՀ հանձնաժողովի կողմից սահմանազատման փորձագիտական խմբ(եր)ի գործունեության

ղեկավարումն ու վերահսկողությունը, այդ խմբ(եր)ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրումը, ստուգումը և ընդունումը (Հոդված 3, կետ 1, ենթակետեր 2, 3).

1.7.6. հոգալ ՀՀ հանձնաժողովի ծախսերը, ընդ որում՝ հատուկ դեպքերում ծախսերի հարցը ենթակա է առանձին համաձայնեցման (Հոդված 3, կետ 2).

1.7.7. ապահովել ՀՀ հանձնաժողովի կողմից սահմանագծի առանձին համաձայնեցված հատվածներով/հատվածամասերով սահմանազատման աշխատանքների իրականացումը, յուրաքանչյուր այդպիսի հատվածի/հատվածամասի համար սահմանագծի անցման նկարագրության կազմումը, որը մինչև սահմանազատման գործընթացի ամբողջական ավարտը կհամարվի համաձայնեցված (Հոդված 5, կետ 1).

1.7.8. ապահովել սահմանազատման համալիր աշխատանքների կատարման արդյունքներով ՀՀ հանձնաժողովի կողմից ամբողջ պետական սահմանագծի անցման Արձանագրության-նկարագրության և վերջինիս կից՝ Կանոնակարգի 5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերի կազմումը. անհրաժեշտության դեպքում՝ ի լրումն հիշյալ փաստաթղթերի՝ կարող են ավելացվել նաև սահմանազատման համալիր աշխատանքների կատարման ընթացքում պատրաստված այլ նյութեր (Հոդված 5, կետեր 2, 5):

1.8. Կանոնակարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ սահմանազատման աշխատանքներն իրականացնելիս Հանձնաժողովները կարող են դիտարկել սահմանագծի անցման օպտիմալացման հնարավորություններ և համաձայնեցնել գործընթացի չափանիշներն ու ձևերը հետևյալ նպատակներով՝

1) սահմանամերձ բնակավայրերի անվտանգության ապահովում,

2) սահմանամերձ տարածքների բնակիչների համար իրենց ավանդական տնտեսական գործունեության համար պայմանների ստեղծում,

3) ինժեներական, էներգետիկ, տրանսպորտային, մելիորացիոն և այլ ենթակառուցվածքների անդրսահմանային օբյեկտների, արգելոցների, ազգային պարկերի գործունեության ապահովում, էկոլոգիական և բնապահպանական գործունեության պահպանում, ինչպես նաև ջրային ռեսուրսների օգտագործում,

4) պաշտամունքային նշանակության օբյեկտների, գերեզմանատների, մշակութային և պատմական ժառանգության պահպանություն,

5) ոլորապտույտ գծերի ուղղում,

6) սահմանագծի անցում բնական աշխարհագրական օբյեկտներով և ռելիեֆի տարրերով:

1.9. Կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն՝ Կանոնակարգում փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են Կանոնակարգի անբաժանելի մասը կազմող արձանագրություններով և ուժի մեջ են մտնում Կանոնակարգի 7-րդ հոդվածին համապատասխան:

1.10. Կանոնակարգի 7-րդ հոդվածին համապատասխան՝ այն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության կողմից՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրը և գործում է մինչև սահմանազատման աշխատանքների ամբողջական ավարտը:

Կանոնակարգն ստորագրված է երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը՝ հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Կանոնակարգի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում կիրառվում է ռուսերենով կազմված տեքստը:

2. Սույն գործով պարզման ենթակա հանգամանքները

1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված (բնագիրը Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1990 թվականի օգոստոսի 24-ին) Հայաստանի անկախության մասին հռչակագիրը (այսուհետ նաև՝ Հռչակագիր) հիշատակված է 1995 թվականի հուլիսի 5-ին Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացված համաժողովրդական հանրաքվեով ընդունված Սահմանադրության նախաբանում հետևյալ շարադրանքով՝ «*Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, (…)*»:

Հաշվի առնելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշումը, որը հիշատակված է Հռչակագրի նախաբանում, և Հռչակագրի՝ Սահմանադրության բովանդակության վրա հնարավոր ազդեցության հարցի վերաբերյալ մինչ այսօր Սահմանադրական դատարանի դոկտրինալ դիրքորոշման բացակայությունը, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե որքանով է Կանոնակարգով նախատեսված՝ Հայաստանի

Հանրապետության տարածքի որոշման հիմքում դրված սկզբունքը (1991 թվականի Ալմա Աթայի հռչակագրի իմաստով՝ «*գոյություն ունեցող սահմաններ*») համապատասխանում Սահմանադրությանը:

3. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

3.1. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է Սահմանադրության նախաբանի նշանակությանը և Սահմանադրության դրույթների մեկնաբանության հարցում դրանում ամրագրված դրույթների ուղենշային կարևորությանը (ՍԴՈ-1590, ՍԴՈ-1680):

Մասնավորապես՝ 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ անդրադառնալով Սահմանադրության անփոփոխ դրույթների իրավական բովանդակության շրջանակին՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Սահմանադրության անփոփոխ դրույթների շարքին անխուսափելիորեն դասվում է նաև Սահմանադրության նախաբանը: Սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է.

«5.1. (...) Սահմանադրության կայունությունը ժամանակակից սահմանադրական համակարգերի կարևորագույն հատկանիշներից է, որը նաև սահմանադրականության ամրապնդման ու զարգացման կարևոր գրավական է: Ընդ որում, Սահմանադրության կայունությունն ապահովվում է Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքների ու արժեքների անփոփոխությունն ապահովող նորմերի կայունությամբ՝ անկախ Սահմանադրության տեքստում փոփոխությունների կատարման հաճախականությունից:

Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքների ու արժեքների արդյունավետ պահպանության և պաշտպանության նկատառումներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անկախ Սահմանադրության տեքստի փոփոխությունների ծավալից, փոփոխության իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակից, զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում Սահմանադրության՝ որպես հիմնարար կարգավորչի դինամիկ կայունությունը հնարավոր է ապահովել դրա նորմերի աստիճանակարգության կանոնների պահպանմամբ:

5.2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրությամբ ամրագրված դրույթներն ըստ դրանց ընդունող սուբյեկտների իրավասության դասակարգել հետևյալ խմբերի.

ա) Սահմանադրության նախաբանը, 1-3-րդ և 203-րդ հոդվածները՝ որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթներ,

(. . .)

Սահմանադրական դրույթների փոփոխման կարգերի տարբերակման նպատակներն են ապահովել Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ հայ ժողովրդի սահմանած անփոփոխ դրույթներում ամրագրված արժեքների և սկզբունքների գերակայությունը, Սահմանադրության ներքին կայունությունը, Սահմանադրության դրույթների մեկնաբանությունների կանխատեսելիությունը, հնարավոր ներքին կոլիզիաների կանխումը, իսկ դրանց բացահայտման դեպքում՝ լուծումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության անփոփոխելի դրույթներն այն հիմնարար և կենտրոնական առանցքն են, որի հիման վրա և շուրջ ձևավորվել և զարգանալու է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը»:

Զարգացնելով այս դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս եզրահանգման հիմքում դրված է այն նկատառումը, որ Սահմանադրությամբ որևէ դրույթին անփոփոխելիության որակով օժտելը վերաբերում է ոչ միայն դրա շարադրանքին, այլև համապատասխան անփոփոխ դրույթի ողջ բովանդակությանը, որի բացահայտման համար ուղենշային նշանակություն ունի Սահմանադրի կողմից տվյալ դրույթի սահմանման նպատակը: Վերջինս առանցքային նշանակություն ունի համապատասխան դրույթի նպատակային մեկնաբանման մեթոդի կիրառման համար և ինքնին հանդիսանում է այդ մեթոդով սահմանադրական դրույթի մեկնաբանման որոշիչ ելակետը: Հետևաբար՝ Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման եզրահանգման բերումով չէ, որ Սահմանադրության նախաբանն օժտվել է անփոփոխելիության որակով: Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության որակն ուղղակիորեն բխել է Սահմանադրությամբ ամրագրված անփոփոխ դրույթների սահմանման համար Սահմանադրի հետապնդած նպատակներից, որոնք ամրագրվել են Սահմանադրության նախաբանում, որով և վերածվել են տվյալ անփոփոխ դրույթի իրավական բովանդակության բաղադրիչի: Այսինքն՝ Սահմանադրության նախաբանն անփոփոխ դրույթի որակով օժտված է ուղղակիորեն Սահմանադրի կողմից՝ նախաբանում ամրագրված նպատակների համար Սահմանադրության անփոփոխ դրույթների թե՛ սահմանման, թե՛ դրանց անփոփոխելիության որակով օժտելու բերումով: Սահմանադրական դատարանը ո՛չ իրավասու է ինքն իրականացնել Սահմանադրին վերապահված այս բացառիկ լիազորությունը, ո՛չ էլ Սահմանադրության գերակայությունն ապահովելու նպատակով սահմանադրական արդարադատություն իրականացնելիս կարող է

հանդուրժել Սահմանադրին վերապահված բացառիկ այս լիազորության իրականացումը որևէ այլ սուբյեկտի կողմից:

Իր անփոփոխելիության հատկությամբ Սահմանադրության նախաբանը, ինչպես նաև Սահմանադրության մյուս անփոփոխ դրույթները Սահմանադրության կառուցվածքում ձեռք են բերել Սահմանադրության մյուս նորմերի նկատմամբ գերակայության և վերջիններիս մեկնաբանման համար ուղղորդիչ նշանակության հատկություններ: Այլ խոսքով՝ Սահմանադրության ներքին աստիճանակարգության մեջ անփոփոխ դրույթները դասվում են ամենաբարձր աստիճանին, որն իր մեջ ունի նաև Սահմանադրությունն իր ամբողջության մեջ և սահմանադրական յուրաքանչյուր դրույթի մեկնաբանման համար գործնական իրավակիրառ նշանակություն:

Վերը նշված որակական հատկանիշներով հանդերձ՝ Սահմանադրության անփոփոխ դրույթները (պայմանավորված իրենց անփոփոխելիության որակով) ունեն հստակ արտահայտված մեկ այլ՝ սույն գործով քննության համար նշանակություն ունեցող առանցքային հատկանիշ. այդ դրույթները Սահմանադրի կողմից իր ինքնիշխան իրավազորության շրջանակում լուծման ենթակա հարցերի շրջանակի՝ Սահմանադրի կողմից սահմանափակման (ինքնասահմանափակման) կամքի արտահայտությունն են: Մասնավորապես՝ անփոփոխ դրույթների ողջ նպատակային նշանակությունը դրանց անփոփոխելիությունը և ամենաբարձր աստիճանի կայունությունն ապահովելն է՝ որպես սահմանադրական արժեքանության կայունության, հարատևության և անմիջամտելի շարունակականության երաշխիք: Այս նպատակի իրագործման համար անփոփոխ դրույթների սահմանմամբ Սահմանադիրն ինքնասահմանափակել է իր՝ անփոփոխ դրույթներին միջամտության հնարավորությունը: Սահմանադրի կողմից որևէ դրույթ անփոփոխելիության որակով օժտելը պաշտպանում է Սահմանադրությունը փոփոխելու իրավասություն ունեցող սուբյեկտի կողմից այդ դրույթին միջամտությունից, և որպես այդպիսին՝ Սահմանադրության անփոփոխ դրույթները Սահմանադրի կողմից դրանք փոփոխելուն կամ դրանց գործողությունը դադարեցնելուն ուղղված Սահմանադրի իրավազորությունը (ինքնա)սահմանափակող դրույթներ են:

Համաձայն Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Սահմանադրության կարգավորումները նախատեսում են Սահմանադրության որևէ (փոփոխելի) դրույթ փոփոխելու իրավասություն ունեցող սուբյեկտ՝ ժողովուրդը՝ համապատասխան ընթացակարգով: Սահմանադրությամբ նախատեսված՝ միայն Սահմանադրությամբ

թվարկված սպառիչ ցանկով դրույթների փոփոխություն կատարելու սահմանափակ իրավազորությամբ օժտված է նաև Ազգային ժողովը (2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 202-րդ հոդված, 1-2-րդ մասեր): Միաժամանակ, Սահմանադրության անփոփոխ դրույթները պաշտպանված են ժողովրդի և, առավել ևս, Ազգային ժողովի կողմից դրանք փոփոխելու կամ դրանց գործողությունը դադարեցնելու միջամտությունից: Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասից և Սահմանադրության անփոփոխ դրույթների՝ Սահմանադրի կամքի նկատմամբ ինքնասահմանափակման այս հատուկ և բացառիկ բնույթից ուղղակիորեն բխում է, որ թե՛ Սահմանադրության որևէ անփոփոխ դրույթ սահմանելու, թե՛ արդեն իսկ սահմանված սահմանադրական դրույթին անփոփոխելիության որակով օժտելու բացառիկ իրավազորությունը վերապահված է միայն ժողովրդին՝ Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

Հետևաբար՝ անփոփոխ դրույթների մեկնաբանության մեթոդաբանությունն ընտրելիս Սահմանադրական դատարանը պարտավոր է ընդգծված զգուշավորություն դրսևորել այդ դրույթների մեկնաբանության համար՝ կիրառելով բացառապես «նեղ» մեկնաբանության մեթոդը խնդրո առարկա դրույթի որոշիչ իմաստային ուղղորդիչների, մասնավորապես՝ «*Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները*» սահմանադրական դրույթում համապատասխան «*սկզբունքների*» և «*նպատակների*» ցանկի որոշակիացման իմաստով՝ հաշվի առնելով, որ «*նեղ*» մեկնաբանության (ի հակադրություն՝ «*լայն*» կամ «*տարածական*» մեկնաբանության) մեթոդի շրջանակից դուրս գալու հետևանքային ազդեցությունը հանգեցնում է Սահմանադրի ինքնիշխան իրավազորությունը սահմանափակող դրույթների բովանդակային շրջանակի (Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված շրջանակից դուրս) ընդլայնմամբ Սահմանադրի իրավազորության շրջանակի սահմանափակմանը՝ հակառակ Սահմանադրության 1-ին հոդվածի («*Հայաստանի Հանրապետությունն (. . .) ժողովրդավարական (. . .) պետություն է*») և 2-րդ հոդվածի 1-ին մասի («*Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին*»):

3.2. Սույն որոշման 2-րդ կետի հարցադրման պատասխանի համար անհրաժեշտ է առաջին հերթին համեմատական վերլուծության ենթարկել Հռչակագրի և 1995 թվականի Սահմանադրության տեքստերը, որոնք պարունակում են շարադրանքի մի շարք ակնհայտ տարբերություններ, սակայն՝ բովանդակային որոշ համընկնում և, միաժամանակ,

տարբերություն ունեցող սկզբունքներ և նպատակներ: Մասնավորապես՝ սակայն չսահմանափակվելով միայն ներքոթվարկվածով.

ա) Հռչակագրի 3-րդ կետի համաձայն՝ «*Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և* ***ներկայացուցչական մարմինների*** *միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքների հիման վրա* (...)», որի հետ բովանդակային մասնակի տարբերություն և համընկնում, սակայն ակնհայտորեն այլ շարադրանք ունեցող՝ Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրված են «*Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված* ***պետական*** *և տեղական ինքնակառավարման մարմինների ու* ***պաշտոնատար անձանց*** *միջոցով*» բովանդակությամբ:

բ) Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի շրջանակում Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության համակարգերի ենթակայության համակարգային սկզբունքի մասին Հռչակագրի 5-րդ կետում սահմանվում է, որ «*Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: (. . .) Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ*»: Մինչդեռ 1995 թվականի Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը «*զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը*», իսկ նույն հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը «*որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին, Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք*»: Թեպետ հետագայում՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության ուժի մեջ մտնելով՝ Հայաստանի Հանրապետությունն անցավ խորհրդարանական կառավարման համակարգին, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 155-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության և անվտանգության համակարգերի՝ գործադիր իշխանության ենթակայության կառուցակարգային սկզբունքը մնաց անփոփոխ՝ հակառակ Հռչակագրի 5-րդ կետի:

Հռչակագրում նշված որոշ դրույթներ, որոնք լայն համատեքստում կարող են որպես նպատակներ պարունակող դրույթներ դիտարկվել, չեն ամրագրվել Սահմանադրության (և դրա հետագա փոփոխությունների) մեջ, մասնավորապես (սակայն չսահմանափակվելով միայն).

գ) «*հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա*»,

դ) «*զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները*»:

Հռչակագրի նախաբանում նշված «*ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծման*» նպատակը, որն իր ոչ նույնական շարադրանքով, սակայն բովանդակային ծավալով համընկնող նպատակ-սկզբունք ամրագրող՝ Սահմանադրության 1-ին անփոփոխ հոդվածում ստացել է հետևյալ ամրագրումը. «*Հայաստանի Հանրապետությունը (. . .) ժողովրդավարական, (. . .) իրավական պետություն է*»:

1995 թվականի Սահմանադրության դրույթների՝ Հռչակագրի հետ ունեցած ակներև անհամապատասխանությունները (վերը թվարկված օրինակներից Հռչակագրի նախաբանում և 3.2 կետի ա-բ ենթակետերում նշված օրինակները) դրանց շարադրանքի և բովանդակային տարբերությունների մասով ակնհայտորեն վկայում են, որ Սահմանադիրը, 1995 թվականի Սահմանադրության դրույթները սահմանելով, դրանց չի հաղորդել Հռչակագրի դրույթների հետ նույնական բովանդակություն՝ «*հիմք ընդունելով հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները*» արտահայտության նշանակությունը դիտարկելով բացառապես իր կամընտրությամբ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների՝ միայն իր կողմից 1995 թվականի Սահմանադրությունում ամրագրված բովանդակության շրջանակում:

«*Հիմք ընդունելով*» արտահայտությանն այնպիսի բովանդակություն հաղորդելը, համաձայն որի՝ Սահմանադրությունում շարադրված շրջանակից տարբերվող շրջանակով Հռչակագրում ամրագրված որևէ *սկզբունք* կամ *նպատակ* ունի նաև այլ՝ Սահմանադրությամբ ամրագրված իմաստային շրջանակից տարբերվող և Հռչակագրով ունեցած ինքնուրույն իմաստ, ուղղակիորեն հակասում է Սահմանադրության ընդունմամբ սահմանադրական որոշակիության միջոցով սահմանադրական կայունությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակին. այս նկատառմամբ Հռչակագրի 12-րդ կետով նախանշվել էր անկախության գործընթացի նշանակալից հանգրվաններից մեկը՝ Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը:

1995 թվականի Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանվել է Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի վերաբերյալ դրույթը, որն անայլընտրանք եզրահանգման հիմք է առ այն, որ Սահմանադրության ուժի մեջ մտնելու պահից Սահմանադրությունը եղել է բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող միակ իրավական ակտը: Այս սահմանադրական իրողության պայմաններում Սահմանադրական դատարանը չի տեսնում որևէ պատճառ, որ Սահմանադիրը, նպատակ ունենալով Հռչակագրում հաստատագրված որևէ *սկզբունքի* կամ *նպատակի* իրավական բովանդակությունը ներմուծել 1995 թվականի Սահմանադրություն կամ առաջնորդվելով դրա ողջ ծավալը 1995 թվականի Սահմանադրության ծավալ ներմուծելու վարկածով, Հռչակագրի դրույթների և 1995 թվականի Սահմանադրության դրույթների միջև ակնհայտ տարբերություն պարունակող նորմերով ձևավորեր այնպիսի իրավակարգավորումների համակարգ, որոնցում Հռչակագրում հաստատագրված *սկզբունքները* և *նպատակները*՝ որպես նախաբանի բովանդակության մաս, 1995 թվականի Սահմանադրության մյուս դրույթների հետ ունենային ակնհայտ անհամապատասխանություններ:

Նույնն առավել ևս վերաբերելի է առհասարակ բոլոր այն *նպատակներին*, որոնք չեն ամրագրվել Սահմանադրության որևէ դրույթում: Այս կապակցությամբ պետք է նկատել նաև, որ Սահմանադիրը ոչ միայն 1995 թվականին ընդունված Սահմանադրության անփոփոխ դրույթներում չի ամրագրել Հռչակագրում հաստատագրված և սույն որոշման 3.2 կետում թվարկված գ-դ կետերում շարադրված որևէ *նպատակ*, այլ նմանապես չի ամրագրել դրանք իր փոփոխելի դրույթներում: Մինչդեռ 1995 թվականի Սահմանադրության որևէ դրույթում Հռչակագրի՝ «*համազգային*» որակ ունեցող որևէ «*նպատակ*» Սահմանադրությունում չամրագրելով այն պարագայում, երբ 1995 թվականի Սահմանադրության դրույթների զգալի մասը պարունակում է մանրամասն կարգավորումներ (օրինակ՝ պետական իշխանության մարմինների գործունեությանն ու կազմակերպմանն ուղղված մանրամասն սահմանադրական կարգավորումները 1995 թվականի Սահմանադրության 3-7-րդ գլուխներում, կամ հատկապես 9-րդ գլխում անցումային դրույթների մանրամասն կարգավորումները), որևէ *համազգային* որակ ունեցող *նպատակ* Սահմանադրության նախաբանի բովանդակային ծավալում ներառելու հստակության բացակայության պայմաններում, լրջորեն հակադրվում է այն մոտեցմանը, որ Սահմանադրության նախաբանում Հռչակագիրը հիշատակելով՝ Սահմանադիրը նպատակ է ունեցել Հռչակագրում հաստատագրված, սակայն 1995 թվականի

Սահմանադրության մեջ չամրագրված որևէ *նպատակ* ներառել Սահմանադրության մեջ:

Սահմանադրության և Հռչակագրի քննարկված դրույթների շարադրանքի ակնհայտ, և դրանով պայմանավորված՝ բովանդակային ծավալի հնարավոր տարբերությունն այն մասով, որ մասով ներառված չէ Սահմանադրության դրույթների բովանդակություն, սահմանադրական իրողություն է, որը Սահմանադրության նախաբանում «*հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները*» դրույթի բովանդակային ծավալի որոշակիացման համար ունի ելակետային նշանակություն: Նման սահմանադրական իրողությունը «*նեղ*» մեկնաբանության կիրառմամբ բացառում է Հռչակագրում հաստատագրված որևէ *սկզբունք* կամ *նպատակ* Սահմանադրության դրույթների բովանդակային ծավալում ներառված լինելու հնարավորությունը՝ Սահմանադրությամբ տվյալ սկզբունքի կամ նպատակի ամրագրված չլինելու պարագայում:

3.3. 1995 թվականի Սահմանադրության և Հռչակագրի դրույթների միջև սույն որոշման 3.2 կետի ա-բ ենթակետերում թվարկված օրինակներում շարադրանքների և դրանցով պայմանավորված՝ բովանդակային տարբերությունների առնչությամբ Սահմանադրական դատարանը նկատում է նաև, որ 2005 և 2015 թվականներին իրականացված սահմանադրական փոփոխությունների գործընթացում այդ տարբերությունները հարթելուն ուղղված որևէ միջոց չի ձեռնարկվել. Հռչակագրում հաստատագրված «համազգային» որակ ունեցող որևէ *նպատակ* կամ *հիմնարար սկզբունք*, որը Սահմանադրությամբ ամրագրված չի եղել, Սահմանադրությունում ամրագրելու խնդիր առհասարակ չի ձևակերպվել:

3.4. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Հռչակագրի դրույթների՝ որպես Սահմանադրության դրույթների մեկնաբանման համար ունեցած նշանակության հարցին նաև սահմանադրական արդարադատության պրակտիկայում տեղ գտած իրավական դիրքորոշումների համատեքստում:

3.4.1. Հռչակագրի և Սահմանադրության նախաբանի հարաբերակցության հարցին անդրադարձ է պարունակում 2010 թվականի հունվարի 12-ի ՍԴՈ-850 որոշումը, որի վերաբերելի մասը շարադրված է հետևյալ բովանդակությամբ.

«(...) «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ

ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի **ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին»**:

Սահմանադրական դատարանի որոշման մեջբերված հատվածը, որը որոշման ողջ ծավալում միակն է, որտեղ անդրադարձ է կատարվել Հռչակագրի 11-րդ կետի և Սահմանադրության նախաբանի միջև հարաբերակցությանը, դրան նախորդող և հաջորդող մասերում չի պարունակում որևէ դոկտրինալ նկատառում և առհասարակ որևէ պատճառաբանություն, որը մեջբերված հատվածում ամրագրված կարգադրագրային եզրահանգումը թույլ կտար նույնիսկ մոտավոր նմանությամբ դիտարկել որպես Սահմանադրության ողջ ծավալի համար այնպիսի հիմնարար ազդեցությամբ դոկտրինի ամրագրում, ինչպիսին Հռչակագրի որևէ դրույթ (կոնկրետ դեպքում՝ Հռչակագրի 11-րդ կետը) Սահմանադրության նախաբանում ամրագրված *նպատակ* դիտարկելն է: Ավելին, Սահմանադրական դատարանը նկատում է, որ հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակ տարանջատել է «*Սահմանադրության նախաբանի դրույթներ*» և «*Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներ*» հասկացությունների բովանդակային ծավալները. այդ հասկացությունները կապակցվել են «և» շաղկապով, այլ ոչ՝ դիտարկվել որպես մեկը («*Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներ*») մյուսի («*Սահմանադրության նախաբանի դրույթներ*») բովանդակային ծավալի մաս: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-850 որոշումից մեջբերված հատվածը չունի Սահմանադրական դատարանի սույն որոշման հետ դոկտրինալ անհամապատասխանություն՝ դրանով իսկ բացառելով ՍԴՈ-850 որոշման *res interpretata* բնույթը հաղթահարելու անհրաժեշտությունը:

3.4.2. 2023 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-1680 որոշմամբ անդրադառնալով Սահմանադրության նախաբանում ամրագրված «*հավասարությունը համամարդկային արժեքներ*» սահմանադրական եզրույթի մեկնաբանությանը՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության նախաբանում ամրագրված «*հավասարությունը համամարդկային արժեքներին*» սահմանադրական եզրի նշանակության և ազդեցության համար հիմք է ընդունել Սահմանադրության նախաբանում ինքնին նման դրույթի ուղղակիորեն ամրագրված լինելու իրողությունը: Մասնավորապես՝ նույն որոշմամբ «*համամարդկային արժեքներին հավասարության*» հավաստիքի մեկնաբանման

նպատակով Սահմանադրական դատարանը վկայակոչել է ցեղասպանությունների կանխարգելման **կարևորությունը՝** Հռչակագրում Հայաստանի անկախության գործընթացում դրա անդրադարձից: Սակայն ինքնըստինքյան (առանց Սահմանադրության նախաբանում «*համամարդկային արժեքներին հավատարմության*» հավաստիքի ամրագրման) Հռչակագրի 11-րդ կետը Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման համար չի ունեցել որևէ նորմատիվ ազդեցություն: Դրա հիմքը եղել է Սահմանադրության նախաբանում ամրագրված «*համամարդկային արժեքներին հավատարմության*» հավաստիքը, որը մեկնաբանելով և զարգացնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝

«Սահմանադրության նախաբանում՝ Հայ ժողովուրդը, ի շարս այլ նպատակների և սկզբունքների, Սահմանադրությունն ընդունել է նաև՝ «հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»: Սահմանադրության նախաբանում այս հավաստիքի արձանագրումը «*համամարդկային արժեքներ*» սահմանադրական եզրը դարձնում է Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման համար կիրառելի առաջնային ուղենիշ:

(...)

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքը՝ հատկապես համընդհանուր խաղաղությանն սպառնացող ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարին վերաբերելի մասով՝ որպես Սահմանադրության դրույթների մեկնաբանման արժեբանական ուղենիշ դիտարկելու սահմանադրական հրամայականի հիմքում ընկած է նաև այն պատմական, էթիկական և քաղաքակրթական չափորոշիչը, որ Կանոնադրության նախաբանում շարադրված ոճրագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի կարևորությունն արդեն իսկ արձանագրված է եղել Հայաստանի անկախության գործընթացում՝ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու մասին հռչակմամբ (Հայաստանի անկախության մասին հռչակագիր, կետ 11): Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու մասին դրույթը Հայաստանի անկախության հռչակագրում ունի ոչ միայն պատմական իրողության հետադարձորեն ճանաչման, այլև առավել ևս ապագայում նման ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի միջոցով համընդհանուր խաղաղության և անվտանգության պաշտպանության միջազգային ջանքերին մասնակցության քաղաքակրթական բնույթի պարտավորության նշանակություն» (2023

թվականի մարտի 24-ի ՍԴՈ-1680 որոշման կետեր 6.2, 6.5):

Սահմանադրական դատարանը հստակորեն արձանագրել է, որ Հռչակագրի 11-րդ կետում ամրագրված դրույթն ունի «***քաղաքակրթական բնույթի*** *պարտավորության նշանակություն*», որը Սահմանադրական դատարանը կարևորել է բացառապես Սահմանադրության նախաբանում ուղղակիորեն ամրագրված «*հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին*» սահմանադրական դրույթի մեկնաբանության շրջանակում՝ «*Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման համար կիրառելի առաջնային ուղենիշ*» դիտարկելով բացառապես Սահմանադրության նախաբանում ամրագրված «*համամարդկային արժեքներ*» սահմանադրական դրույթը: Այսինքն՝ Հռչակագրում ամրագրված 11-րդ կետը Սահմանադրական դատարանի կողմից չի դիտարկվել Սահմանադրության նախաբանի բովանդակային ծավալի ինքնուրույն մաս՝ Սահմանադրության նախաբանում «*հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները*» դրույթի ուժով:

3.5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանն առաջին անգամ է առնչվում Հռչակագրի և Սահմանադրության դրույթների նորմատիվ հարաբերակցության խնդրին սույն որոշման նախորդ մասերում ներկայացված վերլուծությունների խորությամբ (նախկինում նման անդրադարձների նկարագրությունը տե՛ս 3.4 կետում), վերը նշված վերլուծությունների հիմնավորումները չեն կարող ամբողջական լինել՝ առանց Հռչակագրի՝ այլ ակտերի վրա ունեցած ազդեցության և դրա արժեքի հարաբերակցության վերաբերյալ վերլուծության:

Նախ՝ Հռչակագրով հռչակելով անկախության գործընթացի սկիզբը՝ հռչակվել են նաև գործընթացի ողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի ուղենիշային սկզբունքները, որոնց 1990 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված սահմանադրական օրենքի ուժով Գերագույն խորհրդի կողմից հաղորդվել են վերսահմանադրական նշանակություն և իրավական ուժ: Նման իրավական փոխակերպական (տրանսֆորմատիվ) և վերսահմանադրական խոր ազդեցությամբ իրավական ակտերի ընդունումը Հայաստանի անկախության գործընթացի իրականացման համար եղել է բացարձակ անհրաժեշտություն՝ հաշվի առնելով այն ակնհայտ իրողությունը, որ ԽՍՀՄ 1977 թվականի և Հայկական ԽՍՀ 1978 թվականի սահմանադրությունների գործողության ուժի ներքո, որոնք ամբողջությամբ ներծծված են եղել ժողովրդավարության, իրավա-

կան պետության և ժողովուրդների ինքնորոշման և անկախության գաղափարների նկատմամբ ամբողջատիրական հասարակարգի ծայրահեղ ագրեսիվ և անհանդուրժողական գաղափարաբանությամբ, Հայաստանի անկախության և դրա ժողովրդավարական կարգի վերականգնման հեռանկարի որևէ տարբերակ կարող էր լրջորեն խոչընդոտվել: Այս իմաստով Հռչակագիրն ունեցել է նաև այն գաղափարական պաշտպանիչ ուժը, որը Հայաստանի՝ մինչև 1991 սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի արդյունքների հրապարակման պահը Հայաստանի ողջ իրավակարգին և պետական իշխանության մարմիններին պաշտպանիչ վահանի դերակատարմամբ պատնեշել է Հայաստանի անկախության հարցում ժողովրդի ազատ կամաարտահայտության հնարավորությունը սահմանադրական իրողություն դարձնելու համար: Այս իրողությունը եղել է անկախության գործընթացի առաջին առանցքային հանգրվանը, որն ուղղակիորեն նախանշված է եղել Հռչակագրով:

Երկրորդ՝ իր ունեցած վերսահմանադրական ակտի՝ իրեն հաղորդված ուժի ազդեցության տիրույթում, Հռչակագիրն ունեցել է Հայաստանի անկախացման գործընթացի և մինչև 1995 թվականի հուլիսի 13-ը՝ Սահմանադրության ուժի մեջ մտնելը, Հայաստանի պետական իշխանության մարմինների գործունեության՝ անկախության, ժողովրդավարական և իրավական հասարակարգի ձևավորմանն ուղղված նպատակին հասնելու ռազմավարական հայեցակարգի դերակատարում: Առանց պետական իշխանության մարմինների համար նման իրավական հիմքի առկայության, ինչպես արդեն նշվեց նախորդ պարբերությունում, ԽՍՀՄ 1977 թվականի և Հայկական ԽՍՀ 1978 թվականի սահմանադրությունների գործողության ընթացքում, պետական իշխանության մարմինների գործունեության իրավական լեգիտիմության հիմքը մնալով՝ հիշյալ ակտերը, Հայաստանի Հանրապետության կենսական անհրաժեշտության ոլորտների պաշտպանությունը, մասնավորապես՝ պաշտպանության և անվտանգության, շուկայական տնտեսության, ժողովրդավարական ազատությունների և իրավունքների, իշխանությունների տարանջատման, ինքնիշխան և ժողովրդավարական պետության համար անհրաժեշտ օրենսդրական և սահմանադրական հիմքերի ձևավորմանը (ցանկը սպառիչ չէ) ուղղված ողջ գործունեությունն էականորեն վտանգված, եթե ոչ առհասարակ անհնար էր լինելու: Հռչակագիրը վերը նշված և շարունակելի ցանկով կենսական խնդիրների լուծմանը ծառայած առանցքային ակտն է եղել:

Երրորդ՝ Հռչակագիրը եղել է այն ուղղորդիչ իրավաքաղաքական-գաղափարական բովանդակություն ունեցող ակտը, որի ծրագրային

12-րդ կետում զետեղված դրույթները հանգեցրել են Սահմանադրության ընդունմանը: Սա Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության հիմնման, Սահմանադրության նախաբանում նախանշված՝ «*Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին*» համազգային նպատակների և Սահմանադրության մյուս դրույթներով իմաստային ուղղորդիչ նախանշում ունեցող՝ Սահմանադրության բարձրագույն ուժով օժտված իրավական ակտով, խտրաբար և խնամքով ընտրված և ձևակերպված ամրագրումների միջոցով Հայաստանին հանգեցրել է սահմանադրական կայունության ժամանակաշրջանի՝ արմատապես բացառելով «*սահմանադրական երկիշխանության*» ծայրահեղ վտանգավոր դրսևորումների իրավական հնարավորությունը:

Մինչև 1995 թվականի հուլիսի 13-ն ունեցած իր իրավական առաքելության և դրա իրագործմամբ վերը թվարկված և այլ նպատակների իրականացման համար ունեցած պատմական արժեքը ոչ կավելանա Հռչակագրի դրույթների՝ Սահմանադրության նախաբանի նկատմամբ ինքնուրույն նորմատիվ ազդեցության ճանաչման, ոչ էլ կնսեմանա նման ազդեցության բացառման արձանագրմամբ: Նրա պատմական արժեքն արդեն իսկ արժանացել է դրան համարժեք բարձր պատվին՝ հիշատակվելով Սահմանադրության անփոփոխ դրույթում:

ԽՍՀՄ կուռ և միաձույլ, դրա իրավազորության ներքո գտնվող ժողովուրդների անկախության, ինքնիշխանության, ժողովրդավարական ազատությունների և իրավական պետության գաղափարներին արմատապես հակադրվող և դրանց նկատմամբ ծայրահեղ անհանդուրժողական գաղափարաբանությամբ ամբողջությամբ ներծծված իրավակարգի պայմաններում Հռչակագիրը, փաստացի ճեղքելով սովետական իրավական կայունության պատնեշը, ապահովել է այն իրավական պատուհանը, որով, հաջորդաբար, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացմամբ Հայաստանը հասել է վերը նշված հանգրվաններին: Ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ

ուղղակիորեն ամրագրված շրջանակից դուրս Հռչակագրի որևէ դրույթի սահմանադրական (առավել ևս՝ Սահմանադրության անփոփոխ) դրույթի իրավական ուժով օժտված լինելու ուղով շարժվելու հետևանքային ազդեցությունը «*սահմանադրական երկիշխանության*» վտանգի ներուժով, Հռչակագիրը վերածելու է «*զավակին խժռող ծնողի*»: Սա չի եղել ոչ Հռչակագրով, ոչ էլ Սահմանադրությամբ հետապնդվող նպատակ:

3.6. Վերը նշված բոլոր նկատառումների հանրագումարային համակցության արդյունքում սույն որոշման 2-րդ կետում շարադրված հարցի ամբողջական լուծման նպատակով Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Սահմանադրության նախաբանում «*հիմք ընդունելով Անկախության հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները*» դրույթը չի վերաբերում որևէ սկզբունքի կամ նպատակի, որն ամրագրված չէ Սահմանադրությամբ:

3.7. Սահմանադրական դատարանի այս եզրահանգումն այլևս վերացնում է Հռչակագրի նախաբանում ամրագրված «*հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա*» դրույթի վերաբերյալ՝ սույն որոշման 2-րդ կետում նշված հարցի լուծման համար հետագա քննության անհրաժեշտությունը:

4. Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ իրավական կարգավորումները

Նկատի առնելով, որ Ալմա Աթայի 1991 թվականի հռչակագրին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը ճանաչում և հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը, իսկ Կանոնակարգին համապատասխան՝ Հանձնաժողովները կհիմնվեն վերոնշյալ հռչակագրի վրա՝ որպես Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման գործընթացի հիմնարար սկզբունք (եթե (...))՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սույն որոշման շրջանակում հիշյալ հռչակագրի *«գոյություն ունեցող սահմանների»* ձևակերպման առնչությամբ Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ իրավակարգավորումներին անդրադառնում է որպես ընդհանուր սկզբունք:

Համաձայն Կանոնակարգի՝ Հանձնաժողովները կհիմնվեն Ալմա Աթայի 1991 թվականի հռչակագրի վրա՝ որպես Հայաստանի

Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման գործընթացի հիմնարար սկզբունք (եթե հետագայում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրով կնախատեսվեն այլ կարգավորումներ, ապա տվյալ հիմնարար սկզբունքը կհամապատասխանեցվի վերը նշված համաձայնագրով սահմանված սկզբունքներին):

Հայաստանի Հանրապետության համար Ալմա Աթայի հռչակագիրն ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 21-ից: Նշված հռչակագրին համապատասխան՝ անկախ պետությունները, այդ թվում՝ *Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը ճանաչում և հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը:*

Ալմա Աթայի հռչակագրում հիշատակված է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության՝ Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրի նպատակներին ու սկզբունքներին հավատարիմ լինելու մասին: Նշված *հռչակագրով անկախ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը, հայտարարել են, որ Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծմամբ, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը դադարեցնում է իր գոյությունը:*

«Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին» համաձայնագիրը ստորագրվել է 1991 թվականի դեկտեմբերի 8-ին:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1992 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ վավերացրել է 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Ֆեդերացիայի (ՌԽՖՍՀ) և Ուկրաինայի կողմից ստորագրված Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին համաձայնագիրը՝ մի շարք վերապահումներով: Մասնավորապես՝

«1. Համաձայնագրի նախաբանի 4-րդ պարբերությունում «ինքնորոշման անկապտելի իրավունքի» բառերը փոխարինել «Ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքի» բառերով:

(...)

3. Համաձայնագրի 5-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բարձր Պայմանավորվող Կողմերը ճանաչում և հարգում են

ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, միմյանց տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»:

(...)

10. Համաձայնագրի 13-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը «բաց է ԽՍՀ Միության անդամ բոլոր պետությունների առջև» բառերից հետո լրացնել «այդ թվում ԽՍՀՄ-ի նախկին ինքնավար կազմավորումների համար, որոնք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման մասին» հռչակագրի ընդունումից առաջ անցկացրել են անկախություն հռչակելու վերաբերյալ համաժողովրդական հանրաքվե, և դրա հիման վրա ինքնավար կազմավորման իշխանության բարձրագույն գործադիր մարմինը դիմել է Անկախ Պետությունների Համագործակցություն՝ նրա կազմի մեջ ընդունվելու խնդրանքով» բառերով»:

1990 թվականին *Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հռչակագրի 2-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:*

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1990 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված Հ.Ն.-0217-Ի սահմանադրական օրենքի համաձայն՝ *մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին:*

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից և հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 98-րդ հոդվածի 5-րդ կետի վրա, *1991 թվականի մարտի 1-ին որոշեց*. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԱՆՐԱՔՎԵ ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՆԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԸ. «ՀԱՄԱՁԱՅՆ ԵՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՆԻ ԱՆԿԱԽ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ» (Ն Ն-0269-Ի):

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով 1991 թվականի սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս

գալու մասին անցկացված հանրաքվեի արդյունքները, 1991 թվականի սեպտեմբերի 23-ին հռչակել է Հայաստանի Հանրապետության անկախ պետություն (որոշում N Ն-0393-I):

1978 թվականի սահմանադրության 77-րդ հոդվածով սահմանված էր, որ Հայաստանի Հանրապետությունը սահմանում է իր շրջանային բաժանումը և լուծում վարչատերիտորիալ կառուցվածքի այլ հարցեր: Նույն սահմանադրության 78-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում կային հետևյալ շրջանները՝ Աբովյանի, Ազիզբեկովի, Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Աշտարակի, Ապարանի, Արագածի, Արարատի, Արթիկի, Արտաշատի, Գորիսի, Գուգարքի, Եղեգնաձորի, Էջմիածնի, Թալինի, Թումանյանի, Իջևանի, Կալինինոյի, Կամոյի անվան, Կրասնոսելսկի, Հոկտեմբերյանի, Հրազդանի, Ղափանի, Բաղրամյանի, Ղուկասյանի, Մասիսի, Մարտունու, Մեղրու, Նաիրիի, Նոյեմբերյանի, Շամշադինի, Սևանի, Սիսիանի, Սպիտակի, Ստեփանավանի, Վարդենիսի և հանրապետական ենթակայության հետևյալ քաղաքները՝ Աբովյան, Ալավերդի, Արարատ, Արթիկ, Արտաշատ, Աշտարակ, Գորիս, Դիլիջան, Երևան, Էջմիածին, Իջևան, Լենինական, Կամո, Կիրովական, Հոկտեմբերյան, Հրազդան, Ղափան, Ջերմուկ, Սևան, Սպիտակ, Ստեփանավան:

1995 թվականի Սահմանադրության 104-րդ հոդվածի առաջին նախադասությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝ մարզերը և համայնքները: Նույն դրույթն արտացոլված է նաև 2005 և 2015 թվականների փոփոխություններով Սահմանադրության համապատասխանաբար՝ 11.1-ին հոդվածում և 121-րդ հոդվածի 1-ին մասում:

1995 թվականի նոյեմբերի 7-ին ընդունվել է *«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՕ-18 օրենքը*, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանվում է տասը մարզի և մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի: Հայաստանի Հանրապետության մարզերն են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռվա, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը (օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետության մարզերի տարածքներին):

1995 թվականի Սահմանադրության 108-րդ հոդվածի առաջին նախադասությանը համապատասխան՝ Երևան քաղաքն ուներ մարզի կարգավիճակ: 2005 և 2015 թվականների փոփոխություններով Սահմանադրության, համապատասխանաբար՝ 108 և 187-րդ հոդվածների առաջին նախադասությունների համաձայն՝ Երևանը համայնք է:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված 1994 թվականի հուլիսի 17-ի *«Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» օրենքի* (ուժը կորցրել է 2001 թվականի դեկտեմբերի 25-ին՝ 2001 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված ՀՕ-265 օրենքով) 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանն այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղաձիգ մակերևույթը, որոնք որոշում են Հայաստանի Հանրապետության տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները: Նույն օրենքի 2-րդ հոդվածի առաջին նախադասության համաձայն՝ պետական սահմանը որոշվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան՝ սահմանակից պետությունների հետ սահմանային հարցերը Հայաստանի Հանրապետությունը լուծում է փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, հիշյալ օրենքին, Հայաստանի Հանրապետության օրենսդրության մյուս ակտերին և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

2001 թվականի նոյեմբերի 20-ին ընդունվել է *«Պետական սահմանի մասին» ՀՕ-265 գործող օրենքը*, որի 1-ին հոդվածում բովանդակային նույնությամբ պահպանված է պետական սահմանի վերոնշյալ օրենսդրական բնորոշումը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *պետական սահմանը տեղորոշելիս և փոփոխելիս, սահմանակից պետությունների հետ հարաբերությունները, ինչպես նաև սահմանամերձ շրջաններում և միջազգային հաղորդակցության ուղիներում իրավահարաբերությունները կարգավորելիս Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է* Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության անվտանգության և Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովման, օտարերկրյա պետությունների հետ բազմակողմանի փոխշահավետ համագործակցության, սահմանային հարցերի խաղաղ լուծման *սկզբունքներով:*

Միջպետական սահմանների՝ աշխարհագրական առումով ճշգրտման, տվյալ դեպքում՝ պետությունների միջև պետական սահմանի սահմանազատում իրականացնելու միջոցով, հարցերը գործադիր իշխանության իրավասության տիրույթում են՝ հաշվի առնելով, որ Սահմանադրության 205-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերա-

բերող հարցերը լուծվում են հանրաքվեի միջոցով, որն անցկացնելու վերաբերյալ որոշումը Կառավարության առաջարկությամբ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը՝ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1749

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի «2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1749 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 24-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով սկսել է «2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 26-ի ՍԴՈ-1749 որոշմամբ որոշել է. «(...) «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1749 որոշման վերաբերյալ:

1. Մինչև որոշման պատճառաբանական ու եզրափակիչ մասերի առնչությամբ իմ անհամաձայնությանն անդրադառնալը՝ անհրաժեշտ եմ համարում նշել, որ սույն գործով Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը չի համապատասխանում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին. Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն դիմումը վարույթ ընդունելու, հետևաբար նաև՝ այդ դիմումի հիման վրա որոշում կայացնելու:

«2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) ենթակա չէր Ազգային ժողովի կողմից վավերացման, հետևաբար՝ չէր կարող դառնալ Սահմանադրական դատարանի քննության առարկա:

Սահմանադրության, «Միջազգային պայմանագրեր վավերացնելը, կասեցնելը և չեղյալ հայտարարելը» վերտառությամբ 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը՝

1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին.

2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ.

3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը.

4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ.

5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր.

6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում.

7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր»:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը:

Այսպիսով, Սահմանադրությունը սահմանել է բոլոր այն միջազգային պայմանագրերը, որոնք ենթակա են վավերացման Ազգային ժողովի կողմից, և որոնք միայն, մինչև վավերացումը, դառնում են Սահմանադրական դատարանի քննության առարկա: Տվյալ դեպքում՝ Կանոնակարգի բովանդակային վերլուծությունից կարող ենք միանշանակ եզրահանգել, որ այն բովանդակային առումով Սահմանադրության 116-րդ հոդվածի իմաստով սահմանված պայմանագիր չէ:

Եթե Սահմանադրական դատարանի կողմից սույն հարցի քննության և հետագայում այն Ազգային ժողովի կողմից վավերացման առարկա դարձնելու համար հիմք է հանդիսացել Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում ամրագրված դրույթը, ապա Կանոնակարգում փաստացի բացակայում է այն ուղղակիորեն վավերացում նախատեսող դրույթ:

Կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրը և գործում է մինչև սահմանազատման աշխատանքների ամբողջական ավարտը»:

Այլ կերպ՝ Կանոնակարգի 7-րդ հոդվածը, որում, ըստ էության, կարող էր կարգավորված լինել վավերացման ենթակա լինելու հարցը, նման բովանդակությամբ դրույթ չի պարունակում:

Միևնույն ժամանակ, ներպետական ընթացակարգերը բնավ էլ չեն նշանակում դրանց պարտադիր վավերացում: Սահմանադրության 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության նախագահը, Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կանոնակարգը Սահմանադրության համաձայն Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա միջազգային պայմանագիր չէ, և դրանում ուղղակիորեն վավերացում

նախատեսող դրույթ առկա չէ, ներպետական ընթացակարգերի ներքո պետք է հասկանալ բացառապես Սահմանադրության 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգը:

2. Ինչպես վերը նշեցինք՝ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով դիմումն ընդունելու վարույթ և այդ դիմումի հիման վրա կայացնելու ըստ էության որոշում: Սակայն վարույթ ընդունելով և քննելով այն՝ անգամ այդ պարագայում ՍԴՈ-1749 որոշման մեջ Սահմանադրական դատարանը թույլ է տվել Կանոնակարգում ամրագրած պարտավորությունների սահմանադրականության գնահատման և մեթոդաբանության մի շարք էական խախտումներ, որոնք հանգեցրել են թե՛ Սահմանադրության, թե՛ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի խախտումների, ինչպես նաև կարող են հետագայում խաթարել սահմանադրական կարգը: Ի հիմնավորումն՝ հարկ է նշել հետևյալը.

2.1. Սահմանադրական դատարանը, նախ՝ ինքն իրեն սահմանափակել է բացառապես Սահմանադրության նախաբանի շրջանակներում սահմանադրականության հարցի քննությամբ, ինչը Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կոպիտ խախտում է: Դրանով Սահմանադրական դատարանը, ըստ էության, խուսափել է Կանոնակարգում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության ստուգումից, ինչն իր ուղղակի պարտականությունն է՝ համաձայն Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի, 168-րդ հոդվածի 3-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ համակցված նույն օրենքի 32-րդ հոդվածի հետ:

Սահմանադրական դատարանն ընդհանրապես չի անդրադարձել սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների ստեղծման և գործունեության սահմանադրականության հարցին, մինչդեռ այդ հարցը կանխորոշում է այդ հանձնաժողովների գործունեության արդյունքների իրավաչափությունը և Կանոնակարգում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Այս հարցի ամբողջական շրջանցումը պարզապես նշանակում է հրաժարում սահմանադրական արդարադատությունից, տվյալ գործով Սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթի փաստացի չեղարկում:

Այսպես՝ համաձայն Սահմանադրության 2-րդ հոդվածի երկրորդ պարբերության՝ Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ

ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև **Սահմանադրությամբ նախատեսված** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (ընդգծումն իմն է): Հետևապես՝ միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են իրականացնել հանրային-իշխանական լիազորություններ, և հանրային իշխանության որևէ մարմնի, նույնիսկ՝ Ազգային ժողովին, սահմանադիրը չի լիազորել ստեղծելու հանրային-իշխանական լիազորություններով օժտված՝ Սահմանադրությամբ չնախատեսված մարմիններ: Դա առավել ևս վերաբերում է գործադիր իշխանության մարմիններին և Կառավարության ղեկավարին կամ մյուս անդամներին: Այսինքն՝ վարչապետի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը կարող էր լինել միայն խորհրդակցական մարմին, որը վարչապետի կամ Կառավարության քննարկմանը կներկայացներ խորհրդատվական բնույթի փաստաթղթեր, գուցե նաև իրավական ակտերի նախագծեր՝ նրանց իրավասության հարցերով:

Բացի դրանից, համաձայն Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են **Սահմանադրությամբ կամ օրենքներով**: Հետևաբար՝ հանրային-իշխանական լիազորություններով կարող են օժտվել միայն Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց այդպիսի լիազորությունները կսահմանվեն **Սահմանադրությամբ և (կամ) օրենքով**: Որևէ միջազգային պայմանագրով կամ որևէ ենթաօրենսդրական նորմատիվ կամ անհատական իրավական ակտով որևէ մարմին չի կարող օժտվել հանրային-իշխանական լիազորություններով: Դա օրինականության հիմնարար սահմանադրական սկզբունքի խախտում է:

Ինչ վերաբերում է սահմանային հարցերի կարգավորմանը, ապա Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դա գործադիր իշխանության գործառութային շրջանակներում Կառավարության լիազորությունն է, իսկ օրենսդիր իշխանության գործառութային շրջանակներում՝ Ազգային ժողովի լիազորությունը, որը ներառում է նաև պետական սահմանին վերաբերող միջազգային պայմանագրերի վավերացումը:

Հակառակ վերոգրյալին՝ Կանոնակարգի մի շարք դրույթներում սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների համար սահմանվում են ոչ թե խորհրդակցական բնույթի գործառույթներ, այլ հանրային-իշխանական լիազորություններ:

Մասնավորապես՝

1) սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովներն իրավասու են կազմելու ամբողջ պետական սահմանագծի անցման Արձանագրություն-նկարագրությունը, որը՝ հավելվածներով հանդերձ, հանդիսանալու է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև **պետական սահմանի մասին պայմանագրի բաղկացուցիչ մասը** (Կանոնակարգի 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր), ինչը գործադիր իշխանության մարմնին ներհատուկ լիազորություն է, այլ ոչ թե խորհրդակցական մարմնի գործառույթ.

2) այդ հանձնաժողովները **կազմակերպում և վերահսկում** են որոշակի աշխատանքների կատարումը, ինչպես նաև **սահմանազատման իրականացման** հետ կապված այլ աշխատանքների կատարումը (Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2-րդ մաս).

3) իրականացնում են սահմանազատման փորձագիտական խմբերի գործունեության ղեկավարումն ու վերահսկողությունը:

Այսպիսով, տվյալ հանձնաժողովը Սահմանադրությամբ չնախատեսված, սակայն հանրային-իշխանական կոնկրետ լիազորություններով ոչ իրավաչափորեն օժտված մարմին է, որի գործունեությունը և դրա արդյունքներն այդ պատճառով ամբողջությամբ հակասահմանադրական են. հակասում են Սահմանադրության անփոփոխելի՝ 2-րդ հոդվածին և 6-րդ հոդվածի 1-ին մասին, ուստի Կանոնակարգում ամրագրված այն պարտավորությունները, որոնք վերաբերում են հանձնաժողովների հանրային-իշխանական լիազորություններին՝ նույնպես հակասահմանադրական են:

Սահմանադրական դատարանն ամբողջովին անտեսել է նաև այդ հանձնաժողովների գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի առանձին հատվածների արդեն իսկ իրականացված սահմանազատման սահմանադրականության հարցը, այսինքն՝ չի գնահատել իրավակիրառ պրակտիկան, և դա այն դեպքում, երբ այդ սահմանազատումը հայկական կողմում իրականացվել է ոչ միայն Սահմանադրությամբ չնախատեսված և Սահմանադրությամբ կամ որևէ օրենքով նման իրավասություն չունեցող մարմնի կողմից, այսինքն՝ հակասահմանադրական եղանակով, այլև մինչև Կանոնակարգի վավերացումը, այսինքն՝ առանց որևէ իրավական հիմքի:

Դրանով Սահմանադրական դատարանն ուղղակիորեն խախտել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որը Սահմանադրական դատարանին պարտավորեցնում է իրավական ակտի սահմանադրականությունը

որոշելիս գնահատել ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան, իսկ դա վերաբերում է նաև վավերացման ենթակա միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորություններին, քանի որ դրանք նույնպես ձևակերպվում են իրավադրույթների տեսքով:

2.2. Սահմանադրական դատարանն ակնհայտորեն շրջանցել է Սահմանադրության տեսանկյունից հիմնարար նշանակություն ունեցող բովանդակային հարցերը՝ ինքնասահմանափակման հակասահմանադրական և կամայական հնարքի միջոցով սահմանափակվելով սոսկ Սահմանադրության նախաբանի, առավելապես՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի (այսուհետ նաև՝ Հռչակագիր) տեսանկյունից Կանոնակարգում ամրագրված պարտավորությունների գնահատմամբ՝ անտեսելով Սահմանադրության մի շարք առանցքային նորմատիվ պատվիրաններ:

Ընդ որում՝ Սահմանադրության նախաբանի վերլուծությունը ընդհանրապես անհրաժեշտ չէր, քանի որ պարզ չէ, թե Հայաստանի անկախության մասին հռչակագրի ո՛ր ձևակերպումն է, ըստ Սահմանադրական դատարանի, խնդիր առաջացնում կանոնակարգի վավերացման համար:

Ինչ վերաբերում է Սահմանադրության նախաբանին, ապա ինձ համար անընդունելի և իրավաբանորեն դժվար վերծանելի պատճառաբանություններով Սահմանադրական դատարանն արժեզրկել է Հայաստանի անկախության մասին հռչակագրի նորմատիվային նշանակությունը: Սահմանադրական դատարանը գտել է, որ Հռչակագրի այն դրույթները, որոնք չեն արտացոլվել Սահմանադրության մեջ, որևէ իրավական նշանակություն չունեն, ինչով ոչ միայն իմաստազրկել է Հայաստանի անկախության մասին հռչակագրի իրավական և պատմական նշանակությունը, այլև վերածել է այն սոսկ խորհրդանշական փաստաթղթի, իսկ Սահմանադրության նախաբանին՝ այդ մասով զրկել Սահմանադրության դրույթների մեկնաբանության համար որպես հիմք հանդիսանալուց:

Սահմանադրական դատարանը Հայաստանի անկախության մասին հռչակագրի նշանակությունը պարզելու համար գործածել է մի հնարք, որը դուրս է որևէ տրամաբանությունից. Հռչակագրի առանձին դրույթներ համեմատել է Սահմանադրության դրույթների հետ, և հայտնաբերելով «հակասություններ», որակազրկել է Հռչակագրի նորմատիվային բնույթը:

Սահմանադրությունը հղում չի անում Հռչակագրին որպես ամբողջությամբ գործող փաստաթուղթ, այլ հղման միջոցով սահմանադրական նորմատիվ բովանդակություն է հաղորդում Հայաստանի անկախության

մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին:

Այս առումով նախ հարկ է նշել, որ Հռչակագիրը գործող Սահմանադրության ընդունման շարժառիթներից մեկն է, և որպես Սահմանադրության ընդունման հիմք տեղ է գտել Սահմանադրության նախաբանում:

Հետևապես՝ կոպիտ մեթոդաբանական և տրամաբանական սխալ է 1995 թվականի, 2005 թվականի կամ գործող խմբագրությամբ Սահմանադրության համեմատությունը Հռչակագրի հետ, քանի որ այն չի հավակնել իրենով փոխարինելու Սահմանադրությունը:

Գտնում եմ, որ Հայաստանի անկախության մասին հռչակագրի՝ նորմատիվային բնույթի անտեսումը կարող է վտանգել անկախացման գործընթացի լեգիտիմությունը և հանգեցնել ներկայիս Հայաստանի Հանրապետության համար գոյաբանական վտանգների ավելացմանը:

3. Սահմանադրական դատարանի որոշումն աղավաղում է Սահմանադրության նախաբանի իմաստն ու նպատակը, քանի որ նախաբանին տրվել է այնպիսի մեկնաբանություն, որը որևէ հիմք չունի Սահմանադրության մեջ: Սահմանադրական դատարանի կողմից արված մեկնաբանությունը հակասում է նաև նախաբանի ստեղծման պատմությանը:

Սահմանադրության 1995 թվականի սկզբնական տեքստը մշակել է 1990 թվականի Գերագույն խորհրդի կողմից ստեղծված սահմանադրական հանձնաժողովը, որն արտացոլում էր Գերագույն խորհրդում այդ ժամանակվա քաղաքական ուժերի հարաբերակցությունը: Կառավարող մեծամասնությունը կտրականապես դեմ էր ազգային հիմնահարցերի ուղղակի արտացոլմանը Սահմանադրության մեջ, իսկ ընդդիմությունը տրամագծորեն հակառակ կարծիքի էր: Երբ սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած 1994 թվականի ապրիլի 20-ի Սահմանադրության նախագիծը Գերագույն խորհրդում չստացավ ձայների անհրաժեշտ 2/3 մեծամասնությունը, այդ հանձնաժողովը 1994 թվականի հունիսին ընդլայնվեց և համալրվեց հիմնականում ընդդիմության ներկայացուցիչներով: 1994 թվականի հոկտեմբերի 8-ին ընդլայնված սահմանադրական հանձնաժողովը Սահմանադրության նախաբանին վերաբերող լայն քննարկումների արդյունքում 19 կողմ և 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ընդունեց Սահմանադրության նախաբանի այն նախագիծը, որը հետագայում, միայն փոքր խմբագրական փոփոխություններով, ներառվեց 1995 թվականի հուլիսի

5-ի Սահմանադրության վերջնական տեքստի մեջ (Սահմանադրական ընդլայնված հանձնաժողովի նիստի արձանագրություն, հ. 70, էջ 12): Այդ նախագիծը նախորդ՝ 1994 թվականի ապրիլի 20-ի Սահմանադրության նախագծից («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23.04.1994 թ.) տարբերվում էր միայն նրանով, որ հղում էր կատարում 1990 թվականի օգոստոսի 23-ի Հայաստանի անկախության մասին հռչակագրին: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 1994 թվականի հոկտեմբերի 11-ին տպագրված պաշտոնական հաղորդագրությունում արձանագրվում էր, որ «սահմանադրական հանձնաժողովի ելույթ ունեցող անդամների մեծամասնությունը (...) աննպատակահարմար է գտել հարցի արտացոլումը առանձին հոդվածների տեսքով: Քննարկման արդյունքում հանձնաժողովի անդամները՝ հանգելով սկզբունքային համաձայնության, որոշել են Սահմանադրության հիմք ընդունված նախագծի նախաբանը խմբագրել նոր խմբագրությամբ»՝ Հայաստանի անկախության հռչակագրին հղումով: Այս պաշտոնական հաղորդագրությունից ակնհայտ է, որ հանձնաժողովը Հայաստանի անկախության մասին հռչակագրին հղումը Սահմանադրության նախաբան էր մտցնում ոչ թե նրա համար, որ հետագայում այդ համազգային նպատակները զարգացներ Սահմանադրության մյուս հոդվածներում, այլ ընդհակառակը՝ չէր ցանկանում Սահմանադրության որևէ հոդվածում ազգային խնդիրներին անդրադարձ կատարել և, հղում կատարելով Հռչակագրին, արձանագրում էր, որ այդ փաստաթղթում համազգային նպատակների առումով ամեն ինչ արտացոլված է:

Սահմանադրության նախաբանը սահմանում է, որ գոյություն ունեն «համազգային նպատակներ», և որ այդ նպատակները հաստատագրված են Հայաստանի անկախության մասին հռչակագրում: Այսինքն՝ Սահմանադրության նախաբանի միայն մեկնաբանությունից արդեն աներկբա է, որ այդ համազգային նպատակները Սահմանադրության մաս են կազմում:

Սահմանադրության նախաբանում Հայաստանի անկախության մասին հռչակագրի վկայակոչման նպատակը շատ հստակորեն արձանագրված է Սահմանադրական հանձնաժողովի 1994 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի արձանագրությունում և 1995 թվականի մայիսի 2-ին Գերագույն խորհրդին Սահմանադրության նախագծի վերաբերյալ սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած զեկույցում: Այդ զեկույցը հանձնաժողովի հանձնարարությամբ ներկայացրել է իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանը: Զեկույցում, անդրադառնալով նախագծի սկզբունքային նշանակություն

ունեցող դրույթներին, նա, մասնավորապես, նշել է. «Առաջինը հայ ժողովրդի իրական վիճակի՝ նրա ազգային հիմնահարցերի, մասնավորապես, Հայ դատի, Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման, դատապարտման ու դրա հետևանքների վերացման պահանջի արտացոլումն է: Այս, թերևս, ամենավիճահարույց խնդրի, երկարատև քննարկումների արդյունքում հաջողվեց գտնել համարժեք լուծում, կիրառվեց պետությունների սահմանադրական պրակտիկայում գործադրվող մի ձև՝ հղում (վկայակոչում), ամրագրվեց տվյալ խնդրի ամբողջական լուծումը բովանդակող մեկ այլ ակտի՝ վերջինիս հաղորդվեց Սահմանադրության բաղադրամասի կարգավիճակ: Նման հնարք, մասնավորապես, գործադրվել է Ֆրանսիայի Հանրապետության 1958 թ. Սահմանադրությունում, որի տեքստում չկան դրույթներ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին, փոխարենը ներածական մասում (պրեամբուլայում) հղում կա 1789 թվականի «Մարդու և քաղաքացիների իրավունքների հռչակագրին»: Դրա հետևանքով հիշյալ հռչակագիրը ձեռք է բերել Ֆրանսիայի գործող Սահմանադրության բաղադրամասի կարգավիճակ, դարձել նրա բովանդակության անբաժանելի մասը: Հանձնաժողովը նույն կերպ վարվեց Հայ դատի և Հայոց ցեղասպանության սահմանադրական արտացոլման հարցը լուծելիս. նախագծի ներածական մասում հղում ամրագրվեց 1990 թ. Հայաստանի անկախության մասին հռչակագրին: Այդ նպատակով, որպես հիմք ընդունված նախագծի «Մենք Հայաստանի Հանրապետության ժողովուրդը» արտահայտությունը փոխարինվեց «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները» դրույթով, որով Հայաստանի անկախության մասին հռչակագրի տեքստը դարձավ Սահմանադրության նախագծի բաղադրամասը»: Վերոնշյալից միանշանակ հետևում է, որ Հայաստանի անկախության մասին հռչակագրում ամրագրված նպատակները՝ մտցվելով նախաբան, արդեն դարձել են Սահմանադրության բաղկացուցիչ մաս, և Սահմանադրական հանձնաժողովը դրանք կոնկրետացնելու նպատակ և կարիք չի ունեցել:

Ուստի, իմ համոզմամբ, Սահմանադրական դատարանի որոշումը խեղաթյուրում է Սահմանադրության նախաբանում Հայաստանի անկախության մասին հռչակագրի վկայակոչման բուն իմաստը՝ փաստացի այդ նախաբանից ջնջելով «հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները» դրույթը:

4. Որպես Սահմանադրությանը և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքին ակնհայտորեն հակասող պետք է գնահատել Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, որով ինքն իրեն ազատում է Սահմանադրական դատարանի նախորդ որոշումներից մեկի պարտադիրությունից, այսինքն՝ փաստացի չեղարկում է այդ որոշման իրավաբանական ուժը՝ առանց պահպանելու սահմանադրական օրենքով սահմանված ընթացակարգը:

Այսպես՝ ՍԴՈ-1749 որոշման 3.4.1-ին կետում Սահմանադրական դատարանը վկայակոչում է 2010 թվականի հունվարի 12-ի ՍԴՈ-850 որոշումը, որում Սահմանադրական դատարանը հստակ շեշտել էր, որ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի **Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին»** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Վերոգրյալը նշանակում է, որ դեռևս 2010 թվականին Սահմանադրական դատարանը հստակեցրել էր Սահմանադրության նախաբանի և Հռչակագրի դրույթների նշանակությունը Սահմանադրության մեկնաբանման համար՝ թույլ չտալով ո՛չ օրենսդրին, ո՛չ էլ իրավակիրառ պրակտիկայում որևէ շեղում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Հայաստանի Հանրապետության պարտականությունից, որն ամրագրված է Հռչակագրում, և այդ մասով Հռչակագիրը շարունակում է գործել որպես նորմատիվային փաստաթուղթ:

Առանց որևէ դատավարական առիթի (Կանոնակարգը, ուստի և դիմումի առարկան որևէ առնչություն չունեն Հայոց ցեղասպանության հարցի հետ) անդրադառնալով այս հարցին՝ Սահմանադրական դատարանի դատավորների ընթացիկ մեծամասնությունը գտել է, որ եթե, իր ընկալմամբ, Սահմանադրական դատարանն իր այդ դիրքորոշումը չի հիմնավորել որևէ դոկտրինալ մեկնաբանությամբ, ապա դա չի կարող կաշկանդել Սահմանադրական դատարանին իր այս և հաջորդող որոշումներն ընդունելիս:

Այս, առավել քան յուրօրինակ «մոտեցումը», իմ գնահատմամբ, ոչ այլ ինչ է, քան առնվազն Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, 170-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև

Սահմանադրության դրույթներից ածանցվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշումների փոփոխումը կանոնակարգող՝ նույն սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջների խախտում:

Սահմանադրական դատարանի որոշումները պարտադիր են Սահմանադրական դատարանի համար՝ ի թիվս այլնի, նաև կամայականությունը բացառելու, դիմողների հավասարությունը երաշխավորելու և Սահմանադրական դատարանի հեղինակությունն ապահովելու տեսանկյունից: Եթե առանց օրենքով սահմանված ընթացակարգերի Սահմանադրական դատարանն իրեն «ազատում է» իր որևէ որոշման պարտադիրությունից, ապա նախ՝ դա կամայականություն է, բացի դրանից՝ լիազորությունների վերազանցում, ինչպես նաև սահմանադրական արդարադատության հեղինակազրկում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՍԴՈ-1749 որոշման 3.7-րդ կետով Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ «Սահմանադրական դատարանի այս եզրահանգումն այլևս վերացնում է Հռչակագրի նախաբանում ամրագրված «հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա» դրույթի վերաբերյալ՝ սույն որոշման 2-րդ կետում նշված հարցի լուծման համար հետագա քննության անհրաժեշտությունը»: Սահմանադրական դատարանն իր սահմանադրական առաքելության շրջանակներում իրավասու չէ ինքն իրեն սահմանափակելու, նման անընդունելի եզրահանգումներով, առավել ևս՝ ոչ վերաբերելի որոշմամբ: Սահմանադրական դատարանի սահմանադրական առաքելության, լիազորությունների շրջանակը հստակ սահմանված են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

5. Ալմա Աթայի 1991 թվականի հռչակագիրն ինքնին չէր կարող Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության համար սահմանել միջազգային իրավական առումով որևէ պարտավորություն, քանի դեռ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը պատշաճ ներպետական ընթացակարգերով չէին վավերացրել հռչակագրի ընդունման համար հիմք հանդիսացող ԱՊՀ ստեղծման համաձայնագրի Ալմա Աթայի արձանագրությունը և Մինսկի պայմանագիրը:

Ադրբեջանի Հանրապետությունը հրաժարվել է վավերացնել Ալմա Աթայի արձանագրությունը և Մինսկի պայմանագիրն ընդհուպ մինչև 1993 թվականի սեպտեմբերի 23-ը: Որպեսզի Ադրբեջանի Հանրապետության այդ ժամանակվա նախագահ Ա. Մութալիբովի կողմից ստորագրված փաստաթղթերն իրավական ուժ ձեռք բերեին Ադրբեջանի Հանրապետության համար, անհրաժեշտ էր, որ կա՛մ Ալմա Աթայի արձանագրությունը, կա՛մ ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը վավերացվեր Ադրբեջանի Հանրապետության խորհրդարանի կողմից: Սակայն Ադրբեջանի Հանրապետության խորհրդարանը 1992 թվականի հոկտեմբերի 7-ին ուղղակիորեն մերժել է ԱՊՀ համաձայնագրի վավերացումը[1]: Ադրբեջանի Հանրապետությունն իր դիրքորոշումն ԱՊՀ նկատմամբ փոխել է միայն 1993 թվականի աշնանը: 1993 թվականի սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի Հանրապետության խորհրդարանն ընդունեց «Անկախ պետությունների համագործակցությանը Ադրբեջանի Հանրապետության միանալու մասին» որոշումը[2]: Այդ որոշմամբ Ադրբեջանի Հանրապետությունը միանում էր ինչպես Անկախ պետությունների համագործակցությանը, այնպես էլ ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը: Որոշման 3-րդ կետով Ադրբեջանի նախագահին առաջարկվում էր իրականացնել այդ որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումներ: Ի կատարումն այդ որոշման՝ մի քանի օր անց՝ 1993 թվականի սեպտեմբերի 24-ին, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հ. Ալիևը Մոսկվայում ստորագրեց 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության (ՌՍԴԽՀ) և Ուկրաինայի կողմից ստորագրված համաձայնագրին կից արձանագրությունը[3] և Ալմա Աթայի հռչակագիրը[4]: Ալմա Աթայի հռչակագրին միանալու վերաբերյալ Հ. Ալիևի կողմից ստորագրված փաստաթուղթն ունի հետևյալ բովանդակությունը. «Սույնով հաստատվում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը ստորագրում է Ալմա Աթայի հռչակագիրը, որը կնքվել է Անկախ պետությունների համագործակցության Պետությունների ղեկավարների խորհրդի նիստում, 1991թ. դեկտեմբերի 21-ին, Ալմա Աթայում»[5]: Ադրբեջանը, չնայած այն հանգամանքին, որ Ա. Մութալիբովը 1991 թվականի դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում ստորագրել էր ԱՊՀ համաձայնագրին կից արձանագրությունը, ԱՊՀ

[1] http://www.e-qanun.az/framework/7797:
[2] http://www.meclis.gov.az/?/az/topcontent/60:
[3] http://cis.minsk.by/reestrv2/doc/6#text:
[4] https://cis.minsk.by/site/about-cis. Алма-Атинская Декларация (21 декабря 1991 года):
[5] https://cis.minsk.by/site/about-cis. Алма-Атинская Декларация (21 декабря 1991 года):

անդամ պետության կարգավիճակ է ձեռք բերել միայն 1993 թվականի սեպտեմբերի 24-ին: Ըստ այդմ՝ մինչև 1993 թվականի սեպտեմբերի 24-ը Ադրբեջանի Հանրապետության մասնակցությամբ ԱՊՀ որևէ փաստաթուղթ չէր կարող ԱՊՀ անդամ այլ պետությունների համար առաջացնել իրավունքներ կամ պարտականություններ: Ուստի՝ 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Ալմա Աթայի հռչակագիրը, որն ԱՊՀ անդամ պետությունների միջև ստորագրված փաստաթուղթ է, առնվազն մինչև 1993 թվականի սեպտեմբերի 24-ը Հայաստանի Հանրապետության վրա որևէ միջազգային-իրավական պարտավորություն չէր կարող դնել ԱՊՀ անդամ պետություն չհանդիսացող Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ:

Այսպիսով, Ադրբեջանի Հանրապետության նախագահ Մութալիբովի կողմից 1991 թվականի դեկտեմբերի 21-ին ստորագրված փաստաթղթերը որևէ իրավաբանական նշանակություն չունեն ԱՊՀ-ին անդամակցության և այդ շրջանակներում Ադրբեջանի Հանրապետության միջազգային-իրավական պարտավորությունների տեսանկյունից: Սակայն, նույնիսկ եթե Ադրբեջանի Հանրապետությունը պատշաճ ներպետական ընթացակարգերով վավերացներ ԱՊՀ արձանագրությունը և ԱՊՀ պայմանագիրը, ապա դա միևնույն է, որևէ նշանակություն չէր կարող ունենալ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև սահմանների ճանաչման համար: 1991 թվականի դեկտեմբերի 21-ի հռչակագրում որևէ հիշատակում չկա այն մասին, որ ԱՊՀ անդամ պետությունները ճանաչում են միմյանց միջև գոյություն ունեցող սահմանները: Ո՛չ տարածքային ամբողջականության և ո՛չ էլ սահմանների անխախտելիության ճանաչման և հարգման վերաբերյալ դրույթները որևէ առնչություն չունեն այն հարցի հետ, թե որոնք են ԱՊՀ անդամ պետությունների միջև գործող սահմանները, և թե ինչ տարածք է ընդգրկում այս կամ այն պետությունը:

ԱՊՀ անդամ պետությունները միմյանց սահմանները ճանաչել են միայն 1993 թվականի հունվարի 22-ին ընդունված ԱՊՀ կանոնադրությամբ: Հայաստանի Հանրապետության համար այդ կանոնադրությունն ուժի մեջ է մտել 1994 թվականի մարտի 16-ին, իսկ Ադրբեջանի Հանրապետության համար՝ 1993 թվականի դեկտեմբերի 14-ին:

Այսպիսով, Կանոնակարգի նախաբանի երկրորդ պարբերության առաջին նախադասությունում հիշատակված Ալմա Աթայի 1991 թվականի հռչակագիրը չի կարող հանդիսանալ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման գործընթացի հիմնարար սկզբունք:

Ինչ վերաբերում է Կանոնակարգի նախաբանի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունում նախատեսված հնարավորությանը՝ փոխելու 1991 թվականի Ալմա Աթայի հռչակագրի հիմնարար սկզբունքը, քաղաքական առումով ձեռնտու է միայն Ադրբեջանի Հանրապետությանը, իրավական առումով անորոշ է և, նկատի ունենալով Ադրբեջանի Հանրապետության ղեկավարի ծավալապաշտական նկրտումները, կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խաթարմանը:

6. Կանոնակարգի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«Սահմանազատման աշխատանքներն իրականացնելիս Հանձնաժողովները կարող են դիտարկել սահմանագծի անցման օպտիմալացման հնարավորություններ և համաձայնեցնել գործընթացի չափանիշներն ու ձևերը հետևյալ նպատակներով՝

1) սահմանամերձ բնակավայրերի անվտանգության ապահովում.

(...)»:

Սահմանադրական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում հիմնավոր ենք համարում այն պնդումը, որ Սահմանադրության իմաստով առանձին բնակավայրի անվտանգություն գոյություն չունի, ցանկացած բնակավայրի անվտանգություն արդեն իսկ պետական անվտանգության հարց է, որի պաշտպանությունը պետության խնդիրն է:

Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»:

Գտնում եմ, որ Կանոնակարգի 4-րդ հոդվածում ամրագրված դրույթը, որը սահմանագծի անցման օպտիմալացման հնարավորություններ և համաձայնեցման գործընթացի չափորոշիչների ու ձևերի համար ոչ թե պարտադիր, այլ միայն հնարավոր նպատակ է սահմանում սահմանամերձ բնակավայրերի անվտանգության ապահովումը, հակասում է Սահմանադրության 14-րդ հոդվածին՝ համակցված Սահմանադրության 3-րդ հոդվածի հետ:

7. Կանոնակարգի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանազատման աշխատանքները Հանձնաժողովներն իրականացնում են սահմանագծի առանձին համաձայնեցված հատվածներով/հատվածամասերով: Յուրաքանչյուր այդպիսի հատվածի/հատվածամասի համար կազմվում է սահմանագծի անցման նկարագրություն, որը մինչև

սահմանազատման գործընթացի ամբողջական ավարտը **կհամարվի համաձայնեցված**»:

Նշված կարգավորումը (համաձայնեցված համարվելու մասով) նորմատիվային նշանակություն կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ այդ համաձայնեցված հատվածներում արդեն իսկ տեղի ունենան փաստացի փոփոխություններ, այսինքն՝ երբ որոշակի հատվածներ համարվեն համաձայնեցված, նշված հատվածներում արդեն իսկ փաստացի իրականացվի իրավազորության փոխանցում: Ցանկացած հակառակ մեկնաբանություն նշված կարգավորումը դարձնում է առարկայազուրկ: Նշված մեկնաբանությունը նաև բխում է Միջազգային պայմանագրերի իրավունքի Վիեննայի կոնվենցիայի[6] 32-րդ և հաջորդող հոդվածներից (մասնավորապես՝ կողմերի նախորդ պրակտիկայից):

Արդյունքում նշված կարգավորումը հնարավորություն է տալիս մինչև վերջնական պայմանագրի համաձայնեցումը և կնքումը, ներպետական գործընթացներով դրանց պարտադիրության հաստատումը (վավերացում, ներառյալ հնարավոր հանրաքվե), ինչը կարող է տևել տարիներ կամ այդպես էլ տեղի չունենալ[7]) արդեն իսկ իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքի փաստացի փոփոխություն[8]:

Նշված կարգավորումը հակասում է Սահմանադրության 205-րդ հոդվածին, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքի որևէ փոփոխության հարց (անկախ նրանից՝ դա ժամանակավոր է, թե մշտական, անկախ փոփոխվող տարածքի չափից, փաստացի համաձայնեցման ընթացակարգից և այլն) պետք է լուծվի հանրաքվեի

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=24526

[7] Որպես նման օրինակ կարելի է նշել ԽՍՀՄ-ԱՄՆ համաձայնագիրը Բերինգյան ծովում սահմանազատման մասին (այսպես կոչված Բեյկեր-Շևարդնաձե համաձայնագիր), որն ստորագրվել է 1990 թվականին, բայց մինչև հիմա չի անցել ներպետական համաձայնեցման գործընթացներ (վավերացում) - https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BE%D0%B3%D0%BB%D0%B0%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%BC%D0%B5%D0%B6%D0%B4%D1%83_%D0%A1%D0%A1%D0%A1%D0%A0_%D0%B8_%D0%A1%D0%A8%D0%90_%D0%BE_%D0%BB%D0%B8%D0%BD%D0%B8%D0%B8_%D1%80%D0%B0%D0%B7%D0%B3%D1%80%D0%B0%D0%BD%D0%B8%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F_%D0%BC%D0%BE%D1%80%D1%81%D0%BA%D0%B8%D1%85_%D0%BF%D1%80%D0%BE%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D0%BD%D1%81%D1%82%D0%B2

[8] Նման իրավիճակ արդեն իսկ առկա է Տավուշի մարզի մի շարք համայնքների մաս կազմող տարածքներում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխություն տեղի է ունեցել առանց ներպետական ընթացակարգի պահպանման, ներառյալ Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրված սեփականության վկայականների և առկա կադաստրային քարտեզների՝ առանց իրավական հիմքի և գործընթացի «չեղարկման»:

միջոցով, ընդ որում՝ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նման հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումը Կառավարության առաջարկությամբ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (այսինքն՝ նման որոշման ընդունման համար անհրաժեշտ է Կառավարության առաջարկությունը, Ազգային ժողովի՝ հանրաքվե նշանակելու որոշումը և արդեն իսկ հանրաքվեի արդյունքները): Այնինչ, Կանոնակարգի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությունը կարող է իրականացվել՝ շրջանցելով և՛ Կառավարությանը, և՛ Սահմանադրական դատարանին, և՛ Ազգային ժողովին, և՛ առավել ևս չիրականացնելով հանրաքվե:

Բացի Սահմանադրության 205-րդ հոդվածին հակասելու հանգամանքից, նշված կարգավորումը (հաշվի առնելով, որ այն ենթադրում է համաձայնեցված հատվածների մասում իրավազորության (ինքնիշխանության փաստացի փոխանցում) կարող է պոտենցիալ վտանգ ստեղծել նաև Սահմանադրության 3-րդ հոդվածի[9] և Սահմանադրության 2-րդ գլխում սահմանված մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի, ընդհուպ սահմանափակման համար:

Կանոնակարգը Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխության դեպքում (անկախ նրանից Հայաստանի Հանրապետությանը կանցնեն որոշակի տարածքներ, թե Հայաստանի Հանրապետության որոշակի տարածքներ կանցնեն Ադրբեջանի Հանրապետությանը) որևէ կերպ չի կարգավորում, թե ինչպես պետք է կարգավորվեն քաղաքացիության և սեփականության, քաղաքացիների հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերը: Նշված հարցերը ենթադրաբար կարգավորվելու են վերջնական համաձայնագրով, որը սակայն առկա չէ, իսկ առկա կարգավորումը (Կանոնակարգի 5-րդ հոդվածի 1-ին մաս) հնարավորություն է տալիս մինչև նշված հարցերի կարգավորումն արդեն իսկ իրականացնել փաստացի ինքնիշխանության փոխանցում (տարածքի փոփոխություն):

Հաշի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը, առանց ներպետական ընթացակարգերը պահպանելու, Ադրբեջանի Հանրապետությանը փոխանցել է տարածքներ Սյունիքի և Տավուշի մարզերում,

[9] Համաձայն որի՝ «1. Հայաստանի Հանրապետությունում **մարդը բարձրագույն արժեք է**: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը **հանրային իշխանության պարտականություններն են**»:

Սահմանադրական դատարանը պարտավոր էր Կանոնակարգի 5-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը գնահատել այդ հակասահմանադրական պրակտիկայի լույսի ներքո, ինչը սակայն չի արվել: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանը պարտավոր է կատարել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը, այն է՝ «Եթե միջազգային պայմանագիրը էապես շոշափում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները, ապա Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը դրա վերաբերյալ պետք է համապատասխան նշում պարունակի», ինչը ևս չի արվել:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ իմ անհամաձայնությունն եմ հայտնում որոշման պատճառաբանական մասին, գտնում եմ, որ Կանոնակարգը Սահմանադրական դատարանում քննության ենթակա չէր, իսկ բովանդակային առումով Կանոնակարգում ամրագրված պարտավորությունները հակասում են Սահմանադրությանը:

Հետգրություն.

Սահմանադրական դատարանի մեծամասնությունը Հայաստանի անկախության մասին հռչակագրի հետ կապված «սահմանադրական երկիշխանության» վտանգ է տեսնում և կարծում է, որ այդ «երկիշխանությունը» Հռչակագիրը վերածելու է «զավակին խժռող ծնողի»:

Գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի որոշումներին բնութագրական չեն այդբովանդակ դարձվածքների կիրառումը:

Եթե ՍԴՈ-1749 որոշմամբ ընդունված մոտեցումը դա է, ապա իմ հակադարձումը այդ ոճով հետևյալն է. **Սահմանադրական դատարանի որևէ կազմ, որևէ ժամանակահատվածում իրավասու չէ «խժռել» Հայաստանի անկախության մասին հռչակագիրը:**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

7 հոկտեմբերի 2024 թվականի

Սահմանադրական դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 26-ի ՍԴՈ-1749 որոշման վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորներ Վ. Մ. Գրիգորյանի և Դ. Մ. Խաչատուրյանի համատեղ հատուկ (համընկնող) կարծիքը

Ներածություն

1. Սահմանադրական դատարանի մեծամասնության հետ Սահմանադրական դատարանի «2024 թվականի օգոստոսի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1749 որոշման (այսուհետ՝ Որոշում) թե՛ եզրափակիչ և թե՛ պատճառաբանական մասերին համաձայնությամբ հանդերձ, սույն հատուկ համընկնող կամ լրացնող կարծիքով նպատակ ունենք դրանք լրացնել, մեր կարծիքով, խնդրո առարկայի՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի (այսուհետ՝ Հռչակագիր) և Սահմանադրության հարաբերակցության վերաբերյալ Սահմանադրության նախագծի մշակման աշխատանքների ընթացքին վերաբերող մի շարք կարևոր դիտարկումներով և վերլուծություններով:

2. Սույն հատուկ կարծիքը ներկայացվում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով:

3. Մինչ 1990-1995 թվականների ընթացքում Սահմանադրության նախագծի մշակման աշխատանքների ընթացքին անդրադարձը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ աշխատանքների ընթացքում քաղաքական կուսակցությունների, պետական պաշտոնատար անձանց, անհատ քաղաքական գործիչների և իրավաբանների դիրքորոշումները և կարծիքները Սահմանադրական դատարանի համար չէին կարող և չպետք է ունենային որոշիչ կամ առհասարակ՝ որևէ նշանակություն այն պատճառով, որ Սահմանադրության նախագծի մշակման և ամբողջականացման գործընթացը չի կարող նույնականացվել Սահմանադրության ընդունման ակտի հետ: Սահմանադրության ընդունումն ինքնին ո՛չ վերապահված է եղել Գերագույն խորհրդին կամ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովին, ո՛չ էլ

իրականացվել է վերջիններիս կողմից: Սահմանադրությունն ընդունվել է Հայ ժողովրդի կողմից, որը Սահմանադրության նախաբանի իմաստով Սահմանադրության ընդունման գործընթացում ուղղակիորեն ներգրավված և մասնակից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացված համաժողովրդական հանրաքվեով Սահմանադրության ընդունման հարցին քվեարկությամբ պատասխանած քաղաքացիներն էին:

4. Այդուհանդերձ, մենք՝ սույն հատուկ կարծիքը ստորագրած դատավորներս, կարևոր ենք համարում հայ իրավագիտական և քաղաքագիտական որոշ շրջանակների կողմից Սահմանադրության և հատկապես դրա նախաբանի մեկնաբանության հարցում Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1749 որոշմամբ արձանագրված մոտեցումներից տարբերվող և Սահմանադրության նախաբանի մեկնաբանության այլ՝ իրավական-մեկնաբանողական մեթոդաբանությունների հետ որևէ աղերս չունեցող պնդումներին ի պատասխան՝ բացահայտել հենց այն պատմական իրողությունների պատկերը, որը, որևէ լուրջ ուսումնասիրության ենթարկված չլինելու և դրանից ածանցվող անորոշության պայմաններում և թերևս՝ պատճառով, հանդիսացել է Սահմանադրության նկատմամբ Հռչակագրի պահպանվող ազդեցության «սողացող» թեզը սպասարկող հիմնական աղբյուրը:

Սահմանադրության նախագծման աշխատանքների ընթացքը Սահմանադրական հանձնաժողովում.

5. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1990 թվականի նոյեմբերի 5-ին (Հռչակագրի ընդունումից մոտ 2,5 ամիս անց) ընդունել էր «Սահմանադրական հանձնաժողով կազմելու մասին» Ն-0185—Ի որոշումը, որի կազմում ընդգրկվել էին Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (նախագահ),[1] Գրիգոր Ավագյանը,[2] Տարիել Բարսեղյանը,[3] Արտավազդ Գևորգյանը,[4] Համլետ Գևորգյանը,[5]

[1] Սահմանադրական հանձնաժողովի ստեղծման պահին ԳԽ նախագահ, իսկ 1991 թվականից՝ Հանրապետության Նախագահ՝ շարունակելով պաշտոնավարել նաև Սահմանադրական հանձնաժողովի նախագահի պաշտոնում:

[2] Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավոր, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ամբիոնի վարիչ, Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

[3] Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

[4] Հայաստանի Հանրապետության դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

[5] Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի բաժնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Էդուարդ Եգորյանը,[6] Վարդան Զուռնաչյանը,[7] Հրանտ Խաչատրյանը,[8] Միեր Խաչատրյանը,[9] Վոլոդյա Հովհաննիսյանը,[10] Յուրի Մովսիսյանը,[11] Աշոտ Նավասարդյանը,[12] Աշոտ Ոսկանյանը,[13] Ռաֆայել Պապայանը,[14] Ռաֆիկ Պետրոսյանը,[15] Արշակ Սադոյանը,[16] Արա Սահակյանը,[17] Յուրի Սարգսյանը,[18] Վահե Ստեփանյանը[19] և Շավարշ Քոչարյանը[20]:

6. Սահմանադրական հանձնաժողովը 1993 թվականի հունիսի 24-ի նիստում (արձանագրություն թիվ 24) որոշել էր հավանություն տալ (կողմ-13, դեմ-0, ձեռնպահ-2) Սահմանադրության նախագծին, որը բաղկացած է եղել նախաբանից և հետևյալ 8 գլուխներից՝ Նախաբան, գլուխ 1՝ «Պետականության հիմնադրույթները», գլուխ 2՝ «Քաղաքացու հիմնական իրավունքները և պարտականությունները», գլուխ 3՝

[6] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու:

[7] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի իրավական հարցերի հանձնաժողովի անդամ:

[8] Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավոր, «Արարատ» հայկական արտադրական միավորման «Հատիս» ինժեներաարտադրական կենտրոնի բյուրոյի պետ:

[9] Փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

[10] Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու:

[11] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տնտեսական ինքնուրույնության և տնտեսության զարգացման հարցերի նախագահ:

[12] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի հանձնաժողովի անդամ:

[13] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մանդատային և էթիկայի հարցերի հանձնաժողովի նախագահ:

[14] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մարդու իրավունքների և ազգությունների հարցերի հանձնաժողովի նախագահ:

[15] Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավոր, Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

[16] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի անդամ:

[17] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քարտուղար:

[18] Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավոր, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

[19] Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր:

[20] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալ:

«Ազգային խորհուրդը», գլուխ 4՝ «Հանրապետության նախագահը», գլուխ 5՝ «Կառավարությունը», Գլուխ 6՝ «Դատական իշխանությունը», Գլուխ 7՝ «Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում», Գլուխ 8՝ «Սահմանադրությունն ընդունելու և Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու կարգը»:

7. Սահմանադրական հանձնաժողովի՝ 1993 թվականի հունիսի 24-ի նիստում հավանություն ստացած Սահմանադրության նախագծում նախաբանն ունեցել է հետևյալ շարադրանքը.

> «Մենք, Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, լի վճռականությամբ իրականացնելու ինքնիշխան հայոց պետականության վերածնման ու հզորացման մեր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, ապահովելու համար մեր և մեր սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, ընդունում ենք սույն Սահմանադրությունը»:

8. Սահմանադրական հանձնաժողովի անդամներ Յու. Սարգսյանը և Հ. Գևորգյանը 1993 թվականի հոկտեմբերի 13-ին Գերագույն խորհրդի նախագահին են ներկայացրել Սահմանադրության նախագծի վերաբերյալ հատուկ կարծիք՝ այն սահմանված կարգով Գերագույն խորհրդում քննելու համար: Այս կապակցությամբ Գերագույն խորհրդի նախագահությունը 1993 թվականի հոկտեմբերի 29-ին որոշել է հիշյալ հատուկ կարծիքը հանձնել Սահմանադրական հանձնաժողովին, Գերագույն խորհրդի իրավական հարցերի, անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի մշտական հանձնաժողովներին և Սահմանադրության նախագծի քննարկման ընթացքում ստացվող դիտողություններն ու առաջարկությունները համակարգող հանձնաժողովին՝ հիշյալ հանձնաժողովներին առաջարկելով հատուկ կարծիքի վերաբերյալ եզրակացությունը Սահմանադրության նախագծերի քննարկման ժամանակ ներկայացնել Գերագույն խորհրդի նախագահություն[21]:

9. Հիշատակված հատուկ կարծիքում դրա հեղինակները նշել էին.

> «1. Սահմանադրության մեջ համազգային նշանակություն ունեցող խնդիրների հաստատագրման անհրաժեշտության մասին:
>
> Նախագծում փաստորեն չի արտացոլված «Հայաստանի Հանրապետություն»-հայ ժողովուրդ» առնչությունը, այսինքն՝ պարտավորությունների այն համախումբը, որը Հանրա-

[21] Քաղվածք նույն օրվա Գերագույն խորհրդի նախագահության թիվ 384 արձանագրությունից:

պետությունը ստանձնում է հայ ժողովրդի մշակույթի, լեզվի, կրոնի, պետական-պատմական ավանդույթների պահպանման և զարգացման, ինչպես նաև բոլոր հայերի (համայն հայության)՝ իրենց պատմական հայրենիքում ապրելու իրավունքի միջազգային ճանաչման ուղղությամբ: Այսպիսով, անտեսված են մեր նորաստեղծ անկախ պետականության ակունքները, համազգային նպատակներն ու խնդիրները, այն սահմանադրական նորմերը, որոնք պետք է նպատակաուղղեն և կարգավորեն հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև: Բացակայում է Անկախության Հռչակագրի հիշատակումը, որն իր մեջ պարունակում է առաջադրվող հարցերի որոշ ձևակերպումներ:

Այս նկատառումներով առաջարկվում է.

ա) Սահմանադրության նախաբանը ձևակերպել հետևյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետության ժողովուրդը

հիմք ընդունելով Անկախության հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները,

հավաստելով հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում ապրելու և ինքնորոշվելու բնական իրավունքը,

լի վճռականությամբ՝ իրականացնելու ինքնիշխան հայոց պետականության վերածնման և հզորացման մեր ազատասեր նախնիների սուրբ պատգամը,

արտահայտվելով ժողովրդավարական իրավական պետություն ստեղծելու, նրա քաղաքացիների ազատ, արժանապատիվ և բարեկեցիկ կյանքը ապահովելու իր կամքը,

ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (Հիմնական օրենք):

(…)»:

10. Գերագույն խորհուրդը 1994 թվականի հունիսի 16-ի նիստում որոշել էր ընդլայնել Սահմանադրական հանձնաժողովի կազմը՝ դրանում ներառելով հանձնաժողովում ներկայացվածություն չունեցող հասարակական-քաղաքական կազմակերպությունների և օրենսդրական նախաձեռնության հեղինակների մեկական ներկայացուցիչներով և հանձնաժողովի կազմում ներառել Գերագույն խորհրդի նախագահին՝ համանախագահի կարգավիճակով[22]:

[22] Գերագույն խորհրդի 1994 թվականի հունիսի 16-ի նիստի արձանագրություն, էջ 197:

11. Նախաբանի բովանդակության և դրա շարադրանքի հարցը քննության առարկա էին դարձել Սահմանադրական հանձնաժողովի 1994 թվականի հոկտեմբերի 8-ի նիստում (արձանագրություն թիվ 70)՝ «*Հայ դատի*» վերաբերյալ ստացված և նախորդ նիստերում ներկայացված առաջարկները[23]: Այդ օրվա քննարկումներում Սահմանադրական հանձնաժողովի անդամներից վեցը[24] լուրջ բովանդակային հիմնավորումներով առարկել են «*Հայ դատին*» առնչվող դրույթ Սահմանադրության մեջ ամրագրելուն: Չորս այլ անդամներ ունեցել են նույն խնդրի վերաբերյալ հակադիր դիրքորոշում՝ իրենց սկզբունքային հիմնավորումներով[25]: Սահմանադրական հանձնաժողովի այլ երկու անդամներ արտահայտվել են փոխզիջումային տարբերակ որոնելու և հանձնաժողովի աշխատանքների ընթացքը և արդյունավետությունը չվտանգելու մոտեցում, խնդրին հիմնական նպատակի համեմատ գերակայություն չտալու մտայնությամբ[26]:

12. Ամփոփելով քննարկման արդյունքները՝ Սահմանադրական հանձնաժողովի համանախագահ Լ. Տեր-Պետրոսյանը քվեարկության էր դրել Սահմանադրության ներածության (նախաբանը հիշատակվել է աշխատանքներում նաև՝ ներածություն) հետևյալ ձևակերպումը, որը և ընդունվել էր Սահմանադրական հանձնաժողովի անդամների 19 կողմ և 1 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ[27].

> «Հայ ժողովուրդը, իրականացրած ինքնիշխան հայոց պետականության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, լի վճռականությամբ նվիրվելու նրա հզորացման և բարգավաճման գործին, ապահովելու համար իր և իր սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հիմք ընդունելով անկախության հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, հավաստելով իր հավատարմությունը

[23] Սահմանադրական հանձնաժողովի 1994 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի թիվ 70 արձանագրություն, էջ 4:

[24] Համանախագահներ Լ. Տեր-Պետրոսյան, Բ. Արարքցյան, Սահմանադրական հանձնաժողովի անդամներ Է. Եգորյան, Է. Սողոմոնյան, Ի. Մուրադյան, Մ. Խաչատրյան (նույն տեղում):

[25] Սահմանադրական հանձնաժողովի անդամներ Յու. Սարգսյան, Մ. Սարգսյան, Խ. Ստամբոլցյան, Գ. Ավագյան (նույն տեղում):

[26] Սահմանադրական հանձնաժողովի անդամներ Ա. Նավասարդյան, Վ. Նազարյան: Նույն տեղում:

[27] Սահմանադրական հանձնաժողովի 1994 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի թիվ 70 արձանագրություն, էջեր 4-12:

համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

13. Սահմանադրական հանձնաժողովի 1995 թվականի ապրիլի 13-ի նիստում (արձանագրություն թիվ 107) որոշվել էր Գերագույն խորհրդում Սահմանադրության նախագիծը ներկայացնելու համար լիազորել Վ. Նազարյանին և Վ. Ստեփանյանին:

Սահմանադրության նախագծի քննարկումները Գերագույն խորհրդում.

14. Գերագույն խորհրդում Սահմանադրության նախագծի ներկայացման համար գումարված՝ 1995 թվականի մայիսի 2-ի նիստում Սահմանադրական հանձնաժողովի նախագիծը ներկայացնող Վ. Նազարյանն իր բացման խոսքում նշում է[28].

> Վ. Նազարյան - (...) Առաջինը հայ ժողովրդի իրական վիճակի՝ նրա ազգային հիմնահարցերի, մասնավորապես, հայ դատի, հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման, դատապարտման ու դրա հետևանքների վերացման պահանջի արտացոլումն է: Այս, թերևս, ամենավիճահարույց խնդրի, երկարատև քննարկումների արդյունքում հաջողվեց գտնել համարժեք լուծում, կիրառվեց պետությունների սահմանադրական պրակտիկայում գործադրվող մի ձև՝ հղում /վկայակոչում/, ամրագրվեց տվյալ խնդրի ամբողջական լուծումը բովանդակող մեկ այլ ակտի՝ վերջինիս հաղորդվեց Սահմանադրության բաղադրամասի կարգավիճակ: Նման հնարք, մասնավորապես, գործադրվել է Ֆրանսիայի Հանրապետության 1958 թ. Սահմանադրությունում, որի տեքստում չկան դրույթներ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների մասին, փոխարենը ներածական մասում /պրեամբուլայում/ հղում կա 1789 թվականի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրին»: Դրա հետևանքով հիշյալ հռչակագիրը ձեռք է բերել Ֆրանսիայի գործող Սահմանադրության բաղադրամասի կարգավիճակ, դարձել նրա բովանդակության անբաժանելի մասը: Հանձնաժողովը նույն կերպ վարվեց Հայ դատի և Հայոց ցեղասպանության սահմանադրական արտացոլման հարցը լուծելիս ...:

15. Գերագույն խորհրդում Սահմանադրության նախագծի ներկայացման համար գումարված՝ 1995 թվականի մայիսի 3-ի նիստի արձանագրությունը պարունակում է Վ. Նազարյանի և պատգամավոր

[28] Գերագույն խորհրդի 1995 թվականի մայիսի 2-ի նիստի արձանագրություն, էջեր 49-50:

Գ. Մանուկյանի հարցուպատասխանի արձանագրությունը հետևյալ բովանդակությամբ[29].

Գ. Մանուկյան -Ես անցյալ անգամ էլ ասեցի և շատ հիշում էի, երբ որ մենք հռչակագիրն էինք ընդունում, այնտեղ բավականին բուռն կերպով գնաց հայ դատի ցեղասպանության ճանաչման հարցերը:

Վ. Նազարյան -Այո:

Գ. Մանուկյան -Եվ այնտեղ մեր հանգուցյալ պատգամավորներից մեկի միայն վերջին ճիգերի շնորհիվ, բռնկման շնորհիվ հնարավոր լինել գալ կոմպրոմիսի և լուծել, հռչակագրում մտցնել հայ դատի և ցեղասպանության պաշտպանությունը աշխարհում: Հիմա, ներկայումս էս Սահմանադրությունում դուք ասում եք մի հնար են գտել: Ես չգիտեմ, մենք Սահմանադրություն ենք ընդունում, հնարքներով ենք հարց լուծում, որ էն Հռչակագրից էդ դրույթը տեղափոխեն կից Սահմանադրություն և առանձին տպել: Ինչո՞ւ չմտցնել Սահմանադրության մեջ»:

Վ. Նազարյան-Ըհը:

Գ. Մանուկյան-Ես ուղղակի պարզ կերպով ասում եմ, ի՞նչն է խանգարում մտցնել Սահմանադրության մեջ: Եթե մենք, իրոք, դա ընդունում ենք, ընդունել ենք արդեն և նորից շարունակում ենք ընդունել, ապա ինչո՞ւ չմտցնել Սահմանադրության մեջ»:

Վ. Նազարյան -Հա: Էս Սահմանադրության ներկա նախա ... Պատասխանեմ ձեր հարցին, ներկա նախագիծը բավականին լուրջ կոմպրոմիսների արդյունք է Վեցյակի նախագծում պարզ, Սահմանադրության տեքստում, ամրագրված էր ձեր ասածը: Մյուս սահմանադրական հանձնաժողովի նախորդ տարբերակում նախագծի ընդհանրապես հիշատակում չկար դրա մասին: Մեզ էդ ... էդ ... էդ ուղեցույց եղան մի շարք երկրների, մասնավորապես Ֆրանսիայի Սահմանադրությունը, որտեղ չկան մարդու իրավունքների և ազատությունների մասին որևէ հիշատակում և պրեամբուլայում՝ նախաբանում, հղում կա մարդու իրավունքների 1789 թվի հռչակագրին և էդ հռչակագիրը ընդունված է սահմանադրական պրակտիկայում, դառնում է սահմանադրության տեքստի բաղադրամասը: Եվ Ֆրանսիայի Սահմանադրությունը հրապարակվում է պաշտոնապես մի-

[29] Գերագույն խորհրդի 1995 թվականի մայիսի 3-ի նիստի արձանագրություն, էջեր 109-110:

այն էդ հռչակագրի հետ միասին: Էդ ժամանակ ստեղծված փակուղուց դուրս գալու համար միջոց գտնվեց. այ, էդ հնարքը, որ ասում էր, օգտագործել, դրանով իսկ հռչակագիրը. Հայաստանի անկախության հռչակագիրը, դարձնել, դարձնել մեր Սահմանադրության բաղադրամասը, որպեսզի էդ հարցի լուծումը ստանա: Թե չէ կար երկու իրարամերժ վիճակ. մի տեղ՝ ամրագրված տեքստում, մի տեղ՝ բոլորովին բացակայություն: Գտնվեց ըտենց կոմպրոմիսային լուծում:

16. Գերագույն խորհրդում Սահմանադրության նախագծի ներկայացման համար գումարված՝ 1995 թվականի մայիսի 10-ի նիստի արձանագրությունը պարունակում է պատգամավոր Կ. Բալայանի դիրքորոշումը խնդրո առարկայի վերաբերյալ՝ հետևյալ արձանագրված բովանդակությամբ[30].

Կ. Բալայան - (…) Ինչի եմ ես դա ասում; որովհետև նախորդ քննարկումների ժամանակ շատերը, այդ թվում նաև ես, բարձրացրեցինք այն հարցը, որ մենք ընդունել ենք Հռչակագիր, որը սահմանադրական նորմ է և ընդունվել է ընդհանուր թվի ձայների 2/3-ից ավելի ձայներով: Ըստ այդ Հռչակագրի մեր հանրապետությունը մի շարք սկզբունքներ է ամրագրել և վերջում՝ 12-րդ հոդվածում, ամրագրել է մի նորմ, որ այս նախագիծը ուղղակիորեն հակասում է նրան: Այսինքն՝ 12-րդ հոդվածը ասում է, որ սույն հռչակագիրը հիմք է հանդիսանում ՀՀ նոր Սահմանադրության մշակման համար: Վերցնենք, տեսնենք, բոլոր հիմնահարցերով որևիցե անգամ կարդացել են այս նախագիծը մշակողները այդ հռչակագիրը: Վերցնենք հայ դատի խնդիրը: Չկա ամենևին այդպես հստակ ամրագրված: Վերցնենք կառավարման ձևը, որտեղ հաստակ ասվում է, որ ՀՀ-ի անունից հանդես կարող է գալ միայն ԳԽ-ը:

Նույնիսկ պաշտպանությունը ԳԽ-ին ենթակա է դարձնում այդ Հռչակագրի մեջ:

Եվ այդպիսի մի շարք նորմեր, որոնք այս Սահմանադրության մեջ ոչ թե տեղ չեն գտել, այլ լրիվ հակառակն են: Մյուս հարցը, որը ես կցանկանայի, որպեսզի նորմից ուշադրություն դարձնենք դա այն է, երբ որ ելույթների ժամանակ որպես հիմք, որպես փաստարկ ելույթ ունեցողները ներկայացնում են, թե այս կամ այն երկրում այսպիսի կարգ է սահմանված: Իմ համար, որպես

[30] Գերագույն խորհրդի 1995 թվականի մայիսի 10-ի նիստի արձանագրություն, էջեր 83-84:

իրավաբանի, դա պարզապես ծիծաղ է առաջացնում: Ինչի համար, որովհետև գոնե, լինելով ոչ գյուղատնտես, կարող եմ շատ հանգիստ ասել, որ եթե մարդիկ փորձում են չինարի ծառից ծիրան ստանալ՝ չի ստացվի դա: Ինչպես կարելի ա տարբեր երկրների Սահմանադրություններից տարբեր նորմեր վերցնել և ասել՝ գնացեք, միասին գործեք: Այս Սահմանադրության մեջ շատ-շատ կոնկրետ կետերում, հոդվածներում այդպիսի կարգ է մտցված: Մի երկրից մեկ նորմ են վերցրել, մեկ այլ երկրից՝ մեկ այլ նորմ են վերցրել և, ի վերջո, ինչ կապ ունեն տարբեր երկրները մեր երկրի հետ, մեր ՀՀ-ի հետ: Չէ՞ որ մեր Սահմանադրությունը պետք է ամրագրի, թե ինչպիսի իրավիճակում ենք մենք, ինչպիսին ենք ցանկանում տեսնել այդ պետությունը և ինչ երաշխիքներ ենք դրա համար սահմանում:

17. 1995 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մասին» թիվ Հ.Ն-1163-1 որոշմամբ Գերագույն խորհուրդը որոշում է հավանություն տալ ներկայացված նախագծին և Սահմանադրության ընդունման նպատակով 1995 թվականի հուլիսի 5-ին անցկացնել հանրաքվե, քվեարկության դնելով հետևյալ հարցը. «Համաձա՞յն եք ընդունել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած» Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

18. 1995 թվականի մայիսի 12-ի թիվ Հ.Ն-1163-Ի որոշմամբ Գերագույն խորհրդի կողմից հավանության արժանացած և հանրաքվեի դրվող Սահմանադրության նախագիծը բաղկացած էր նախաբանից և 9 գլուխներից. Գլուխ 1՝ «Սահմանադրական կարգի հիմունքները», Գլուխ 2՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», Գլուխ 3՝ «Հանրապետության նախագահը», Գլուխ 4՝ «Ազգային ժողովը», Գլուխ 5՝ «Կառավարությունը», Գլուխ 6՝ «Դատական իշխանությունը», Գլուխ 7՝ «Տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը», Գլուխ 8՝ «Սահմանադրության ընդունումը, փոփոխումը և հանրաքվեն», Գլուխ 9՝ «Անցումային դրույթներ»:

19. Գերագույն խորհրդի հիշյալ որոշմանը կից Սահմանադրության նախագծում նախաբանի՝ Սահմանադրական հանձնաժողովի 1994 թվականի հոկտեմբերի 8-ի նիստում (թիվ 70 արձանագրություն) ընդունված տեքստը վերջնական տարբերակում պահպանվել է նույն բովանդակությամբ՝ ենթարկվելով խմբագրական բնույթի փոփոխությունների և ուներ հետևյալ շարադրանքը.

«Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային

նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

20. Սահմանադրության նախագիծը Գերագույն խորհրդի 1995 թվականի մայիսի 12-ի Հ.Ն-1163-1 որոշմամբ դրվել էր համաժողովրդական հանրաքվեի և Հայաստանի Հանրապետության ընտրողների կողմից ընդունվել՝ քվեարկության դրված վերը նշված հարցադրման համար «*այո*» և «*ոչ*» սահմանափակ ընտրանքային տարբերակներով:

«Քաղաքական հարցը v. իրավական հարցի»

21. Վերը շարադրված պատմական-արխիվային արձանագրումներին անդրադառնալուց առաջ հարկ ենք համարում նախ արձանագրել, Գերագույն խորհրդում վերը հիշատակված մեջբերումների ցանկը սպառիչ է՝ Հռչակագրի և Սահմանադրության հարաբերակցության վերաբերելիության իմաստով:

22. Սահմանադրության նախագծի մշակման ողջ գործընթացը, որը գերակշռաբար եղել է քաղաքական գործընթաց՝ իրականացված քաղաքական մարմնի նախաձեռնությամբ (Գերագույն խորհուրդը) դրա կողմից ստեղծված քաղաքական ենթամարմնի (Սահմանադրական հանձնաժողովը) կողմից, լի է ներքաղաքական տիրույթում առկա կարծիքների և քաղաքական ուժերի ու անհատ քաղաքական գործիչների և հանձնաժողովում ներգրավված իրավաբան մասնագետների հակասական և տրամագծորեն հակադիր դիրքորոշումների միջև լայն համախոհություն (կոնսենսուս) գտնելու միջոցով ընդհանրական նախագիծ ներկայացնելու քաղաքական լուծում ենթադրող ենթալուծումների շարքով:

23. Անհաշտ հակադիր դիրքորոշումների շրջանակում համախոհաբար քվեարկված և ընդունված նախագծի կամ դրա առանձին դրույթների ընդունման հարցում անորոշությունների ընդարձակ շարքի առկայությունից զատ՝ վերը նշված փաստագրական նյութերի ուսումնասիրությունն առաջին հերթին վկայում է հստակ ու որոշակի հետևյալ իրողությունների արձանագրումը՝ թե՛ Սահմանադրական հանձնաժողովում և թե՛ Գերագույն խորհրդում տեղի ունեցած քաղաքական գործընթացներում.

ա) Սահմանադրության նախաբանում Հռչակագրի հիշատակման հարցը Հանձնաժողովի օրակարգ է մտել բացառապես մեկ հանգամանքի Սահմանադրությունում հիշատակման կամ ամրագրման խնդրի առնչությամբ՝ «*Հայ դատի*» (ըստ Սահմանադրական հանձնաժողովում ընդունված ընդհանրական բնորոշման, որը, սակայն, դրանից դուրս մանրամասների խիստ սակավ բովանդակություն է փոխանցում) հարցի առնչությամբ: Արձանագրված չէ որևէ հիշատակում այս խնդրից դուրս որևէ այլ հարցի կամ նպատակի կապակցությամբ Հռչակագրի հիշատակման կամ դրանում նախատեսված որևէ սկզբունքի կամ նպատակի ամրագրման հարցի շուրջ նույնիսկ քննարկում, ներառյալ՝ «*Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման*» մասին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 1-ի Նո. 1650-11 որոշման.

բ) Նույնիսկ «*Հայ դատի*» վերաբերյալ դրույթի ամրագրման մասով Սահմանադրական հանձնաժողովում հստակորեն գերակշռել է այն Սահմանադրության մեջ (ոչ նախաբանում և ոչ էլ որևէ այլ դրույթում) չնախատեսելու դիրքորոշումը, որի առարկայացումը եղել է Սահմանադրության ամբողջ տեքստում նման ամրագրման իսպառ բացակայությունը 1990 թվականից մինչև 1994 թվականի հոկտեմբերի 8-ը, իսկ դրանից հետո նաև՝ Գերագույն խորհրդին ներկայացված նախագծի տեքստում «*Հայ դատի*» վերաբերյալ դրույթի ամրագրումից խուսափելու նպատակով Հռչակագրի հիշատակումը.

գ) Սահմանադրության նախաբանում Հռչակագրի հիշատակումը կատարվել է ոչ թե այն նպատակով, որ Հանձնաժողովում եղել է համախոհություն «*Հայ դատի*» խնդրի Սահմանադրությունում ամրագրելու շուրջ, այլ հետապնդել է նման ամրագրումից խուսափելու համար՝ Հռչակագրի հիշատակմամբ տրամագծորեն հակադիր և անհաշտ դիրքորոշումների միջև փոխզիջումային տարբերակի բացակայության բերումով անորոշության արձանագրմամբ Սահմանադրության նախագծի մշակման արդեն իսկ 4 տարի տևած աշխատանքների վերջնարդյունքը՝ Սահմանադրության նախագծի վերջնամշակումը Սահմանադրական հանձնաժողովի կողմից և դրա հավանության համար որակյալ մեծամասնության ապահովումը Գերագույն խորհրդում չվտանգելու նպատակ:

24. Հարկ է նաև ուշադրություն դարձնել 1995 թվականի Սահմանադրության մշակման գործընթացում Հռչակագրի՝ Սահմանադրության բովանդակության վրա ունեցած ազդեցության վերաբերյալ թե՛ նախագծի վրա աշխատանքներ իրականացրած հանձնաժողովի, թե՛ նախագիծը հաստատած և համաժողովրդական քվեարկության դրած Գերագույն խորհրդի հարցին: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի կողմից պահանջված և ուսումնասիրված մի քանի հազար էջ պաշտոնական արխիվային փաստաթղթերը, որոնք վերաբերում են 1995 թվականի Սահմանադրության նախագծի մշակման պատմությանը, ինչպես նաև նախագծի բովանդակության քննարկմանն առնչվող Գերագույն խորհրդի նիստերի արձանագրություններն ու սղագրություններն ուղղակիորեն վկայում են, որ Հռչակագրի բոլոր այն դրույթների սահմանադրականացումը, որոնք նախատեսված չեն եղել Սահմանադրությամբ, հանդիպել են ծանրակշիռ հակազդեցության հենց Սահմանադրական հանձնաժողովում, որտեղ Հռչակագրի կարգավորումների Սահմանադրության ծավալ ներմուծման, դրանց ունեցած իրավական ուժի և դրանց՝ Սահմանադրության անփոփոխ դրույթներ լինելու հարցերում հստակություն մտցնելու հարցին որոշակիություն հաղորդելուց խուսափելն ինքնին ընտրված մարտավարություն էր՝ առավել գերակա՝ Սահմանադրություն ունենալու խնդրի անլուծելիությունից խուսափելու և Սահմանադրության ընդունման գործընթացը քաղաքական փակուղուց դուրս բերելու համար:

25. Նման լուծումը, որքան էլ այն թույլատրելի, իսկ այլընտրանքի բացակայության դեպքում՝ երբեմն անհրաժեշտաբար կիրառվող մոտեցում է քաղաքական մարմինների կողմից քաղաքական հարցերի լուծման համար, այնուամենայնիվ չի տվել այն հարցի հստակ և Սահմանադրության անփոփոխ դրույթների ուղղակիությանն արժանի պատասխանը, թե արդյոք Հռչակագրի համապատասխան դրույթները Սահմանադրության մաս են, թե՞ ոչ: Այլ խոսքով՝ արդյոք Սահմանադրությունից բացի կա մեկ այլ՝ Սահմանադրության իրավական ուժ ունեցող, եթե ոչ վերսահմանադրական (եթե հաշվի առնենք, որ քննարկվում է դրա՝ Սահմանադրության նախաբանի, այսինքն՝ անփոփոխ դրույթի մաս հանդիսանալու հարցը) ակտ:

26. Հետևաբար՝ Սահմանադրական հանձնաժողով չուներ այս պարզ իրավական հարցի իրավական լուծման հստակ, որոշակի և անորոշություններից զերծ պատասխանը:

Նախագծի քննարկումը Գերագույն խորհրդում 1995 թվականի մայիսին

27. Փաստարկը, որը բերվել էր՝ ի հիմնավորումն այն մոտեցման, որ Հռչակագրի դրույթները՝ Սահմանադրության նախաբանում Հռչակագրի հիշատակման ուժով, Սահմանադրության նախաբանի մաս են կազմում, արձանագրվել է Սահմանադրական հանձնաժողովի ներկայացուցիչ Վ. Նազարյանի՝ Գերագույն խորհրդում տրված բացատրություններում (տես՝ սույն որոշման 14-15-րդ կետերը): Այս բացատրությունը, ինքնին, չունենալով որևէ պատճառաբանական հիմնավորում, ունի դրան խիստ վերապահումով մոտենալու հետևյալ նկատառումները.

28. *Նախ*՝ այս փաստարկը երբևէ ոչ քննության առարկա է դարձել Սահմանադրական հանձնաժողովում, ոչ էլ առհասարակ հիշատակվել է: Նման պարագայում առհասարակ պարզ չէ, թե արդյո՞ք սա Վ. Նազարյանի կողմից Սահմանադրական հանձնաժողովը ներկայացնելու՝ իրեն վերապահված լիազորության շրջանակում վերագրելի է իր անձնական մոտեցումներին, թե՞ Սահմանադրական հանձնաժողում կոմպրոմիսի գին հանդիսացող անորոշությունը ցրելու հարցում համոզչական հնարք էր (տես այս պնդման բովանդակային անդրադարձը ներքևում):

29. *Երկրորդ*՝ Վ. Նազարյանի բացատրությունն առհասարակ անպատասխան է թողնում այն հարցը, թե «*Հայ դատի*» խնդիրը Սահմանադրությունում ամրագրելուն վճռականորեն դեմ արտահայտված Սահմանադրական հանձնաժողովի անդամների դիրքորոշումների հետ որքանով էր համատեղելի Հռչակագրի դրույթի միջոցով «*Հայ դատին*» առնչվող (ենթադրաբար՝ Հռչակագրի 11-րդ կետ) դրույթի սահմանադրականացման իր կողմից ներկայացվող բացատրությունը: Հիշեցնենք, որ շուրջ 4 տարի տևած մանրամասն քննարկումներում նույնաբովանդակ որևէ դրույթի Սահմանադրությամբ ամրագրելուն արմատապես ընդդիմացող Սահմանադրական հանձնաժողովի անդամների հիմնավորումները չէին վերաբերում այսպիսի դրույթի ամրագրման ոճական կամ ձևական կողմին, այլ բացառապես դրա բովանդակային կողմին: Այլ խոսքով՝ նրանց մոտեցումն այն չէր, որ նման դրույթ չնախատեսվի Սահմանադրության տեքստում, սակայն չբացառվի այդպիսի դրույթի գոյությունը Սահմանադրության բովանդակային ծավալում՝ մեկ այլ ակտին (Հռչակագրին) հղման միջոցով: Նրանք արմատապես ընդդիմանում էին առհասարակ Սահմանադրության բովանդակային ծավալում որևէ նման դրույթի առկայությանը[31]: Ավելին,

[31] Տես, մասնավորապես, Հռչակագրի հիշատակմանը կողմ քվեարկած Սահմանադրական հանձնաժողովի անդամներից համանախագահներ Լ. Տեր-Պետրոսյանի և Բ. Արարքցյանի, անդամներ Է. Եգորյանի, Է. Սողոմոնյանի, Մ. Խաչատրյանի, Ի. Մուրադյանի՝ արձանագրված դիրքորոշումները (Սահմանադրական հանձնաժողովի 1994 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի թիվ 70 արձանագրություն, էջեր 4-12):

Վ. Նազարյանն ինքը, «*Հայ դատի*» խնդրի ամրագրումն ուղղակիորեն չէր համարում էական և կոչ էր անում փորձել գտնել այնպիսի ձևակերպում, որպեսզի հնարավոր լիներ խուսափել խնդրի անլուծելիությունից բխող խոչընդոտներից[32]:

30. *Երրորդ՝* ամբողջ հակադրվածությունը «*Հայ դատի*» հարցի շուրջ ծավալվելուն հանդերձ այն ոչ մի կերպ չէր վերաբերել Հռչակագրի որևէ այլ «*հիմնարար սկզբունք*» կամ «*համազգային նպատակ*» նախատեսող դրույթին: Մինչդեռ Վ. Նազարյանի կողմից ներկայացված բացատրությունը խորը հակասականություն ուներ նաև այս հարցում: Եթե, ինչպես ինքն էր պնդում, Հռչակագրին հղումը Սահմանադրական հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծում կոչված էր լուծելու այս մեկ և բացառապես միակ դիրքորոշումների բախման կիզակետ դարձած հարցը («*Հայ դատի*»), ապա որքանո՞վ էր առհասարակ իր՝ Գերագույն խորհրդում տրված բացատրություններում Հռչակագրի՝ *«Հայաստանի անկախության հռչակագիրը, դարձնել, դարձնել մեր Սահմանադրության բաղադրամասը, որպեսզի էդ հարցի լուծումը ստանա»,* բացատրությունը համատեղելի այն մոտեցման հետ, որ քննարկման առարկա էր եղել բացառապես «*Հայ դատին*» առնչվող հարցը, մինչդեռ Սահմանադրության նախաբանում ամրագրված դրույթն առհասարակ պարունակում էր «*հիմնարար սկզբունքներ*» և «*համազգային նպատակներ*» եզրերը (նույնիսկ անտեսելով Վ. Նազարյանի այն պնդման ակնհայտ հակասականությունը, որ ինքնին Հռչակագիրը, այլ ոչ դրա որոշ դրույթներ, պետք է դառնար «*Սահմանադրության բաղադրամաս*»):

31. Այսինքն՝ Սահմանադրական հանձնաժողովի կողմից բացառապես «*Հայ դատի*» խնդիրը ամրագրելու հարցում անհաշտ դիրքորոշումների հաշտեցման անհնարինությունից բխած անորոշությունը ոչ միայն պակասել, այլև բազմապատկվել էր հաջորդ ատյանում տեղի ունեցած քննարկումներում՝ Սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած նախագիծը պաշտպանող Վ. Նազարյանի բացատրություններում և Սահմանադրական հանձնաժողովի՝ արձանագրված քննարկումներում եղած բովանդակային հակասությունների, և հենց իր՝ Վ. Նազարյանի Սահմանադրական հանձնաժողովում և Գերագույն խորհրդում արտահայտած դիրքորոշումների խորը բովանդակային հակասություններով:

Պատմական օրինակի համեմատության պարզունակությունը որպես մերժված իրավական դոկտրինի երբևէ հնչած հիմնավորում

[32] Նույն տեղում:

32. Հարկ է նաև անդրադառնալ Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրության նախաբանում հիշատակվող «*Մարդու և քաղաքացու իրավունքների մասին*» 1789 թվականի հռչակագրի՝ Սահմանադրության նախաբանում տեղ գտնելու բերումով Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրության մաս հանդիսանալու հանգամանքի և Սահմանադրության նախաբանում «*հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները*» ձևակերպումը զետեղված լինելու միջև Գերագույն խորհրդում Սահմանադրական հանձնաժողովի ներկայացուցչի կողմից տարված զուգահեռներին:

33. Ամփոփ ներկայացնելով՝ Վ. Նազարյանը պնդում էր, որ «*հնարքը*»[33], որը գործադրվել էր փակուղային իրավիճակից դուրս գալու համար, որպես ուղեցույց ուներ մասնավորապես՝ Ֆրանսիական Հանրապետության սահմանադրական պրակտիկան, որտեղ Սահմանադրության նախաբանում առկա հիշատակման բերումով «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» 1789 թվականի հռչակագիրը Ֆրանսիական Հանրապետության 1958 թվականի Սահմանադրության նախաբանում հիշատակված լինելու բերումով հետագայում դարձել էր Ֆրանսիական Հանրապետության սահմանադրական պրակտիկայում կիրառելի՝ ըստ Վ. Նազարյանի՝ «*սահմանադրության տեքստի բաղադրամասը*»[34]:

34. Սահմանադրական դատարանի դատավորներիս արտահայտման ինքնազսպվածության պահանջի բերումով չենք կարող մեզ թույլ տալ ակադեմիական ազատության շրջանակներին նույնիսկ մոտավոր ազատության շրջանակ, երբ խոսքը վերաբերում է օտարերկրյա բարձր ատյանների որոշումներին: Այդուհանդերձ, քանի որ խնդիրն ինքնին մուտք է գործել նաև Հայաստանի սահմանադրական իրավունքին վերաբերելի տիրույթ և այն էլ պատմական օրինակին ուղիղ հղումով, չենք կարող անպատասխան թողնել նաև այս փաստարկը:

35. Նշված փաստարկի ամփոփ բովանդակությունն այն է, որ, քանի որ Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրության նախաբանում «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» 1789 թվականի հռչակագիրը Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրության բովանդակության ծավալ է ներգրավվել, ապա նմանապես և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում Հռչակագրին հղումը նույն իրավական ազդեցության

[33] Մեջբերում իր խոսքից:

[34] Մեջբերում իր խոսքից:

կանխավարկածով անհրաժեշտաբար պետք է Հռչակագրի դրույթները դարձնի Սահմանադրության բովանդակային ծավալի մաս:

36. *Նախ*՝ արձանագրենք, որ այս փաստարկի նույնիսկ բովանդակային նկարագրությունը չի գերազանցել 2 նախադասությունը, որոնք բացարձակ ընդհանրական բովանդակությունից զերծ այլ հիմնավում առհասարակ չեն ներկայացնում:

37. *Երկրորդ*՝ շատ հեռու ենք այն մտայնությունից, որ Վ. Նազարյանի նման խորագետ իրավաբանը տեղյակ չէր Ֆրանսիական Հանրապետության սահմանադրական պրակտիկայի այն մասնավոր հանգամանքից, թե ինչպես և ինչի ուժով են 1789 թվականի հռչակագրի դրույթները Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրության բովանդակային ծավալի համար նորմատիվ ազդեցություն ձեռք բերել: Մասնավորապես՝ 1789 թվականի հռչակագրի դրույթների՝ Սահմանադրության բովանդակային ծավալ ինկորպորացիայի գործընթացը տեղի է ունեցել միայն Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրական խորհրդի (*Conseil Constitutionnel*) 1970-ական թվականներին ամրագրած հատուկ և իր ժամանակի համար խիստ անսովոր, թեպետ՝ հետևանքային ազդեցությամբ միայն բարեբեր, համապատասխան դոկտրինի ընդունման և դրա հետևողականորեն իրագործման արդյունքում: Այսինքն՝ Ֆրանսիական Հանրապետության Սահմանադրության նախաբանում 1789 թվականի հռչակագրի հիշատակումը, առանց Սահմանադրական խորհրդի (*Conseil Constitutionnel*) նման նպատակի համար հարմարեցրած դոկտրինի, չէր վերածվելու սահմանադրական պրակտիկայի առհասարակ: Պատմական այս օրինակը ինքնին ո՛չ դոկտրինալ հիմնավորում կարող էր դիտարկվել Հայաստանի ինքնիշխան Հանրապետության սահմանադրական պրակտիկայի, ո՛չ էլ որևէ այլ պետության համար: «*Եթե Ֆրանսիայում եղել է այսպես, ապա այսպես կլինի նաև Հայաստանում*» մտայնության ուժով այսպիսի խիստ հիմնարար սահմանադրական դոկտրինի ընդունումը, դրա թույլատրելիության ճանաչումը, իր սահմանադրական իրավազորությունների շրջանակի սահմանների հաշվառմամբ և նման դոկտրինի հետևանքային և համակարգային ազդեցության խորը վերլուծությամբ ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ որևէ իշխանազորության բարձր դատարան չէր կարող իրեն թույլ տալ՝ այն զուտ պատմական օրինակի պարզունակ ուղենիշ լինելու հիմքով: Համատեքստային վերլուծությունների իսպառ բացակայությունը, Ֆրանսիական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգերի առջև ծառացած խնդիրների բովանդակային խիստ հավանական տարբերությունը, կարգավորման ենթակա հանրային

իրավահարաբերությունների բնույթի տարբերությունների հաշվառման անհրաժեշտությունն անտեսելը չեն կարող որևէ իրավաբանի, նույնիսկ ցածր հավանականության հեռանկար խոստանալ, թե այս կամ այն խիստ ներքին սուվերեն որոշումների կայացման հարցում բարձր դատարանները կարող են առաջնորդվել պարզունակ ուղեցույցներով («*եթե X իշխանազորությունում մուրավոր, եթե առհասարակ՝ որևէ նմանությամբ որևէ խնդիր ունեցել է Y լուծումը, դա ուղենիշ է Z իշխանազորության համար՝ հանգելու նույն լուծմանը, անկախ համատեքստային եւ զուգորդող այլ որոշիչ փարբերություններից*»):

38. *Երրորդ՝* ավելին՝ Ֆրանսիական Հանրապետության պրակտիկայի բերված այս օրինակը ոչ միայն չի եղել համեմատական սահմանադրական իրավունքում օրինաչափություն, դեռ ավելին՝ նման օրինակը, թեպետ ոչ բովանդակային համընկնումներով, սակայն որպես խորը տրանսֆորմատիվ ներուժով օժտված դոկտրինալ ճյուղավորման դրսևորում եղել է այն աստիճանի բացառություն, որը սահմանադրական իրավունքի գիտությունում (առանց դրա հետևանքային ազդեցության բացասականության նվազագույն ակնարկի) արժանացել է նաև «*դատական հեղաշրջման*» բնորոշմանը[35]:

39. Հետևաբար՝ սա ինքնին իրավական փաստարկ չէր դիտարկվել ի սկզբանե և դուրս չէր գալիս իրավաբան Վ. Նազարյանի անձնական մասնագիտական նախընտրության և ենթադրությունների շրջանակում իր նպատակային ուղղվածությամբ քաղաքական-համոզչական փաստարկի սահմաններից:

40. Վերը նշված հատվածներում Վ. Նազարյանի մոտեցումների և բացատրություններին անդրադարձի նպատակը չէ դրանց հակասականության վրա փորձել կառուցել ՍԴՈ-1749 որոշման հիմքում ընկած դոկտրինալ հիմնավորումների ամրությունը: Ավելին, նույնիսկ նրա դիրքորոշումներում որևէ հակասականության բացակայության հնարավոր վարկածը չէր կարող մեզ շեղել իր անայլընտրանք եզրահանգումից: Նրա մասնագիտական հեղինակությունը որևէ պաշտպանության կարիք չի զգում առհասարակ: Այս տողերը շարադրելիս մտքում միշտ ունենք, որ Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության համար ամենամեծ ծառայությունը մատուցած իրավաբաններից մեկը թերևս նա էր. ի վերջո, նա է եղել այն իրավաբանը, որը Սահմանադրական հանձնաժողովի ահռելի և անուրանալի

[35] Alec Stone Sweet. “The juridical coup d’état and the Problem of Authority”, German Law Journal, 8 (10), 915-928; Տես նաև՝ *mutatis mutandis* Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի և Եվրոպական արդատրադատության դատարանի դոկտրինալ նորամուծությունների քննարկումը նույն տեղում: (The Juridical Coup d’État and the Problem of Authority, հղմանը վերջին մուտքը՝ 2024 թվականի հոկտեմբերի 5):

աշխատանքն ի վիճակի է եղել իրեն հատուկ համոզչականությամբ հասցնել մի հանգրվանի, որտեղ այն ստացել է Գերագույն խորհրդի հավանությունը, դրվել է համաժողովրդական հանրաքվեի և Հայաստանն ի վերջո ունեցել է Սահմանադրություն՝ ի կատարումն Հռչակագրի 12-րդ կետում ամրագրված ծրագրային նպատակի:

41. Այդուհանդերձ, նրա մասնագիտական ներդրման անուրանալի արժեքը, սակայն, չի կարող մեզ՝ Սահմանադրական դատարանի դատավորներիս, սահմանադրական արդարադատության իրականացման հարցում կուրորեն ուղղորդել նրա, ինչպես և որևէ այլ մեկի մասնագիտական նախընտրությունների և կարգադրագրային եզրահանգումների նման պնդումներին հետևելու՝ առանց մանրամասն քննազտման ենթարկելու յուրաքանչյուր փաստարկի կամ մեկնաբանության հիմնավորումները և դրանց վերաբերելիությունը սահմանադրական արդարադատության բազմաշերտ ստուգումների ենթակա իրավական հարցերի լուծումների որոնման ճանապարհին: Այլապես այս կամ այն գիտնականի, քաղաքական գործչի, կուսակցության, հասարակության խմբի հետևությունների և խորհուրդների ընթացքին հետևելը՝ նրանց պաշտոնեական կարգավիճակի, ազդեցության կամ հեղինակության նկատառումներով (ի թիվս բազում այլ՝ արդարադատության հիմնարար սկզբունքների հետ անհամատեղելի վարքագծի), առանց դրանց մանրազնին ուսումնասիրության և վերլուծության, սահմանադրական արդարադատությունը «*իրավաբանական կռապաշտության ծիսակարգի*» է վերածելու:

42. Ի վերջո, որպես ամփոփում, հարկ ենք համարում ընթերցողին նաև հիշեցնել, որ Սահմանադրությունը չի ընդունվել ո՛չ Սահմանադրական հանձնաժողովի, ո՛չ էլ Գերագույն խորհրդի կողմից: Այս մարմիններում քաղաքական գործընթացների միջոցով Սահմանադրության նախագծի տեքստի տեխնիկական աշխատանքի հետևում թաքնված հակադիր դիրքորոշումների հաշտեցման քաղաքական լուծումները չեն կարող Սահմանադրական դատարանի որևէ դատավորի համար ուղղորդիչ, եթե առհասարակ՝ որևէ կարևորություն պարունակել Սահմանադրության դրույթների մեկնաբանման հարցում: Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող, քաղաքական ուժերի կամ դրանց ներկայացուցիչների կամ նախագծման աշխատանքներում ներգրավված անհատ իրավաբանների կամ իրավաբանական ծառայություններ մատուցող ստորաբաժանումների նպատակներին, քաղաքական մարմինների մտայնություններին, իրավունքի դպրոցների նախընտրություններին, քաղաքական ծրագրերին և նպատակներին նախընտրություն և գնահատական տալով, առաջնորդվել բոլորովին այլ՝

իր իշխանազորությամբ այս ողջ համախմբի նկատմամբ գերակա դիրք ունեցող Սահմանադրի կամքը բացահայտելու հարցում:

43. Ի վերջո, սահմանափակելով մեր հատուկ կարծիքը, չենք կարող բավարար չափով երախտապարտ լինել ՍԴՈ-1749 որոշմամբ Սահմանադրության և Հռչակագրի հարաբերակցության առնչությամբ համախոհություն արտահայտած մեր այն դատավոր գործընկերներին՝ համախոհության համար, որոնք՝

ա) բացառել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան Սահմանադրի իրավազորության շրջանակը սահմանափակելու իրավական հնարավորությունը՝ վերջինիս կամաարտահայտության բացակայության պայմաններում, Սահմանադրության անփոփոխ դրույթների (նախաբանում՝ սկզբունքների և նպատակների) ցանկը Սահմանադրական դատարանի հայեցողությամբ ավելացնելու միջոցով, և

բ) արդյունքում՝ արմատապես մերժել են Սահմանադրության գերակայության ապահովման միջոցով Սահմանադրի կամքի գերակայության իրենց առաքելությունը ձևախեղելու՝ Սահմանադրին Սահմանադրական դատարանի կամքը թելադրելու հետևանքը.

գ) ընդգծված հարգանքով պաշտպանել են Սահմանադրության բովանդակային ծավալում որևէ՝ «*հայոց պետականության հիմնարար սկզբունքի կամ համազգային նպատակի*» ընտրության հարցի՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի լուծման ***բացառիկ իրավազորության*** սահմանները:

7 հոկտեմբերի 2024 թվականի

Սահմանադրական դատարանի դատավորներ

Վ. Մ. Գրիգորյան

Դ. Մ. Խաչատուրյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՏՄ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

2024 թվականի հոկտեմբերի 2-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) դատարանի նախագահ Ալեքսեյ Դրոնովի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին նաև ԵԱՏՄ դատարանի դատավորներ Էռնա Հայրիյանը և Արաիկ Թունյանը:

Ողջունելով հյուրերին՝ ՍԴ նախագահ Արման Դիլանյանը շնորհավորել է գործընկերներին ԵԱՏՄ դատարանի հիմնադրման տասնամյակի

կապակցությամբ: ՀՀ Բարձր դատարանի նախագահը նշել է, որ ԵԱՏՄ դատական մարմինն այս ընթացքում բավական բարդ ճանապարհ է անցել և արդեն իսկ ապացուցել իր կենսունակությունը՝ իրեն վերապահվող իրավասության շրջանակներում առանցքային դեր ստանձնելով ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական միության իրավունքի միատեսակ կիրառումն ապահովելու, ինչպես նաև կողմերի փոխշահավետ համագործակցության, իրավահավասարության, շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանման գործում:

ԵԱՏՄ դատարանի նախագահ Ալեքսեյ Դրոնովը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, նշել է, որ իրենց նպատակն է իրավական ամուր հենք ապահովել անդամ պետությունների տնտեսությունների կայուն և բազմակողմանի արդիականացման, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացման համար՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման:

Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել է մասնագիտական փորձի փոխանակումը: Քննարկվել է այդ նպատակով երկկողմ և բազմակողմ հարթակների ստեղծման հնարավորությունը՝ ինչպես առկա, այնպես էլ՝ հեռակա ձևաչափերով: Կողմերն ընդգծել են, որ մասնագիտական և ակադեմիական շրջանակների պրոֆեսիոնալների համագործակցությունը մեծապես կնպաստի ԵԱՏՄ շրջանակներում և՛ Միության դատարանի, և՛ Ազգային դատարանների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

2024 թվականի հոկտեմբերի 3-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բելգիայի Թագավորության առաջին արտակարգ և լիազոր դեսպան Էրիկ Դե Մույնքին:

Ողջունելով դեսպան Դե Մույնքին՝ ՍԴ նախագահը կարևորել է Հայաստանում Բելգիայի դեսպանատան առկայությունը, որը բացվել է մեկ տարի առաջ, և հույս է հայտնել, որ առաջին դեսպանի գործունեությունը մեծապես կնպաստի նաև իրավական ոլորտում հայ-բելգիական համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Էրիկ Դե Մույնքն ընդգծել է Բելգիայի Թագավորության պատրաստակամությունը՝ նպաստելու Հայաստանում անցկացվող ժողովրդավարական ու դատաիրավական բարեփոխումներին: Դեսպանը վստահեցրել է, որ անհրաժեշտ ջանքեր կներդնի՝ ընդլայնելու հայ-բելգիական երկկողմ փոխգործակցությունը նաև սահմանադրական արդարադատության ոլորտում: Զրուցակիցները քննարկել են երկու երկրների միջև իրավական կապերի ակտիվացման, համագործակցության ընդլայնման հեռանկարները:

Դեսպան Դե Մույնքի խնդրանքով Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակը, գործունեության առանձնահատկությունները և իրականացվող բարեփոխումները:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

2024 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Մարիեկ Մոնրոյ-Վինթերին:

Սահմանադրական դատարանի նախագահը շնորհավորել է նորանշանակ դեսպանին Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելության մեկնարկի կապակցությամբ: Արման Դիլանյանը բարձր է գնահատել Նիդերլանդների Թագավորության դեսպանատան հետ համագործակցությունը՝ ընդգծելով, որ Բարձր դատարանի և Դեսպանության միջև ձևավորվել են, հիրավի, օրինակելի գործընկերային հարաբերություններ:

Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է Նիդերլանդների դեսպանության հետ արդեն մի քանի տարի իրականացվող համատեղ ծրագրերը, որոնք ուղղված են Սահմանադրական դատարանում ընթացող ինստիտուցիոնալ բարեփոխումների խթանմանը, ներքին ընթացակարգերի բարելավմանն ու հանրային հաշվետվողականության բարձրացմանը:

Դեսպան Մարիեկ Մոնրոյ-Վինթերը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար, վերահաստատելով դեսպանության հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանի իրավական ինստիտուտներին՝ ժողովրդավարական գործընթացների իրականացման գործում: Տիկին Մոնրոյ-Վինթերն իր հերթին պատրաստակամություն է հայտնել ջանքեր ներդնել՝ Բարձր դատարանի հետ արդեն իսկ ամուր հիմքերի վրա դրված համագործակցության շարունակականության ապահովման և զարգացման ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձերք բերվել շարունակել համագործակցությունը՝ երկկողմ աշխատանքային խմբերի ձևաչափով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

2024 թվականի հոկտեմբերի 23-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Կլաուդիա Բուշին:

Շնորհավորելով դեսպանին Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունը սկսելու կապակցությամբ՝ ՍԴ նախագահը նշել է, որ հայ-գերմանական գործընկերությունը խարսխված է իրավական և արժեհամակարգային հետաքրքրությունների, ինչպես նաև սահմանադրական մոդելների նմանությունների վրա: Արման Դիլանյանը կարևորել է երկու երկրների Բարձր դատարանների միջև հարաբերությունների զարգացումը՝ ժողովրդավարական արժեքների, իրավունքի գերակայության ամրապնդման, մարդու իրավունքների պաշտպանության, սահմանադրական արդարադատության ոլորտներում բարեփոխումների արդյունավետ իրականացման համատեքստում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, փոխադարձ համոզմունք է հայտնել, որ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունն ու սահմանադրականությունը անվտանգության, կայունության ու զարգացման գրավականն են: Դեսպան Կլաուդիա Բուշն իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու Հայաստանի Սահմանադրական դատարանի և Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի միջև ինչպես աշխատանքային մակարդակում, այնպես էլ՝ փոխայցելությունների միջոցով փորձի փոխանակմանը, իրավական երկխոսության ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ

2024 թվականի հոկտեմբերի 24-ին Միջազգային քրեական դատարանի (Հաագա, Նիդերլանդներ) պաշտոնաթող դատավոր, ՄՔԴ երրորդ նախագահ (2015-2018 թվականներին) և ՄՔԴ Կանոնադրության անդամ պետությունների վեհաժողովի նախկին նախագահ (2021-2023 թվականներին) Սիլվիա Ֆերնանդեզ դե Գուրմենդիին (Արգենտինայից ընտրված ՄՔԴ դատավոր) Սահմանադրական դատարանում հյուրընկալել են դատարանի փոխնախագահ, դատավոր Վահե Գրիգորյանը և դատավոր Դավիթ Խաչատուրյանը:

Ողջունելով հյուրին՝ փոխնախագահ Գրիգորյանը ներկայացրել է Հայաստանի Սահմանադրական դատարանի գործունեությունը, սահմանադրական արդարադատության ոլորտում առկա ձեռքբերումները և մարտահրավերները, քննարկվել են ՄՔԴ Կանոնադրության պահանջների կատարման առնչությամբ սահմանադրական արդարադատության ոլորտին վերաբերող խնդիրներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ Մ.Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

2024 թվականի հոկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարան են այցելել Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները, որոնց հետ հանդիպել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

Բարձր դատարանի նախագահը ապագա իրավագետների հետ քննարկել է Սահմանադրական իրավունքին, Սահմանադրական դատարանի գործառույթների առանձնահատկություններին, լիազորությունների շրջանակին առնչվող հարցեր:

Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի ուսանողները և Մոսկվայից ժամանած դասախոսները քննարկում են ծավալել նաև տարբեր երկրներում իրավական հարցերի օրենսդրական կարգավորումների շուրջ: ՍԴ նախագահը պատասխանել է ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցերի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

2024 թվականի հոկտեմբերի 23-ին Սահմանադրական դատարան են այցելել Հայաստանի եվրոպական համալսարանի և Գլաձոր համալսարանի իրավագիտության ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողները: Ապագա իրավագետներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ներկայացրել Բարձր դատարանի գործունեության առանձնահատկությունները, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մյուս մարմինների հետ փոխհարաբերությունները, Սահմանադրական դատարանի դերն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Հանդիպումը շարունակվել է հարցուպատասխանի ձևաչափով, որի շրջանակներում ՍԴ նախագահը պատասխանել է ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցերի: Հանդիպման ավարտին Սահմանադրական դատարանի նախագահն ուսանողներին հորդորել է ցուցաբերել բարձր առաջադիմություն, հավակնոտ նպատակներին հասնելու ճանապարհը հարթել բացառապես գիտելիքների միջոցով և մասնագիտական ձեռքբերումները ծառայեցնել ի նպաստ մեր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

2024 թվականի նոյեմբերի 25-ին Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանն ընդունել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներին, որոնք Սահմանադրական դատարան են այցելել «Վարչական դատավարություն» առարկայի շրջանակում:

Այցի ընթացքում քննարկվել են վարչական դատավարությունում վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկմանը, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանն առնչվող մի շարք հարցեր: Միաժամանակ ուսանողների կողմից բարձրացվել են Սահմանադրական դատարանի և Հայաստանի Հանրապետության դատական իշխանության լիազորությունների առնչությամբ մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի դասախոս Ինեսա Պետրոսյանին է փոխանցել նույն համալսարանին նվիրված՝ իր համահեղինակությամբ օրեր առաջ լույս տեսած «Դատական իշխանության անկախությունը» ձեռնարկը՝ մաղթելով, որ «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի ուսանողները ևս ձգտեն ստանձնելու դատավորի խիստ պատասխանատու առաքելությունը ապագայում և նպաստելու դատավորի դրական կերպարի կերտմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԵՐԿՕՐՅԱ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

2024 թվականի նոյեմբերի 14-15-ը Երևանում կայացել է **«Սահմանադրական դատարանների որոշումների նկատմամբ հարգանքը»** խորագրով երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովը: Միջոցառումը կազմակերպվել է ՀՀ Սահմանադրական դատարանի, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Եվրոպայի խորհրդի «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի համատեղ ջանքերով:

Համաժողովի նպատակն է ընդգծել սահմանադրական դատարանների որոշումների կարևորությունը ներպետական և միջազգային դատարանների մակարդակում իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Վեհաժողովը հնարավորություն է տալիս սահմանադրական դատարանների դատավորներին և կապի պատասխանատուներին, Վենետիկի հանձնաժողովի անդամներին և Եվրոպայի խորհրդի

ներկայացուցիչներին՝ երկխոսելու, քննարկելու թե ինչպես պետք է դրսևորվի հարգանքը սահմանադրական դատարանի որոշումների նկատմամբ հանրության և իշխանության տարբեր ճյուղերի կողմից և թե ինչպես սահմանադրական դատարանները կարող են արդյունավետորեն կամրջել ազգային իրավական համակարգերը մարդու իրավունքների միջազգային շրջանակների հետ: Մարդու իրավունքների շարունակական զարգացման դարաշրջանում անփոխարինելի է դառնում սահմանադրական դատարանների դերը ներպետական մակարդակում այդ իրավունքների մեկնաբանման և իրականացման առումով:

ՀՀ ՍԴ նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով համաժողովի մասնակիցներին, ընդգծել է սահմանադրական դատարանների որոշումների նկատմամբ հարգանքի կարևորությունը ժողովրդավարական հասարակության կայացման գործում:

Ողջույնի խոսքով հանդես են եկել նաև Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ, Նիդերլանդների Գերագույն դատարանի դատավոր **Մարտին Քայերը** և Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար **Սիմոնա Գրանատա Մենգինին:**

Համաժողովի ընթացքում կայացել են չորս հիմնական պանելային քննարկումներ՝

1. Սահմանադրական դատարանների որոշումները որպես կամուրջ մարդու իրավունքների ներպետական և միջազգային իրավական համակարգերի միջև

2. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման եղանակները Եվրոպայում

3. Սահմանադրական վերահսկողություն և իրավունքի գերակայություն

4. Սահմանադրական դատարանների որոշումների ընկալումը և քննադատությունը ԶԼՄ-ների և սոցիալական մեդիայի համատեքստում

Ելույթներով և զեկույցներով հանդես են եկել՝

- *Քրիստոֆ Գրաբենվարթեր* - Ավստրիայի Սահմանադրական դատարանի նախագահ, Վենետիկի հանձնաժողովի անդամ, Վենետիկի հանձնաժողովի Սահմանադրական արդարադատության ենթահանձնաժողովի նախագահ, Սահմանադրական արդարադատության միացյալ խորհրդի (ՍԱՄԽ) համանախագահ
- *Արմեն Հարությունյան* - Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի դատավոր

- *Դուրո Սեսա* - Խորվաթիայի Հանրապետության Գերագույն դատարանի դատավոր: Դատավորների միջազգային միության նախագահ, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի նախկին նախագահ
- *Նիկոս Կ. Ալիվիզատոս* - Վենետիկի հանձնաժողովի անդամ Հունաստանից, Աթենքի համալսարանի սահմանադրական իրավունքի պատվավոր պրոֆեսոր
- *Վահե Գրիգորյան* - Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի փոխնախագահ
- *Վալենտին Գեորգիև* - Բուլղարիայի Սահմանադրական դատարանի գլխավոր քարտուղար, Սահմանադրական արդարադատության միացյալ խորհրդի համանախագահ
- *Իվո Պիլվինգ* - Էստոնիայի Գերագույն դատարանի Վարչական իրավունքի պալատի նախագահ
- *Նախարին Մեկկրայրաթ* - Թաիլանդի Թագավորության Սահմանադրական դատարանի նախագահ
- *Լիլիթ Թադևոսյան* – Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահ
- *Սրբուհի Գալյան* - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
- *Սերհի Հոլովատի* - Վենետիկի հանձնաժողովի անդամ Ուկրաինայից, Ուկրաինայի Սահմանադրական դատարանի նախկին դատավոր
- *Դավիթ Խաչատուրյան* - Վենետիկի հանձնաժողովի փոխարինող անդամ Հայաստանից, Սահմանադրական դատարանի դատավոր
- *Այգուլ Կիդիրբաևա* - Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավոր
- *Լիլիթ Դանեղյան* - Համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն, Մարդու իրավունքների, արդարադատության և իրավական համագործակցության չափանիշների իրականացման վարչություն, Եվրոպայի խորհուրդ
- *Աննա Մարիա Լեչիս Կոկո Օրտու* - Բորդոյի համալսարանի գիտությունների հանրային իրավունքի դոցենտ
- *Դարիան Պավլի* - Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Ալբանիայի դատավոր
- *Վլադիմիր Վարդանյան* - Վենետիկի հանձնաժողովի անդամ Հայաստանից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի անդամ

• *Մոլլի Քուել* - լրագրող, ավագ իրավական թղթակից, դատարանի լրատվական ծառայություն Հաագայում

Համաժողովի նպատակն էր ուսումնասիրել և քննարկել միջազգային լավագույն փորձը, զարգացնել միջդատական երկխոսությունը և գտնել արդյունավետ լուծումներ՝ սահմանադրական դատարանների որոշումների հարգման և կատարման ապահովման համար: Համաժողովն ամփոփվել է եզրափակիչ նիստով:

Միջազգային համաժողովի պատվիրակները և հյուրերը Երևանում այցելել են Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի Մատենադարան, ծանոթացել են հայ միջնադարյան մատենագրությանը, ինչպես նաև այլալեզու ձեռագրերի հավաքածուներին: Համաժողովի հյուրերն՝ առանձին խմբերով, այցելել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ծանոթացել Մայր տաճարի թանգարանում պահվող սրբազան մասունքներին և կրոնական արվեստի ուրույն նմուշներին, ինչպես նաև՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՆՈՐ ԳՐՔԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ» ՁԵՌՆԱՐԿԸ

2024 թվականի նոյեմբերի 19-ին տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներ Երվանդ Խունդկարյանի, Արթուր Վաղարշյանի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի համահեղինակած «Դատական իշխանության անկախությունը» ձեռնարկի շնորհանդեսը:

Ձեռնարկը նախատեսված է դատավորների և դատավորների թեկնածուների համար և, համանուն դասընթացն արդեն իսկ ներառված է դատավորների և դատավորների թեկնածուների վերապատրաստման 2025 թվականի ուսումնական ծրագրում:

Ձեռնարկի համահեղինակ, ՍԴ դատավոր Երվանդ Խունդկարյանի խոսքով «Դատական իշխանության անկախությունը» ձեռնարկը հնարավոր դարձավ իրականություն դարձնել ծանր և երկարատև քննարկումների արդյունքում, ընդ որում ստեղծվեց մի աշխատություն, որը շատ է օգնելու դատավորներին անկախ դատավորի իմիջը կերտելու հարցում: Ձեռնարկը հետաքրքրական է դարձել նաև այն տեսանկյունից, որ այստեղ մեկտեղվել են դատավորի անկախության նկատմամբ երկու հայացքներ՝ հայացք դրսից և հայացք ներսից, և աշխատանքը ստեղծվել է գիտական և կրթական աշխատանքի մեծ փորձ ունեցող, ինչպես

նաև դատավորական գործունեության երկարատև փորձ ունեցող անձանց կողմից:

Ձեռնարկում անդրադարձ է կատարվել որպես դատավորի անկախության կարևոր բաղադրիչ՝ դատավորների ներքին անկախության, Վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի որոշումների, Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման և այլ հարցերի, ինչպես նաև դատավորների նյութական և սոցիալական անկախության ապահովման հիմնախնդիրների առնչությամբ օրենսդրությանը՝ հնարավորինս համարժեք մեկնաբանություններով: Ընդ որում, բարձրացվել են նշված հարցերի կապակցությամբ օրենսդրական կարգավորումներում առկա խնդիրները և բացերը, ինչպես նաև առաջադրվել են օրենսդրական բարեփոխումների տեսլականը՝ ըստ հեղինակների:

ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանը նշել է, որ դատական իշխանության անկախության հիմնախնդիրներն իմաստավորվել են դատական իշխանության համար մետահամակարգ և ենթահամակարգ համարվող բազմաթիվ տարրերի արդյունավետության վիճակից: Այդ մոտեցումը հնարավորություն է տվել առաջ քաշել դատական իշխանության համակարգում անկախության հասկացման, մի շարք առումներ՝ անկախությունը պետական կառույցի համակարգի հավասարամակարդակ ենթահամակարգերի հետ փոխհարաբերություններում, դատական համակարգում ըստ իրավասության դատարանների տեսակների ու դատական ատյաններ հորիզոնական և ուղղահայաց անկախությունը միմյանցից, ներպետական դատարանի ու դատավորի անկախությունը ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, ներառյալ դատարանների ոչ իրավաչափ միջամտությունից, դատարանի որպես պետական մարմնի ներկառուցվածքային տարրերում, որը դրսևորվում է դատական կազմի արտաքին և ներքին, դատարանի նախագահի և դատավորների, ինչպես նաև դատարանի օժանդակ ստորաբաժանումների և դատավորի փոխհարաբերություններում, դատավորի որպես պաշտոնատար անձի արտահամակարգային անկախությունը, դատարանի

անկախությունը հակասահմանադրական օրենքից: Բացի անկախության վերաբերյալ, ընդ որում ոչ սպառիչ դրսևորումներից, դատավորի անկախության համար յուրահատուկ երաշխիքների նշանակություն են համարվել դատավորի պատշաճ մասնագիտական նկարագիրն ու արհեստավարժությունը, ինչպես նաև որպես մարդ-անհատի բնական ու ձեռք բերովի հոգեբանական հատկությունները, կայացած քաղաքացիական հասարակությունը և դրա ենթահամակարգերը:

Արդարադատության ակադեմիայում կայացած շնորհանդեսին հաջորդել է մասնագիտական քննարկում, հեղինակները պատասխանել են նաև մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

Տեղեկատվություն. ***Զեռնարկը մշակվել և հրատարակվել է Արդարադատության ակադեմիայի, «Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի» և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) համագործակցությամբ:***

Զեռնարկի էլեկտրոնային տարբերակը հասանելի է կից հղումով.
https://www.kas.de/documents/269781/269830/Unabh%C3%A4ngigkeit+der+Richterlichen+Gewalt.pdf/30081a29-e567-c6f2-41b4-955bc6d786e9?version=1.0&t=1732610266411

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈԽՅԱՆ, Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՆԱՀԱՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.12.2024 թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
http://www.concourt.am

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(116)2024
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(116)2024
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(116)2024

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am